

«...ВОЗВЫСИТЬ СТЕПЬ,  
НЕ УНИЖАЯ ГОРЫ»

ՂԱԶԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԱՆԹՈՂՈԳԻԱ







Осы заманның қазақ мәдениетін шетелде насихаттау жобасы Қазақстан Республикасының Тұңғыш Президенті Н. Ә. Назарбаевтың бастамасымен, «Рухани жаңғыру» атты мемлекеттік бағдарламасы аясында жүзеге асырылды.

Қазақстан Республикасының  
Армения Республикасындағы Елшілігі

Армения Республикасының  
Ұлттық Ғылым Академиясы  
М.Абегян атындағы Әдебиет Институты

Ереван Мемлекеттік Университеті

---

Қазақ әдебиетінің  
армян тіліндегі  
АНТОЛОГИЯСЫ

---

Құрастырушы-редакторлар:  
В. Деврикян, А. Сафарян

Ереван  
«БЗӘЗ» Баспаханасы  
2019

ՀՀ ԿՆՅՆՆԵՐ ԶԵՐՈՎ ԲԵՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում  
Ղազախստանի Հանրապետության դեսպանություն

Հայաստանի Հանրապետության  
Գիտությունների ազգային ակադեմիայի  
Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ  
Երևանի պետական համալսարան

105622

Ղազախստանի գրականության  
ԱՆԹՈԼՈԳԻԱ

Խմբագրությամբ՝  
Վ. Դերիկյանի, Ալ. Սաֆարյանի

Երևան  
«ԲԶԵԶ» հրատարակչություն  
2019



ՀՏԴ 821.512.122-8

ԳՄԴ 84(5Ղազ)

Ղ 153

«Ղազախական գրականության անթոլոգիան» հրատարակության  
են երաշխավորել ՀՀ  
Գիտությունների ազգային ակադեմիայի  
Մ. Աբեդյանի անվան գրականության ինստիտուտի և Երևանի  
պետական համալսարանի Հայագիտական հետազոտությունների  
ինստիտուտի  
գիտական խորհուրդները

Խմբագրությամբ՝

Վ. Դերիկյանի, Ալ. Սաֆարյանի

Ղազախական գրականության ԱՆԹՈԼՈԳԻԱ/ Կազմեցին  
Ղ 153 Թ. Ուրազան, Կ. Ամիրժանով; Խմբ.՝ Վ. Դերիկյան,  
Ալ. Սաֆարյան.- Եր.: «ԲԶԵԶ» հրատ., 2019.- 500 էջ:

Սույն Անթոլոգիան ընդգրկում է արձակ և չափածո ստեղծագործություններ սկսած ղազախական գրականության վաղ շրջանից:

Հայերեն թարգմանությամբ առաջին անգամ ներկայացվում են Ժիրաունների, Շաքարիմի, Մ. Ժումաբակի, Ա. Բայտուրսինովի և Օ. Սուլեյմենովի ստեղծագործությունները:

Գիրքը օժտված է ծանոթագրություններով և նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 821.512.122-8

ԳՄԴ 84(5Ղազ)

ISBN 978-9939-9213-0-3

© «Բզեզ» հրատարակչություն, 2019

© Հայաստանի Հանրապետությունում Ղազախստանի

Հանրապետության դեսպանատուն, 2019

## ՀԱՅ-ՂԱԶԱԽԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ղազախական գրականության՝ միջին դարերից մինչև մեր օրերի ընթացքը ներկայացնելուն միտված սույն հայերեն անթոլոգիայի հրատարակման (վաղո ց հասունացած) անհրաժեշտությունը կյանքի է կոչվում այսօր՝ Հայաստանի և Ղազախստանի անկախացումից շուրջ երեք տասնամյակ անց ու մեր երկու երկրներում ազգային գրահրատարակչական գործի զարգացման միանգամայն նոր փուլում, երբ պետական ինստիտուտները փորձում են ժամանակին արձագանքել միջմշակութային երկխոսության, ընթերցող հասարակայնության՝ արտասահմանյան գրչի վարպետների նորանոր երկերին ծանոթանալու հարաճուն հետաքրքրության հրամայականներին: Երկար սպասված այս հրատարակությունն իրականացվել է շնորհիվ Ղազախստանի առաջին նախագահ և Ազգային Առաջնորդ Ն. Ա. Նազարբաևի նախաձեռնած «Рухани жанғыру» ծրագրի, որը նպատակաուղղված է հասարակական գիտակցության մոդեռնիզացիային: Ծրագիրը կոչված է արդիականացման բարդ գործընթացում մեկտեղել ժողովրդի «մշակութային կողի» պահպանումը և քսանմեկերորդ դարի համաշխարհային միտումներին ավանդական արժեհամակարգի առաջադեմ ու մրցունակ արձագանքումը: Համանման խնդիր այժմ հառնում է տարբեր ժողովուրդների առջև, բայց մշակութային-քաղաքակրթական զարգացման

ուղին մշտապես «փշոտ-մացառոտ» է, և անգամ միշտ չէ, որ տարբերակված են առաջընթացի և հետընթացի իրական չափորոշիչները: Ոչ միայն մեր գրականագետները, մշակութաբանները, արևելագետները, ուսանողները, այլև համակարգչային դարաշրջանում ապրող, բայց սեփական ավանդույթներին հավատարիմ ու «մարդկային հոգու ինժեներների» իմաստուն խոսքը գնահատող յուրաքանչյուրը թերցող, հուսով ենք, այս գրքում էլ կգտնի հոգեհարագատ և արժեքավոր տեղեկատվություն՝ հատկապես հաշվի առնելով հայ և դազախ ժողովուրդների պատմական անցյալի համատեղ էջերը և մշակութային հարուստ ժառանգությունը:

Հայ-դազախական (դփչաղական) լեզվական ու պատմամշակութային առնչությունները, հիրավի, բազմադարյան պատմություն ունեն... Հանրահայտ հանրագիտարանային ճշմարտություն է, որ սելջուկների կողմից Անին գրավելուց հետո հայերը զանգվածաբար գաղթել են Դեշտ-ի-դփչաղ (Դփչաղական դաշտ կամ հարթավայր), որը XI-XV դդ. տարածվում էր Տյան Շանից մինչև Դանուբ: Հայտնի է նաև, որ քառասուն հազար դփչաղներ եկել են Վրաստան՝ Դավիթ Շինարարի մոտ ու մասնակցել թուրք-սելջուկների դեմ կռիվներին<sup>1</sup>: Անվիճելի է նաև, որ դփչաղախոս է եղել բազմազգ ու բազմակրոն աշխարհակալ Ոսկե Հորդայի հիմնական բնակչությունը, իսկ դփչա-

---

<sup>1</sup>Տե՛ս Հայկական Սովետական Հանրագիտարան, Հատոր 7, Երևան, 1981, էջ 54-55:

դերենը հանդիսացել է Հյուսիսային Եվրասիայի տարբեր ժողովուրդների ազգամիջյան հաղորդակցության լեզու:

Հիշում եմ տասնամյակներ առաջ ԵՊՀ թուրքագիտության ամբիոնի հիմնադիր-վարիչ, պրոֆեսոր Մերի Հրայչայի Քոչարի դասախոսությունները հայագիտության ու թուրքագիտության հաստման տիրույթի առավել բարդ հիմնահարցերի և մեր արևելագիտության զարգացման հեռանկարների մասին: Դեռ անցյալ դարի ութսունական թվականների սկզբին երջանկահիշատակ Ուսուցիչս պատմում էր մեզ՝ արևելագիտության ոլորտում առաջին երերուն քայլերն անող ուսանողներին, որ դրանից էլ քառորդ դար առաջ իր գիտական ղեկավարը՝ համամիութենական ճանաչում ստացած ու թուրքալեզու տարբեր ժողովուրդների մտավորականության շրջանում բացառիկ հեղինակություն վայելող լեզվաբան-բառարանագիր Է. Վ. Սևորոյանը հորդորում էր իր աշակերտներին զբաղվել հայատառ դիչադերեն ձեռագրերի ուսումնասիրությամբ՝ ընդգծելով դրանց բացառիկ կարևորությունը թուրքական լեզուների պատմության «մութ էջերի» բացահայտման տեսանկյունից: Իհարկե, այս հարցադրում-պատգամը (տարբեր դրսևորումներով, բայց պարտադիր այն փաստի շեշտադրումով, որ հայկական այբուբենը ավելի լավ է արտացոլում թուրքական տարբեր լեզուների հնչյունական առանձնահատկությունները, քան արաբական, լատինական կամ կիրիլյան հենքով գրային համակարգերը) է՛լ ավելի հին պատմություն ուներ, գալիս էր հայագիտության ու

թյուրքագիտության ոահվիրաներից՝ Ղևոնդ Ալիշանից, Հրաչյա Աճառյանից, Վլադիմիր Գորդլևսկուց, Ազաֆանգել Կրիմսկուց, Տիմոֆեյ Գրունինից... Հարցադրումն ինքնին այն ժամանակ էլ գոնե մասնագետներից ոչ-ոք չէր վիճարկում, այն անգամ տեղ էր գտել խորհրդային բոլոր թյուրքագետների պատրաստման գործընթացի համար պաշտոնապես երաշխավորված համապատասխան բուհական դասագրքում<sup>2</sup>: Արդեն 1960-ական թվականներին Մաշտոցյան Մատենադարանի ղեկավարները՝ մեր գիտության ու մշակույթի երկու երախտավորները՝ ակադեմիկոսներ Լևոն Խաչիկյանը և Սեն Արևշատյանը անգամ նպաստել էին միութենական կենտրոնի առաջատար գիտական հանդեսներից մեկում հայատառ ղփչաղերենի թեմատիկայով մի համառոտ գիտական հաղորդման լույս ընծայմանը՝ դրանով իսկ համագործակցության հրավեր հղելով դազախստանյան գործընկերներին<sup>3</sup>: Տասնամյակներ անց այս թեմատիկայի ականավոր հետազոտող Յարուլավ Դաշկևիչն իր հանրագումարային-հիմնարար հրապարակումներից մեկում իրավամբ պնդելու էր, որ հայատառ ղփչաղերեն ձեռագրերի ուսումնասիրության ոլորտում

---

<sup>2</sup>Տե՛ս Баскаков Н. А., Введение в изучение тюркских языков, Москва, 1962, стр. 74-75, 143, 144, 229-232: Հայատառ ղփչաղերեն տեքստերի մասին կա տեղեկատվություն նաև Թուրքիայում հրատարակված ու լեզվաբանների պատրաստման գործընթացում օգտագործվող ուսումնամեթոդական գրականության մեջ, մասնավորապես տե՛ս և հմմտ. Nurettin Koç, Yeni Dilbilgisi, İstanbul, 1990, s. 30:

<sup>3</sup>Տե՛ս Еганян О. С., Об одном армяно-кыпчакском грамматическом пособии XVII в. // Вопросы языкознания, Москва, 1962, стр. 151-154:

արդի փուլում կարևորվում է հատկապես վերոհիշյալ տեքստերի լեզվի (բառապաշարի, հնչյունական ու քերականական համակարգերի)՝ Codex Cumanicus-ի, ինչպես նաև դրիմի թաթարների և կարաիմների վաղ շրջանի գրավոր հուշարձանների հետ համեմատական-մանրակրկիտ վերլուծությունը, և հենց այդ ուղին է խոստանում իսկական գիտական բացահայտումներ, քանզի այն «ընդլայնելու է մեր պատկերացումները դիչադական լեզուների պատմության մասին»<sup>4</sup>: Լիահույս ենք, որ դաշկևիչյան հողվածում մատնանշված հենց այս բարդ, բայց հիրավի խոստումնալից ուղիով են ընթանալու հայ և դազախ գիտնականները. Հայատառ դիչադերեն ձեռագրերի համակողմանի ուսումնասիրության բնագավառում այսօր արդեն ծավալվում է արգասաբեր համագործակցություն երկու ինքնիշխան պետությունների՝ Հայաստանի և Ղազախստանի առաջատար գիտական ու կրթական կենտրոնների միջև (հայկական կողմը ներկայացնում են ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի ու թյուրքագիտության ամբիոնի, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. Գրականության ինստիտուտի և Մեսրոպ Մաշտոցի անվ. Հին ձեռագրերի ինստիտուտ – Մատենադարանի, իսկ դազախական կողմը՝ Նուրսուլտանի Լ. Ն. Գումիյովի անվ.

---

<sup>4</sup>Մանրամասն տե՛ս Դաշկևիչ Я., Кто они – “Армяно-кыпчаки”? (Об этносе создателей армяно-кыпчакских рукописей XVI-XVII вв.), Ереван, «Вестник Матенадарана», 1994, стр. 108:

Ազգային համալսարանի մասնագետները)<sup>5</sup>: Հաշվի առնելով թեմատիկայի հանդեպ Արևմուտքի, թյուրքալեզու տարբեր երկրների և Ռուսաստանի Դաշնության արևելագիտական կենտրոնների արդեն դարավոր հետաքրքրությունը՝ մենք մեր դազախ գործընկերների հետ բազմակողմ միջազգային լայն համագործակցության ծավալման կոչ ենք հղել մասնագիտական հանրությանը՝ մասնավորապես առաջարկելով նաև հայատառ դիջադերեն ձեռագրերի ուսումնասիրության՝ ԵԱՏՄ երկրների համալսարան-

---

<sup>5</sup>Հայ հետազոտողների հրապարակումներից մասնավորապես տե՛ս Сафарян А., Саакян Л., О филологической ценности армяно-кыпчакских рукописей XVII в., хранящихся в Матенадаране (Ереван) // Тюркский мир: история и современность, ЕНУ им. Л.Н.Гумилева, Астана, 2011, стр. 103, Լ. Մահալյան, Գ. Մելիքյան, Ա. Սաֆարյան, XVII դարի գրիչ Ավետիքի՝ Մատենադարանի № 3522 ձեռագրի պատմաբանասիրական արժեքը // «Իրան-Նամե-արևելագիտական հանդես», հատոր 44-45, 2012-2013, էջ 48-51, Симонян А., Сафарян А., Об изучении вопросов тюркской филологии в Армении // Актуальные вопросы отечественной и зарубежной иранистики, К(П)ФУ, Казань, 2015, стр. 244-249, Сафарян А. В., Саакян Л. С., Армяно-кыпчакские рукописи-источники изучения истории тюркских языков // Россия и тюрко-мусульманский мир: историко-культурные связи (науч. ред.: З. С. Миннуллин, Э. К. Хабибуллина), К(П)ФУ, Казань, 2017, стр. 168-178, Сафарян А., Саргсян А., Об изучении армянографических тюркоязычных литературных памятников // Азия и Африка: Наследие и современность, СПГУ, Санкт-Петербург, 2017, стр. 295-296:

ները և ակադեմիական ինստիտուտները համախմբող համալիր ծրագիր<sup>6</sup>:

---

<sup>6</sup> Մասնավորապես տե՛ս Сафарян А. В., Адилбаев Ж. Ж., О взаимодействии тюркологов Казанского (Приволжского) федерального университета, Евразийского национального университета им. Л.Н. Гумилева и Ереванского государственного университета // Россия – Тюркско-мусульманский мир: историко-культурные связи, Казань-Елабуга, 2016, стр. 160-167, Сафарян А., Адилбаев Ж., Об армяно-казахских культурных связях и научном сотрудничестве между Арменией и Казахстаном // Хабаршы – Вестник, N 1 (110), ЕНУ им. Л. Н. Гумилева, Астана, 2016, стр. 113-118, Сафарян А., Әділбаев Ж., ТМД елдерінің түркітану орталықтары ынтымақтастығының келешегі туралы, Түркі әлемі және халықаралық байланыстар: тарих, тұлға, келешек, 26-27 мамыр 2017 жыл, Астана, 2017, б. 259-262, Сафарян А. В., Сафарян А. А., О духовных ценностях и культурно-гуманитарном пространстве, объединяющем народы стран ЕАЭС // Армения в ЕАЭС: Евразийская экономическая интеграция в действии (Сборник статей), Ереван, 2018, стр. 64-72, Сафарян А. В., Сафарян А. А., Еще раз об армяно-казахском научно-культурном сотрудничестве и вопросах лингвистического изучения армяно-кипчакских рукописей // Материалы II-й научной конференции средневековой истории Дешт-и Кыпчака, ТОО «Научно-исследовательский центр «Дешт-и-Кыпчак», Астана, 2018, стр. 150-156: Հավելենք, որ հայ և դաշախ մասնագետները հաջողությամբ համագործակցում են նաև ազդեցիկ «երրորդ հարթակներում»՝ համատեղ ներկայացնելով համաշխարհային մշակութային ժառանգության պրոպագանդանը նպատակաուղղված քաղաքականությունը մեր երկու երկրներում: Հրատարակումներից տե՛ս Адилбаев Ж. Ж., Сафарян А. В., Погосян Н. А., Незабываемые страницы истории

Անշուշտ, դեռ ահռելի աշխատանք կա կատարելու ոչ միայն Ղազախստանի, այլև անձայրածիր Դեշտ-ի-դփչադի և Հյուսիսային Եվրասիայի պատմությունը լուսաբանելու, լոմոնոսովյան-լոբաչևսկիական-գումիլյովական հումանիստական-գիտաբանական ավանդույթները արդի մարտահրավերներին հարիր կենսագործելու, եվրոպակենտրոն-գոռոզ արևելագիտության կողմից պարտադրված «վայրենի Թարթարիայի» մասին քարացած կարծրատիպերը հաղթահարող գիտական ու գիտահանրամատչելի հրատարակությունները խթանելու ուղղությամբ: Աներկբա է, որ Հյուսիսային Եվրասիայի ժողովուրդների թե՛ միջնադարյան, թե՛ հետագա պատմությունը իրականում հարուստ է հանդուրժողականության, մարդասիրության և արգասաբեր փոխգործակցության այնպիսի վառ օրինակներով, որոնց համաբանությունը դեռ պետք է որոնել միևնույն դարաշրջանների արևմտաեվրոպական պատմության մեջ: Ի վերջո հայատառ դփչադերեն ձեռագրերն էլ անհերքելիորեն վկայում են Դեշտ-ի-դփչադում կրոնական և ազգային հանդուրժողականության բազմադարյան ավանդույթների մասին:

---

изучения и популяризации творческого наследия великого узбекского поэта и гуманиста Алишера Навои в Армении и Казахстане // Творческое наследие Алишера Навои и современность (отв. ред.: Ж. С. Сыздыкова), ИСАА МГУ им. М. В. Ломоносова, Москва, 2018, стр. 8-11:

Ղազախական գրականությունը և գրականագիտությունը հարուստ ավանդույթներ ունեն: Ղազախական Թուրքեստան քաղաքում է գտնվում թյուրքալեզու սուֆիական գրականության նահապետներից մեկի՝ Հոջա Ահմեդ Յասավիի թյուրքեն՝ դամբարանը: Հոջա Ահմեդ Յասավին ու նրա հետևորդները բացառիկ դեր են խաղացել թյուրքալեզու տարբեր ժողովուրդների շրջանում իսլամական միստիցիզմի՝ սուֆիզմի տարածման գործում: Սուֆիական պատկերային համակարգը ուրույն կերպով է դրսևորվել և արձագանքվել ղազախական գրականության դասականների երկերում:

Հարկ է նշել, որ հայաստանյան արևելագիտական կենտրոնների համար արդեն ավանդական ուղղություններ են ինչպես արաբերեն, պարսկերեն, թյուրքալեզու սուֆիական գրականության պատմության ու կոնկրետ բնագրերի, այնպես էլ արևելաքրիստոնեական և իսլամական-միստիկական գրականության դասականների (Սուրբ Գրիգոր Նարեկացու, Հոջա Ահմեդ Յեսավիի, Նեջմեդդին Քուբրայի, Ջալալեդդին Ռումիի) ստեղծագործությունների համեմատական-տիպաբանական ուսումնասիրությունը, մեր աղբյուրագետ-արևելագետները և բանաստեղծ-թարգմանիչները զգալի աշխատանք են տարել նաև սուֆիական գրականության գոհարները հայերեն թարգմանելու ու պրոպագանդելու ուղղությամբ: Վերոհիշյալ գործընթաց-

ներում հայ միջնադարագետները, վերանայելով խորհրդային տարիներին արմատացած որոշ գիտաբանական ավանդույթներ, այսօր ջանում են արհեստականորեն «չմոդեռնիզացնել» միջնադարյան հեղինակներին՝ հաշվի առնելով նրանց ստեղծագործության «կանոնականության տեղեկատվական պարադոքսով», «կանոնի շրջանակում» և «կանոնը ճեղքող» տարրերով պայմանավորված նորարարությունը, միատիկ ու աշխարհիկ ընկալման բազմաշերտության և ավանդական պատկերների «ադապտացիայի» ուրույն մոդուսը<sup>7</sup>:

Ղազախական գրականության պատմության մեջ բացառիկ է Մեծն Աբայ Կունանբակի դերը: Թե՛ ժամանակակից գրական ղազախերենի նորմավորման, թե՛ ղազախական գրականության զարգացման ուղիների կանխորոշման գործընթացներում և, առանց դույզն իսկ չափազանցուր-

---

<sup>7</sup>Մասնավորապես տե՛ս Սաֆարյան Ա., Գրիգոր Նարեկացու ու սուֆի բանաստեղծների ստեղծագործություններում ավանդական պատկերների «ադապտացման» մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», ՀՀ ԳԱԱ, 1993, թիվ 2, էջ 103-113, Симомян А., Сафарян А., Об изучении вопросов тюркской филологии в Армении // Актуальные вопросы отечественной и зарубежной иранистики, Казань, 2015, стр. 244-249, Safaryan A., Sahakyan L., On "Adaptation" of Traditional Images in the Works of Eastern Christian and Islamic Poets // Abstracts of the World Philosophy Day Congress, Tehran, Iran, 2010, p. 249, Safaryan A., Melikyan G., Apology of Sufism in Divan by Yunus Emre // XXVI th International Congress of Assian and North African Studies, Book of Abstracts of ICANAS, 2000, Montreal, Canada, 2000, p. 60:

յան, դազախ ժողովրդի հոգևոր-մշակութային կյանքում ընդհանրապես Աբայի դերը համադրելի է գեթ այն դերի հետ, որ խաղացել են ռուսական իրականության մեջ Ա. Ս. Պուշկինը կամ թուրքմենական իրականության մեջ՝ Մահթումկուլի Ֆրազին: Նույնպիսի հպարտությամբ ինչպես ռուսներն են ասում. «Պուշկինը մեր ամենն է» («Пушкин – наше все»), այնպես էլ դազախները հենց Աբայի անվան հետ են ասոցացնում իրենց ազգային ինքնության վեհություներ:

Աբային կոչել են «տելկերե» (իմա՝ «երկու մոր թուխ գավակ»), քանզի նա դաստիարակվել է մոր և տատիկի կողմից: Հետագայում այս մականունը ընկալվել է որպես մի վեհ տիտղոս՝ երկու մշակույթի կրող... Իրականում Աբայի ստեղծագործությունները ազգային-դազախական հզոր-աներեր հենքի վրա վերաիմաստավորել և արտացոլել են Արևելքի և Արևմուտքի մշակութային-քաղաքակրթական արժեքները, ժողովուրդների բարեկամության, մարդասիրության իդեալները: Աբայը քաջածանոթ էր Պուշկինի, Լերմոնտովի և այլ ռուս բանաստեղծների երկերին, Չայկովսկու երաժշտությանը, նաև արևմտաեվրոպական արվեստի գլուխգործոցներին: Աբայագիտության մեջ կարմիր թելով անցնում է այն պնդումը, որ Աբայ Կունանբանին վիճակված էր հումանիզմի և դեմոկրատիայի դիրքերից գնահատել Ռուսաստանի (և հատկապես՝ նրա առաջադեմ գավակների) քաղաքակրթական դերը Կենտրոնական

Ասիայում<sup>8</sup>: Դիրքավորվելով մշակութային-քաղաքակրթական բարձր արժեքների «հատման տիրույթում»՝ Աբայն իր ողջ կենսագրությամբ ու ստեղծագործական ժառանգությամբ հետևորդների համար բարձր չափորոշիչներ էր սահմանելու՝ հերքելով խավարամոլությունը, կրոնական ծայրահեղականությունը, մարտնչող գավառամտությունը...

Հաջորդ տարի՝ 2020 թվականին դազախ ժողովուրդը ու նրա իսկական բարեկամները համայն աշխարհում մեծ շուքով են նշելու մեծ բանաստեղծի, մտածողի և տաղանդավոր կոմպոզիտորի՝ Աբայի 175-ամյակը: Հոբեյանական տարում, անտարակույս, աշխարհի տարբեր լեզուներով (նաև հայերեն) վերահրատարակվելու են հին (արդեն դասական դարձած) թարգմանությունները և իհարկե հրատարակվելու են նորանոր թարգմանություններ... Ներկա-

---

<sup>8</sup>Հումանիտար գիտությունների արդի քննույթում Ռուսաստանի՝ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում քաղաքակրթական դերի (նաև Աբային անդրադարձների) մասին մասնավորապես տե՛ս և հմմտ. Сыздыкова Ж. С., Особенности цивилизационного фактора и роль исторического наследия в Центральном-Азиатском регионе // *Mezeriana*, Т.2: сб. ст., МГУ им. В. Л. Ломоносова, Москва, 2006, стр. 187-233: Հղվող հոդվածում պրոֆ. Միզդիկովան մասնավորապես հիշեցնում է, որ «Աբայն ավարտել էր մեկթեք, մեղրեսե և ռուսական դպրոց՝ յուրացնելով մուսուլմանական Արևելքի և Ռուսաստանի ժողովուրդների իսկական արժեքները: Երեք աղբյուր էին սնում նրա պոեզիան՝ դազախ ժողովրդի բանավոր ստեղծագործությունը, Արևելքի պոեզիաի լավագույն նմուշները և ռուսական մշակույթը»: Տե՛ս նույն տեղում, էջ 221: Տե՛ս և հմմտ. նաև Турдыев Ш., Исторические связи литератур народов советского востока в период 1905-1917 гг. // «Народы Азии и Африки (история, экономика, культура)», н. 1, 1977, стр. 90-97.

յացումներով ու կինոփառատոններով, աբայան թեմատիկայով ստեղծված կերպարվեստի ստեղծագործությունների ցուցահանդեսներով, համերգներով ու տարաբնույթ գիտակրթական ձեռնարկներով վերաիմաստավորվելու է դազախական նոր գրականության հիմնադրի հարուստ ստեղծագործական ժառանգությունը, սերունդները կրկին ու կրկին ըմբռնվելու են բանաստեղծական մտքի հանձարեղ թռիչքը և իմաստության դասերը:

Հայաստանյան ընթերցասեր հասարակայնությունը Աբայի ստեղծագործական ժառանգությանը նախապես ծանոթացել է շնորհիվ ռուսերեն բարձրարվեստ թարգմանությունների (ինչպես հայտնի է դազախական պոեզիայի դասականին ռուսերեն են թարգմանել տարբեր սերունդների բանաստեղծներ՝ Մ. Դոլդինը, Վ. Զվյագինցևան, Մ. Պետրովիխը, Լ. Օզերովը, Վ. Ռոժդեստովենսկին, Բ. Կանապյանովը, Մ. Ադիբաևը...): Գոնե խորհրդային ասպիրանտուրայում «թրծված» գրականագետներիս շրջանում թևածում էին պոեզիայի գաղտնիքի աբայան հանձարեղ՝ կարծես «մաթեմատիկական ճշգրտության» բանաձևումի ռուսերեն թարգմանության տողերը (“Поэзия-властитель языка...”): Բնորոշումների՝ խորհրդային տարբեր ժողովուրդների լեզուներով «մեկնաբանությունները» գալիս էին թեժացնելու (դազախերենին չտիրապետող) ասպիրանտների՝ «մոդայիկ» նշանային համակարգերի մասին այնքան կրքոտ վեճերը...



105629

Ղազախսական ու համաշխարհային գրականության պատմության մեջ Աբայի անունն այլևս անքակտելիորեն կապվել է իր արժանի հետևորդներից հատկապես մեկի՝ Մուխտար Աուեզովի անվանը, ով բացառիկ ավանդ ունի մեծն Աբայի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրության և տարածման գործում: Աբային է նվիրված նաև աուեզովյան գլուխգործոցը՝ «Աբայի ուղին» վեպ-էպոպեան (դիլոգիան): Հայտնի է, որ Մ. Աուեզովը, վերոհիշյալ վեպ-էպոպեան շարադրելուց առաջ (և շարադրելուն զուգահեռ) քիչ է ասել ահռելի, հիբրավի տիտանական աշխատանք է կատարել ոչ միայն արբայան կենսագրության փաստերի, այլև ղազախսական սովորության իրավունքի, ազգագրական տեղեկությունների՝ թաղման ծեսերի, հարսանիքների, ժողովրդական սովորությունների, ղազախսական տոմարի, կոսմոգոնիական հասկացությունների, XIX դարի Ղազախստանի պատմության տարաբնույթ հիմնահարցերի հետազոտման բնագավառում<sup>9</sup>: Ղազախսական (և նախկին խորհրդային) գրականագիտության մեջ ավանդաբար ու միանգամայն արդարացիորեն զուգահեռներ են տարվել և տարվում Մուխտար Աուեզովի՝ Աբային և Ալեքսեյ Տոլստոյի՝ Պետրոս Առաջինին նվիրված պատմավեպերի միջև, այսուհանդերձ, կարծում ենք, որ հետազայում ավելի ու ավելի է խոսվելու նաև աուեզովյան դիլոգիայում և շոլոխովյան «Խաղաղ Դոնում» ժողովրդական կյանքի և

---

<sup>9</sup> Մասնավորապես տե՛ս Аузэова Л. М., История Казахстана в творчестве М. Аузэова, Алматы, 1997, стр. 18-21:

ոգու անկրկնելի համայնապատկերի արտացոլման զուգահեռների մասին<sup>10</sup>: Ինչպես բացահայտում էր Չինգիզ Այտմատովը, Մուխտար Աուեզովը դարձել է դազախ «ագգի աչքերը»․ արվեստագետի ու ժողովրդի հոգևոր պահանջի երջանիկ համընկնումը բխել է աուեզովյան գրչից (ինչպես պատահել է նաև ռուսական «Խաղաղ Դոնում») ու հորդել դեպի դազախական ժողովրդական էպոպեայի հունը<sup>11</sup>:

\* \* \*

Անուրանալի է, որ Խորհրդային Միությունում ահռելի աշխատանք է տարվել տարբեր միութենական և ինքնավար հանրապետություններում ապրող ժողովուրդների

---

<sup>10</sup> Նիկոլայ Պոգոդինի պատկերավոր բանաձևմամբ «Ղազախստանի համար Աուեզովը երկրորդ Աբայն է, մեզ համար՝ արևելյան Շոլոխովը», քանզի թե՛ աուեզովյան, թե՛ շոլոխովյան արձակում (աշխարհին մինչ այդ անձանոթ-անհայտ-անհասու) ժողովրդական կյանքի բացահայտումը «դասական է»: Տե՛ս Николай Погодин, Для нас Ауэзов – второй Абай // Мухтар Ауэзов в воспоминаниях современников, Алматы, 1997, стр. 70-71:

<sup>11</sup> Տե՛ս Чингиз Айтматов, Слово об учителе // Мухтар Ауэзов в воспоминаниях современников, Алматы, 1997, стр. 19: Հիշարժան է նաև, որ Չ. Այթմատովը հենց Մ. Աուեզովին էր համարում այն ամենամեծ արվեստագետը, ում ճանաչել էր անձամբ և կարծում էր, որ ժամանակակից միջինասիական գեղարվեստական մտքի և հարևան ժողովուրդների ողջ հոգևոր կյանքի ձևավորման վրա Աուեզովը ունեցել է «նույնպիսի ազդեցություն, ինչպես ժամանակին Պուշկինը՝ ռուսական մշակույթի վրա»: Տե՛ս նույն տեղում, էջ 18, 22:

դասական ու ժամանակակից գրականության և արվեստի ֆենոմենները պրոպագանդելու ուղղությամբ: Մասնավորապես հիշարժան է «խորհրդային կենտրոնում» իրականացված մի մշակութային մեզանախագիծ՝ «Համաշխարհային գրականության գրադարան» (ռուսերեն) մատենաշարի հրատարակությունը՝ այն ժամանակվա չափանիշներով հիրավի շքեղ ձևավորված երկու հարյուր սովաբաժավալ հատորներով, որոնցից երկուսում ամփոփված էր Սուխոտար Աուեզովի «Աբայի ուղին» վեպ-էպոպեան <sup>12</sup>: «ԽՍՀՄ ժողովուրդների հերոսական էպոսի» հատորներից մեկում կողք կողքի ներկայացված էին հայկական «Սասունցի Դավիթը» և դազախական «Կոբլանդի բատիրը»<sup>13</sup>: Այլ հատորներում կողք կողքի ներկայացված էին հայ միջնադարյան բանաստեղծները և դազախական Ժիեն Ժիրաուն ու Բուխար Ժիրաուն<sup>14</sup>, հայ նոր գրականության դասականները և Շոժե Կարժաույովը, Սույունբայ Արանովը, Բիրժան-Սալը, Ժայաու Մուսան, Իբրայ Ալտինասարինը, Ախան-Սերե Կարամսինը, Կեմպիրբայը, Աբայ Կունանբա-

---

<sup>12</sup> Տե՛ս Библиотека всемирной литературы (այսուհետ՝ БВЛ), тт. 134-135, Ауэзов Мухтар, Путь Абая, роман-эпопея в 2-х томах, Москва, 1971: Սուխոտար Աուեզովի կյանքին և նրա «Աբայի ուղին» հիմնարար երկի ստեղծման պատմությանը նվիրված առաջնորդող հոդվածը հեղինակել է Ա. Նուրպեխովը, տե՛ս БВЛ, т. 134, Ауэзов Мухтар, Путь Абая, том первый, Москва, 1971, стр. 5-20:

<sup>13</sup> Տե՛ս БВЛ, т. 14, Героический эпос народов СССР, том второй, Москва, 1975:

<sup>14</sup> Տե՛ս БВЛ, т. 55, Поэзия народов СССР IV-XVIII веков, Москва, 1972:

ևր, Սարին, Բալուան-Շոլակը, Սուլտանմախմուտ Տորայ-գիրովը<sup>15</sup>, խորհրդահայ պոեզիայի դասականները և Ջամբուլ Ջաբանը, Իյաս Ջանսուդուրովը, Սակեն Սեյֆուլլինը, Տաիր Ժարոկովը, Արդիլդա Տաժիբանը, Կասիմ Ամանժովը, Համիդ Երգալինը, Ջուբան Մուլդագալինը, Սիրբայ Մաուլենովը, Օլժաս Սուլեյմենովը<sup>16</sup>, Ակսել Բակունցը և Մուխտար Աուեզովը, Հրանտ Մաթևոսյանը և Գաբիտ Մուսրեպովը<sup>17</sup>...

Ջուզահեռները, հիրավի, բազում են, ոչ մտացածին՝ պայմանավորված հազարավոր տեսանելի և անտեսանելի հոգևոր կապերով, տարբեր ժողովուրդների մտավորականության՝ մետալեզվի ու ստեղծագործական փնտրտուքի ընդհանրությամբ. Հայերի և դազախների բազմաթիվ սերունդների պատմականորեն վիճակվել է ապրել միևնույն պետության՝ նախ Ռուսաստանի կայսրության, այնուհետև Խորհրդային Միության սահմաններում, համատեղ անցնել ոչ կարճ ուղի և ի վերջո միասնաբար կերտել ֆաշիզմի դեմ Մեծ Հաղթանակը մարդկության պատմության ամենադաժան՝ Երկրորդ Համաշխարհային Պատերազմում, որը, չնայած պատմության վերանայման տարաբնույթ փորձերին, հայ և դազախ ժողովուրդների համար հավերժ մնալու է Հայրենական...

---

<sup>15</sup>Տե՛ս ԵՄԼ, Կ. 102, Սոէզիա ոարոճոճ ՑՑՑՓ ՑԻՁ-ոաչաա ՑՁ արա, Մոսկա, 1977:

<sup>16</sup>Տե՛ս ԵՄԼ, ԿԿ. 179-180, Ցոաետաոա Սոէզիա, Մոսկա, 1977:

<sup>17</sup>Տե՛ս ԵՄԼ, ԿԿ. 181-182, Ցոաետաոաոա ռաոաոա, Մոսկա, 1975:

Միաժամանակ ակնհայտ է, որ այդ շրջանում հայ և դա-  
զախ, ինչպես և այլ ազգերի ներկայացուցիչ՝ գրականա-  
գետները և մշակույթի պատմաբանները պարտադրված  
էին համապատասխան գիտական, գիտամեթոդական ու  
գիտահանրամատչելի հրատարակություններում գեթ  
մարտնչող աթեիստական կադապարների տեսանկյունից  
լուսաբանել մեր ժողովուրդների հոգևոր-գրական ժառան-  
գության հիմնահարցերը: Գեղարվեստական երկերին հա-  
ճախ պարտադրաբար կցվող ու «գաղափարախոսական  
ճիշտ դիրքերից» գրվող առաջաբաններում, վերջաբաննե-  
րում ու ծանոթագրություններում քիչ չէին գոեհիկ հարձա-  
կումները մեր ժողովուրդների կրոնական-ազգային արժե-  
համակարգերի վրա, արհեստականորեն, երբեմն էլ կոպ-  
տորեն «մոդեռնիզացվում էին» միջնադարյան հեղինակնե-  
րը: Անհաղթահարելի «տաբուի տակ» էին ստալինյան  
բռնատիրության կողմից ոչ միայն բռնադատված, սպան-  
ված, այլև մոռացության դատապարտված բազմաթիվ  
գրողների ու բանաստեղծների անուններն իսկ... Անգամ  
«խրուշչովյան հալոցքի» և «գորբաչովյան վերակառուց-  
ման» տարիներին այդպես էլ չհրատարակվեցին Մադժան  
Ժումաբանի բանաստեղծությունները: Չհրատարակվեցին  
նույնիսկ դազախերեն, բնականաբար չէր էլ կարող խոսք  
գնալ հայերեն կամ ռուսերեն թարգմանությունների  
տպագրության մասին: Այսօր ինքնիշխան Ղազախստա-  
նում գրականագետները, թարգմանիչները և հրատարա-  
կիչները զգալի աշխատանք են տանում Մադժան Ժումա-

բաևի ստեղծագործության և Ալաշ Օրդուի գրականության ուսումնասիրության և պրոպագանդման ուղղությամբ: Ղազախ ժողովուրդը աբայան, շաքարիմյան ու ժումաբանյան հպարտությամբ է սիրում իր լեզուն, աբայան, շաքարիմյան ու ժումաբանյան ինքնաքննադատությամբ, բայցև հավատով է նայում իր անցյալին, ներկային և ապագային:

Խորհրդային շրջանում հայ-ղազախական գրական կապերի ամրապնդման գործում բացառիկ ավանդ են ունեցել մեր պոեզիայի երեք դասականները՝ Գևորգ Էմինը, Սիլվա Կապուտիկյանը և Պարույր Սևակը: Ղազախական կինոժամանակագրությունն ամրագրել է ժողովուրդների բարեկամության ավանդույթների առհավատյալ՝ անգնահատելի մասունք-կադրեր՝ հայ մշակույթի գործիչների այցը Ալմա Աթա, նրանց՝ հարգանքի տուրքի մատուցումը մեծն Աբայի հուշարձանին, հանդիպումները ղազախ գրչեղբայրների հետ... Ապա և ղազախական մշակույթի գործիչների ներկայացուցչական պատվիրակության ժամանումը Երևան, հանդիպումները աշխարհահռչակ գեղանկարիչ Մարտիրոս Սարյանի արվեստանոցում, ականավոր ղազախ երգչուհի Բիբիգյուլ Տուլեգենովայի՝ հայերեն «Ծիծեռնակ» երգի անմոռանալի կատարումը: Արդեն այն ժամանակ, ինչպես վկայում էր Գևորգ Էմինը, բյուրեղացվել և իրականացվել էր իր պրագմատիկությամբ ու կոնկրետությամբ այդպես էլ տասնամյակներ շարունակ չգերազանցված մի համագործակցային ծրագիր՝ հայ բանաստեղծների ստեղծագործությունների ղազախերեն և

ղազախ քանաստեղծների ստեղծագործությունների հայերեն թարգմանությունների հրատարակությունը: Այդ հիշարժան նախաձեռնությունը հետագայում վերաճելու էր քարի ավանդույթի, նորովի էր հառնելու նորանկախ Ղազախաստանում ու Հայաստանում, և այսօր ղազախ ընթերցողները կարող են նաև մայրենի լեզվով ծանոթանալ ոչ միայն հայ գրականության դասականների՝ Սուրբ Գրիգոր Նարեկացու, Նահապետ Քուչակի, Սայաթ-Նովայի, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Դանիել Վարուժանի, Վահան Տերյանի, Եղիշե Չարենցի, Հովհաննես Շիրազի, Համո Սահյանի, Միլվա Կապուտիկյանի, Գևորգ Էմինի, Պարույր Սևակի ստեղծագործություններին, այլև հայաստանյան ժամանակակից գրական գործընթացներին:

Այո, դեռ խորհրդային տարիներին Հայաստանի և Ղազախստանի ստեղծագործական (մասնավորապես գրողների) միությունների, մեր թարգմանիչների և հրատարակիչների միջև ծավալված համագործակցության հզոր արմատները չէին կարող չձլարձակել նաև մեր ինքնիշխան երկրներում՝ չնայած 1990-ական թվականների ժամանակավոր տնտեսական ու կազմակերպական դժվարություններին: Հայաստանում ռուսերենով հրատարակվող «Литературная Армения» («Գրական Հայաստան») և Ղազախստանում հրատարակվող «Элем әдебиеті» («Համաշխարհային գրականություն») հեղինակավոր հանդեսների խմբագրությունների՝ արդեն 2000-ական թվականներին

ծավալված բացառիկ արգասաբեր փոխգործակցության մի օրինակ է հայ ժամանակակից արձակագիրների և բանաստեղծների ստեղծագործությունները դազախերեն թարգմանելու նախաձեռնությունը, վերոհիշյալ դազախական գրական պարբերականի՝ մի սովոր համարը «հայկական նյութին» հատկացնելը: Բոլորիս համար խոսուն է այդ հանդեսի գլխավոր խմբագիր Քենես Յուսուպի՝ բացառիկ համարի առաջնորդող հոդվածի վերնագիրն իսկ՝ «Հայաստան, Արարատ, Մատենադարան»: Համարում ներկայացվել են Սիլվա Կապուտիկյանի, Թաթուլ Բոլորչյանի, Լևոն Բլբուլյանի, Հենրիկ Էդոյանի բանաստեղծությունները, Հրանտ Մաթևոսյանի, Մարգո Ղուկասյանի, Պատրիկ Արտեմի, Սուսաննա Հարությունյանի արձակ և հրապարակախոսական գործերը, Հովիկ Վարդումյանի հարցազրույցը՝ Հրանտ Մաթևոսյանի հետ: Մեր դազախ բարեկամներն ոչ թե պարզապես «արարողակարգային նկարագարդումներ» են տպագրել, այլ վերոհիշյալ համարը հիրավի «հարստացրել-նուկեգօծել» են մեծն Մարտիրոս Սարյանի տարբեր տարիների մի շարք գլուխգործոցների (այդ թվում «Բանաստեղծ Եղիշե Չարենցի դիմանկարը», 1923թ., «Արարատյան դաշտը», 1945 թ.) արտատպություններով, ինչն ինքնին հրատարակիչների հոգու ջերմության մի ուրույն վկայություն է<sup>18</sup>:

---

<sup>18</sup>Տե՛ս «Әлем әдебиеті», 2008, N 1: Շնորհակալություն ենք հայտնում այս համարի հրատարակությանը հայկական կողմից սատարած «Литературная Армения» հանդեսի գլխավոր խմբագիր Ալբերտ

Դեռևս անցյալ դարի երեսունական թվականներից սկսվել է դազախ հեղինակների ստեղծագործությունների՝ հայերեն թարգմանության և հրատարակության գործընթացը: Առանձին գրքերով լույս են տեսել Ջամբուլ Ջաբանի, Աբայ Կունանբանի, Գաբիտ Մուսրեպովի, Անուար Ալիմժանովի, Իլյաս Եսենբեռլինի երկերը<sup>19</sup>: Նախ շնորհիվ ոուսերեն դասական թարգմանության, այնուհետև նաև հայերեն (բազմահազար տպաքանակով) լույս ընծայման հայաստանյան ընթերցասեր հասարակայնությանը քաջածանոթ էին Մուխտար Աուեզովի գլուխգործոցը՝ “Աբայի ուղին” (հայերեն են թարգմանվել վեպ-էպոպեայի առաջին երկու գրքերը), նրա վիպակները և պատմվածքները<sup>20</sup>: Հայերեն հրատարակվել են նաև դազախական արձակը և պոեզիան ներկայացնող՝ տարբեր հեղինակների ստեղծա-

---

Նալբանդյանին և գլխավոր խմբագրի տեղակալ Սերգեյ Մուրադյանին: Հիշյալ հայաստանյան պարբերականի հրապարակումներից տե՛ս նաև Ազат Аким, Армяне (Перевод с казахского А. Утегенова), // «Литературная Армения»N 1, 2013, стр. 146-155, Айым Исмаилова, “И весь этот беспредельный щедрый мир...” // «Литературная Армения»N 4, 2017, стр. 167-169:

<sup>19</sup>Տե՛ս Ջ. Ջաբան, Երգեր և պոեմներ, Երևան, 1938, Ա. Կունանբան, Հատընտիր, Երևան, 1970, Գ. Մուսրեպով, Մեկ անգամ և ամբողջ կյանքում, Երևան, 1980, Ա. Ալիմժանով, Մուրհանդակ, Երևան, 1982, Ի. Եսենբեռլին, Սիրահարները, Երևան, 1984, նույնի Ոսկե Հորդա, Երևան, 1989:

<sup>20</sup>Տե՛ս Մ. Աուեզով, Աբայ, Երևան, 1952, նույնի Կրակոց լեռնանցքում (ժողովածու), Երևան, 1988:

գործություններ ամփոփող ժողովածուներ<sup>21</sup>: Հայ մանուկների մի քանի սերունդների սիրելի հեքիաթն է դարձել “Ալդար-Քոսեի հրաշք-մուշտակը”, որը զետեղվել է մեր գրականության վաստակաշատ մշակ Խաչիկ Հրաչյանի կազմած ու խմբագրած «Մարգարիտներ» ժողովածուում<sup>22</sup>:

\* \* \*

ԵՊՀ-ում շուրջ տասը տարի գործում է Ղազախերենի, Ղազախաստանի պատմության ու մշակույթի կենտրոնը (հպարտությամբ արձանագրենք՝ առաջին նմանօրինակ կենտրոնը ԱՊՀ տարածքում), որը Ղազախաստանի Կառավարության արժեքավոր նվերն է Հայաստանյան Մայր բուհին, և որտեղ մշտապես անց են կացվում միջոցառումներ՝ նվիրված ղազախական մշակույթին: Ժամանակակից համակարգչային տեխնիկայով հագեցած կենտրոնն ունի գրադարան, թվային կրիչների հավաքածու, որոնք պարունակում են լեզվաբանության, գրականության, պատմության, տնտեսության, մշակութաբանության թեմատիկայով

---

<sup>21</sup> Տե՛ս Ղազախ բանաստեղծներ, Երևան, 1968, Ղազախական պատմվածքներ, Երևան, 1968: Ղազախ հեղինակների հայերեն թարգմանությունների մասին մանրամասն տե՛ս Շ. Խաչատրյան, Մուխթար Աուեզովի հայերեն թարգմանությունների շուրջ // Արևելագիտության հարցեր, 14, Երևան, ԵՊՀ հրատ., 2018, էջ 299-314:

<sup>22</sup> Տե՛ս Մարգարիտներ, ՍՍՌՄ ժողովուրդների հեքիաթներ, Հայպետհրատ, Երևան, 1952, էջ. 28-30:

տեղեկատվություն: Այստեղ ներկայացված են նաև դազախական ժողովրդական կիրառական արվեստի գեղեցիկ նմուշներ:

Կենտրոնում ներկայացված են այն ականավոր մտածողների ու գրողների դիմանկարները, ումով հպարտանում է դազախ ժողովուրդը՝ Խոջա Ահմեդ Յասավիի, Աբայ Կունանբանի, Չոկան Վալիխանովի... Միևնույն շարքում՝ կողք կողքի են այսօր Ահմեդ Բայտուրսինովը, Մադժան Ժումաբաևը, Բաուիրժան Մումիշուլին, Իլյաս Եսենբեռլինը, Մուխտար Աուեզովը... Պատմությունը և գիտաբանական ավանդույթը հաշտեցնում են երբեմնի ընդդիմախոսներին. ժամանակակից դազախական հասարակական-քաղաքական հոլովությունում առանց նախապաշարմունքի ու հավասարապես հարգանքով են հնչում ազգային մշակույթի երախտավորների անունները՝ անկախ նրանց քաղաքական հայացքներից ու կուսակցական պատկանելիությունից:

Հայաստանում Ղազախստանի դեսպանատունը մշտապես աջակցում է դազախական մշակույթի պրոպագանդմանը նպատակառոտված միջոցառումների կազմակերպմանը: Հիշարժան են ԵՊՀ վերոհիշյալ կենտրոնում բազմիցս իրականացված գրական ցերեկույթները և ընթերցումները՝ Ղազախստանի և Հայաստանի ճանաչված գրողների, գրականագետների և թարգմանիչների մասնակ-

ցությամբ<sup>23</sup>: Բնականաբար այստեղ են այցելում Երևան ժամանած գրեթե բոլոր դազախական պաշտոնական, գիտության և արվեստի գործիչների պատվիրակությունները, լրագրողները, Բայց ոչ պակաս կարևոր է, որ այստեղ մշտապես ընթանում են դազախերենի դասընթացներ, կարդացվում են դասախոսություններ՝ նվիրված դազախական մշակույթին ու պատմությանը: Հատկանշական է, որ այստեղ դասավանդում են ոչ միայն Նուր-Սուլթանի Լ. Ն. Գումիլյովի անվ. Ազգային Համալսարանից համապատասխան պայմանագրի համաձայն հատուկ մեր երկիր գործուղվող մասնագետները, այլև Հայաստանում Ղազախստանի դեսպանատան բարձրաստիճան դիվանագետները (չեմ կարող չընդգծել՝ իրենց հանգստի ժամերի հաշվին, մայրենի լեզուն բացառիկ մի նվիրումով պրոպագանդելով և իսկական հայրենասիրության «կրկնօրինակման տիպար» ծառայելով այլ երկրների դիվանագետների համար): Հայաստանի և Ղազախստանի առաջատար բու-

---

<sup>23</sup> Մասնավորապես 2014 թ. կենտրոնում կազմակերպվել են գրական ընթերցումներ՝ Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանի, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, պրոֆ. Հենրիկ Էդոյանի և Ղազախստանից հատուկ ժամանած ճանաչված գրողների՝ Բախիտջան Կանապյանովի և Կայրատ Բակբերգենովի մասնակցությամբ: Ներկայացվել են դազախ (առանձնահատուկ նշենք՝ Սաղժան Շումաբանի) և այլ ազգեր ներկայացնող բանաստեղծների՝ Կ. Բակբերգենովի կողմից վարպետորեն ռուսերեն թարգմանված ստեղծագործությունները (Էդվարդ Միլիտոնյանի բանաստեղծությունների թարգմանությունները տե՛ս Կайрат Бакбергенов, Отраженные пространства: Книга переводов, Алматы, 2009, стр. 147-152):

հերը ակտիվորեն համագործակցում են նաև հայաստանի շահագրգիռ ձեռնարկատերերի և ղազախական գրականության ասոցիացիաներում մասնագիտացող դոկտորանտների, ասպիրանտների և ուսանողների պատրաստման գործընթացում:

Հայաստանը և Ղազախստանը համագործակցում են ամենատարբեր հարթակներում: Մեր երկու երկրները դաշնակցում են ՀԱՊԿ և ԵԱՏՄ շրջանակներում: Ժամանակակից Ղազախստանը ամբողջ աշխարհում հեղինակություն վայելող և դինամիկ զարգացող պետություն է: Ղազախստանի նվաճումները հայ հասարակայնությանը ներկայացնելու ուղղությամբ զգալի աշխատանք է կատարում Եվրասիական փորձագիտական ակումբը. մեր հեղինակավոր թերթերից մեկում՝ «Ազգ»-ում ու տարբեր լրատվական կայքերում, բնականաբար՝ նաև գիտական հանդեսներում պարբերաբար հրատարակվում են Ղազախստանի արտաքին ու ներքին քաղաքականությունը լուսաբանող հոդվածներ<sup>24</sup>:

---

<sup>24</sup>Մասնավորապես տե՛ս Арам Сафарян, Об ожиданиях Армении от председательства Казахстана в организации исламского сотрудничества // «21-ый век», 4 (20), Ереван, 2011, стр. 53-59, Арам Сафарян, Артур Атаев, К вопросу о сотрудничестве между Арменией и Казахстаном // «21-ый век», 4 (33), Ереван, 2014, стр. 69-79, Արամ Մաֆարյան, Ղազախստանը հրավիրում է զբոսաշրջիկներին, «Ազգ», 12.04.2019, <https://www.azg.am/AM/2019041219>, նույնի Բարեկեցիկ կղզին Կենտրոնական Ասիայում, «Ազգ», 09.05.2019, <https://www.azg.am/AM/2019050918>, նույնի Կենտրոնասիական միություն ստեղծելու Նուրսուլթան Նազարբաևի տեսլականը,

Հայ և դազախ ղիվանագետների, արվեստագետների, բուհական դասախոսների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համագործակցության մի վառ վկայություն էր նաև 2017 թվականին Երևանում անցկացված դազախական ֆիլմերի փառատոնը: Ղազախստանի պատվիրակները և նրանց հայ գործընկերները փառատոնի անցկացման օրերին բազմիցս ընդգծում էին երկու երկրների կինեմատոգրաֆիստների միջև ստեղծագործական ակտիվ շփումների վերականգնման անհրաժեշտությունը: Ակնհայտ էր փառատոնի հանդեպ դազախական և հայկական ՋԼՄ-ների, և որ է՛լ ավելի կարևոր է, հանդիսատեսի (հատկապես ուսանողների) բացառիկ հետաքրքրությունը: Կինոդահլիճում դեռ խորհրդային տարիներին Ղազախստանում զինվորական ծառայություն անցած ու ճակատագրով կապված կամ պարզապես գործուղումների բերումով այնտեղ երբևէ եղած մեր վետերաններին ամենևին չէին զիջում երիտասարդ հանդիսատեսները, և հաճելի էր, որ փառատոնի կազմակերպիչներին հաջողվեց մի հիրավի սրտաբուխ զրույց սկսել նրանց հետ: Կարծում ենք, կինոփառատոնի հաջողությունն էապես պայմանավորված էր այն իրողությամբ, որ ժամանակակից Ղազախստանի կինեմատոգրաֆիստները չեն խուսա-

---

«Ազգ», 17.05.2019, <https://www.azg.am/AM/2019051713>, նույնի Ընտրվեց Ղազախստանի երկրորդ նախագահը, «Ազգ», 14.06.2019, <https://www.azg.am/AM/2019061418>, նույնի Եթե որոշեք տեսնել Ալմաթի քաղաքի ու բնության հրաշքները, «Ազգ», 19.07.2019, <https://www.azg.am/AM/2019071921>:

փում ամենասուր հարցադրումներից, խիզախում են բացեիքաց լուսաբանել իրենց Հայրենիքի պատմության թե՛ լուսավոր, թե՛ ողբերգական էջերը:

\* \* \*

Մանկությանս հուշերում անջնջելի են երջանկահիշատակ հորս ֆիլատելիստական համեստ հավաքածուում գորովանքով պահվող համաշխարհային մշակույթի գործիչներին նվիրված դրոշմանիշների շարքից ծանոթ Չոկան Վալիխանովի դիմանկարը, մեր հին, պապական գրապահարանում՝ Մ. Աուեզովի «Աբայի ուղին» երկի ռուսերեն թարգմանությունը (հայերենը լույս էր տեսնելու շա՛տ տարիներ անց) և գրույցները Ալմա-Աթայում ապրող Մաֆարյանների մասին, ովքեր հայտնվել էին Ղազախստանում ստալինյան բռնաճնշումների տարիներին, բայց վերապրել էին արհավիրքը շնորհիվ հասարակ դազախ աշխատավորների օգնության: «Ովքե՞ր են դազախները» մանկական հարցիս խորհրդային կրթություն ու դաստիարակություն ստացած հայրս տալիս է պարզ ու միանշանակ պատասխան. «Եղբայրական ժողովուրդ»:




Ф. М. Достоевскій. IV.

Т во „Прозвѣщенію“ въ Сиб.

**Ф. М. Достоевскій и Чоканъ Валихановъ.**  
(Съ фотографіи, снятой въ Семипалатинскѣ въ 1858 году)

Շուրջ կես դար է անցել, և ես, բազմիցս և ակնդետ վերընթերցելով Չոկան Վալիխանովի և Ֆ. Մ. Դոստոևսկու անգուգական-անեղծ-նախանձելի բարեկամությունը վերակենդանացնող նամակները, աուեզովյան վեպ-էպոպեայի «Տաստյանայի երգը դազախական ստեպում» հատվածը, գիտակցել եմ, որ ազգային ինքնության անվերապահ հաստատման և համամարդկային անսասան արժեքների հրամայականով է «կոփվել» մեր ժողովուրդների հոգևոր եղբայրակցությունը՝ հեռվից հեռու միավորելով ցարական սպայի համազգեստով դազախ լուսավորչին ու խաչատուր Աբովյանին, Աբային և Հովհաննես Թումանյանին, Մուխտար Աուեզովին և Դերենիկ Դեմիրճյանին:

Անգամ խրուշչովյան ու բրեժնևյան իշխանության տարիներին մեր հալածված ընտանիքում զգուշանում էին խոսել ստալինյան բռնությունների ու պետական տեռորի մասին, բայց տասնամյակներ անց ես գիտեմ, որ մի քանի Մաֆարյաններին, ինչպես և դազախական տափաստան արտրված հազարավոր հայերին ու միլիոնավոր խորհրդային մարդկանց՝ ռուսների, գերմանացիների, դրիմի թաթարների, ինգուշների, հրեաների և այլ ժողովուրդների ներկայացուցիչների փրկել են իրենց դազախ եղբայրները, ովքեր իրենք էլ մազապուրծ են եղել երեսունական թվականների զարհուրելի սովից՝ հիրավի համազգային մի այնպիսի աղետից, որին սահմանում տալն իսկ այսօր էլ այդքան դժվար է:



Անմոռաց են «ԷՔՄՊՈ 2017»-ի շրջանակում անցկացված միջազգային գրական Բիենալեի օրերը՝ կենդանի շփումները դազախական և այլ ժողովուրդների գրականությունների «կենդանի դասականների», հանդիպումները հեղինակավոր գիտնականների, գրահրատարակիչների, անձայրաձիր Ղազախստանի բոլոր մարզերից նախկին մայրաքաղաք հատուկ ժամանած գրադարանավարների, լրագրողների, տարբեր դազախական բուհերի դասախոս-

ների և ուսանողների հետ: Բայց հիշողությանս մեջ անջրնջելի դաջվել է Ալմա Աթիի մեր հյուրանոցի հարակից այգում տեղադրված արձանը՝ մոր ձեռքերին սովամահության դատապարտված որդին է, առջևում՝ շրջված – դատարկ դագանը... Հուշարձանը խորհրդանշում է ողբացող Մայր Ղազախստանը՝ երկրային Ստաբատ-Մատեո՝ անկարող օգնել սեփական զավակին...

Ամեն առավոտ անբացատրելի մի ուժ ինձ մղում էր դեպի այս հուշարձանը՝ խոնարհիվելու ժողովրդի մեծ վշտի առջև... Անընդհատ վերհիշում էի ծնողների քսորի բերումով Ղազախստանում ծնված ու մանկությունն անցկացրած համալսարանական ավագ գործընկերներիցս մեկի գրույցները, թե ինչպես են դազախ գյուղացիները իրենց հետ կիսել վերջին հացը, վերջին «ապոքս» խնձորը և... հոգու անսպառ ջերմությունը: Ղազախ ժողովուրդը, որի զավակներից ամեն երրորդը գոհ էր գնացել սովին կամ ստիպված էր եղել արտագաղթել Հայրենիքից և ում երկիրը «խորհրդային կենտրոնի» կամքով վեր էր ածվել մի անծայրածիր «համամիութենական քսորավայրի», այդպես էլ չչարացավ հասարակական գիտակցության մեջ երբևէ չսպիացող վերքերից, ուժ գտավ իր մեջ հառնելու... Այդքան սիրելի դառնալու և ցկյանս այդպիսին մնալու բոլոր քսորական-աղետյալների համար...

Փամանակակից աշխարհում չեն կարող լինել «փակ թեմաներ»: Որքանո՞վ ենք պատրաստ ժողովուրդների չամոքվող ցավի մասին էլ խոսել... Խոսել ինչպես հարկն է՝ հարազատի ցավով ու նրբանկատությամբ՝ անզգուշորեն իսկ չվիրավորելով ողբացող ոգին... Խոսել այնպես, ինչ-

պես տասնամյակներ առաջ պատգամում էր մեզ հայ և դա-  
զախ գրողների նվիրյալ-բարեկամը՝ Միխայիլ Դուդինը՝  
հացի և երգի հավերժ ու անպակաս ձգտման բարեմաղ-  
թանքով, կենսահաստատ հավատի սիրով...

Այսօր մեր ժողովուրդների գրական գանձարանները  
հայ և դազախ ընթերցողներին ներկայացնելիս մենք (բա-  
րեբախտաբար) կաշկանդված չենք անհարկի քաղաքակա-  
նացվածությամբ, գաղափարախոսական որևէ պարտադ-  
րանքով: Անշուշտ, մեզ ուղղորդում է մեկմեկու հոգևոր և  
ազգային-մշակութային արժեքների նկատմամբ տաճած  
հարգանքի և գորովանքի հրամայականը:

Ղազախական հարուստ գրականությունը մեկ սեղմ անթո-  
լոգիայում ներկայացնելու հույժ պատասխանատու գործը  
ստանձնած մեր համեստ ստեղծագործական խմբի համար  
աներկբա էր առավելագույն «նորարարական մոտեցման»  
անհրաժեշտությունը: Վերահրատարակելով դազախա-  
կան պոեզիայից՝ Գևորգ Էմինի, Միլվա Կապուտիկյանի և  
խորհրդային շրջանի մեր այլ ճանաչված բանաստեղծների  
մի շարք թարգմանություններ ու կարևորելով ժիրաունների,  
Շաքարիմի, Մադժան Ժումաբաևի և ալաշօրդուական  
գրականության, խորհրդային ամենանշանավոր ռուսագիր  
«շեստիդեյատնիկներից» մեկը համարվող դազախ բա-  
նաստեղծ և հրապարակախոս Օլժաս Սուլեյմենովի, ժա-  
մանակակից դազախ հեղինակների ստեղծագործություն-  
ների նմուշների հայերեն թարգմանաբար առաջին հրա-  
տարակության բացառիկ հնարավորությունը՝ համագոր-  
ծակցության առաջարկով դիմել ենք մեր առաջատար բա-  
նաստեղծ-թարգմանիչներին: Եվ ահա, Շալկիիզ Ժիրաունի,

Շաքարիմի, Մաղժան Ժումաբակի, Օլժաս Սուլեյմենովի բանաստեղծությունները առաջին անգամ հայերեն են հնչում շնորհիվ Վարուժան Խասատուրի, ով լայն ճանաչում է ստացել Հայաստանում և արտերկրում Օմար Խայամի և Մահթումկուլի Ֆրագիի ստեղծագործությունների բացառիկ վարպետությամբ կատարված թարգմանություններով: Ասան Կայգիի, Կատուգան Ժիրաուի, Օլժաս Սուլեյմենովի, Մուկագամ Մակատակի, Ֆարիգա Ունգարսինովայի, Ուլուգբեկ Եսդաուլետովի ստեղծագործությունները առաջին անգամ հայերեն է թարգմանել դազախ բանաստեղծների վաղեմի բարեկամը՝ Էդվարդ Միլիտոնյանը:

Ղազախական թե՛ դուսական և թե՛ ժամանակակից բանաստեղծություններից թարգմանություններ են կատարել նաև Գագիկ Դավթյանը և Լևոն Բլբուլյանը:


Ընթերցողի դատին հանձնելով դազախական հարուստ գրականության տարբեր դարաշրջանները և ժանրերը հնարավորինս համակողմանի ներկայացնելուն նպատակաուղված սույն անթոլոգիան՝ աշխատասիրողների խումբը լիահույս է, որ Ղազախստանի Կառավարության աջակցությամբ իրականացված այս աննախադեպ մշակութային ծրագիրը ունենալու է իր տրամաբանական շարունակությունը. հայերեն թարգմանաբար հրատարակվելու են դազախ դասականների և ժամանակակից (այդ թվում՝ երիտասարդ) հեղինակների նորանոր ստեղծագործություններ:

*ԱԼԷՔՍԱՆԴՐ ՄԱՃԱՐՅԱՆ*

*Երևանի պետական համալսարանի  
թուրքագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր*



ՀԵՔԻԱԹՆԵՐ





## ՎԵՋԻՐԻ ԴՈՒՍՏՐԸ

Կար մի խան: Նա շատ էր լսել կանանց անհավատարմության մասին, հենց այդ իսկ պատճառով չէր համարձակվում ամուսնանալ:

Յուրաքանչյուր երեք օրը մեկ նա մի աղջիկ էր իր մոտ ընդունում էր, իսկ հետո սպանում նրան:

Այսպես հերթը հասավ վեզիրի աղջկան: Վեզիրն իմանալով այդ, տուն եկավ, սկսեց լաց լինել: Նրա դուստրը հարցրեց.

-Ինչի՞ համար ես այդպես լացում: Հայրը պատասխանեց, որ աղջկան մահ է սպասվում: Այնուհետև դուստրն ասաց.

-Մի՞ արտասվիր: Աստծո կամքն է, ես կամ կմեռնեմ, կամ կազատեմ բոլոր աղջիկներին այդպիսի խանից:

Վեզիրն դստերն հանձնեց խանին: Սկզբից նեթ աղջիկը խանին սկսեց գրավել զանազան հետաքրքիր պատմություններով: Խանը երեսուն օր լսում էր և մահապատժի չէր ենթարկում աղջկան: Ժողովուրդը ուրախացել էր, Մահապատիժները դադարել էին:

Մի օր խանը վեզիրի դստերն ասաց.

-Ես մեկ տարով գնալու եմ որսի և, երբ վերադառնամ, դու այդ ընթացքում ինձ մի որդի կծնես, որն ինձ նման է պետք է լինի: Իմ ձին էլ պետք է քուռակ ծնի, որը պետք է նման լինի իմ սև նժույզին:

Երբ խանը գնաց, վեզիրի դուստրը կանչեցեց հորը և պատմեց նրան այդ ամենի մասին: Հայրը լաց եղավ: Բայց աղջիկը նրան հանգստացրեց և ասաց, որ մտադիր է գնալ արշավի: Նա հավաքեց իր սպասուհիներին, նրանց հագրեց տղամարդու հագուստներ, ինքն էլ խանի զգեստ հագավ: Եվ բոլորն ընթացան խանի հետևից: Նրանք սկսեցին որս անել: Պարզվեց, որ վեզիրի դստեր մարդիկ ավելի լավ որսորդներ են, քան Խանի մարդիկ:

Խանը նրանց հարցրեց.

-Ո՞վ եք դուք:

Նրանք ասացին, որ իրենց խանի որդին եկել է որսի, նրանք էլ նրա շքախմբից են են: Խանը ծանոթացավ խանի որդու հետ: Աղջիկը խանին հրավիրեց իր մոտ: Նա հյուրասիրեց վերջինինս և զրուցեց նրա հետ: Հետո նրանք սկսեցին շախմատ խաղալ: Աղջիկը հաղթեց խանին՝ շահելով ոսկի, արծաթ և սև նժույզը: Այս ամենը նա ուղարկեց իր հորը՝ պատվիրելով նրան, որ սև նժույզը զցի երամակի մեջ: Ինքը՝ աղջիկը, մնաց որսատեղում: Մի անգամ նա խանին ասաց.

-Դուք ինձ շատ դուր եկաք: Ես ունեմ մի քույր, որին չեմ կամենում, որ որևէ մեկի հետ ամուսնանա: Ես նրան կներկայացնեմ Ձեզ:

Խանը համաձայնվեց: Վրան կանգնեցրեցին: Աղջիկը հագնելով կնոջ զգեստ, եկավ խանի մոտ: Խանը անմիջապես սիրահարվեց նրան: Նա չէր ցանկանում բաց թողնել աղջկան, բայց վերջինս երկար չմնաց: Այսպես կրկնվեց մի

քանի օր: Երբ աղջիկը հեռացավ խանից, հագավ տղամարդու հագուստ և գնաց որսի:

Որոշ ժամանակ անց աղջիկը վերադարձրեց խանին ոսկին, արծաթը և սև նժույզը:

-Ինձ,- ասաց նա,- այս ամենը հարկավոր չէ... Այնուհետև խանը սկսեց խնդրել խանի որդուն՝ կնության հանձնել իր չարածճի քրոջը, բայց նա հրաժարվեց, ասելով, որ երդվել է, որ նրան որևէ մեկի հետ չի ամուսնացնելու:

Խանը աղաչեց խանի որդուն, որ քրոջը իր հետ բերի, երբ այցելի իրեն: Նա խոստացավ:

Աղջիկը խանից շուտ վերադարձավ տուն: Անցավ մի քանի օր, և նա որդի ունեցավ, իսկ սև ձին քուռակ բերեց:

Լուր հասավ, որ խանը վերադառնում է: Վեզիրի դուստրը դիմավորեց նրան: Խանը հարցրեց, թե արդյո՞ք նա կատարել է իր հրամանը: Նա պատասխանեց.

-Կատարել եմ..

Վեզիրի դուստրը խնդրեց բերել քուռակին: Այն հնարավոր չէր տարբերակել այն սև նժույզից, որով եկել էր խանը: Նա խնդրեց իր որդուն բերել, նրան նույնպես չէր կարելի զանազանել խանից: Խանը չհավատաց: Նա բարկացավ, որ վեզիրի դուստրը իրեն խաբել է:

Այնուհետև խանուհին հարցրեց նրան.

-Երբ տափաստանում որս էիք անում, այնտեղ չե՞ք հանդիպել այդպիսի-այսպիսի խանի որդու:

-Հանդիպել եմ, - ասաց խանը, - և որս արել նրա հետ:

-Արդյոք նա չշահե՞ց ձեր նժույզըը, հարցրեց վեզիրի դուստրը:

-Ես պարտվեցի:

-Նա ձեզ չծանոթացրե՞ց քոջ հետ,- հարցրեց վեզիրի դուստրը:

-Այո՛, այդպես էլ եղավ, - ասաց խանը: Այնուհետև վեզիրի դուստրն ասաց.

-Խանի որդին, ում հետ հանդիպեցիք, ես եմ, նրա քույրը նույնպես ես եմ:

Այդժամ խանը հակադարձեց.

-Ես քո պես հիմար կլին չեմ տեսել: Դու իսկապես ուզում ես խաբել ինձ: Դո՛ւրս եկ այստեղից ...

Վեզիրի դուստրը դուրս եկավ, հագավ տղամարդու այն հագուստը, որով նա եղել էր որսի ժամանակ և հանդիպեց խանին, ինչպես նաև վերահագցրեց տղամարդկանց հագուստով այն մարդկանց, որոնց հետ նա գնացել էր որսի, մարդ ուղարկեց խանին ասելու, որ իր ընկերը ժամանե է: Խանը դուրս եկավ դիմավորելու և ողջունեց նրան: Հետո խանը հյուրին ասաց.

-Իմ նողկալի կինը ցանկանում է խաբել ինձ և հորինել է զանազան հեքիաթներ:

Ու նա պատմեց ընկերոջը, թե ինչ է պատահել իր հետ տուն գալուց հետո: Հյուրը խանին ասաց.

-Նա հեն՞ ձեր կինն է:

Ապա վեզիրի դուստրը իր վրայից հանեց տղամարդու հագուստը: Խանը ապշեց, ընդունեց իր հիմարությունը և ամուսնացավ նրա հետ:

## ԽՈՐԱՄԱՆԿ ԱԼՂԱՐ-ՔՈՍԵՆ

Մի աուլում ապրում էր անտորուք խորամանկ Ալղար-Քոսեն: Նրա աչքերը սուր էին, ոտքերը՝ արագ, ձեռքերը՝ ճկուն, իսկ միտքը էլ ավելի ճկուն: Ալղար-Քոսեն սիրում էր կատակել և ծիծաղել, հատկապես հիմարների և թշվառների վրա: Նա հարստություն չունեի, բայց հնարքներով նա հաճախ էր ճարպոտ ոչխար կորզում:

Ժատրը Բեյը հիմար մարդ էր: Նա ուներ մեծաքանակ նախիր. երբ հաշվում էր գլխաքանակը, այն ավարտում էր մայրամուտին: Ինչ-որ առիթով նրա մոտ եկավ Ալղար-Քոսեն և ասաց.

Հարգարժան Բայ, ես երկու ռուբլի ունեմ, դրամապանակ չունեմ: Քայլում եմ, փողս ձեռքիս պահած, ձեռքս էլ հոգնել է: Շատ ուզում եմ ազատվել այդ գումարից: Կարո՞ղ ես ինձ օգնել:

-Արի, արի, կօգնեմ,- ուրախացավ բայը,- միայն ասա ինչպե՞ս

Երկու ռուբլով ինձ վաճառիր մի վատ ուլ, - ասաց Ալղար-Քոսեն:

Մտածեց-մտածեց բայը՝ ի՞նչ կարելի է վաճառել: Նախիրի մեջ բռնել էր մի կաղ, հալումաշ եղած ուլ, որին ընդա-

մենք երկու օր էր մնացել սատկելու, և այն սվեց Ալդար-Քոսեին.

-Վերցրու, չնայած ցավալի է էժան տալը: Լավ ուլ է: Տուր երկու ռուբլին:

Ալդար-Քոսեն վերցնում է ուլը և իր բռունցքի մեջ սեղմում է փողերը.

-Գիտե՞ս ինչ, հարգարժան բայ: Ես փոշմանեցի: Վերցրու երկու ռուբլին, ուլը իբրև վերադիր և տուր ինձ գառ:

«Վատ փոխանակում չէ, - մտածում է բայը.- երկու ռուբլի, ուլ, անգամ գառ»: Եվ նա գնաց գառ բռնելու: Նա բռնում է ամենալղարիկին և տալիս Ալդար-Քոսեն:

-Ահա, վերցրու: Լավ գառ է: Տուր ինձ երկու ռուբլին, և ուլը:

-Սպասի՛ր, սպասիր, հարգելի բայ, - ասում է Ալդար-Քոսեն,- Ես փոխեցի միտքս: ահա վերցրու երկու ռուբլի, ուլ, գառ, և ինձ տուր ընդամենը մեկ ոչխար, բայց թույլ տուր, որ ինքս ընտրեմ:

-Այս փոխանակումն ավելի շահավետ է, քան նախորդները,- ուրախացած մտածում է բայը.- երկու ռուբլի, գառ և վերադիր ուլ, ու այս ամենը մեկ ոչխարի դիմաց:

-Դե ինչ, ընտրիր:

Ալդար-Քոսեն իր համար ընտրում է ամենամեծ, յուղոտ ոչխարը, և բային տալիս երկու ռուբլի, գառ և ուլն էլ վերադիր, ուսին է դնում ոչխարը ու գնում, իսկ Զաթըր-բայը հրճվում է՝ ձեռքերը շփելով.

-Այ, հիմար Ալղար-Քոսե: Որքա՛ն բարիք տվեց մեկ ոչ-  
խարի դիմաց

Այդպես էլ բայը չհասկացավ, թե իրենցից ո՞վ է հիմար:

## ԱԼԴԱՐ-ՔՈՍԵԻ ՀՐԱՇՔ ՄՈՒՇՏԱԿԸ

Կատաղի ձմեռ էր, սարսափելի ցուրտ, այնպիսի ցուրտ, որ միայն աղվեսի մորթուց կարած մուշտակում կարելի էր մի քիչ տաքանալ:

Խորամանկ Ալղար-Քոսեն իր քրքրված, ծակ-ծակ քուրքի մեջ սառում էր ամեն օր: Մի օր նա այդ քուրքը հագին գնում էր տափաստանով: Ձեռքերն ու ոտքերը սառել էին, քիթը՝ կապտել, ամբողջ մարմնով դողում էր և չէր իմանում ինչպես անի, որ գլուխն ազատի ցրտից: Քամին սուրում էր, ականջները խլացնում:

Շուրջը ոչ մի տեղ յուրտի<sup>25</sup> ծուխ չի երևում: Իգուր է Ալղար-Քոսեն մտրակը թափահարում. Նրա նիհար ձին չի վազում, միայն բաշն է թափ տալի ու շարունակում է դանդաղ քայլեր:

«Ձիս վատն է, ճանապարհը՝ երկար, - գլուխն օրորելով ինքն իրեն ասում է Ալղար-Քոսեն: - Դեռ ինչքա՛ն պիտի գնամ. Շան հաչոց չի լսվում, տափաստանում յուրտեր չեն երևում: Ցուրտ է ու քամի, ես բոլորովին կսառչեմ»:

Հանկարծ տեսնում է՝ դիմացից մի ձիավոր է գալիս:

---

<sup>25</sup> Ցուրտա-քոչվոր ցեղերի վրան

Չի ու վազքից Ալդար-Քոսեն հասկացավ, որ եկողը բայ<sup>26</sup> է: Խորամանկ Ալդար-Քոսեն իսկույն մտածես, թե ինչ պետք է անի: Նա իր քրքրված քուրքի կոճակներն արձակեց, օձիքը բաց արեց, ինքն էլ թամբի վրա ձգվեց ու սկսեց մի ուրախ երգ երգել:

Ճանապարհորդները հասան իրար, ձիերը կանգնեցրին, բարև տվին, բարև առան:

Բայը աղվեսի մորթուց կարած մուշտակի մեջ կուչ է եկել ցրտից: Ալդար-Քոսեն գլխարկը թեք է դրել, փնչացնում է, ոնց որ ամառվա թեժ արևից դաղվելիս լինի:

-Մի թե դու չես մրսում, - հարցրեց բայը:

-Այդ քո մուշտակի մեջ կարելի է մրսել, իմ քուրքի մեջ ես շոգում եմ, - պատասխանեց Ալդար-Քոսեն:

-Այդ ի՞նչ քուրք է քո քուրքը – զարմացած հարցրեց բայը:

-Չէ՞ս տեսնում:

-Տեսնում եմ, որ ազոավները զգզել են քո քուրքը, և ծակերն ավելի շատ են, քան մորթին, - ծաղրեց բայը:

-Այ, հենց լավն էլ այդ է, որ ծակերը շատ են, քամին մի ծակից ներս է մտնում, մյուսից դուրս գալիս: Հենց դրա համար էլ ես չեմ մրսում:

«Հնարավոր է սրա հրաշք-մուշտակը ճանկ զցել», ինքն իրեն մտածում է բայը:

«Ա՛յ թե տաք կլինի, եթե բայի մուշտակը իմ հագին լինի», մտածում է խորամանկ Ալդար-Քոսեն:

-Ծախիր ինձ քո քուրքը, -ասում է բայը Ալդար-Քոսեին:

---

<sup>26</sup> Բայ-հարուստ մարդ

-Չեմ ծախի, իմ քուրքը չլինի՝ ես իսկույն կսառչեմ:

-Փոխենք իմ մուշտակի հետ, աղվեսի մորթուց է կարված, - առաջարկում է բայր:

Ալղարը ձևացնում է, թե լսել անգամ չի ուզում, բայց մի աչքով նայում է տաք մուշտակին, մյուսով՝ բայի նժույզին:

-Մուշտակս կտամ, փող էլ վրան կտամ, - նորից առաջարկում է բայր:

-Փող հարկավոր չի: Այ, եթե ձեռք էլ վրան տաս, կմտածեմ:

Բայր ուրախացավ, համաձայնեց, հանեց մուշտակը, ձիուց իջավ ու տվեց նրան:

Ալղար-Քոսեն բայի տաք մուշտակը հագավ, նստեց նրա նժույզը ու քամու առաջն ընկնելով սլացավ:

Այ թե լավ էր Ալղար-Քոսեի համար... Տաք մուշտակի մեջ փաթաթված, կայտառ ձին նստած՝ յուրտից-յուրտ էր շրջում:

Ամեն տեղ նրան հարցնում էին.

-Որտեղից է քեզ այդ աղվեսի մուշտակը և հրեղեն ձին:

-Ես մի հրաշք-մուշտակ ունեի, յոթանասուն ծակ կար վրան, իննսուն կարկատան...

Մարդկանց զվարճացնելով՝ Ալղար-Քոսեն պատմում էր, թե ինչպես բայր հարձակվեց նրա գզգզված քուրքի վրա ու փոխարենը տվեց իր տաք մուշտակը:

Մարդիկ ծիծաղում էին ու Ալղար-Քոսեյին կումիսով հյուրասիրում:

Ամեն անգամ, երբ ծիծաղը դադարում էր, Ալդար-Քոսեն  
ասում էր.

-Ճամփի հեռու կամ մոտիկ լինելը կիմանա նա, ով այդ  
ճամփան կգնա: Դառն ուտելիքը անուշ ուտելիքից կտար-  
բերի նա ով կուտի:

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ





*ՀԱՍԱՆ ԿԱՅԳԻ ԺԻՐԱՈՒԻ*

*(14-15-րդ դդ.)*

*Асан Кайго Жыргы*

**ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԸ ՈՒ ԲԱՌԸ**

Թանկարժեք քարը ջրերի խորքում  
Լուռ թաքնվել է աչքերից մարդկանց:  
Իսկ մեր խոհերի լուռ ընդերքում,  
Որպես ադամանդ բառերն են թաքչած:

Ջրի տակ պառկած թանկարժեք քարին,  
Վերս է նետում թևը ավիքի,  
Իսկ բառը մութի խորքերից լռին  
Լոկ վեր է ելնում ուռկանով մտքի:

## ԿՅԱՆՔՈՒՄ ԻՆՉԸ ՀԱՄԱՐԵՆՔ ԴԺԲԱԽՏՈՒԹՅՈՒՆ

Կյանքում ինչը համարենք դժբախտություն,

Տափաստանը, ուր նեղ է հոտերի համար

Դժբախտություն է:

Բարի խոսքը, որ մենք

Չհասցրինք ասել

Դժբախտություն է:

Ահա ծերերը հարազատներ կորցրած

Եվ գրկված մոտիկների խնամքից

Դժբախտություն է:

Մորաքույրը, որ չի հարգում իր ցեղը,

Չափահաս դստեր համար

Դժբախտություն է:

Հովիտները, ուր չեն արածում նախիրներ

Եվ խոսը կորչում է իզուր

Դժբախտություն է:

Ստեպների լճերը, որտեղ չեն լողում

Սագերն ու բադերը

Դժբախտություն է:

Գիտունները, որոնք չեն ուսուցանել

Հարգել արժանավորին

Դժբախտություն է:

Իշխանավորը, որ չգիտի ինչ ճանապարհով

Իր ժողովրդի կյանքը բարելավել,

Ինչքան էլ, որ լավը լինի

Նրանց համար, ում ղեկավարում է,

Դժբախտություն է:

ԿԱԶՏՈՒԳԱՆ ԺԻՐԱՈՒԻ

(15-րդ դ.)

*Kazıyan Mıray*

ՈՒՂԵՐԶ ՋԱՆԻԲԵԿ ԽԱՆԻՆ

Հարազատ ստեպում կենդանիներ կային շատ,  
Լճերում՝ ձկներ խայտացող,  
Իսկ անտառներում մեր մշտապես առատ  
Ե՛վ միրգ կար, և՛ որսն էր հաջող:  
Դու չցանկացար ապրել ավին ժեմի,  
Եվ տեղափոխվեց մեր տոհմը:  
Ուիլը նույնպես լավն էր և արժանի,  
Արածում էր խաղաղ հոտը:  
Ջրերն Ուիլի արցունքից էլ մաքուր,  
Բայց դու չուզեցիր և այդ տեղը,  
Ստիպեցիր Ուիլից քոչել մի օր՝ ո՞ւր,  
Զգիտեիր և՛ դու, և՛ ցեղը:  
Ինչո՞ւ ես այս ծաղկուն հովիտներից լայն  
Տեղահանում նորից ժողովրդին,  
Երկու հեծյալի ձիերով լավագույն  
Ուղարկեցիր փնտրելու վայր ընտիր:

Եվ ահա մեզ տարար հեռավոր Եդիլ,  
Ուր վեճ է միշտ և զգվոտոց,  
Եվ այստեղ հանգրվան չհիմնեցիր էլի,  
Չգիտենք որտեղ ապրենք և ո՞նց:  
Իսկ եթե հերթով փոխեիր հարմար  
Եդիլն ու Յահկը և ասեիր մեզ  
Յահկը՝ արոտավայրի համար,  
Իսկ Եդիլը՝ ձմեռանոց: Ահա այսպես  
Դու ինքդ կղիզեիր մե՞ծ հարստություն,  
Եվ մենք էլ կունենայինք զգալի կարողություն:

*ՇԱԼ ԿԻԻՉ ԺԻՐԱՈՒԻ*

*(1456-1560 թթ.)*

*Մարկոս Պոփոպ*

\* \* \*

Առլիկ խանը,  
Տերը իմ Թեմիր, իր արածները,  
Հիմնավորում է՝ ճիշտ իրեն հարիր,  
Նա կպահի քեզ դարպասից անդին,  
Մարդ և անասուն կանի իր գերին,  
Ձիդ ու պատմուճանդ ավար կդառնան,  
Կկտրի գլուխդ՝ անխիղճ, անվարան,  
Եվ դու փոշի կդառնաս գամբյուղում նամշած,  
Թե հակառակվես նրա հետ հանկարծ՝  
Թե չճառայես երկրիս պես նվաստ,  
Սայլին կկապվես որպես մի գրաստ,  
Նա քեզ կքշի ճամփեքով մթին  
Ոսկու փոխան դեպի Բախչիսարայ, Ղրիմ,  
Կծախի քեզ՝ ջնջելով կամքդ ու հոգիդ,  
Ոտնատակ կանի պատիվդ անսիրտ:

\* \* \*

Եթե մրցույթում առաջինը չէ այն,  
Ում է պետք նժույզն այդ արաբական,  
Թե նետը չընկնի կարկուտի նման,  
Ո՞ւմ է պետք կոփած զրահն ամրական:

Թե արծաթ նախշեր թևքերին չկան,  
Որտե՞ղ և ո՞ւմ հետ քարեկիրթ դառնամ,  
Տգեղին տվեց Ալահն ինձ նվեր,  
Ինչպե՞ս գուրգուրեմ ու սիրեմ նրան:

Թե լուսնյակի պես՝ ցոլուն, նորահոս,  
Իմ սաղավարտը չլինի փայլուն,  
Որտե՞ղ կգտնեք դուք նման հերոս:

*ԲՈՒԽԱՐ ԺԻՐԱՈՒԻ*

*(1668-1781 թթ.)*

*Եպարհ Պետրոս*

\* \* \*

Օ ժամանակներ, օ ժամանակներ ...  
Մշուշաքող է ամենուր կախվել,  
Ամենքի վրա կան ինչ-որ մեղքեր,  
Եվ մութ է գիշերն, անաստղ ու սև:

Պճնամուկներ են շուրջն ու խարդախներ,  
Զուր է նրանց մեջ մի լավ բան գտնել,  
Հայտնվել մարդիկ երկերեսանի՝  
Ուզում են ձեզ հետ դառնալ խնամի:

Արգամակի հետք էլ չի երևում,  
Անբաշ քուռակն է ձիարշավ ելնում,  
Արժանի մարդիկ խաղից դուրս մնում,  
Նենգ սողուններն են ասպարեզ մտնում:

Մեզ նժույզները անբաշ մնացին,  
Իսկ յարուներին պատիվ տվեցին,  
Գիտունն ու բարին աղքատ են հետին՝  
Հավասարված փուչ, խեղճ մարդուկներին:

Նժույզը զուրկ է բաշից փառահեղ,  
Հերոս աղքատը՝ առանց տուն ու տեղ:  
Ե՞րբ պիտի, տանես, Տեր, մեզ վերջապես,  
Մեր բաժին օրերն հարամած այսպես:

\* \* \*

Դժվար չէ լինել գլուխն հորդայի.  
Ուր էլ գիշերես, այնտեղ կգտնես  
Մի լիճ կամ գետ, որ ուզում է հոսել...  
Դժվար չէ գորքը տանել գրոհի.  
Ոտքի տակ զինյալ հեծելագորի  
Օտար մի երկիր կուզենա պարկել...  
Չգիտեմ ես գործ ավելի դժվար,  
Քան այն, թե ինչպես բազմության առաջ  
Ասելիքը ճիշտ խոսքով սկսել..

\* \* \*

Երբ վախճանվում են լեռները վսեմ՝  
Մութ քող է պատում զագաթների սեզ:  
Երբ վախճանվում են ճերմակ ամպերը՝  
Անհաս են դառնում վեհ բարձունքները:  
Վախճանն արևի՝ դանդաղ մայրամուտ,  
Անձայն հրաժեշտ ու անդորր է մութ:  
Աղբյուրի վախճանն այն է, երբ նրան  
Բանտում է սառցե կապանքը դաժան:  
Տափաստանային հողի վախճանն է  
Վերևից առատ թափվող պաղ ձյունը...  
Իսկ ի՞նչն է կյանքում հավետ, անվախճան.  
Բարի անունն ու պատիվն իսկական  
Հավերժի գիրն է, որ չունի վախճան:

\* \* \*

Տեսեք՝ բաղեր են, ի՛նչ սիրուն երամ:  
Փորձեք դուք կյանքում նմանվել նրան:  
Խաղում են, լողում ջրերում թեթև,  
Մերթընդմենթ թռչում նաև ջրից վեր:

Թե այդպես լինի, ձեր մասին կասեն,  
Որ ընկերներ եք դարձել իսկական,  
Իսկն արծիվների երամ մի վսեմ,  
Միշտ հավատարիմ, իրար օգնական:

Թե կարողանաք դուք մտքից հանել  
Հին կոիվները ու վեճերը ձեր,  
Կդառնա գաճաճ թշնամին ձեր դեմ,  
Զի կարող էլ ձեզ ոչ ոք բաժանել:

Ուրեմն այնպես ապրեք, եղբայրներ,  
Ասես նույն հոր ու մորից եք ծնվել:



*Махандеհ Կիւսսով*

*ՄԱՀԱՍՄԲԵԹ ՈՒՏԵՄԻՍՈՎ  
(1803-1846 թթ.)*

### ՀԵՐՈՍԸ

Թե որ դիպուկ չկրակի,  
Թե թշնամուն թողնի աչքից,  
Լավ չբռնի թե հրացան,  
Թե որ նետերն իր համարձակ  
Նա չտեղա անձրևի պես,  
Թե որ սուրը իր պողպատե  
Կռիվներում չարյունոտի,  
Թե չթամբի իր ձին աշխետ,  
Չսլանա թե քամու հետ,  
Կուրծքը չտա թե հողմերին,  
Մինչև քրտինքը քունքերից վայր չհոսի,  
Ամբողջ ձայնով թե չխոսի,  
Չքրքրվի թե որ թել-թել  
Այն շորը, որ ինքն է հագել,  
Թե որ քաղցին չդիմանա,  
Օտար ճամփով թե չգնա,

Տառապանքներ թե չկրի,  
Չմոռանա թե համը տաք կերակրի,  
Անկողին ու փափուկ վերմակ,  
Թշնամու դեմ թե չգնա ինքը մենակ,  
Թե չտեսնի որոտն ամպի,  
Իր սոված ձին թե չթամբի,  
Թե չքնի քարերի մեջ գիշերն անգամ,  
Թե չամբանա նա իր ոգով դյուցազնական,  
Պողպատի պես թե չկռի կամքն ու ոգին,  
Հերոսն ինչպե՞ս հասնի իր մեծ նպատակին:

## Ի՞ՆՉ ՕԳՈՒՏ

Քո փափկասուն պահված որդուց  
Քեզ ի՞նչ օգուտ,  
Ի՞նչ սպասել էլ նրանից,  
Թե որ նա իր ծնված օրից  
Ապրում է տաք բարձերի մեջ,  
Սուր չի բռնում նա իր ձեռքով,  
Ու չի գնում նախնիների ազնիվ հետքով:  
Ժողովրդին ի՞նչ օգուտ կա ոսկի թագից,  
Կամ իշխանի նժույզների արագ վազքից,  
Թե աղքատին իր նեղ օրից մենք չենք հանում,  
Արդարության սերմը թե որ մենք չենք ցանում:

## ԵՂԵԳՆՅԱ ԼՃԵՐ

Եղեգով պատված դու լիճ ավազոտ,  
Ո՞ւմ քարավանն է կանգ առել քեզ մոտ:

Հին բնակիչ ես տափաստանների,  
Դու հուշարձան ես դարձել շատերին:

Հողաթմբերիդ՝ գերեզման դարձած,  
Որքա՞ն այրիների խոնարհիվել են ցած:

Այստեղ չէ՞ արդյոք նժույզն իգիթին  
Տարել հողմի պես թեժ գոտեմարտի:

Այս ջրերը չէ՞ ն նեխած, մամոռտած,  
Ծարավին շարքաթ թվացել հանկարծ:

Աստեղ չէ՞ ն արդյոք ատելի, վայրի,  
Թշնամուն խոցել շեղբով սրերի,

Գլխատել նրան այս ափերի մոտ,  
Խմե՛նք ուրեմն մինչև առավոտ:

Հեծնենք արծվաթն մեր նժույզներին,  
Սլանա՛նք թափով ջրերում դաշտի:

Թե ամեն ջիգիթ մեռնի քաջաբար,-  
Բոլորի սրտում կապրի դարեդար:



*Ածրայի Աւստիւստի*

*ԻԲՐԱՅ ԱՆՏԻՆՍՏԻՆ*

*(1841-1889 թթ.)*

\* \* \*

Գիտուն ու իմաստուն մարդիկ այս աշխարհում  
Հիմա շենքեր, շքեղ ամրոցներ են սարքում:  
Նրանցից, ում մոտ դուք կհասնեք մեկ ամսում,  
Զարմանալի շուտ են լուրերը ձեզ հասնում,  
Այնպե՛ս արագ, աչքդ թարթել չես հասցնում:  
Երկաթից պատրաստված ու անձի սայլերը  
Ընդամենը երկու և կամ երեք օրում  
Հազար կիլոմետր ճանապարհ են անցնում:

Մինչ երկինք են հասնում նրանք հավքերի պես,  
Սայլերին լծում են ջուր ու կրակ անտես,  
Առանց ձի՝ հեռավոր ճամփաներ են հատում,  
Առանց կրակ՝ ընտիր, համով ճաշ պատրաստում,  
Նրանք լույսի մեջ են և գիշերվա մթնում:

Լողում են ծովերում նրանք ինչպես ձկներ,  
Հասցրել են բոլոր ծեզերում ոտք դնել:  
Նրանց համար, ովքեր այս ամենը գիտեն,  
Ողջն հասկանալի է գուցե հիմա արդեն,  
Իսկ անտեղյակները զարմանքի մեջ են դեռ:

Եկեք այսուհետև և ո՛չ մի օրը մեր  
Այնպես չապրենք, ինչպես նախկինում ենք ապրել,  
Էլ հերի՛ք է իզուր, անիմաստ քեՖ անել,  
Նժույզիդ արվեստը չես կարող հասկանալ,  
Թե չես թողել նրան ողջ թափով սլանալ:  
Ինչպես փետրախոտի ալիքները ճերմակ,  
Դուք ծնվել եք այստեղ՝ տափաստանում արձակ:  
Ձեր տարեկիցները աճել, ձգվել են են վեր,  
Շտապեք դուք նրանց ետևից շուտ հասնել:  
Ովքեր անկաշկանդ են թե տանը, թե թամբին,  
Արդեն բեղ մորուք են աճեցրել կարգին:  
Բայց դուք մի մոռացեք՝ ամեն ջիզիթ կյանքում  
Նախ արհեստով է իր անուն, համբավ հանում:

Եվ այնուհանդերձ, մեր ջահելնե՛ր թանկագին,  
Էլի ձեզ հետ եմ ես կապում հույսերը իմ:  
Հավատում եմ ես ձեզ , բարեկամնե՛ր իմ քաջ  
Ու բաշխում բոլորիդ օրհնությունն իմ սրտանց:



*Ахмет Байтұрсынұов*

ԱՀՄԵՏ ԲԱՅԹՒՐՍԻՆՈՎ  
(1873-1937 թթ.)

## ԿԱՆԳԻՐՈՒՄ

1.

Նստելով անթի նավակն օրորուն  
Սևեոված դեպի հեռուներն անծայր  
Հալածում է մեզ քամին փոթորկուն,  
Ու քշվում ենք մենք-ոչ մարդ կա, ոչ ճայ-  
Չունենք մի նեցուկ, գեթ մի հենարան  
Խուլ ոռնոցի մեջ ալեկոծության:

## 2.

Ու քշում է արդեն մեզ նա շատ տարիներ...  
Խելք ու միտք կորցնելով, կորցնելով հույս ու սեր,  
Խոսքներս կիսատ, խռով, խոցված հոգով՝  
Դաշույնի պաղ շեղքն ենք շոյում գորովանքով:  
Կեղեքվում ենք քենից, մինչ ճիչը երկունքի՝  
Դեռ արգանդում արդեն մանկանն ուրանալով,  
Օտարներին սիրտ ու հոգի վստահեցինք,  
Իսկ մերձավորների հետ ոնց շուն կամ գազան,  
Գզվոտվում ենք, հասնում մինչև վերք ու արյան:  
Նախանձից փրփրած, ոխ ու չարության մեջ՝  
Ծախեցինք ազգ, հավատ, հերոսներին մեր քաջ,  
Պատիվ համարեցինք հանուն երջանկության  
Բավարարվել նետված կռճոններով միայն  
Ու ճարպոտ այտերը մեր անկողին տարանք:





*Абай Құнанбаев*

*ԱԲԱՅ ԿՈՒՆԱՆԲԱԵՎ  
(1845-1904 թթ.)*

\* \* \*

Սի՛րտ, մի՛ տեղա հուր ու կրակ,  
Արի մի քիչ հանգստանանք,  
Ի՞նչ ես փնտրում: Դու քեզ համար  
Գտիր անդորր, հանգիստդ առ:  
Երբ լուտ մնաս քո վանդակում,  
Միրունները չեն տրտմելու,  
Նոր բարեկամ են գտնելու  
Եվ մի նոր բախտ՝ իրենց կյանքում:  
Դու թախծում ես զիշերն ի բուն,  
Սև աչերին ձգտում անքուն:  
Զայրանում եմ քեզ վրա ես,  
Չես խնայում դու ինքդ քեզ:  
Մտածմունքից կչարանաս,  
Ախր դու ե՛րբ ուշքի կգաս:  
Ի՛նքդ ծանր ու թեթև արա,  
Վտանգավոր ճամփա է դա:  
Սի՛րտ, մի տեղա հուր ու կրակ,  
Խելք ունեցիր ու պատկառանք:  
Սակայն խորհուրդն իմ այս խելքդ

Քեզ վնաս չի՞ բերի արդյոք:  
Կհասկանա՞ գեղեցկուհին,  
Որ խաղ է լոկ սառնությունն իմ,  
Հուր է հայացքն իմ խոնարհած,  
Ու դեռ խոսքեր ունեմ չասված:  
Որ միշտ նրան ես հիշելիս,  
Սերն է իրեն զգալ տալիս,  
Որ քո երգի աղբյուրն անգին  
Ավազներում կցամաքի,  
Որ թախծելուց դու կթռչնես,  
Եթե կամքիդ հակառակվես:

Մի՛ րտ, մի՛ տեղա հուր ու կրակ,  
Թո՛ղ վշտերդ, ո՛վ անճարակ:  
Օ՛, սի՛ րտ, ինքդ կշռադատիր.  
Կանցնի ամեն բան անխտիր:  
Մեր ժամանակն անցավ նույնպես.  
Դժվա՛ր էր քեզ համար այնպես:  
Մեր տարիներն այլ են հիմի.  
Մեծացել ենք բավականին:  
Դե՛հ, ուշքի՛ եկ, իմ մտերի՛մ,  
Այսպես մենք ո՞ւր պիտի հասնենք:  
Լինենք նրան հավատարիմ  
Եվ դրանով սիրտը շահենք:  
Թո՛ղ նա դարձյալ կարողանա  
Խոնարհաբար մեզ ունկնդրի,  
Բայց դա մեզ ի՞նչ պիտի բերի:

Ժամանակներն ա՛յլ են հիմա.  
Թե ամուսնու պատվին դիպչես,  
Պիտի պատժի Ալլահը քեզ...  
Թո՛ղ վառ մնա հրդեհը,  
Թո՛ղ մեզ սիրեն աղջիկները,-  
Բայց ավելի լավ չէ՞, իմ սի՛րտ,  
Հանգստանանք մենք միասին:

Սի՛րտ, մի՛ տեղա հուր ու կրակ.  
Արի մի քիչ հանգստանանք:  
Օ՛, սիրտ, ի՛նքդ դատիր հիմի.  
Մե՛կ է, երկար չես բարբախի...  
Իսկ ժամանակն անդարձ կանցնի,  
Այդ կրա՛կն էլ դու կսպառես  
Քեզ չեմ ասի երբեք.«Կանգնի՛ր»-  
Դու հենց ի՛նքդ պիտի լռես:  
Դատարկ տեղը հերի՛ք տարվես.  
Սառի՛ր, այդպես հուր մի՛ դարձիր,  
Չես հերիքի դու, հասկացի՛ր,  
Ու կայծակը կլափի քեզ:  
Քո կրակը մի՛ շռայլիր.  
Թո՛ղ քեզ խայթեն աչքերը սև,  
Սակայն դու մի՛ արձագանքիր...  
Ինչո՞ւ սուրանք այսպես խռով  
Փշոտ, քարոտ կաճաններով,  
Բա՛վ է հանգիստը մեր կորցնենք,  
Մեր հայացքի դեմ նկարենք

Քաղցրությունը անցած կյանքի  
Ենթարկվենք ծաղր ու ծանակի:  
Թե որ մնանք այսքան հիմար,  
Ա՛յլ աչերի կզարնվենք,  
Մենք կդառնանք թիրախ հարմար,  
Կմերկանանք ու կզարկվենք:  
Մարդիկ ծաղրով մեզ կսպանեն.  
Մայր է մտնում մեր օրն արդեն...

Մի՛րտ, մի՛ տեղա հուր ու կրակ.  
Ինչո՞ւ հնին վերադառնանք:  
Քո աղաթը պահպանիր խիստ.  
Միրուններին թո՛ղ դու հանգիստ,  
Միրո համար ընտրիր մեկին,  
Որ քեզ լինի մտերիմ կին:

Եվ նա իր հետ տուն կբերի  
Խինդը բոլո՛ր տարիների-  
Քեզ՝ հանգիստ կյանք, ինձ էլ՝ բերկրանք,  
Ու մի բարձի կծերանանք...

\* \* \*

Մեջքի վրա երկու սիրուն ծամ է փոված,  
Ու զարդերը արձագանք են տալիս նրանց,  
Գլխարկի տակ խոնարհվել է հայացքը ջինջ,  
Չէ՛, չի ծնվել նրա նմանը անկասկած:

Սև աստղերը թավշանման իր աչքերից  
Սրտիս համար լուսափունջ են հղում անբիծ:  
Ի՛նչ ձայն ունի: Նա ժպտուն է, քնքշամարմին  
Ու սիրուն է բոլոր-բոլոր սիրուններից:

Քայլում է նա այնպե՛ս թեթև ու հեզանազ...  
Ինչո՞ւ փնտրեմ այս աշխարհում ուրիշ մուրազ:  
Ինձ թվում է՝ ինչ-որ մի տեղ տեսել եմ ես  
Այս խնձորը, բուրումնավետ գաֆրանը այս:

Թե մատներդ կպչեն նրա քնքուշ թևին,  
Սրտիդ խորքում կզգաս արյան եռքը ջերմին,  
Իսկ երեսդ թե երեսին դիպչի հանկարծ,  
Կիրք կդառնաս, կխենթանաս բոլորովին:

Սոված փորը միշտ յուղոտ կերակուր է սպասում  
Կուշտ որովայնը՝ թեթև կերակուրի է վագում...  
Ասված բան է. կուշտ եղար՝ կես հարուստ ես դու արդեն,  
Երբեք համեղ խորտիկին դազախը չէ՛ չի ասում:

Սովա՛ծ դազախ, որպեսզի գոյությունդ պահպանես,  
Ման ես գալիս դու անբան, որ մի կտոր հաց ճարես:  
Շատ ես սիրում դու կյանքում ճաշակել միս ու կումիս,-  
Բա՛խտը կարող է տանել աղքատության դուռը քեզ:

Թե բոլորի համար միս լիներ առատ և կումիս,  
Ուրի՛շ հույսեր քո սրտում կլինեին, սիրելի՛ս:  
Ախր ուտել և խմել չի հաջողվում ամեն օր,  
Իսկ ստրուկի պես ապրելն արդյոք քեզ ի՞նչ է տալիս:

Ինչո՞վ պիտի կերակրես, ինչո՞վ պահես տունը քո,  
Աուլներն ես դու շրջում՝ ճարես կումիս ու ոսկոր-  
Սա է խղճուկ վարձը լոկ քո այդ դառը քրտինքի,  
Այսքանը միշտ քեզ համար կճարի մի ունևոր:

Կուզես նախիր ունենալ՝ դրա համար սար գնա,  
Այն ժամանակ աուլում չեն ծիծաղի քեզ վրա:  
Կյանքը դատարկ քամի է՝ թափառումով թե անցնի:  
Եղիր կյանքում համարձակ՝ ամեն ինչ տեղը կգա:

Առանց ուժի ու կամքի դու բախտավոր չես լինի,  
Մարդ չի դառնա իր օրում, ով աշխատանք չսիրի,  
Թեկուզ քորիք ավանակ- դա էլ է մի աշխատանք,-  
Պատիվդ թանկ կմնա, ձեռքդ մաքուր կլինի:

Իսկ եթե դու խաբելո՛ւ վ հարստություն ձեռք բերես,  
Ձեռքդ մեկնես գողության, անբանության սովորես,  
Ստորության համար այդ կհատուցես անպայման,  
Քո հանգիստն ու երջանիկ ակնթարթը կկորցնես:

Դատարկ մարդուն է վայել ողորմությունն ուրիշի,  
Այն, ինչ որ հեշտ է տրվում, հավասար է գրոշի,  
Առանց ջանքի ձեռք բերած հարստությունն ի՞նչ է որ.  
Արևի տակ շոգ հալվող ձյունի նման է, հիշի՛ր:

Ճարպիկ ու ժիր անբանը ձին թամբում է ու սուրում,  
Այստեղ-այնտեղ իր համար խորտիկի որս է անում:  
Դու նրան մի՛ հետևիր, չի հասկանում ավարան,  
Որ թերմացքի համար նա խիղճն ու պատիվն է ծախում:

Մի՞ թե քիչ են այդպիսիք, որ դաշտերում մեր երկրի  
Անվերջ թրև են գալիս ոհմակի պես շների:  
Արհամարհանք և ամոթ որդիներին անառակ,-  
Տե՛ս, մի՛ հարիր անխելքին, խելոք մարդիկ չեն ների:

## ԿՈՒԼԵՄԲԱՅԻՆ

Մալա՛մ ալեյք, ոլոստի՛ ,  
Ո՞ղջ են նախիր և թե կին:  
Ողբում եմ, որ իշխում ես  
Դու մեր այս նեղ օրերին:  
Իշխանություն չէր տրված  
Քո ապերին-պապերին,  
Իրավունքդ ուզում ես  
Չարաշահել լիովին,  
Թեկուզ և այն, ճիշտն ասած,  
Չարժե գրոշ մի չնչին:  
Թե գավառից գա հեծյալ,  
Պատիվ տալդ կա ու կա:  
Բա ի՞նչ կանես, թե հանկարծ  
Գավառապետն ի՞նքը գա:  
Նստել ես քո վրանում  
Խիստ ու դաժան, ո՞վ չնչին,  
Կկորչես մի վայրկյանում,  
Թե որ մեկը քեզ փչի:

\* \* \*

Մանկությունդ անցավ- չնկատեցի՞ր,  
Ուրախ օրերդ հերթով վատնեցի՞ր:  
Ջահելությունդ չպահպանեցի՞ր,  
Հիմա ծերության հերթն է, իմացի՛ր:  
Եղել ես կյանքում գուցե անկայուն,  
Դեռ ոչ մի անգամ չնկատեցի՞ր,  
Քեզ քանի՞ անգամ դավաճանեցիր:  
Գուցե այդպես էլ անբախտ կմեռնես  
Այն գոմում կապած ուղտի ձագի պես,  
Որ ոչ մի անգամ չելավ գոմից իր:

\* \* \*

Ես քոթոթին շուն դարձրեցի՝  
Ժանիքի ուժն իմացա:  
Հրաձիգին դաս տվեցի՝  
Նրա թիրախը դարձա:



*Մառարու  
Կղզայճերգարու*

*ՇԱՔԱՐԻՄ  
ԿՈՒՂԱՅԲԵՐԴԻՈՒԼԻ  
(1858-1931 թթ.)*

### ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Տարաբա խտ իմ սիրտ, ցայտում ես կրակ,  
Սակայն հույսերս ծուխ են ու պատրանք,  
Ցնդեցին և՛ կամք, և՛ միտք կենսունակ,  
Դատարկն է ներսս խեղդում շարունակ:

Իմ խնդությանը մասնակի ց չես դու,  
Ուռկանն եմ ընկել քո կամքին հլու,  
Կյանքս զոհում եմ նվիրումով քեզ,  
Զգիտեմ գլխիս դեռ ի նչ է գալու:

Դու շողշողում ես, բայց լույսը ե՛ս եմ,  
Իմ սրտի հետքից ի նչպես բամբասեմ,  
Գայթակղված եմ բիբերիցդ սև,  
Զարի բաժին եմ դառնալու, կասեմ:

Երբ դու գցեցիր հայացք ինձ վրա,  
Մեզ ու մուժ թափվեց իմ սրտի վրա,  
Գոնե մեռնեի ես քեզ չտեսած,  
Դարձել է ներսս թեժացած քուրա:

Դու իմ լուսին ես՝ ցոլո՛ւն, ոսկեճե՛մ,  
Փայլում ես որպես սիրավառ եղեմ,  
Բայց երբևիցե չես հասկանում ինձ,  
Առանց քեզ, ավա՛ղ, մենակ եմ ու մեն:

Ի՛նչ ես թողել ինձ՝ քո տեսքը հրկեզ,  
Խելքս թորճրել, կրակվել եմ ես,  
Կուզեի՝ գայիր հոգուս խնջույքին,  
Զե՞ որ իմ միակ սիրունը դու ես:

Սիրոս խոցել են քո թարթիչները,  
Հայացքդ տարել է երկնքի ծերը,  
Կորչում է միտքս, երբ տեսնում եմ քեզ,  
Ինձ հմայել է քո լույս-պատկերը:

-Սիրո՛ւմ եմ,- այդպես հոգիս է խոսում,  
Ու քո այտերից վարդեր են հոսում,  
Մի՛ լռիր, ասա բառեր ջերմաջերմ,  
Առանց քեզ մահն եմ ես գերադասում:

Քո գեղեցկությամբ հուրքերն ես մարել,  
Լուսնին, աստղերին խելքահան արել,  
«Յոթ ավազակներ» քեզ են որոնում,  
Երագում շուրջդ խելագար պարել:

Քո մեծ նվերն են աստղերը անզին,  
Վառ Շոլպանն է քեզ սիրում կաթոզին,  
Լուսաստղն հեծել էրկու նժույգներ,  
Տենչում է հասնել քո հարսանիքին:

Բայց առավոտյան ամենն այս ցրվեց,  
Աստղերի, լուսնի նինջը խաթարվեց,  
Քայլքերիդ ձայնին միացավ քամին,  
Թռչնոց դայլայլը նոսրացավ-մարեց:

Արևն էլ հոգնեց հիանալ քեզնով,  
Եվ գնաց-ընկավ տխրության մեջ ծով,  
Թուխպով պարուրվեց երկիրը ամբողջ,  
Թափվեց բաժանման անձրևը խոռով:

Ծփացին ծաղկունք ու ծորաց եթեր,  
Գետերն հորդացան՝ բերնին փրփուրներ,  
Կարկուտներ բերեց խորշակը մոլի,  
Կայծակը զարկեց ամպերը ի վեր:

Այսպես չքացավ մի սիրուն աշխարհ՝  
Դյուրված վարսերիդ բույրով անխաթար,  
Ախր ի՞նչ օրենք, կամ էլ ի՞նչ ամոթ,  
Զէ՞ որ ծնվել ես միա՛յն ինձ համար:

Անուժ եմ արդեն, խոսել չե՛մ կարող,  
Իմ խոռվքներից դարձել եմ անշող,  
Ողջ էությունս նվիրվել եմ քեզ,  
Եղիբ բարեգութ և ինձ գթացող:

Եթե կարող ես, այս թուխպը վանի՛ր,  
Տա՛ր ինձ ճախրելու երկնում կապտածիր,  
Առանց քեզ վշտից կայրվեմ հուսահատ,  
Հանձնվել եմ քեզ՝ բուժի՛ր... կամ սպանի՛ր:



Ես կարող եմ կրակից վառվող ածուխ դուրս հանել,  
Բայց դրանից իմ հոգում չի բռնկվի ոչ մի կայծ,  
Ունեցվածքս միմիայն իմ սիրածին եմ սովել,  
Ու այլևս ինձ համար ոչինչ չունեմ թաքցրած:

Ես իմ մարմինն ու հոգին նվիրել եմ անհատույց,  
Բաժանել եմ ամբարած ներսիս գանձերը բոլոր,  
Ինչ ունեի՝ ծայրեծայր ես սովել եմ գեղովուս,  
Զի ամենից առավել դա նրան էր հարկավոր:

Ընդամենը մի նայվածք... այն ինձ ապրել էր տալիս,  
Թե չէր նայում, սուկումից մեռնում էի հուսահատ,  
Թե չէր խոսում, դառնորեն ցաված հոգիս էր լալիս,  
Եվ իջնում էր ինձ վրա մի դժնամութ՝ վերջավարտ:

Ու մերժումի այդ խորքում մի դաժան միտք էր առկայծ,  
Որի իմաստը, ավա՛ղ, ես հասկացա արդեն ուշ,  
-Մենք իրար հետ կլինենք, եթե լինենք մենք մեռած,-  
Այդպես ասաց սիրելիս և թողեց ինձ անտերունչ:

Ու ես մեռա... Այդ պահից մի մի նոր ընթացք սկսվեց,  
Անբաժան ենք, ու ոչինչ էլ չի կարող գատել մեզ,  
Մեզ Մեջնունը և Լեյլին ընդունեցին իրենց մոտ,  
Եվ ծավալվեց տոնական շքեղաշուք մի հանդես:

Դու հասկացիր՝ ամեն բան, որ խաբկանքով ունեցար,  
Երբևիցէ չի կարող կյանքում լինել ճշմարիտ,  
Օրենքները սիրուհուն մշտապես խորթ են, օտար,  
Քանզի պիտի նա քայլի ճամփաներով անբարիշտ:

Ու դու նրան ոչ մի կերպ հարազատ մի՛ համարիր,  
Ի՞նչ էլ անես, նա նույնիսկ ընկերուհի չի դառնա,  
Նրա բնույթն է տարփոտ, էությունը՝ ցանկասեր,  
Ուրիշ մի այլ կերպի մեջ նա երկար չի դիմանա:

Իսկ թե մի օր պատրանքից ձերբազատված դու հոգնես,  
Եվ համոզվես, որ սրտիդ նա արդեն չի հարկավոր,  
Շա՛տ կափտոսաս, որ կյանքում դու ապրեցիր հենց այնպես,  
Եվ քեզ մսխած զոհեցիր՝ անհեռատես ու մոլոր:



*Մաշման Պօղոսյան*

*ՄԱՂՃԱՆ ԺՈՒՄԱԲԱԵՎ*

*(1893-1938 թթ.)*

## ՄՈՍԸ

Տափաստանում ոսկեշող մշուշ է մթար  
Թագավորում է այնտեղ մահը հողմավար,  
Մումի հույսերը ճեպով փորձում եմ մարել,  
Որ շրջանցեն, ինձ անցնեն ուժերը խավար:

Թեկուզ թուխպերը մռայլ հանգիստ չեն թողնում,  
Փոթորիկներ են ոռնում, հեծկլտում հողում,  
Շնորհակալ եմ խորապես իմ վառվող մումից,  
Միտքս նրա պալուն բոցում է լողում:

Ճառագում է լույսը իմ միզում խավարի  
Աստվածատուր բնույթով, էությամբ բարի,  
Նրա շողքում արևոտ, լուսին կա պահված,  
Արծաթ ցոլքերն են անհայտ մոլորակների:

Հանկարծ հնչում են հատու խոսքեր անձանձիր,  
Միտքս տանում են դեպի վերին ուղեծիր,  
Մտմտում են, թե ինչպե՞ս խավարը անտակ  
Հանգիստ կարող է ցրել պարզունակ մի իր:

## ՃԱՌԱԳԱՅԹ

Բաժանումը երկար էր շատ,  
Հանդիպեցին մեկ-մեկու,  
Գուրգուրանքը ծով էր առատ,  
Չկար ցավը ահարկու:

Ապրած թախճոտ օրերը հին  
Բերեցին հին հարկի տակ,  
Աչքերի մեջ ցոլքեր էին,  
Անցյալի վառ հիշատակ:

Ծարավ շուրթեր հանդիպեցին  
Ու մարմիններ մերձեցան,  
Թվաց, թե այս աշխարհն անձիր  
Նրանց համար է միայն:

Առավոտվա հովը թոթով  
Շոյեց գգվանքը նրանց,  
Եվ հալվեցին այդ տաք շնչով  
Մարմինները փաթաթաված:

Որպես հուշը չարաբաստիկ,  
Որ կարող է մաքառել,  
Այնպես նրանց դեմքը սաստիկ  
Անտես կրակն էր վառել:

Եթե այրվել, ընկնել անդունդ,  
Գեթ միմիայն երկուսով,  
Ճառագայթը լուսածնունդ  
Զօծեց նրանց շողերով:

Երազն անցավ թշնամու պես,  
Որ կորչում է մշուշում,  
Բայց խաբկանքից դեռ չազատված  
Արբեցումն է դեռ հիշում,  
Ափսոսվում է մեզում թողած  
Ճառագայթին լուսերես:

Սակայն բանտի խցում մռայլ  
Կարոտ են այդ շողերին:  
Որ սողոսկեց պատին մեռյալ:  
Աչքի համար այն խարխափյալ  
Ճիշտ նույնն է՝ ինչ բանալին:



*Միրձախան Դիլանով*

*ՄԻՐԺԱԿԻՊ ԴՈՒԼՍՏՈՎ  
(1885-1935 թթ.)*

### ԼՈՒՍԱԲԱՑ

Բացվում, փոփում է լուսաբացը վառ,  
Շքեղ ծավալվում լեռնաշարն ի վար,  
Շող ու ճառագայթ հաստում են հերթով  
Թե կապույտ անտառն՝ արբած բույրերով,  
Թե հարթությունը գուլալ ջրերի,  
Որ հայելային անդորրով կանչում,  
Թովում են երամն ուրախ սագերի:  
Ճերմակ, նրբագեղ երկու գույգ կարապ  
Լողում, սահում են լճում կապուտակ,  
Ալիքների հետ խաղում շողարձակ:

Եղեգների մեջ, ստվերում պահված,  
Վագրը հսկում է շունչը լուռ պահած՝  
Ոնց է վարազը վատահ մոտենում,  
Իր խրախճանքի ժամն հասունացնում:

Հուլիս է ու տապ: Պեզասն է թևում  
Ու, խրտնեցնելով խումբն արոսների,  
Փռչի հանելով մինչ ամպերն հեռու՝  
Արթնացնում է ողջ տափաստանն անծայր:  
Այնուհետ՝ պատրաստ կոպար խաղալու,  
Պատրաստ թե՛ մարտի և թե՛ երգելու՝  
Պոչն է խաղացնում ցուցադրաբար:

Այգն ավելի վառ, ջինջ է ճառագում,  
Հույզերն են ծփում, հորդում իմ հոգում,  
Եվ երգերս՝ մերթ ինչպես նուրբ կարապ,  
Ու մերթ ոնց վայրի, անսանձ արգամակ,  
Ձեզ եմ նվիրում, եղբայրներ, սրտանց,  
Արևի՛ն, լույսի՛ն, օրվան ընդհառաջ:



*Сымбян Нахпет  
Порайыров*

*ՍՈՒԼԹԱՆՄԱՀՄՈՒԴ  
ԹՈՐԱՅԳԻՐՈՎ  
(1893-1920 թթ.)*

**ՋԵՐՄԻՎ ԵՐԵՎՈ**

Չով շունչ է սփռում երեկոն ամռան,  
Նեկտարի բույրով շնկշնկում քամին,  
Հետո երկնքից աստղիկը վառման  
Ողջույն է հղում մթնող աշխարհին:

Ահա լուսինը ոսկե գնդի պես  
Ցողում է անդորր հարթավայրը մութ  
Եվ նրա հետքից աստղերը հրկեզ  
Ոսկեվորում են երկինքը կապույտ:

Երկինքը լուրթ է, հեռաստանը՝ պարզ.  
Սիրտս հրճվանքով զարկում է, շնչում...  
Եվ այդ գիշերից մի թաքուն երազ  
Հոգուս ջերմագին սեր է շշնջում:

Շուրջս ամենուր ծաղկունքն է բուրում,  
Խոտն է խշշում տերևների հետ  
Եվ բախտի երգն է մեզ համար երգում  
Անտառը ձայնով իր կանաչավետ:

Լճակն անշարժ է գիշերվա գրկում:  
Մենք մոտենում ենք ու կանգնում ասփին...  
Մեր համբույրներին լոկ եղավ վկա  
Ոսկե լուսինը թառած քարափին:

Կանցնեն օրերը այս փոթորկալից,  
Անգոր ծերության ժամերը կգան...  
«Հե՛յ գիտի, օրեր»- կասեմ ինքս ինձ,  
Երբ հիշեմ գիշերն այդ կախարդական:

## ՄԻ ԹԵ ՍԱ Է ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Չկանգնելով ոչ մի վայրկյան,  
Կյանքի անիվն է միշտ բանում,  
Սպանում է, ճգնում ոմանց,  
Իսկ ոմանց էլ երկինք հանում:  
Ո՞րն է մեղքը թշվառների,  
Ո՞վ է ճամփեւ բախտը բարի  
Նրանց համար,  
Ովքեր կուշտ են, հագած-կապած,  
Տուն-տեղ ունեն, պալատ ու գանձ:  
Հարկավոր է տասը տարի խեղճ աղքատին,  
Որ վաստակի գինը միայն այն մատանու,  
Որ կրում է մի մեծատուն՝ ճարպոտ մատին:  
Ընչագուրկը կուշտ կմնար մի ողջ տարի,  
Եթե վատնիչը մեծատուն  
Մսխած փողը իր սնգուրի  
Բաժին հաներ աղքատ մարդուն:  
Բայց հարուստը բախտին հեծած  
Ցոփ ու շոայլ քեֆ է անում,  
Եվ աշխարհի բարիքներից  
Սրտի ուզած բերքը քամում...  
Կյանքի անիվն է միշտ բանում...

## ԵՐԲ ՈՐ ՀԵՐԹԸ ԳԱ

Բայը լորդի պես ձեռքերը ծալած  
Նախիրն է հաշվում, խմում, քեֆ քաշում,  
Եվ բարիք դիզող ժատակին<sup>27</sup> քաղցած  
Տարվա մեջ երեք ոչխար է բաշխում:

Ու եթե հանկարծ նա մի բան անի,  
Որը իր տիրոջ սրտին դուր չգա,  
Բայը կատաղած գոռոց կհանի,  
Թե ժատակի պես կեղտոտ շուն չկա:

Եթե ժատակը ինչ-որ մեղք գործեց,  
Խելքի կբերի մտրակը նրան:  
Այնինչ աղքատը չորթանի համար  
Քծնում է տիրոջն ու ասում,-աման:

Տնով ու տեղով քո նոքարն ենք մենք,  
Քո շվաքի տակ մեզ մի տեղ արա,  
Միայն ապրուստ տուր, ապրենք, աշխատենք,  
Մեր բայի համար միշտ լինենք ծառա:

Այսպիսի ճորտեր շատ կան աշխարհում  
Որոնք տնքում են բեռան տակ լկված...  
Եվ կա՞ մի հարուստ, որ թշվառների  
Արյուն-արցունքով չլինի փքված:

---

<sup>27</sup> Ժաղիկ (ժատակ)- աղքատ:

Լսե՛ լ եք արդյոք, որ մի դատավոր  
Դատի նստելիս արդար դատ անի,  
Եթե թալանված ժատակը մի օր  
Ելնի բայի դեմ և լեզու հանի:

Եվ գուցե կյանքը այս ձևով գնա,  
Եվ տարիները գլորվեն այսպես...  
Եթե այս կյանքում անբախտ ես, թշվառ,  
Երկնային կյանքում բախտի չսպասես:

Աղքատը խավար հույսը իր սրտում  
Միշտ սպասում է ապրելու հերթին...  
Բայց եղբայրության դաշինքը միայն  
Կփրկի տգետ խեղճ ժողովրդին:

1912



*Կանաֆիյա Տեղժանով «Ավազակ»*



*Արամ Չերկասյի «Դինա Նուրպեյտովան և Զամբուլ Զարանը»*



*Սաղիհյան Այսրյան «Իսիկ Կուլի ափին»*



*Մոլղախանտ Կենրան «Գարունը Սենեթ լճում»*



Շարի Գուլի «ԽԱՍ»



Կենտրոնայ Դույսերան «Նուր»



*Ժամբյ Ժամբաս*

*ՋԱՄԲՈՒԼ ՋԱԲԱՆՎ*

*(1846-1945 թթ.)*

## ԽՈՂԵՐ ԱԼԳԱԹԱՅԻ ՄԱՍԻՆ

### I

Դու կովի դաշտից տուն վերադարձար,  
Թող որ փեշերդ համբուրեմ, Գալի,  
Արնոտ բլուրն այն արդյոք բարձրացա՞ր,  
Որտեղ աճյունն է իմ Ալգաթայի:

Ծերուկիս շուրթով ասացի՞ր նրան.  
«Դու խաղաղ, հանգիստ քնիր, իմ որդի,  
Թող թեթև լինի հողը քեզ վրա  
Մառը գերեզմանի խորքերում մթին»:

Ծանր մի քար է իմ սրտին ընկած,  
Մեջքս տնքում է ցավերից այս սուր,-  
Թշնամու ձեռքով արծիվս է խոցված,  
Խավար է ասես շուրջս ամենուր:

## II

Թե Ալա-Թաուն անցնեմ վշտի մեջ,  
Կգտնե՞մ արդյոք իմ Ալգաթային,  
Թե կանաչները տրորեմ անվերջ,  
Կտեսնե՞մ նրա հայացքն արծվային:

Ծերության թույնն է աչքերս փակում,  
Որքան ապրեցի, որքան մեծացա,  
Արևի լույսը աչքիս արցունքում  
Սև խավար դարձավ:

## III

Ա՛խ, ջահելության օրերս չկան,  
Չեմ կարող քայլել եռանդով նախկին,  
Նայում եմ թոռիս՝ որք, անօգնական,  
Որ պետք է ապրի առանց հայրիկի:

Բայց ասում եմ ես թոռնիկիս, հարսիս.  
«Կյանքը սրտամոտ երգեր է սիրում,  
Լա՛վ մտածեցեք ձեր վաղվա մասին,  
Եվ ստեղծեցեք բարիք աշխարհում»:

## IV

Երկաթ ջղերով ոչ մի մարդ չկա,  
Անմահ մարդ չկա ծովում այս կյանքի,  
Զեն ասի՝ զո՛ւր էր մահոյ, Ալգաթայ,  
Նախադուռն էիր դու հաղթանակի:

Ձիու բաշն անգամ թափվում է մի օր,  
Ափսոս օրերս պատանեկության,  
Ջամբուլը ապրեց ծերությունն իր խոր,  
Ու տեսավ վիշտը ծանր կորստյան:

Խփում է սիրտս թույլ ու վշտաբեկ,  
Աչքերիցս աղի արցունք է թափվում,  
Բայց զգում եմ դեռ, որ իմ կրծքի տակ  
Կյանքի չմարող մի լույս է վառվում

1943

## ԿՈՒՄԻՍ

Ոսկեշող ու անմահական, դու մեղրից էլ քաղցր, կումիս,  
Հիվանդին՝ կյանք, առողջին՝ ուժ, սեր ես տալիս, քաղցր  
կումիս,

Ամռան տապին ժողովուրդը հոտն է պահել  
տափաստանում,

Միայն հարուստն է վայելել անուշ բույրդ, քաղցր կումիս:

Երբ դաշտերում չոր քամին է օր ու գիշեր փչել, կումիս,  
Առավոտ վաղ իր ամանը նա քեզնով է լցրել, կումիս,  
Ալիքվել ես դու հարուստի կժերի մեջ օր ու գիշեր,  
Իսկ աղքատի թասում հազիվ դու մի բուռ ես դարձել,  
կումիս:

Բայր անկուշտ ու աչքածակ կարասներն է լցրել, կումիս,  
Ընկերներին քեֆի կանչել ու մինչև լույս կոնծել, կումիս,  
Ոչխարները գետին զարկել, խորովել է կրակի մեջ,  
Չաղ պատառներ քաշել իր դեմ ու թևերը բացել, կումիս:

Բայց վերջապես դու էլ հասար մեր սպասած օրին, կումիս,  
Երբ ժողովուրդը հասարակ իր ձիերը թամբեց, կումիս,  
Նա բայերին քշեց ընդմիշտ, իր վաստակի տերը դարձավ,  
Տափաստանի բարիքն ամբողջ նա իր ձեռքը վերցրեց,  
կումիս:

Առվները, տես, թե հիմա ոնց են փարթսամ ծաղկում,  
կումիս,  
Արոտներում ազատաշունչ հովիվներն են երգում, կումիս,  
Աղբյուրի պես դու լցվում ես պահեստները համայնական,  
Երբեք այսպես քաղցր ու համով դու չես եղել հնում,  
կումիս:

Դու ոսկեշող, սեր պարզևող մի խմիչք ես, անզին կումիս,  
Մի նոր շունչ ես դու պարզևում մեր բոլորի կյանքին,  
կումիս.

Այս օրերին, երբ ամրակուռ մենք հիմքերն ենք շարում  
նոր տան.

Ուժ ես տալիս անպատմելի մեր մտքին ու ձեռքին, կումիս:



*Տահակ Տեյֆյան*

*ՄԱՔԵՆ ՄԵՅՅՈՒԼԼԻՆ*

*(1894-1939 թթ.)*

### ԵՐԱԶԱՆՔ

Օ՛ դու, երազանք, որ նստած պեզաս,  
 Փոթորիկներ ես երկինք վեր հանում,  
 Ի՞նչ հեռուներ ես դու ձգտում անհաս,  
 Որ քունդ կորցրել, չես հանգստանում:  
 Դու քո մտրակը քաշել ես վերից,  
 Եվ ո՞ւր ես քշում թափառումների,-  
 -Հարցնում եմ. «Ի՞նչ ես փնտրում, ասա՛ ինձ»:  
 -Լա թե. «Մարմնացում երազանքների»:

Ձյունոտ լեռների սեզ գազաթներին,  
 Ահեղ ամպերը քշելով հեռու,  
 Կուրծքս ծեծում է խելագար քամին  
 Եվ արծվի նման երկինք բարձրանում:

Այդ քամու նման սիրում ես և դու,  
 Երկինք խոյացած, այնտեղ սավառնել,-  
 Երազա՛նք, ի՞նչ ես կորցրել երկնքում,  
 Զուր տեղը ինչո՞ւ ժամանակ վատնել:

Հեռուն ես ձգտում միշտ անծայրածիր,  
Հզոր թևերդ լայնորեն բացած,  
Բայց որս գտնելու մասին մոռացի՛ր,  
Դու այն չես գտնի ու չես բերի ցած:  
Քո ցանկությունը եթե կատարվի.  
«Թող եղբայրանան բոլորն աշխարհում», -  
Ցավը չի անցնի տանջող ծարավի,  
Երազա՛նք, զուր եմ քեզ սանձահարում:

Այդպես նժույգն է իր քայլքը հանգիստ  
Հանկարծ մոռացած, չափ ընկնում իսկույն,  
Իմ երազանքը վեր է ձգտում միշտ  
Ճերմակափրփուր ամպերի հանգույն:  
Բայց չի երևում նպատակը դեռ,  
Գուցե հեռվում էլ միշտ մնա անտես,  
Օ՛, դու երազանք, մոլոր ու երեր,  
Անվերջ փախչում ես չար քարայծի պես:

Մերթ ինչպես տեսիլք հայտնվում ես դու,  
Մի քիչ երևում և կորչում անհետ,  
Մերթ ծառս ես լինում, հետո փոթորկում,  
Գետերի ջուրը շրջում դեպի ետ:  
Գարնան վարարած ջրերի նման  
Ճիգեր ես անում հունից դուրս գալու,-

Օ՛ դու, Երազա՛նք, ի՛նձ լսիր հիմա,  
Կարողությանդ ե՞րբ ես վերջ տալու:

Մակայն հուզմունքն այդ չի կաշկանդում քեզ,  
Կարծես, ալիք է ազատ թավալվում,-  
Դու ծովի նման սահմաններ չունես,  
Ինքդ էլ, ինչպես ծով, լայն ես ու անհուն:  
Ո՛չ սկիզբ ունես դու և ո՛չ էլ վերջ,  
Ապրում ես հավետ, հավետ տազնապում,  
Երազա՛նք, մտած մեծ պայքարի մեջ,  
Անհնարինն ես փնտրում միշտ կյանքում:  
Մրրիկ, հոսանք, թռչող ձի կամ նետ,  
Թռչուն կամ գիսաստղ,-երկինքը վկա-  
Համեմատվիր դու ամեն ինչի հետ,  
Երազա՛նք, քեզնից արագ բան չկա:

## ՀՈՒԶՈՒՄՆԵՐ

Թե գոչի խելառ ու մահագույժ  
Օվկիանը՝ ելած մի խող պարի,  
Գիտեմ, կհոգնի, և վաղ թե ուշ  
Ահեղ հուզումն այդ կդադարի:

Մարդկային ծովը ալեկոծվի,  
-Պատերազմ լինի, պայթի աղետ,  
-Նույնիսկ հուզումն այդ կմոռացվի,  
Կջնջվի անցնող օրերի հետ:

Տարագիր մարդու հուզմունքն անգամ  
Կանցնի, որքան էլ դա խոր լինի,  
Հուզմունքն այդ կանցնի, երբ որ նա գա  
Ու հողը տեսնի իր հայրենի:

Լեռներում հոսող գետերն անհոգ  
Նույնիսկ կլռեն... Կրժքում հավետ  
Սիրո հուզմունքը չի անցնի լոկ,-  
Ապրիր, ուրեմն, դու նրա հետ:



*Եսման Մայման*

*ԲԵՅՄԱՆԹ ՄԱՅՆԻՆ*

*(1894-1937 թթ.)*

### ՄԻՐԿԻՄԱՅ

-Միրկիմբա յ, Միրկիմբա յ, Միրկիմբա յ:  
Ինչ փո լչն ես, հաստակո դ, ա յ-ա յ-ա յ:  
Դու չար ես, քո լեզուն՝ օձի քիստ,  
Պետերին խայթում ես դու շատ խիստ,  
Չես հարգում դու նույնիսկ մեր ռեսին,  
Ինչ ասես ասում ես երեսին,  
Անվա բառեր ես շարտում,  
Բա սկի վախ չկա քո սրտում:  
Էզուց, տես, քո գլխին ինչ կանի,  
Խելքի եկ, ա յ տխմար կենդանի,  
Աուլում նրա սուրն է կտրուկ,  
Նվիրի ր դու նրան մի մտրուկ,  
Կատարի ր խորհուրդս այս բարի,  
Թե չէ քեզ նա մի օր կվառի.  
Կասի թե՛ դու հարկը չես տվել,  
Ցորենի ապառքը չես տվել,  
Այսուայն սարքը չես տվել:

Ինչ ասես՝ կասի, հո խամ չե՞ս,  
Դու ոտքով-գլխով կկորչես,  
Նա բա՛յ է, նա մե՛ծ է, նա՛ աղա՛,  
Կրակի հետ այսպես մի խաղա՛...  
- Հերի՛ք է, ա՛յ հեր, ո՞վ է նա,  
Որ անի՛ ինչ որ կամենա,  
Ուժ չկա՞, ինչ է, բա մեր մեջ,  
Որ նրան վիզ ծռենք մենք անվերջ:  
- Պապանձվի՛ր, հիմա՛ր հաստակող,  
Շեյթանը քո լեզուն կտրի թող,  
Պապիդ ես քաշել քո բռի,  
Թրով էլ խփեիր՝ չէր լռի:  
Շո՛ւտ վազիր, ռեսին, ռեսին դու կանչի՛ր,  
Ոտքե՛րը պաչի՛ր, աղաչիր,  
Էն կարմիր մտրուկը թող տանի,  
Գուցե թե խղճա՛ բան չանի:  
- Չե՛մ անի, ա՛յ հեր, մի՛ ասա,  
Իմ ուժերից արդեն վեր է սա,  
Պատրաստ եմ անել՝ ինչ ասես,  
Բայց այդ մեկն ինձնից չսպասես:

*Օրենբուրգ, 1922*



*Անյաս Մանսյան*

*ԻԼՅԱՍ ՋԱՆՍՈՒԳՈՒՐՈՎ  
(1894-1937 թթ.)*

**ԿՈՒԼԱԳԵՐ  
ՄՈՒՏՔ**

Օ՛, պոեզիա դու իմ հոգու, գետակների նման հորդիր,  
Դու ծարավը դազախական լերկ դաշտերի ընդմիջտ  
կուտրիր,  
Թող գետերը խանձված ու չոր տափաստանով սուրան  
վարար,  
Որտեղից հոտն է հեռացել, այն տեղերում մի՛ լամբարվիր:

Մեր օրերը տափաստանի համար տոն է ու խնդություն,  
Տափաստանով քշիր նրանց ու խթանիր ինչպես ձիուն,  
Ժողովրդի հետևից դու սլացիր և ընկիր առաջ,  
Թող այսօրվա և անցյալի մասին երգդ թռչի հեռուն:

Օ՛, դու թռչուն երազանքի, թափ տուր թևդ, խոյացիր վեր,  
Եվ նվիրիր մեր օրերի փառքին սիրտը քո անվեհեր,  
Թող թևերը լայն տարածի ժողովուրդը իմ երջանիկ.  
Վախկոտները քարշ են գալու միշտ հետևից որք ու անտեր:

Դու, պատմություն, քարավանն ես դագախների  
քոչվորական,

Որոնք անվերջ տառապել են և մնացել անօգնական,  
Նրանք արդեն, ոտքի ելած, նվաճել են լուսավոր կյանք,  
Հասցրել է նրանց այստեղ մեծ առաջնորդը մեր այս տան:

Բանաստեղծն ես դու քո հպարտ ու երջանիկ ժողովրդի,  
Քեզանից ժիր ու սրընթաց նժույգ, արդյոք, ո՞վ կգտնի:  
Երջանկության համար երկրիդ մրցասպարեզ մտիր  
անվախ,

Դու ծաղիկն ես և ուժն ես դու քո իմաստուն ժողովրդի:

Դու հոգին ես նրա, լեզուն, և քաջությունն ես դու նրա,  
Հարստությունն ես դու մտքի, զգացմունքն ես վառ,  
հուրհրան,  
Երջանկության հողմի նման սուրա՛, անցիր ճամփադ  
անկանգ,  
Հոսանքները պոեզիայի խառնիր՝ իրար թող միանան:

Դուբրայի պես գեղգեղացող մեր պոեզիան հնչեղ է շատ,  
Ալա-Թաուի հոսանքի պես թող խոխոջա նա անընդհատ,  
Խոսքի անգին գոհարներով թող բարձրանա շենքը երգիդ,  
Եվ կհնչի նա հավիտյան դարերի մեջ խրոխտ, հպարտ:

Ո՛վ դու գիտակ վաղ անցյալի, թող մեր երգը լինի միշտ  
նոր,

Դու երգերի մեջ չգրես և ոչ մի բառ անմիտ, անգոր,  
Ապարանքներ հրաշագեղ կկառուցեմ ես բառերից,  
Ով ինչ ուզում է թող ասի, ճշմարտացի երգն է հգոր:

Քո հեռավոր վազքը թող միշտ ամենալավ ձին կատարի,  
Թույլ դռաթի ուժը իսկույն կանհետանա ու կմարի,  
Իմ այս երկար պոեմին ես կյանքս տվի անմնացորդ,  
Վեր բարձրացած սլանում եմ, ինչպես հողմը կատարների:

Թող բոլորը ասեն թե՛ «Մենք ձայնն ենք սիրում պոետի  
սույն»,

Թող բոլորը ասեն. «Այո՛, նա սպառվեց, հանգավ իսկույն»,  
Դու մի՛ նայիր՝ ինչ են ասում, ժողովրդին երգերդ սուր,  
Դատավորը նա՛ է միայն, նա՛ քեզ կտա հանգստություն:

Ալ դրոշը երջանկության դագախները պինդ են պահում,  
Ժողովրդի սիրտն է ետում խնդության թեժ կրակներում,  
Երբ հիշում եմ ես անցյալը իմ տառապած ժողովրդի,  
Վիրավորանք ու ծաղր եմ ես ինձնից անկախ մտաբերում:

Դրանց մասին քիչ խոսելն ու քիչ հիշելն է սովորույթն իմ,  
Թեև գիտեմ, ես անցյալի թշնամին եմ միշտ ոխերիմ:  
Մեղեդիները մեր նախկին սգո տխուր ձայն են եղել,  
Այն ժամանակ առանց արցունք օր չի տեսել ժողովուրդն իմ:

Ես վաղուց եմ իմ ականջը ժողովրդի խոսքին պահել,  
Աշխատել եմ մինչև հատակ աղբյուրի ջուրը դուրս հանել,  
Գաղտնիքները ո՞ւր են արդյոք, խոսքերն ո՞ւր են գաղտնի,  
կախարդ,  
Ես սովոր եմ մեր անցյալի լեզենդներին ականջ անել:

Ուզում եմ, որ իմ խանութում լինի ամեն, ամեն բան,  
Թանկ խոսքերի ոսկի լինի, պղինձ լինի դեղին, զնգան,  
Ես ինժեներ մարդ եմ, այո՛, նայում եմ խորքը իմ Արկի,  
Եվ խնդրում եմ՝ իմ ժողովուրդ, ինչ երգում եմ՝ ընդունիր  
այն:

Քննադատից անչափ աղի թող տերն ինքը ազատի ինձ,  
Նա այլ իմաստ կտա տողիս՝ իր թունավոր խնությունից,  
Փրփրում և թույլ չի տալիս՝ ճշմարտությունը ես ասեմ,  
Եվ փականք է դնում լեզվիս՝ հենց խոսում եմ մեր  
անցյալից:

Իմ խոսքերը, ինչպես կումիս, սպիտակ են ու դեղնավուն,  
Ես խախտում եմ օրենքը այն, ինչ հին կյանքն է տվել  
մարդուն,-  
Ինչ թանկ է, ես ջոկեցի կեղծ բաներից ոսկեջրած,  
Մեր ժողովուրդն առանց այն էլ ունի անթիվ  
հարստություն:



*ՍԱԲԻԹ ՄՈՒՔԱՆՈՎ  
(1900-1973 թթ..)*

*Сабит Муханов*

### ՆԻԿՈՒԱՅ ՕՍՏՐՈՎՍԿՈՒՆ

Նա ծնվեց բոցում և փոթորկի մեջ...  
Մտքի և ոգու հզոր ուժի դեմ  
Փոթորիկն անգամ պարտվում է խեղճ,  
Մրրիկն անգոր է թռիչքի հանդեպ:

Գործը գեղեցիկ, խոսքը սրբազան  
Նրա էության տարերքն են վսեմ...  
Սավառնող թևերն ուժասպառ եղան,  
Չուզեց այդ մասին ոչ ոքի ասել:

Նա սովոր էր միշտ ծանրին, դժվարին,  
Եվ խավարի մեջ նա աչքերով փակ  
Տեսնում էր բոլոր գույներն աշխարհի՝  
Կարմիր ու կանաչ, դեղին, կապուտակ:

Նրա ստեղծագործ ձեռքերը բարի  
Թափանցիկ ջրի շիթերով անթիվ  
Կյանք էին տալիս ծաղկին ու ծառին,  
Ինչպես անձրևը՝ արտին ու հանդին:

Նա մաքառեց, որ խավարը վանի,  
Անլույս գիշերը գործով լուսանա...  
Օ՛, երկի՛նք, ոսկի քո եռոտանին,  
Քեզ բարձր պահող ոգու սյուն էր նա:

Այդպես նա ապրեց դժնի փորձության  
Եվ երջանկաբեր աշխատության մեջ.  
Փոթորկից հետո դարձավ ծիածան,  
Եվ շողշողում է նա կյանքում անվերջ:

## ՈՍԿԻ ՈՐՈՆՈՂԻՆ

Ոսկի ն, ոսկին պահված է խոր  
Սարերի մեջ, անտառի մեջ,  
Երակներում ոլոր-մոլոր  
Անշուք քարի ու ժայռի մեջ:

Հարյուրահարկ ընդերքում խոր  
Տարիներով հազար-հազար  
Պահված էր նա... Ահա այսօր  
Քարն հանեցիր դու լույս աշխարհ:

Քար... իսկ ոսկին դեռ ուր է, ուր...  
Օ, դեռ պետք է այդ քարն աղալ,  
Քարը դարձնել ավազ, այտուր,  
Քամել, մաղել, տքնել, դողալ...

Ոսկին գատել փոշուց անկյանք  
Եվ աշխարհին զուտ ոսկին տալ...  
Երկիրն ամբողջ ոսկի է, հանք,  
Պետք է հանելը իմանալ...

## ԱՄՌԱՆ ԱՌԱՎՈՏ

Աղջամուղջն է ահա կապում,  
Լուսաբացն է դեռ քիչ աղոտ,  
Եվ աստղերը, մարելու մոտ,  
Իրենց աչքերն են թույլ թարթում:

Լուսաստղն արդեն առանձնացած՝  
Զգիտես, թե ումն է ժպտում,  
Բայց գորշ ամպիկն արդեն փթթում,  
Դեղնում է և շիկնում հանկարծ:

Մեկը առած ճաղ ու ասեղ  
Ոսկի թելով գործում է ցանց,  
Թռչունները արդեն զարթնած  
Ճովոդում են այնտեղ, այստեղ:

Արտույտները ճովոդյունով  
Շուլավվում են կապույտն ի վեր.  
Ժամն է արդեն, արքադադնե՛ր,  
Կանչեցեք զիլ և ավյունով:

Բուրում է հողն անմահական  
Ծաղիկներով հազարաթույր,  
Եվ խլրտում է ամենուր  
Հրաշք կյանքը կենդանական:

Օ՛, ի՛նչ քաղցր է, ինչպիսի՞ քախտ՝  
Դուրս գալ տնից այդ պահերին  
Եվ միանալ այդ բոլորին...  
Էլ ո՞ւմն է պետք ուրիշ դրախտ:

## ԳՐԻՉ

Իմ երջանկությունն և իմ վիշտն է այն,  
Նա թե չարիք է, թե բարիք է ողջ,  
Իմ ուղեկիցն է, ընկերս անբաժան,  
Պողպատե ծայրով իմ գրիչն անխոնջ:

Նա թափանցում է սրտերը բոլոր,  
Գիտե ամենքի գաղտնիքը խորին,  
Ամենատես է, կարող է մի օր  
Սիրով միացնել իրար բոլորին:

Գրի՛չ, մի՛ պահիր թաքուն ոչ մի բան,  
Ինչ գիտես՝ հայտնի՛ր բոլորը մարդկանց.  
Քեզ քաջ հայտնի են անցյալն ու ներկան,  
Տեսնում ես նաև գալիքն անթափանց:

Ծանոթ եմ նաև խաղերին քո խենթ,  
Երբեմն խոսքդ անմեկին է շատ,  
Այդ պատճառով ինձ ասում են. «Պոե՛տ,  
Այդ ի՞նչ ես գրել դու մշուշապատ»:

Ի՞նչը թաքցնել, մշուշել, գոցել.  
Ես թաքցնելու ո՛չ մի բան չունեմ.  
Թշնամիներիս կարող եմ խոցել,  
Բարեկամներիս սրտանց ողջունել:

Կյանքը ինձ վրա մեծ պարտք է դրել  
Եվ լայն հորիզոն բացել իմ առաջ,  
Տվել է պատգամ՝ այնպես երգ գրել,  
Որ անհետանան վիշտ, ցավ և հառաչ:

Եվ ինչո՞ւ լռել... և ես չե՛մ լռում,  
Գրի՛չ, մտքերս տարածել ջանա  
Աշխարհի վրա, մարդկանց սրտերում  
Թող երջանկության բերքը ուռճանա:



*Жакан Связников*

*ԺԱԿԱՆ ՄԻՉՂԻԿՈՎ  
(1901-1977 թթ.)*

### ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ԴՈՄԲՐԱՆ

Դոմբրա - հրաշք գեղեցկության,  
Դու կաղնուց ես անգուգական:  
Երբ հավում եմ՝ երգում ես դու  
Քո լարերով ուրախաձայն:

Որտե՞ղ է այդ Դոմբրան ծնվել,  
Ո՞ր անտառի մեջ է սնվել,  
Կաղնուց ո՞վ է փորել նրան,  
Երազանքով շնչավորել:

Ո՞վ է եղել վարպետը այն,  
Որ սիրել է իր գործն այդքան,-  
Ոսկորից նա զարդ է շինել  
Եվ պղնձով մեխել վրան:

Իսկ ո՞վ էր նա՝ մազերով սև,  
Թոչնակի պես նուրբ, քնքշաթև,  
Եկավ, կանգնեց Դոմբրայի մոտ  
Ու լարերին հավեց թեթև...

Ո՞վ էր երգիչն այն հեռավոր,  
Որ նվագեց Դոմբրան մի օր,  
Եվ հնչունները դուրս թռան  
Կարապետի նման շորոր:

Գուցե թույլ էր կամ էլ տկար,  
Բայց նրա մեջ մե՞ծ տաղանդ կար:  
Գուցե ծեր էր, բայց փորձառու՝  
Հարյուրամյա կյանքի վկա:

Դյուցազո՞ւն չէր մի պատանի՝  
Երգող հմայքն ստեպների:  
Ո՛չ, ակին էր անտուն, անհայտ,  
Որ դարձել էր երգին գերի:

Նա ձի նստեց, Դոմբրան առած,  
Մեկնեց՝ գլուխը խոնարհած,  
Դառն օշինդր վշտից նրա  
Միրտս թախծեց ու մղկտաց:

Այստեղ էր նա, գուցե մենակ,  
Տափաստանի երկնքի տակ,  
Նվագում էր մեղեդիներ,  
Նայում հեռվին ջինջ կապուտակ:

Գուցե քայլերգ միայն գիտեր  
Նվագել այդ երգիչը ծեր,  
Ուր լավում է սրի շայուն,  
Զինվորական խրոխտ ճիչեր:

Թե՞ սիրո երգ նվագելով,  
Հրդեհում էր արյունը հրով,  
Սոխակի պես երգում էր նա  
Իր Դոմբրայի զույգ լարերով:

Դոմբրա՞ հրաշք գեղեցկության,  
Քո նվագով նմանվիր այն  
Արևալույս դարին, որի  
Երգը ծաղիկն է խնդության...

Դոմբրան-սոխակ թող գեղգեղա,  
Թող լարերը երգեն նրա,  
Փետուրները՝ ճերմակ ցցունք  
Թող ծածանվեն նրա վրա:

Գուցե երգը գետակի պես  
Կախարդեց մի թիթեռնիկ հեզ,  
Որ, կպչելով լարին, դողաց  
Ու մահացավ անմիջապես:

Գուցե քամու անտեր երգն էր  
Լարից թռել ծառերն ի վեր  
Ու նրանց խիտ կատարներին  
Թռչունների երգին ձուլվել:

Երգն այդ հասել էր երկնքին,  
Հասել էր նրա հուր բարձունքին,  
Կախարդել էր արևին և  
Անդորր բերել նրա կյանքին:

Դոմբրա՛, հրաշք գեղեցկության,  
Դու կաղնուց ես անգուգական,  
Հենց որ ես քեզ ձեռքս եմ առնում,  
Երգ է դառնում շուրջս ամեն բան:

Դոմբրա՛, դարեր ես դու ապրում  
Եվ դարերի հետքը կրում.-  
Խունացել են լարերը քո,  
Սակայն երգդ չի ծերանում:

Առաջվա պես քնքուշ է նա,  
Նոր ձևով է հնչում հիմա,  
Հենց որ թռչի տափաստանով,  
Երկիրն ամբողջ կհիանա:

Թող նա երգի և կյանքը հին,  
Եվ մեր կյանքն այս գարնանային,  
Թող բուրբ մեղմ օրորվեն  
Երգի ծփող ալիքներին:

Խնդություն ես, կյանք ես ու երգ,  
Օ՛, հին Դոմբրա, երգիչ դու սեզ,  
Քո ձայնով մեր կյանքը լցրու,  
Բայց հոգնություն չզգաս երբեք:



*Ասկաբ  
Պոկազանձետ*

*ԱՄԿԱՐ ԹՈՎՄԱԳԱՄԲԵԹՈՎ  
(1905-1983 թթ.)*

### ՌՈՒՍԱԿԱՆ ՁՄԵՌ

Իմ հանդիպումն եմ հիշում ռուսական ձմռան հետ.  
Նա ծերունի էր կարծես իր մորուքով փառահեղ:  
Նա գրկեց ինձ, փաթաթվեց իր բարությամբ անսահման  
Եվ զրուցել ցանկացավ ազնվախոս հոր նման:

Խոնարհեցի գլուխս հանդիսավոր հարգանքով  
Որ հսկայի հետ խոսել արդեն ես էլ եմ կարող:  
«Դու ինձ, որդի՛ հարավի, այցելեցիր վերջապես», -  
Ասաց ու իմ այտերը ջերմորեն համբուրեց:

Ու նա գրկեց ինձ նորից: Իր մորուքից ձյունահողմ  
Փաթիլների երամներ թռան ճախրով ամեն կողմ:  
Կարծես Ալմա-Աթայի խնձորները մեղրանուշ,  
Այդ ցրտից են դարձել վառ, դարձել այսպես  
կարմրաթուշ:

Իմ աչքերը շլացրեց նրա ժպիտը ցուլուն,  
Նա համբուրեց ինձ նորից ուժգնությամբ իր անհուն,  
Եվ նրանից՝ ապրելու հզորությունն ինձ անցավ-  
Ու արյան եռքը իմ մեջ փոթորկահույզ մեծացավ:

Ծածկեց նա ինձ ձյունահողմ իր մորուքով անսահման  
Եվ զրուցեց ինձ հետ նա ազնվախոս հոր նման.  
«Չսարսափես ինձանից, չեմ սառեցնի քեզ երբեք,  
Թեև փայլում եմ հիմա իմ գրահով սառցաբեր:

Դու հյուր ես, և հյուրերին դժբախտություն չեմ տա ես,  
Իմ մորուքով ես միայն պատսպարել էի քեզ:  
Արևաշունչ գարնանը գիտեմ դու ոնց կժպտաս  
Երբ ջրերը երգասան՝ ձորակներում խլրտան:

Ռուսական դաշտերը կծածանվեն կանաչով...  
Որպես որդին այն երկրի՝ խնդում կտաս քո կանչով:  
Տափաստանում ջրերը գմբուխտ կանաչ կդառնան,  
Իսկ ցորենի հասկերում՝ առատություն ոսկեման»:

Եվ նա բացեց հսկայի հզոր գիրկը ծավալուն-  
Տեսա նրա եղյամե թարթիչները փայլփլուն:  
Հեռանալիս ձյունեղեն նրա սերը դարձավ հողմ՝  
Առատության շունչ որպես նա տարածվեց ամեն կողմ:



*Պաւլ Մարոկոբ*

*ԹԱԻՐ ԺԱՆՈՎՈՎ*

*(1908-1965 թթ.)*

### ԿԱՍՊԻԱԿԱՆ

Զնհալքից հետո գարունը եկավ  
Իր նվերներով և բախտով բեղուն...  
Սառույցը հալվեց, ջրերն ուռճացան  
Մեղմ ալիքների խաղով գեղգեղուն:  
Եվ ոսկեփորիկ ձկները նորից  
Ուրախ շուրջապարով ելան հատակից:

Օդում նեղվածք է. ճայերն են դրանք...  
Երկինքն է խշշում թևերի ծափից  
Եվ ձկնորսներն են ահա խմբովին  
Փորձում ծով ելնել հողմակոծ ափից:  
Առագաստները ամպեղեն փնջով,  
Լցվում են, ուռչում հողմերի շնչով:

Գարնան շողերից, լուսայգից ծնված  
Ծովն է մոնչում հևքով փրփրազեղ...  
Ես էլ եմ մի օր լույս աշխարհ եկել  
Ալիքների հետ, գարնան հետ մեկտեղ:  
Հայրս լուսայգն է, իսկ մայրս՝ արփին,  
Եվ ես ծնվել եմ փրփրադեզ ափին:

Կապույտ երկինքն է ինձ վրա փռված,  
Իմ առջև ծովն է դողանջով երգում,  
Նավիս «Հայրենիք» անունն է սրված  
Եվ իմ հավքերն են եթերը ճեղքում:  
Ինձ ալիքների երգն է շունչ տալիս,  
Երգում են նրանք, երգում է հոգիս:

1930

## ԻՍԻԿ ԼԻՃԸ

Սա հրաշքների հրաշքն է այստեղ,  
Այս լիճը՝ բարձր լեռների գրկում.  
Դու, հավանաբար, չես տեսել երբեք  
Այսպիսի լճեր քո ամբողջ կյանքում:

Սսես մի կլոր հայելի լինի  
Գորշ, հնամենի ժայռերի միջև,  
Զեփյուռն է այնպես շոյում քնքշալի  
Ջրի ապակին նուրբ ու արծաթե:

Զեփյուռն այդ հավետ մնացել այստեղ,  
Համբուրում է այս հարթությունն ահա  
Եվ շրթունքները սիրահարների  
Ջրից անջատել չե՛ն կարող նրան:

Հազար ջիգիթ ու արշավաձիեր  
Վաղուց, շատ վաղուց՝ հանդեսներին մեծ  
Այս հրաշք լճի մաքուր ջրով են  
Միշտ հագեցրել ծարավը իրենց:

Ի՛նչ լավ է նայել այս քարափներից,  
Այստեղ բոլորն են միշտ սիրահարվում,  
Կտրիճը այստեղ հնոց օրերից  
Շատ աղջիկների սիրտ է նվաճում:

Եվ այդ կտրիճը ուրախ ու խնդուն՝  
Հլու իրանն է սեղմել սիրառաստ  
Ու համբուրել է նա իր գեղուհու  
Աչքերը, այտերն ու շուրթերն անարատ:

Անձնատուր եղած երազանքներիս,  
Իսկի, և ե՛ս եմ քո մեջ նավարկել,  
Սեր ու քնքշանք ես տվել աչքերիս,  
Այստեղ է սիրտը իմ հանգստացել:

Չի կարող ստեղծել լիճ մի այսպիսի  
Ո՛չ մի նկարիչ և ո՛չ մի պոետ,  
Դա հառաչանքն է այս հին սարերի,  
Լուսնյակի լույսն է դա հանդարտավետ:

\* \* \*

Երբ սուրում եմ իմ նժույգով  
Լայնածավալ դաշտերով բաց,  
Լիանում է հոգիս կյանքով,  
Դառնում արծիվ մի սիգապանծ:

Տարածվում է շուրջս անծիր  
Տափաստանը ծաղկե գորգով,  
Սիգախոտն է դիպչում սանձին,  
Ինձ ողջունում կանաչ երգով:

Եվ թվում է՝ լողում եմ ես  
Եթերային ծովի միջով  
Եվ պարում է նժույգն իմ տակ,  
Առաջ սուրում վրնջոցով:

Հողմն է շոյում բաշը նրա...  
Եվ առավել թափով արագ  
Սլանում ես քարայծի պես  
Թեթևաքայլ իմ արգամակ\*:

Թե բաց թողնեմ սանձը նրա,  
Նա կթռչի աշխարհով մեկ:  
Արգամակը երկրի վրա  
Չի ճանաչում ոչ մի արգելք:

Նա հեծվորին թն է տալիս,  
Բարեկամն է նա դազախի,  
Տափաստանում նրա համար  
Չկա ոչ մի երկար ուղի:

1946

*\*Ղազախական ձիու տեսակ*

## ՄԱՅՐԸ

Ուր աղբյուրներն են կարկաչով զնգուն  
Հոսում լանջերից ճերմակ լեռների...  
Պարուրված լուսնի շողերով դժգոյն,  
Արծիվը թառած իր բարձրիկ բնում,  
Հանգիստն էր հսկում իր ձագուկների:

Եվ ինչ-որ մի տեղ ձյունոտ կատարին,  
Փունջ-փունջ ամպերի հրավառ գրկում,  
Քարայծր թառած ժայռածերպերին,  
Իր ուլիկների հանգիստն էր հսկում:

Երբ որ գայլերի ոռնոցն էր հնչում,  
Երբ սսկված հոտը դողում էր ահից  
Եվ իրար անցած շները հաչում...  
Երբ որ խրխինջը երամակների  
Տարածվում էր խուլ գրկում լեռների...

Երբ լուսաբացի ցրտաշունչ քամին  
Խուժում էր թավով յուրտերը մեր խեղճ...  
Դու արթնացել ես իմ լացի ձայնից  
Եվ ինձ փաղաքշել դրախտ ծոցիդ մեջ:

Եվ ես հպել եմ շուրթերս կրծքիդ,  
Խմել եմ կաթը քո անմահական,  
Եվ այդ պահերին հրճվել է հոգիդ,  
Բախտով երջանիկ, սիրով մայրական:

Եվ գիտեմ, մայրի՛կ, որ դու ինձ սիրել  
Եվ անվանել ես՝ «իմ ճերմակ շուշան»,  
Թեև ի ծնե սևուկ եմ եղել,  
Թխագույն մագով՝ սև ցելի նման:

Ինձ կյանք պարզևող դու իմ սիրասուն,  
Գարնանն ինձ համար ծաղկունք փնջող մայր,  
Թեև ցուրտ հողում ննջում ես վաղուց,  
Բայց ես տեսնում եմ քո պատկերը վառ:

Հանգչում ես ծանր շիրմաքարի տակ,  
Չեմ լալիս, թեև տանջվում եմ նորեն,  
Թող երգն այս լինի որպես հիշատակ,  
Որ ես փնջել եմ այնքան ջերմորեն  
Քեզնից սովորած խոսքերով բարի...

*1948*



*Ածգուլյգա Տաժմուձաձ*

*ԱԲԴԻԼԴԱ ԹԱՃԻԲԱԵՎ  
(1909-1998 թթ.)*

\* \* \*

Ես հայելուն եմ ամեն օր նայում  
Ու կնճիռներն եմ դիտում իմ դեմքի,  
Մազերս ջրով թրջում եմ, սանրում,  
Կարծես ուզում եմ դուր գալ ես մեկին:

Ուզում եմ դուր գալ, որ սրտով սիրած  
Բարեկամներս չանհանգստանան,  
Որ չզարմանան ու չասեն հանկարծ  
Աբդիլան ինչո՞ւ ծերացավ այսքան:

Ա՛խ, որքա՛ն բան է դեռ մնում թերի,  
Ա՛խ, որքա՛ն բաներ դեռ կան չգրված,  
Թելեր կան կիսատ որքա՛ն երգերի,  
Որքա՛ն մտքեր կան չշարադրված:

Այսօր էլ ահա փողոցն անցնելիս,  
Ինձ առաջինն են նրանք ողջունում,  
Դեռ քչերին եմ ես սալեմ տալիս,  
Ա՛յլ փողոցով են գուցե թե քայլում:

Եվ ընկավ գետնին կաղնու մի տերև,  
Դեղնած էր, ասես ուժ չկար վրան,  
Վերցրի, մաքրեցի փոշին մի թեթև  
Ու երկա՛ր-երկա՛ր նայեցի նրան:

Եվ ընկավ գետնին իմ գլխից մի մազ,  
Ճերմա՛կ էր այնպես և այնպե՛ս նա խեղճ...  
Ո՛չ թե խղճացի ես տերևին այս,  
Այլ ի՛նձ, անսահման թախիժ կար իմ մեջ:

Հորձանք տվեցին խոհերս մեկ-մեկ  
Իմ ջահելության ոսկե մշուշում...  
Ինձ նմանները կան ամենուրեք,  
Շատերի համար եկել է աշուն:

## ՀՈՂԸ ԵՎ ԵՍ

«Հող» և «կերտող»- ինչ հանգեր են թևավոր,  
Դրա համար էլ հաճախ ենք հանդիպում:  
Հանգը հին է, հողն է մնում միշտ էլ նոր,  
Նա պոետի սիրտը հույզով է պատում:

Ու ես էլ եմ հողն իմ երգում անդադար,  
Այնքան, մինչև երգիս թելը կհատի,  
Կերգեմ, մինչև կանգնի արյունը իմ վառ,  
Մինչև լռի տրոփյունը իմ սրտի:

Ես կարո՞ղ եմ չերգել նրան, չսիրել,  
Երբ ծաղկառատ նրա գրկում անձկալի  
Մեր մայրերի կաթն ու արցունքն է փովել,  
Դառը քրտինքն ու արյունն իմ պապերի:

Ես հող էի, հող կդառնամ անպայման,  
Գիտեմ. կյանքը կարճատև է, անցավոր:  
Գիտեմ, կյանքը գեղեցիկ է, անսահման,  
Գիտեմ, կյանքից կհեռանամ ես մի օր:

Հողն իմ տունն է, ես որդին եմ իմ հողի,  
Նրա վրա ես էլ մի լույս եմ վառել:  
Ուզում եմ՝ վառ մնա լույսն իմ կանթեղի,  
Բախտից միայն այս մի բանն եմ միշտ խնդրել:

Հողն իմ մայրն է, հայրենիքն է իմ անգին,  
Թե որ կանչի՝ նրա գիրկը կդառնամ,  
Կտամ նրան նորից իմ սիրտն ու հոգին,  
Իմ արյունը և մարմինը ես կտամ:

Բայց դո՛ւք, ողջե՛ր, նրան նույնպես սիրեցեք,  
Եղեք մաքուր, չկեղտոտեք այն հանկարծ,  
Մեր ստեղծած գետերը դուք մի՛ պղծեք,  
Մի՛ հանգցրեք դուք լույսերը մեր վառած:

Սիրեք հոգով, սիրեք ծաղկունքը գարնան,  
Մի՛ կոխկոտեք ինչ-որ մեկի սիրտը դուք,  
Գուցե այնտեղ ես եմ քնած հավիտյան,  
Գուցե դու ես երազանքը իմ խորունկ:

## ԵՐԳԸ

Հայարտ գլուխն ուղղած կապույտ երկնքին,  
Քարարծվի պես աչքն անսահման ստեպին,  
Թռավ ձիուն իսկույն հովիվը ջահել,  
Չայնը հնչեց, զրնգաց երգը չորս դին:

Երգը հասավ հեռաստանին հեռավոր,  
Ու լսեցին, ունկնդրեցին չորս բուր,  
Կամաց-կամաց դառավ հետո թախծալի,  
Եվ ակամա կարծես հոգոց հանեց խոր:

Այս երգը նա՝ ջահելությունն ի՛նքն է հենց,  
Ու ջիգիթի սրտի միջից արձակվեց,  
Ուրեմն ինչո՞ւ, ա՛խ, ինչո՞ւ է նա տանջվում,  
Որտեղի՞ց է ջահել սրտի վիշտը մեծ:

Հնչի՛ր, քամի՛, թո՛ղի՛ր, քամի՛, երկնահաս,  
Հասցրու նրան, ում հղված է երգը այս,  
Թող աղջիկն այն լսի, որ կա մի ջիգիթ,  
Ու երգի մեջ կա տանջվող սիրտ և մուրազ:

## ԱՎԱԶ

Ավա՛գ, իմ տուն, իմ առաջին հանգրվան,  
Դու իմ կյանքի առաջին սեր աննման,  
Ես ծնվել եմ ուլերի հետ, գարունքին,  
Ուղտիկներին զգվել, սիրել կաթոզին:

Ես լսել եմ գորտերի երգն անլռին,  
Ու տրվել եմ երազներին քնքշազին:  
Մեկ էլ հանկարծ, երբ ոչ ոք չի երևում,  
Ծայր է առնում կուրայի երգն ու թնում:

Սև ագռավը սյունի վրա կոկորում  
Եվ իր լեզվով հնից հուշեր է բերում,  
Ծանր անցյալից նա լուրեր է բերում ինձ  
Ու պատմում է արյունահեղ մարտերից:

Ավազներում ծնվածների հետքը կա,  
Փախածների, ընկածների հետքը կա:  
Ես այդ բոլո՛ր - բոլո՛ր հետքերն եմ կարդում.  
Մնացել են դրանք հավետ իմ հոգում:

Սրտիս մեջ է լացն ու ժասպառ աղբյուրի,  
Եղեգների խշխշոցը անձկալի:  
Մութ գիշերում տեսա մի լույս հեռավոր,  
Թույլ լապտերի մի ճառագայթ մենավոր:

Եվ այդ շողն ինձ հանեց ուղի մի երկար,  
Նա չի տալիս մի ակնթարթ ինձ դադար:  
Նա իմ կյանքն է տանում հեռու և հեռու՝  
Ջահելությունս թողած այն կողմերում:

Դառն է՝ դառը լինի թույնից,  
Քաղցր է՝ քաղցր լինի ջրից:  
Ես չեմ սիրում միջակություն,  
Այն, որ չունի հստակ անուն:

Ես կիսատ բախտ չեմ երագում,  
Կես ժամանակ ես չեմ ուզում,  
Հարկավոր չէ կիսալուսին,  
Կես ցավն անգամ ես չեմ ուզի:

Կուզեմ արևը բոլորած,  
Ամբողջ գիշերը աստղամած,  
Եվ լեռները՝ վերից մինչև վար,  
Եվ ծովերը՝ ծայրից մինչև ծայր,  
Իսկ թե դեմս գա թշնամին,  
Թո՛ղ որ նա գա ամբողջովին:

Կիսատ սերը իմ մեջ չկա,  
Ես չեմ ուզում կես բարեկամ:  
Միրտդ ես տալիս՝ հանի՛ր ու տո՛ւր,  
Կյանքից կուզեմ ամբողջություն:  
Իմ ժողովուրդ, ես քեզ կյանքում  
Ամբողջություն եմ փափագում:



*Յակ Օրմանով*

*ՉԱԼԻ ՕՐՄԱՆՈՎ*

*(1907-1978 թթ.)*

### ՀԵՌԱՎՈՐ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐ

Միշտ էլ գերող է, անվերջանալի  
Տափաստանների կապտավուն հեռուն,  
Միրտս նրանց ջերմ երգերով է լի,  
Հայացքս է անմար կարոտով վառվում:

Տեսել եմ նրանց իմ պատանության  
Խենթ տարիներին՝ լեռան բարձունքից,  
Հեռու մշուշում բերդեր անսասան,  
Ու պալատներ են ընկել իմ աչքին:

Տարված նրանցով՝ նայել եմ երկար,  
Երազել անվերջ հեռուն կապույտի,  
Քայլել եմ մենակ, քայլել անդադար,  
Եվ չի հազեցել կարոտն իմ սրտի:

Երբ հասակ առա, առնականացա,  
Սիրածս կորավ այդ լուրթ մշուշում,  
Տափաստանն աչքիս նորից հեռացավ,  
Խոր կարոտով եմ այդ պահը հիշում:

Երբ քամու նման նստած նժույզին  
Սլանում էի ճանապարհներով,  
Հեռաստանները օրորվում էին,  
Հուզվում ծովի պես՝ մեղմ ալիքներով:

Երբ օդանավի թևերին բազմած  
Ես սավառնել եմ ամպերից էլ վեր,  
Տեսել եմ կրկին՝ աստղերը վառած,  
Ինձ աչքով անող կապույտ հեռուներ:

Տիեզերք թռչեմ թեկուզ ես մի օր,  
Չեմ հասնի, գիտեմ, նրա բարձունքին,  
Մեկ է, տենչում են, ձգտում են մարդիկ  
Դեպի անհունը կապույտ երկնքի:

Այդ երազանքը երբեք չի՝ մարում:  
Ապրում է մեզ հետ, մեր սրտին ձուլված,  
Ինչպես երգերն իմ, որ ես եմ գրում,-  
Նոր հեռուների տենչանքով տարված:

1956

## ՔՈ ԿՅԱՆՔԸ

Արծաթը մաքուր՝ իջած քունքերիդ,  
Նշան չէ, գիտցիր, դեռևս ծերության,  
Դու նմանվում ես այն գագաթներին,  
Որ շողշողում են վաղ առավոտյան:

Երբ որ նայում ես նրանց դու հեռվից,  
Փայլում են մաքուր ձյունից սպիտակ,  
Իսկ երբ ակնդետ դիտում ես մոտից,  
Կյանքն է կանչում նրանց թևի տակ:

Աղբյուրներ զուլալ ծնվում են այնտեղ,  
Եվ թավալզուր դեպի ցած իջնում,  
Դաշտերը լցնում ծաղկունքով շքեղ,  
Լույսի անհամար կայծեր են ցանում:

Այդպես ապրում է լեռը հինավուրց,  
Անթիվ ծաղիկների փռած փեշերին,  
Նա նման է քեզ, ճերմակը մաքուր  
Լոկ զարդարանքն է քո նոր երգերի:

1956

## ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԿՅԱՆՔԸ

Ասում եք.

«Ժամանակն անցնում է լրին...»

Բնա վ...

Այդ դո՛ւք եք անցնում ու դողում:

Դուք բանաստեղծ չեք,

Թե՛ ձեր ճակատին

Նույնիսկ ցուցանակ փակցնեք շողշողուն:

Եթե մահին է երգս արժանի,

Չեմ թողնի, որ նա կենդանի մնա,

Վճիռ կարձակեմ ես այդ նույն ժամին,

Ի՛նքս կսպանեմ նրան անխնա:

Իսկ թե՛ իմ երգը սիրտ ունի իրոք,

Կարող է երկինք թռչել հաղթական,

Նրա գլուխը կշոյեմ սիրով,

Ինչպես շոյում են գլուխը մանկան:

Չեմ ուզում իզուր ես արցունք թափել,

Ինչպես անում են շատերն օրնիբուն,

Բայց ինձ թվում է՝ ես դեռ չեմ ապրել,

Ես իմ կյանքը դեռ նո՛ր եմ սկսում:

Իմ ու ձեր միջև կա՛ մի գուգահեռ,

Ասացե՛ք, արդյոք, ի՛նչ եք մտածում,

Ասում եք.

«Ժամանակն անցնում է...»

Մինչդեռ

Ես ձեզ ասում եմ.

-Այդ դո՛ւք եք անցնում:

1954



*Мария  
Хакимжанова*

*ՄԱՆԻԱՄ ԽԱՔԻՄՃԱՆՈՎԱ*  
*(1906-1993 թթ.)*

### ԽԻՉԱԽ ԲԱԶԵՆ

Նրա համար, որ սուր նետի նման  
Խրվում ես երկնի գիրկը անսահման,  
Ու այդ աներիզ տարածությունը  
Կտրում ես հանգիստ, ինչպես քո տունը,

Նրա համար, որ մարտում ահարկու  
Փշրեցիր երկաթ կողը թշնամու  
Ու երկնքի մեջ՝ ամուր քո բազկով  
Քեզ պսակեցիր երկրային փառքով,

Նրա համար, որ ամենից ավել  
Սիրում ես բարձրեր, սիրում ես արև,  
Որ ոչ մի վտանգ քեզ չի սասանում,-  
Քեզ քաջ բազե են մարդիկ անվանում:

Բազե, որ երկնի սիրեցյալն է հար,  
Բազե, որ մարդու երազանքն է վառ,  
Որ բանաստեղծին երգ է ներշնչում,  
Գետնահար հոգուն ճախրանքի կանչում:

Ա՛խ, ես էլ, ե՛ս էլ թե կարենայի  
Նետել հոգսերիս բեռը ահալի  
Ու թներ առած քեզ հետ սավառնել,  
Երկնքին հասնել, երկնքի՛ն հասնել...

Արծաթ թները մի կետ են դառնում  
Կարոտ հայացքս իրենց հետ տանում.  
- Որդի՛ս, ինչ մնաց ինձ համար երա՛գ,  
Դո՛ւ հասիր դրան, դո՛ւ հասիր, տղա՛ս...

## ԱՐԾԱԹ ՄԱՏԱՆԻՆ

Ոսկուց թանկ է, ոսկուց անզին  
Արծաթ ու հեզ իմ մատանին.  
Ինչքա՛ն հուշ կա ու հիշատակ  
Նրա համար նախշերի տակ:

Քանի՛ գարուն, քանի՛ ամառ  
Գիշեր-ցերեկ ինձ հետ է նա,  
Նայում եմ ես նրա փայլին  
Դեմս է գալիս իմ սիրելին:

Ասես քաղցր ձայնն է նրա  
Ձայնագրված նախշի վրա.  
Նրա աչքերն են շողշողում  
Կապույտ ակնի նուրբ շողերում,

Զարկում է իմ սիրտը անուշ,  
Զարթնում են հին սեր ու անուրջ.  
Ու թվում է առաջվա պես  
Չահե՛լ եմ ես, ջահե՛լ եմ ես...



*Գևորգ Ավակյան*

**ԳԵՎՈՐԳ ԱՎԱԿՅԱՆ**

*(1907-2003 թթ.)*

### ԿՈՐԱԾ ՍՈՒՍԱԿԸ

Որտե՞ղ ես արդյոք դու քեզ թաքցրել,  
Դու կախարդական երգերի արքա,  
Դու հնչյունների վաղուց ես ցրել,  
Հիմա անտառում հավաքող չկա:

Ես իմ հանգիստը կորցրած վաղուց,  
Այս թփերի մեջ քեզ եմ որոնում,  
Մինչդեռ դու ահա կտուցով աղու,  
Քո ձագուկներին հունդեր ես տանում:

Ահա թե ինչու դու էլ չես երգում,  
Չես ուզում հայտնել, թե բույնդ ուր է.  
Թե չէ կարող են մոտենալ թաքուն,  
Ուրախությունդ ու երգդ խանգարել:

Բանից պարզվում է, դարձել ես դու մայր,  
Կա հպարտ մի հուր այդ քո աչքերում,  
Եվ քո երգեցիկ կտուցը հիմա  
Ձագուկներիդ է լոկ կերակրում...

## ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Թեկուզ և ապրես իննսուն տարի,  
Իր սահմանն ունի ամեն, ամեն կյանք,  
Ոչ որ հրաժեշտ չի տա աշխարհին,  
Չի ուզի գնալ մի ուրիշ աշխարհք:

Եվ արդյոք ի՞նչը կհամեմատես  
Գեղեցիկ ապրած կյանքի հետ մարդու,-  
Նույնիսկ սատանան չար ու սևերես  
Փախչում է մահից, ահ ունի սրտում:

Երբ ամեն ինչին սկիզբ ու վերջ կա,  
Երբ որ այդպես է, այլևս ի՞նչ արած,  
Ես կուզենայի մեռնել մի անգամ,  
Չմեռներ պատիվս ինձանից առաջ...

## ՀԻՆ ԿԱՂՆՈՒ ՄԱՍԻՆ

Այս հսկա, այս հին կաղնին  
Դարերի որպես վկա՝  
Կայծակ է տեսել քանի,  
Բայց կանգնել է հաղթական:

Դարերով կարծես փորձված,  
Մի ծերուկ մարդ է զառամ,  
Կանգնել է արդեն հոգնած,  
Անտառն է խղճում նրան:

Նայում է նա անտառին  
Եվ հիշում կանաչ օրեր,  
Իր կյանքի չարն ու բարին,  
Կայծակներ, փոթորիկներ:

Դժվար է նա մոռանում  
Իր ջահել օրերն անցած,-  
Խշշում էր ամեն զարուն,  
Գանգրահեր կանաչ հազած:

Թեև հույս ունի նորից  
Ապրելու ևս մի դար,  
Բայց հոգում կա լուռ թախիծ  
Եվ կանաչ մի ողջ անտառ:

Կեսօրին՝ սլապերս հնձվոր  
Նստել են զով շվաքում,  
Տվել ես զով ու անդորր,  
Խոնջացած մարդու հոգուն:

Օ՛, կաղնի վսեմաշուք,  
Թե ձեռքիս լիներ հնար՝  
Կտայի ջահելություն,  
Մնայիր հավերժ դալար...



*Ածյ Կարցենձաեզ*

*ԱԲՈՒ ՍԱՐՍԵՆԲԱԵՎ*

*(1905-1995 թթ.)*

## ՄՏԱԾՄԱՆ ՏՈՂԵՐ

### I

Լավ եմ եղել ես, թե վատ, չեմ վստահում այդ ասել,  
Չեմ տրտնջում քեզանից, կյա՛նք, կարճատև դու այնպես,  
Այո՛, արևն անդադար ծագել է և մայր մտել,  
Չեմ ասում, թե ուսերիս մեծ լեռներ եմ պահել ես:-  
Քե՛զ եմ նվիրված ես միշտ, շատ քիչ բան եմ արել, կյա՛նք,  
Ուստի ճերմակ մորուքիս չեմ պահանջում մեծարանք:

### III

Ծովն ալեկոճ՝ ուզում է փշրել ժայռը իր ափի,  
Սակայն ժայռը անսասան տեղում կանգնած է հպարտ,  
Փողփողում է ծովն այնժամ, երբ ճառագում է արփին  
Եվ վեհանում լայնահուն իր տարածքով անարատ.  
Ծո՛վ, դու անվերջ վատնում ես քո կաթիլները, մինչդեռ  
Չզիտես որ ինքդ հենց կաթիլներից ես կազմվել...

## V

Ո՛վ մարդ, և՛ մեծ և՛ մանր ես դու միևնույն ժամանակ,  
Եվ երբեմն բարձր ես, քան սեզ բարձունքները լերանց:  
Քո դեմ ոչինչ են անգամ կայծակները երկնառաք,  
Մերթ զորեղ ես՝ երկաթից անկշռելի ուժ առած,  
Այդ բոլորով հանդերձ քեզ՝ բախումների ժամին բիրտ՝  
Հանկարծ ճգնում է ահա այդ նույն երկաթը անսիրտ:

## XIX

Միրում եմ ես առավոտը, առավոտը ոսկեձույլ,  
Թող երկինքը լինի պարզ երկրի վրա հանապազ,  
Ջահելությունը սուրա մի բարձունքից մի բարձունք,  
Եվ ապրի այն հրճվանքը, որից եղանք մենք անմաս:  
Պատրաստ եմ ես ամեն ինչ ջահելությանը տալ մեր,  
Միայն լինեն երջանիկ, միայն ապրեն խինդ ու սեր:

## XXII

Դու ունես քո բարձունքը և քո վերելքը ունես,  
Ունես ակուրթ, ունես սեր, ունես խինդեր ու վշտեր.  
Ունես ուսեր պնդակազմ, որ տվել է կյանքը քեզ,  
Տանել ամեն ծանրություն միշտ դեպի վե՛ր, դեպի վե՛ր,  
Կյանք ու շարժում փնտրիր դու ամեն բանում և ինչում,  
Եվ այդ ամենը ահա մենք Հայրենիք ենք կոչում:

## XXIII

Իմ սո՛ւր, դու որ ավանդ ես մնացել իմ պապերից՝  
Ես քեզ շատ եմ շողացրել արյունավատ մարտերում.  
Բայց այդ չէ իմ տենչանքը, չի գրգռում մարտը ինձ  
Ծարավի չեմ ես արյան խառն ու դաժան այս դարում:  
Իմ սո՛ւր, քեզ կփշրեի՝ չլինեին թե հիմա  
Ոսոխները միշտ անքուն, որ նյութում են դավ ու մահ...

## XXV

Օ՛, երազա՛նք, երազա՛նք, վերելք ունես ու վայրէջք,  
Էությունն ես դու անմաս ջահելության խանդավար.  
Պատահում է նաև մերթ մթազնում ես դու անպետք  
Երազանքի թռիչքից զուրկ անարժան մարդու մեջ:  
Օ՛, երազա՛նք, երազա՛նք, արժանավոր հոգում դու  
Արշալույս ես, ապագա, հույս ու հավատ կենսատու:

## XXVI

Եթե մարդ ես հուր-կրակ, եթե ունես դու պատիվ  
Հայրենիքով ապրիր քո, ինչպես ազնիվ քո նախնիք.  
Նա՛յիր, որ քեզ չխոցի գնդակը չար նամարդի,  
Գաղտագողի երբ փախչես, որպես անարգ դասալիք:  
Պատիվ ունե՞ս, ա՛ն ապա Աբդոլլայի<sup>28</sup> սիրտն հզոր,  
Եվ դյուցազնի պես ընկիր, ինչպես ընկավ նա մի օր:

---

<sup>28</sup> Ղազախ բանաստեղծ՝ զոհված հերոսական մահով Հայրենական  
մեծ պատերազմում:

## XXIX

Ների՛ր, ների՛ր ինձ, Թուրսուն<sup>29</sup>, ների՛ր, քաջըղ մեծանուն,  
Չէի ուզում հիշել քեզ և այն աղետն ահավոր,  
Որ պայթեց այնպես դաժան այս Մաման Կուրգանում:  
Եվ արթնացրեց, բարեկա՛մ, հիշատակներ նորից նոր.  
Մտածում եմ ես ահա, որ դեռ մնում են խորին  
Անջինջ հետքերը ձեռքիդ այս կուրգանի քարերին...

## XXXIII

Ժամանակը թռչում է նետի նման սրընթաց,  
Այն, ինչ նոր է, վաղը մեզ արդեն հին է երևում.  
Հաջորդում է գիշերին միշտ գեղեցիկ լուսաբաց՝  
Ոսկեգույնով ներարկում հորիզոնները անհուն.  
Ասա՛ ինձ, ի՞նչ ես թողնում քո ետևից դու մի օր,  
Որ երբեք չհնանա ու միշտ լինի նորից նոր:

## XXXIV

Կյանքը կարճ է, մինչ ժամանակը թռչում է խիստ արագ,  
Մինչ այս, մինչ այն՝ ծերությունը չոքում է քո դռան.  
Այնինչ կրիան դանդաղկոտ, այդ կենդանին հասարակ,  
Ապրում է շուրջ երեք դար՝ Աստծու աչքի հանդիման:  
Նախանձո՞ւմ եմ ես նրան, օ՛ր՛ն՛չ, երբե՛ք, ո՛վ Աստված,  
Կարճացրու իմ կյանքը դու, եթե պետք չեմ ես մարդկանց...

---

<sup>29</sup> Նախկին ռազմիկ. Ստալինգրադյան ճակատամարտում կորցնելով ձեռքերը՝ սովորեց արմունկներով գրել «Երես առ երես մահվան հետ» գիրքը:



*Жумагалы Санн*

*ԺՈՒՄԱԳԱԼԻ ՄԱԻՆ*

*(1912-1961 թթ.)*

### ԵՍ ԽՆՁՈՐ ՊՈԿԵՑԻ ՃՅՈՒՂԻՑ

Կանգնած է ահա ծառը բարձրաբերձ,  
Ճյուղերը ծանրած պտուղի բեռով...  
Դու աշնան այգին մտիր, բանաստեղծ,  
Փորձիր մի խնձոր պոկել քո ձեռքով:

Դիտում եմ ծառը, ինչպես սիրահար,  
Ինձ հրապուրել է հմայքը հասուն.  
Այդպես ջիգիթն է դիտում սիրավառ  
Հասուն աղջկան ժպտուն ու նազուն:

Կարծես իզուր եմ ես կանգնել անկամ,  
Հասուն պտուղը ամենից հյութեղ  
Ինքն իրեն կընկնի, եթե ես ցանկամ...  
Այնինչ ծառն անշարժ կանգնել է այնտեղ:

Շողշողուն բեռով լուռ ու հմայուն  
Խնձորենին ինձ հեզնում է կարծես.  
Մի հասուն խնձոր գողունի նայում,  
Աչքով է անում լուռ, աղջրկա պես:

Երբ ես ծառացա ծանր ծառն ի վեր՝  
Հասուն խնձորը պոկելու փորձով,  
Կարկուտի նման՝ անթիվ պտուղներ  
Ծառից թափվեցին անուշ խշշոցով:

Այդպես, երբ բառը կգտնես, քերթող,  
Եվ ժամանակին ասել կջանաս,  
Մյուս խոսքերն էլ կգան տող առ տող,  
Երգը կձևվի և կամբողջանա:

## ՄԵՎԱԶՅԱՆ

Այտերը՝ ալ ծաղիկ,  
Սև աչքերում՝ կրակ,  
Ճկուն ու սլացիկ  
Գարնանաբույր հասակ,  
Ինչպես ճարպիկ քարայծ՝  
Կածաններով լեռան  
Վազում է նա շիկնած,  
Եվ չի հասնում նրան  
Ոչ մի քաջ նժույգ:  
Ջրվեժ մարգարտացայտ՝  
Վերից վար է խուժում,  
Հովի նման ազատ:  
Ծառերի մեջ քամին  
Խաղ է անում, շողում,  
Կարծես, թե այդ ժամին  
Նա սիրուց է դողում:  
Լեռան ոգի՞ն էս դու,  
Թե՞ ճառագայթ ու շող,  
Որ հայացքս դուրսում,  
Մրտիս տալիս էս դող:  
  
Քամի՞ն հանկարծակի,  
Թե՞ նժույգդ սուրաց,  
Սլա՞ք էս կայծակի,  
Մրրիկ լեռնագնաց...

Թե ընկերն ես հողմի՝  
Արդեն նա ետ մնաց...

Սլացքիդ մեջ հիմի՝  
Պատյանից դուրս հանած  
Քո դաշույնով՝ անդուլ  
Կտրում թուփ ու մացառ,  
Կարծես, թե սրավար  
Թշնամունն ես ջարդում  
Մի վրեժի համար:

Այտերդ՝ հուրհրան,  
Հասակդ՝ լար ճկուն,  
Աչքերիդ մեջ՝ կրակ,  
Մի ձեռքիդ մեջ՝ դաշույն,  
Մյուս ձեռքումդ՝ սանձ,  
Հողմասլաց նժույզ,  
Լեռնաբնակ Աստված...  
Գարնանային դու հով,  
Լեռնաշխարհի գարուն,-  
Ես ներշնչված քեզնով  
Իմ երգերն եմ գրում:  
Սլանում ես դու վես  
Գարնան հովի ձևով,  
Ուզում եմ հասնել քեզ  
Իմ երգերի թևով:

## ԴՆԵՊՐԻՆ ԷՐ ՆԱՅՈՒՄ ԶԻՆՎՈՐԸ...

Մարտից վերջ զինվորը  
Դնեպրին էր նայում...  
Ուզում էր համբուրել  
Զրերը հնայուն:

Բայց գետը մռայլ էր,  
Կնճռոտ էր, վետ-վետ...  
Խոսում է Դնեպրը  
Այդ զինվորի հետ:

Պատմում է Դնեպրը՝  
Ինչ անցավ-գնաց...  
Կանգնած է զինվորը  
Փոշոտ ու հոգնած:

Հետո նա կռանում  
Եվ երկու ափով  
Գետից ջուր է առնում  
Սիրով ու խանդով:

Խմում է նա ջուրը,  
Պապակը կոտրում.  
Նայում է Դնեպրին,  
Պայծառ մտորում:

Դնեպրը հոսում է  
Եվ կա, ինչպես կյանք.  
Իր միտքն էլ նրա հետ  
Գնում է անկանգ:

Մտքերը ի՛նչ դաշն են  
Գետի հետ այդ մեծ...  
Ղազախը Դնեպրին  
Իր սերը հայտնեց:



*Касым Аманжолов*

*ԿԱՍԻՄ ԱՄԱՆԺՈԼՈՎ  
(1911-1955 թթ.)*

*Վերջին բանաստեղծություններից*

### ԼՈՒՍԵ ԱՇԽԱՐՀԸ

Լուսե աշխարհն է շրջապատում ինձ,  
Մեր կյանքի լուսե աշխարհը այս հոծ  
Նրա համար է զնգում երգս ջինջ,  
Չուվում եմ նրան իմ հոգով ամբողջ:

Հիվանդության հետ կովելով ահա  
Իմ միտքն եմ պարզում լույսի հավերժին,  
Եվ կյանքի օդն եմ շնչում ես ազահ՝  
Այրվելով հույսի կրակով վերջին:

Լավ է իմ ապրած օրն յուրաքանչյուր,  
Թեկուզ և ծանր է իմ մարմնի համար,  
Հեռացի՛ր մահու մոտեցող սարսուռ,  
Երգածին հնչուն, հնչիր հաղթաբար:

Լուսե աշխարհ իմ, հարսզատ հսկա,  
Քեզ սիրոսս եմ տվել սիրով մտերմիկ,  
Ապրել եմ միայն մի մտքով հստակ,-  
Քեզ փառաբանել երգով իմ ջերմին:

## ՀԱՅՐԵՆԻՔ

Հո՛ղ իմ հայրենի, ոսկի օրորան,  
Թե հոգիս չերգեր սրնգի նման,  
Որպես ժեռ քարը ավազի վրա,  
Մի՞թե լռեի պիտի հավիտյան:

Ինչքան անծայր ես, հո՛ղ, ինչքան անհուն,  
Ամեն կածանում նիրհող դարեր կան...  
Բախտ է ծնվելը քո տափաստանում,  
Թեթև է այնտեղ և ցավը անգամ:

Մի՞թե շունչս չէ հովիկդ ջահել,  
Լայնությունների հարազատ են ինձ,  
Ինձ համար ոչինչ դու չես խնայել,  
Ես չեմ խնայի քեզ համար ոչինչ:

Ես կորանում եմ, դառնում եմ զառամ,  
Երբ որ չեմ տեսնում դաշտերդ անգին,  
Քեզ եմ անրջում քո գրկում անգամ,  
Ես քո վահանն եմ, որդին քո ակին:

## ԳԱՐՆԱՆ ԱՂԲՅՈՒՐԻ ՄՈՏ

Գարնան աղբյուրի ջուրն է դեղին,  
Դեղին է ծաղկած կնձենու  
Փշփշուկի պես...գուռն է դեղին...  
Ծերուկն ուժ չունի էլ կանգնելու,  
Ցուպը թակելով նա ծանրատ  
Նստում է ծանոթ աղբյուրի մոտ:

Գույնն է գուլալվում գարնան ջրի,  
Գուռն է հայելի դառնում կապույտ,  
Ճոճում ստվերներ, տալիս ցրիվ  
Եվ ծիածանե գոտի կապում:  
Լեցուն թարմությամբ գով ապրիլի  
Զնգում են ջրի ծիծաղները,  
Քաղցր է առաջին սաղարթների  
Խշրտոցը խուլ:Խորհեց ձերը,  
Ապա հառաչեց: Ծանր է սակայն  
Ծերության համար գարունն անգամ:

## ԻՄ ՄԱՍԻՆ

Ոչ այլ ոք, ի՛նքս կասեմ իմ մասին,  
Խոսքն է զրնգում իմ սրտի խորքում,  
Ճակատագրիս մասին նա կասի՝  
Պոռթկալով, որպես երգ մի փոթորկուն:

Տեսնում են բոլորն իմ կյանքի ուղին,  
Դեմքս են սնուցել հետքերը նրա,  
Դեպի Վաղն է նա տանում ինձ ուղիղ,  
Գալիքից պոկած քողը աննշմար:

Թող որ իմ դարն էլ լինի ակնթարթ,  
(Բոլորս էլ միայն հյուր ենք աշխարհում)...  
Բայց իմ կոչումը վիթխարի է՝ Մարդ,  
Որ զրահի պես վրաս եմ կրում:

Աչքե՛ր իմ, երկու աստղեր երկրային,  
Աշխարհին, լույսին նայեցեք շիտակ,  
Դուք էլ կմարեք մարվելուս պահին,  
Եվ ինձ կգրկի մութը լույսի տակ:

Վաղուց, վաղուց եմ այդ մտքին ընտել,  
Բայց տազնապում եմ այլ մտքից հաճախ,-  
Ձեզ էլ է գուցե վիճակված ընկնել,  
Երգե՛ր իմ, ինձ հետ այն աշխարհին, ավա՛ղ:

Երգեր անբաժան, իմ սրտի համար  
Բարեկամ էիք, բախտի արահետ,  
Ես ձեզ իմ ծոցում պահել եմ համառ  
Ո՛չ նրա համար, որ թաղվեք ինձ հետ:

Ես ճաշակելով խինդ ու վիշտ համակ  
Չեղա անպտուղ ու դատարկագույն,  
Թե սխալվեցի, այդ նրա համար,  
Որ պոետ էի ծնվել այս կյանքում:

Այդ նույն Կասիմն եմ ես քնարերգու,  
Կերտվածքով անհոգ ու բարի մանկութ,  
Նենգ ու ստորի ոստիան աներկյուղ,  
Ազնիվի հանդեպ սիրտ եմ մի մանուկ:

Պոետ եմ, այսպես կմնամ անդող,  
Երեխաներս երգերս են դալար,  
Շոյելով նրանց, տարիներ անցնող,  
Ես ձեզ եմ երգում ձայնով մեղմալար:

Տվեք իմ դոմբրան, լարերը հնչեղ  
Երգիս զնգոցն են, զուլալումն ուրախ,  
Հարստությունս են, սակայն իմը չեն,  
Շաղ կտամ նրանց ճամփիս աջ ու ձախ:

Կզան պոետներ իմ երկրի վրա,  
Թերթելով սիրտս դեղնած էջերում-  
Կասեն.-Ապրո՛ւմ են երգերը նրա,  
Այնտեղ Կասիմի արյո՛ւնն է եռում:



*Халижан Бекхожин*

*ԽԱԼԻՇԱՆ ԲԵԿԽՆՈՇԻՆ  
(1913-1990 թթ.)*

## ԱՐԱՐԱՏԻ ՈՐԴԻՆ

### *Գևորգ Էմինին*

Դու որդին վսեմ, հինավուրց լեռան,  
Չավակն ես նրա ահեղ դարերի.  
Հենց Արարատն է ժառանգել, գիտեմ,  
Փառքն արժանավոր քո նախնիների:

Որոտացել է երկրում բովանդակ,  
Ողջ աշխարհով մեկ հնչել ամեհի  
Հզոր ու արդար, բարի, համարձակ  
Խոսքը փառասեղ քո նախապապի:

Քո Արարատը հառնել է հեռվում  
Տենչ ու երազից բա ըձր ավելի,  
Դարավոր վշտի միջով է ձգվում  
Հունը սգավոր նրա գետերի:

Լեզենդ են ու ասք նրա գետերը,  
Գետերը նրա՝ դարեր մաքառման.  
Ժեռ քարերի մեջ զրնգացել են  
Երգեր կարոտի, հույս ու սպասման:

Ժամանակների երթը դարավոր,  
Կրակներն անթիվ խոլ հրդեհների,  
Հիշում են հայոց լեռներն ամեն օր,  
Զի՛ լռում այստեղ ձայնը անցյալի:

Վեր են խոյացել լեռները վսեմ,  
Մինչ երկինք՝ ճերմակ, վեհ զագաթներով,  
Սիրով են լի ու բյուր սխրանքներով  
Նրանց հնամյա ասքերը բոլոր:

Թանկ է ինձ համար գեղեցկությունը,  
Զխամրող փառքը նրանց դարավոր,  
Ալատաուի լեզենդների հետ  
Ես Հայաստանը կկապեմ սիրով:

Եվ այնուհանդերձ, ի գորու չեմ ես  
Պատկերել նրա հմայքներն ամեն.  
Անհուն, անսահման երկնակամարը  
Ասես քո գիրկն է լայն բացված իմ դեմ:

Քո բարձունքներին, Հայաստան աշխարհ,  
Դժվար է հասնում հավքն իսկ թևաբաց,  
Անձայրածիր մեր տափաստաններից  
Գովերգելու եմ ի սրտե նրանց:

Ես բարեկամիս օջախ եմ մտնում  
Ինչպես հարազատ տունն իմ հայրական,  
Թող որ խոսքերն իմ տափաստանային  
Ձուլվեն տողերին քո հայրենական:

Չքնաղ եզերքին քո արևամերձ,  
Որ հեքիաթային հմայքներ ունի,  
Մեր դազախական „սալամն,, եմ բերել  
Հեռաստաններից ես իմ հայրենի:

Հողն իմ հարազատ կփառաբանի  
Քո բարձունքների փառքն հավերժական,  
Խոնարհում եմ իմ գլուխն ալեհեր  
Ես ամբողջ հոգով նրանց հանդիման:

Արարատ, որդիք քո-ընձյուղներ նոր  
Բարձունքների մոտ քո երկնասալաց,  
Ես սիրում նրանց գործերն ու ջանքը  
Ու եղբայրաբար գրկում եմ նրանց:

Ոնց քո գետերին, խոտ ու քարերին  
Ձոնեցի խոսքն իմ, վայելքով անափ,  
Այդպես ծաղկունքից Ալատաուի  
Գորգ կհյուսեմ թանկ հյուրերիս համար:

Նույն ջերմությամբ ենք կապված իրարու,  
Հարազատի տաք զգացումներով,-  
Երգ ես նվիրել իմ եզերքին դու,  
Գևորգ, քո հյուրեղ, ճոխ հայերենով:

Ե՛վ աղուհաց, և՛ ձնաբուք վայրի...  
Իսկ դու՝ սրտումդ հիացում ու սեր,  
Հին-նոր ճամփաներ ինձ հետ կտրեցիր  
Ու ճանաչեցիր տափաստանը մեր:

Իմ աուլներում, ազատ, սրտաբաց,  
Կարդացիր խորունկ, ջերմ տողերը քո,  
Սիրեցին երգդ մեր տափաստանցիք  
Խարույկի տաքուկ, մեղմ լույսի ներքո:

Գնալով մեղմ ու ներդաշնակ դարձալ  
Սրտերի զարկը հոգեբուխ խոսքից,  
Բա՛ց Հայաստանը դու նրանց համար,  
Գևորգ՝ հայ ոգու թարգման ու մեկնիչ:

Երգող բառերով, ինչպես եղբորդ,  
Դու բացահայտիր ինձ համար նրան՝  
Հին լեզենդներում, ասքերում ապրող  
Քո Արարատին՝ այնքա՛ն դյուրթական:

Որ մեկտեղ երգեն դաշտն ու լեռները.  
Հնչեն ինչպես մեկ երգ ու մեղեդի  
Բարձրագահ քո եզերքի ձայնը  
Ու ձայնն անսահման իմ տափաստանի:

## ՕՍՎԵՆՑԻՄ

Կարո՞ղ եմ ես մահին հանգիստ նայել, արդյոք,  
Երբ նորից նոր նրա դաժան դեմքն է հառնում,  
Երբ ահավոր խարույկներում հրաբորբոք,  
Մոխրանում են մարդիկ անթիվ ու անանուն:

Քուն թե արթուն, սակայն անվերջ թվում է ինձ,  
Մի ցավագին ձայն եմ լսում ես անմոռաց,  
Դեռ չմարած դժոխային այդ բոցերից  
Ինձ է կանչում իմ եղբայրը՝ հավետ կորած:

Լեռուհին է լալիս այնտեղ դեռ գլխահակ,  
Ընկերոջն է փնտրում սիրած... Բայց ո՞ւր է նա...  
Արցունքներ է թափում անհույս մոխրին ճերմակ,  
Պաղ անձրև է ասես ցողում մոխրի վրա:

Եվ այդ հիվանդ լռության մեջ ես այդ պահին  
Տեսնում եմ իմ եղբոր դեմքը արյունաճերկ,  
Բարձրանում է մոխիրներից այդ մարդկային  
Ու թվարկում դահիճներին նա մեկ առ մեկ:

Լեռնանում է ցասումն արդար իմ կրծքի տակ  
Ու եռում է լավայի պես իմ սիրտը թեժ,  
Մոխիրներից այդ ահավոր, խառնակուտակ,  
Մեռելներն են գոչում ահեղ՝ վրե՛ժ, վրե՛ժ...

Լսում էի ես ձայների այդ ժխորից,  
Լսում էի ես աղեխարշ ձայնն իմ եղբոր...  
Տարիներ են անցել երկար, բայց դեռ նորից  
Իմ կրծքի տակ հնչում է ձայնն այդ հեռավոր:

## ՆԱՅԵԼՈՎ ԾՈՎԻՆ

Մի՞թե գայրույթն ու հուզմունքը մարդկային  
Հավերժորեն ծովն հորձանքի է փոխել,  
Որ տազնապով փոթորկվում է մոլեգին,  
Ալիքներին՝ նիրհող նավեր ու հողմեր:

Եվ մարդկության համբերությունը դարեր  
Մի՞թե ծովը լռության է փոխել խոր,  
Որ աշխարհին իմաստնորեն է նայել,  
Խաղաղ լսել նրա հառաչն ահավոր:

Եվ կյանք-ծովն էլ ունի տազնապ ու հրճվանք,  
Նա մերթ հուզվում, մերթ խաղաղվում է նորից,  
Ծո՛վ, երանի ունենամ իմ կրծքի տակ,  
Թեկուզ կեսը քո հավերժող հուզումից:

## ՄԵՐ

Այն ո՞ր մեծն է, ասա՛ ինձ, որ գլուխ չի խոնարհել  
Սիրո առաջ սրբազան, սիրո առաջ սրբագին,  
Ով որ սիրել է անխանդ տարիներին իր ջահել,  
Չի ծերանում նա երբեք, չի սատում սիրուն ու հոգին:  
Սիրո համար մեկ է, մեկ՝ ջահել էս, թե պատաված,  
Եվ ամենքի սրտի մեջ կա սիրո հուր մի անհուն,  
Այն սիրտը, որ չի սիրել, դատարկ է շատ ու մեռած,  
Եվ կտրիճներ են ընկել սիրո համար աշխարհում:  
Եվ սիրո մեջ սրտաբուխ ինչե՛ր ասես, որ չկան...  
Սիրո փոքրիկ շոյանքից, հրապույրից մի թեթև  
Մոռացման գիրկն են անցնում տարիները դառնության,  
Եվ քաղցրանում է կյանքը սիրո պահին կարճատև:  
Կյանքն էլ, ա՛խ, սեր է համակ, այնպես սիրիք դու նրան,  
Որ կրծքիդ տակ հուրը այդ ծեր օրիդ էլ չմարի,  
Գիտցի՛ր, կյանքը դարձ չունի, մարդ սիրում է մի՛ անգամ  
Եվ կարճատև մեր կյանքում, չկա էլ սեր ավելի:

## ԾԵՐՈՒԿՆ ՈՒ ԳԵՏԸ

Կնճիոնների տակ ծերուկի  
Կան շատ դառը մտքեր,  
Քարից քար է դարեր թոշում  
Գետը շուրթին երգեր:  
-Ես ուրախ եմ,-ծերուկն ասաց,  
Որ հանգիստ ես ուզում,  
Բայց քո ճամփին դեռ ժայռ ու քար  
Քո թոփչքն են կասում:  
Դու հորձանքվում, ալիքվում ես,  
Ու չես հիշում, անսանձ,  
Որ ավազով ծածկեցիր դու  
Մի օր արտս ծաղկած:  
Որ դու կյանքում մեր բախտի հետ  
Դաժան եղար այնքան,  
Որ քանդեցիր, տարար անհետ  
Դու տունն իմ հայրական:  
Զգիտես, որ տապին ծարավն  
Ինչքան դառն է լինում,  
Բայց թե տոթին, գե՛տ իմ, ինձնից  
Դու միշտ փախար հեռն:  
Դրա համար քանի՛ տարի  
Տխուր միտք եմ անում,  
Եվ արդ զվարթ կանգնել ափիդ,  
Քո դեմ սիրտս եմ բանում:  
Սուրա՛, խաղա՛ դաշտերի մեջ  
Ցնցի՛ր բաշդ փրփուր,  
Բայց գիտցի՛ր, որ որդիներն իմ  
Քեզ կսանձե՛ն և ամուր:



*Քաչատր Աղայան*

*ՀԱՄԱՐԴ ԵՐԳԱԼԻԵՎ  
(1916-1997 թթ.)*

## ԸՆԿԵՐՈՋՍ

Իմ հավատարիմ ընկեր,  
Իմ անգին,  
Բացում եմ ահա իմ սիրտը քո դեմ,  
Վա՛յ նրան,  
Ով իր սիրտը կփակի,  
Տառապանքի ու երջանկության դեմ:

Ո՞ւմ է հարկավոր  
Երգը՝ գուրկ հրից.  
Ո՞ւմ է հարկավոր անտարբեր հոգին...  
Ճակատագիրն ինձ ծննդյան օրից  
Հանձնել է կյանքի ահեղ մրրիկին:

Տոնավաճառ եմ կարծես թե ընկել,  
Ուր հիմարն է հանգիստ երազում,-  
Մտքի շարժումն է իմ հանգիստն, ընկեր,  
Երջանկությունը՝ պայքար և հուզում:

Կես դար է արդեն,  
Գրիչը ձեռքիս՝  
Ես կանգնած եմ իմ մարտական դիրքում  
Եվ չեմ ինայել իմ սիրտն ու հոգին,  
Ո՛չ մարտի դաշտում,  
Ո՛չ աշխատանքում:  
Ի՞նչ փույթ, թե արդեն  
Մազերիս իմ սև  
Արծաթե սառը եղյամն է շողում...  
Իմ ասելիքը քանի չեմ ասել  
Հանգիստ չեմ գտնի  
Ես դեռ այս հողում:

Ինչքա՛ն քիչ եմ ես բարձունք նվաճել,  
Եվ ինչքա՛ն շատ են  
Բարձունքները նոր...  
Նվազել է կյանքս,  
Իմ պարտքը՝ աճել  
Ժլատ է դառնում մուսան օրեցօր:

Բայց, ինչ էլ լինի,  
Երդվում եմ, ընկե՛ր,  
Ո՛չ մի բառ չասել առանց կրակի,  
Ո՛չ մի օր չապրել կյանքում անտարբեր,  
Առանց խնդության ու տառապանքի:

## ԿՈԿՇԵԹԱՈՒ

Հանճարեղ վրձնի կտավներ զիտեմ,  
Որ մտքի անհաս հրաշքով են լի,  
Բայց այդ բոլորից սուրբ է ու վսեմ-  
Իմ Կոկշեթաուն հավե՛տ պաշտելի:

Շանթ ու փոթորկից անբաժան է նա  
Ու միշտ ամպեր է պահում իր գրկին,  
Եվ հնուց ի վեր կատարի վրա  
Հանգչում են ասպետն ու գեղեցկուհին<sup>30</sup>:

Ցերեկը անհոգ քնում են նրանք,  
Գիշերը նայում աստղոտ երկնքին.  
Իսկ նրանց շուրջը՝ սոճիներ շարք-շարք,  
Իբրև պահակներ ուժի, գեղեցկի:

Բազում անգամներ մարդիկ տենչավառ  
Սեզ Սանտիկտասին այցի են եկել,  
Որ լճեր ունի սիրո պես պայծառ  
Եվ խորունկ, ինչպես հանճարեղ մտքեր:

---

<sup>30</sup> Ժողովրդի մեջ դեռևս գործածվում են «Քնած ասպետ», «Քնած գեղեցկուհի» լեռների անունները:

Մեր Կոկշեթաուն, օ՛քանի անգամ  
Տեսել է, որ իր բնությունն անգին  
Ակինի համար իր չքնադությամբ  
Դարձել է աղբյուր ծո՛վ ներշնչանքի:

Գեղուհի Կոկշեն ի՛նձ էլ է թովել  
Եվ պոեզիայով լցրել սիրտը իմ...  
Իր վեհ կատարին նա տեղ է տվել  
Մեր պայծառ դարի մատաղ սերնդին:

Նա արարում է ն՛ առողջություն,  
Այդ մասին գիտե աշխա՛րհը արար...  
Երբ Բուրաբայը գրկում է մարդուն,  
Ապաքինվում են ցավերը նրա:

Օ, Կոկշեթաո՛ւ դու իմ վեհաշուք,  
Քո հրաշք տեսքդ իմա՛ստն է կյանքիս,  
Քանզի խոպանիդ ծով բերքը խշշուն  
Նման է շոա՛յլ իմ ներշնչանքին:

## ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆԻՆ

Դու դեռ պատանի՝ քո լեռնաստանից  
Քեզ կանչեց բերեց Մոսկվան մեր բազմազգ,  
Որ մեկտեղ ճաշենք մենք մի ամանից  
Ու մեկտեղ հյուսենք գեղեցիկ մի ասք:

Հաղթե՛լ ենք այրող ցավը վերելքի,  
Ետևում թողել մի նոր արահետ...  
-Ելել ենք նորից առավոտ ծեգին  
Եվ քայլե՛լ, քայլե՛լ զարթնող օրվա հետ:

Մա՛ է պատգամը այն մեծ արքայի,  
Որին Ժամանակ անունն են տվել,  
Ու փոփոխում է ամեն մի քայլին  
Ու մեզ հետևում ինչպես մի սովեր:

Շա՛տ ճամփաներ ենք անցել ու կաճա՛ն  
Ղազախստանում ու Հայաստանում,  
Կքվել ենք հաճախ բեռան տակ ծա՛նր,  
Բայց այն չենք նետել,  
Առաջ ենք տանում:  
Լա՛վ է...

Միայն թե բարձունքից սիրո  
Ներքև չսահենք քայլերով երեր,  
Երջանիկ է այն բանաստեղծն, իրոք,  
Որ մազլցում է միշտ բարձունքն ի վեր:

Ինչքան որ ուժ է տվել մեզ Աստված,  
Մենք պիտի անցնե՛նք ամեն քար ու քերձ,  
Ուսներս նորից մեկտեղ դեմ տված,  
Առա՛ջ մղենք մեր ժամանակը մեծ:



*Ածգաւա  
Յիւսագաւաւս*

*ԱԲՂՈԼԼԱ ԺՈՒՄԱԳԱԼԻԵՎ  
(1915-1943 թթ.)*

### ՔՆԱՐԱԿԱՆ ՏՈՂԵՐ

Չահելությունը լույս է մթան մեջ,  
Ալիք է ծովի հորձանքում վայրի,  
Հանդուգն աղջկա նման քեզ անվերջ  
Իր թաշկինակով կանչում է արի ,  
Ու շաղ է տալիս ծիծաղն իր անշեջ  
Ու հետո փախչում լուռ, անդառնալի...

1938

\* \* \*

Կյանքի քարավանն անցնում է սուաջ,  
Ժամերն անդադրում վազում են նորից,  
Պատմությունը քո այդ պայծառաջ,  
Ձեռքով կանխ քեզ շուտով մի ձորից:

Նա կթաքնվի մեր աչքից հանկարծ,  
Մեզ ուղեկցելով մինչև մի լեռնանցք,  
Նրանից մի մաս կմնա մեր մեջ.  
Մենք սիրում էինք: Դա պարզև էր մեծ:

1938

\* \* \*

Ես շատ գետեր եմ անցել հորդառատ,  
Ծիծաղել, լացել փորձության պահին,  
Խղճիս հրամանով գնում եմ ճակատ,  
Ուր մարտնչում է ժողովուրդն իմ հին:

Գուցե և կովից չվերադառնամ,  
Գուցե վաղաժամ հողի տակ պառկեմ,  
Բայց ես չե՛մ մեռնի, իմ գործը արդար,  
Իմ հետևորդները պիտի ժառանգեն:

1942

\* \* \*

Ալիքի պես չարաճճի,  
Ալիքի պես խաղացկուն...  
Ինչո՞ւ ես դու թաշկինակով  
Աչքերիդ հուրը ծածկում:  
Սպասում եմ մինչ առավոտ,  
Ծարավ եմ քո քնքշանքին,  
Համբուրի՛ր ինձ սիրակարոտ,  
Համբուրի՛ր ինձ, իմ անգին:  
Ստվերի պես դու մի՛ անցիր,  
Փնտրում եմ քեզ, չեմ գտնում,  
Չեշտ չե՛ գտնել, դու իմացիր,  
Ստվերի հետքը մթնում:  
Եղնիկի պես վազիր ինձ մոտ,  
Ծարավ եմ քո քնքշանքին,  
Համբուրի՛ր ինձ սիրակարոտ,  
Համբուրի՛ր ինձ, իմ անգին:



*Տյրճայի Մալենով*

*ՄԻՐԲԱՅ ՄԱՈՒԼԵՆՈՎ*

*(1922-1993 թթ.)*

## ԻՄ ԵՐԿԻՐԸ

Թող երգեր ձոնեմ քո լուրթ լեռներին՝  
Քո ստեպների՝ սիրտը կըկոտրեմ,  
Ուր սայգավիթի ոսկորներ կան հին  
Եվ ինքնաթիռի սահող ստվերներ...

Տարիք են անցնում, իսկ դու ավելի  
Ջահելանում ես, հո ղ իմ սիրելի.  
Իմ նախնյա ց երկիր, որ դարեր այսպես  
Թարմ կաթ ես բուրում, կումի ս ես բուրում.  
Դու՝ իմ երգերի ակո՛ւնք անդադրում,  
Որտեղ էլ նայեմ՝ ես տեսնում եմ քե՛զ՝  
Մեր աղջիկների սևսաթ աչքերում,  
Մեր ջիզիթների վազքում տաքարյուն,  
Երբ ասես լուծվում, մերվում են իրար  
Նժույզն արշավող ու ստեպն անձայր...

Ստեպոյ էմ սիրում, ուր մեր կուրայի<sup>31</sup>  
Հունչերն են ձգվում, ինչպես կարոտը:  
Վազում է, վազում ստեպով վայրի  
Մանչուկը-հասի՛ր, եթե կարող ես...  
Կբռնեմ նրան, կգրկեմ ամուր  
Ու կհամբուրեմ տաք ու անձկալի.  
Ճիշտ այդպես էլ քե՛զ, երկիր իմ անուշ,  
Կգրկեի ես, թե կարենայի:

Դու՛ իմ սրտի զարկ,  
Իմ հոգի, իմ կյանք,  
Առանց քեզ տո՛ղ իսկ չեմ կարող գրել,  
Առանց քեզ- այնժամ էլ ինչո՞ւ գրել...

---

<sup>31</sup> Երաժշտական գործիք:

## ԹՐԹԻՌԸ

Թրթռում է, թռչում է աղբյուրը,  
Լեռնային աղբյուրը - մաքու՛րը.  
Թրթռում է գետափի եղեգնը  
Քամու դեմ - անտ՛ւժը, երե՛րը:  
Իսկ հապա հեռավոր աստղե՛րը,  
Լցվել են լճի մեջ - այստե՛ղ են,  
Ծփում են ջրերում, շողում են,  
Մոմի պես թրթռում, դողում են:

Օ՛, կյանքի սրբազա՛ն դու թրթիո՛ւ՝  
Ջրի մեջ, հողի մեջ ու սրտի,  
Լսում եմ քո անտես շրշունը,  
Ամեն ինչ, թոքի պես շնչում է,  
Անգամ ծիլը,  
Այդ փոքրիկ անճարը,  
Ողջ գիշեր չի քնում, աճում է.  
Ձգվում է,  
Ձգտում է աներեր  
Դեպի վե՛ր,  
Դեպի վե՛ր,  
Դեպի վե՛ր...

## ՄԵՎԱՆ

Ծփում է Սևանը՝  
Կապույտ ու մաքրաջինջ,  
Եվ լույս ճառագում անեղծ:  
Փոված է Սևանը՝  
Ինձ ծանոթ երգերից,  
Ինքն էլ մի երգ կարծես,  
Ինքն էլ մեծ քանաստեղծ:

Սևանի գմբուխտե,  
Շողարձակ հայելին  
Թշնամու դեմ փակ է՝  
Բոլորված լեռներով:  
Ի՞նչ է զգում արդյոք,  
Ի՞նչ է խորհում այդպես  
Ամպերի գավակը  
Ծփանքով մեղմորոր:  
Ազգակից է նա ճոխ  
Գարնանը հայկական,  
Անթառամ սաղարթի պես  
Թարմ ու պայծառ:  
Ոնց Սայաթ-Նովայի  
Տաղերը աննման,  
Նա էլ արարվել է  
Հավերժության համար:

Ծփում է Սևանը...  
Ալյակները խաղում,  
Վազքի մեջ ճախրում են  
Փոխարկվում ալիքի:  
Շողում է Սևանը,  
Ոնց Արարատի դեմ  
Երկնից ընկած գուլալ  
Կաթիլ արտասուքի:

## ԾՈՒԽԸ

Մայրս ասում է՝ գիշերը թունդ  
Ցուրտ է լինելու, սառնամանիք.  
Կարող են սառչել, խնձորենիք,  
Չորանալ լրիվ ծառեր ու տունկ:

Ու հավաքում է մայրս, բերում  
Փայտ ու փայտեղեն դեսից-դենից.  
Եվ ամբողջ գիշեր խարույկ վառում,  
Որ փրկվի մի կերպ խնձորենին:

Մենք, երեքս էլ, եռանդագին  
Գործի ենք անցել ամբողջ թաղում,  
Հարդ ու եղեգն ենք փութով ճարում  
Բերում-դնում ենք մեր խարույկին:

Ելնում է ծուխը քուլա-քուլա,  
Սառնամանիքի ճամփան փակում,  
Թանձր նստում է այգու վրա,  
Ծառերի բունը փափուկ գրկում:

Նորից տաք օր է առավոտյան.  
Խորը քնել է մայրս հոգնած.  
Թանձր ժապանը<sup>32</sup> կավոտ ու թաց՝  
Գոլ չորանում է յուրտի դռան...

---

<sup>32</sup> Ժապան- Խալաթանման հագուստ ճապոնական թևերով:

## ԵՐԿՈՒ ԱՄՊ

Երկու լիքը ամպ  
Լուռ հայտնվեցին ցերեկվա լույսում.  
Երկու լիքը ամպ:  
Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ,  
Ինչպե՛ս էր նրանց գալուն սպասում  
Հողը՝ ծարավից ճաքճքված, կապտած:

Միայն մի ամպը՝ բարի ու փխրուն  
Իջավ, անձրևով փաթաթվեց հողին,  
Մյուսը մնաց չոր ու անթափանց:  
Մի ամպը տվեց իր կյանքը լրիվ,  
Դարձավ նորից կյանք, ծաղիկ ու ցորեն,  
Մյուսը անցավ մռայլ, համրորեն,  
Կորա՛վ՝ չտալով ոչինչ աշխարհին...

## ՀՈՂԻ ԿԱԹԸ

Խորունկ ընդերքում ժայռեղեն լեռան  
Եռում են, խշշում ջրերը ելման.  
Նրանք, որ վերում, երեսին հողի  
Աղբյուր են դառնում, ջրվեժներ վայրի,  
Նրանք՝ քաղցրահամ, թեթև ու ճերմակ՝  
Կաթի են նման, կաթի փրփրալից,  
Որ դուրս է բխում, ժայթքում անքանակ  
Լեռների լիքը, քարեղեն կրծքից:

Ամբողջ ձմեռը նյութվում էր խորքում  
Ճերմակ այդ կաթը, նյութվում էր լրին.  
Նրա ճնշումից ուռչում էր, ճաքում  
Կուրծքն ու պտուկը լեռնապարերի:  
Ու ելք չէր գտնում, ու հուն չէր գտնում  
Որ ուզածի չափ հորդի, վարարի...

Բայց ահա գարնան գալու հետ կրկին  
Հորդել, քանդո՛ւմ է ժայռեր ու պատվար,  
Հորդել, իջնո՛ւմ է լանջերից ի վար,  
Իջնում է՝ կաթ տա այգուն ու դաշտին,  
Լցնի ցորենը ավիշով, հյութով,  
Խոտը դիեցնի խնկաբույր կաթով:  
Լեռների կա՛թը. ահա թանձրացել,  
Հանդ ու արտի մեջ լճակ է դարձել.  
Ծփո՛ւմ է բախտից ու երջանկանում,  
Որ կյա՛նք է տալիս,  
Որ կյա՛նք է տանում...

## ԽԱՐԽՈՒԼ ՄԱԿՈՒՅԿԸ

Տղան ապրում էր գետի այն ափին,  
Իսկ աղջիկը՝ այս,  
Աղջիկն էր զուգվում ոնց ջահել բարդին՝  
Նուրբ ու բարեկազմ:

Եվ հենց որ մայր էր մտնում ոսկեթագ  
Արևը շողուն,  
Մոտենում էին մակույկին նրանք  
Ու հանդարտ լողում:

Ու շնջում էր ջիգիթն աղջկան.  
-Սիրում եմ ես քեզ...  
Լռում էր սիրած աղջիկն անձայն  
Ու ժպտում էր հեզ:

Տարիներ անցան: Եվ ափին խարխուլ  
Մակույկն է ընկած,  
Իր սերն է պատմում ջիգիթը տխուր՝  
Փոքր-ինչ ճերմակած...

1956



*Капан Сатывдалын*

*ԿԱՊԱՆ ՍՍՏԻԲԱԼՂԻՆ  
(1917-1969 թթ.)*

### ԹՌԻՉՔԻ ՊԱՀԻՆ

Ինչպես բամբակ բերված քամու թևով հանդից,  
Ամպերն են ներքևում փետրավորվում հանգիստ:

Ինչպես մի ձուկ՝ զուլալ ալիքներում ապրող,  
Ինչպես լարից պոկված մի եղանակ ճախրող,

Ինչպես լեգենդական մի արծվաթև նժույգ,-  
Ինքնաթիռն է թռչում՝ պարզած թևերը զույգ:

Պետք չէ՝ լեգենդի ձին ու հեքիաթների պետք չէ՛ն,  
Որ հայրենի երկրիս լուրթ երկնքով թռչեմ...

Լավ է ինքնաթիռով՝ ուր ուզում եմ՝ թռչում  
Եվ արևի շողին հղում եմ ջերմ ողջույն:

Երկինքը՝ անսահման, ուղին՝ ազատ և ձիգ,  
Չե՞ս կամենում դիտել երկիրն իմ գեղեցիկ:

Ահա հավերժ ճերմակ, հսկա չալմայի պես-  
Լեռնապարն է շողում ու գագաթները վես:

Արձակ տափաստանին կապած գոտի արծաթ,  
Բազում վտակներով սնված ու հորդացած,-

Ահա գետն է տանում փրկարար ջուրն անգին,  
Որ ծարավը մարեն ամեն արտ ու այգի:

Որ հայրենիքը մեր ծաղկի խինդով անափ  
Ու հիանա, ցնծա՛ իր ծով գեղեցկությամբ:

Իմ ինքնաթիռն ահա բարձունքներն է թռչում.  
Այստեղ այնպես ազատ ու թեթև՝ եմ շնչում,

Անթի՛վ մարգարտաշար տողեր ունեմ երգի...  
...Բենզինի բույր բերեց քամին տիեզերքի:

Մոտորներն են երգում հնչեղ ու միալար,  
Ճոպանները զնգում, ինչպես դոմբրայի լար:

Գիտությունն ու անդուլ կամքը վարպետների  
Մեզ ցույց տվին ուղի ոլորտներում վերին:

Հանքը չի՛ թևածի. համառ ու տքնաջան,  
Նախ նա պիտի անցնի իր երկրային ճամփան:

Կմաքրվի հրով, կանցնի հալոցը վառ,  
Կտրիչներից կընկնի մարդու ձեռքը ճարտար:

Ու պողպատ հավք դարձած՝ շարժուն ու գեղեցիկ,  
Կհռնդա ուժգին և կսուրա երկինք:

Եվ դա ստեղծածն է ազատամիտ մարդուս,  
Որ թռչում էմ, սանձում գետը անսպասում.

Այգիների փոխում ավազուտները չոր,  
Ազատելո՛ւ վ երգը վշտի՛ց իր դարավոր:



*Տարգիս Տարսյան*

*ՄԱԳԻՆԳԱԼԻ ՄԵԻՏՈՎ  
(1917-2015 թթ.)*

### ՏՈՒՆԸ

Կապույտ գովուրթամբ կրծքեղ Տոբուլի  
Ջրերն են ծփում, Կուստանայի մոտ.  
«Ե՛կ, լողա՛ ինձ հետ, ճամփին չեմ լքի»-  
Կանչում է նա ինձ ծիծաղով ծանոթ:

Տոբուլը ահա երկինք աչքերով  
Նայում է վրաս բյուրեղահայաց,  
Ամպերը ճերմակ քարձր ճախրելով  
Շոգից թափվում են ջուրը գրկաբաց:

Վիճում եմ այրող ամառվա պահին  
Բնության համառ, հին խորհրդի հետ,  
Ուզում եմ տանել գիրկն անապատի  
Ջրերդ, Տոբո՛ւ, լայնահուն իմ գետ:



*Ջյժան Արագանյան*

*ՋՈՒԲԱՆ ՄՈՒԼԴԱԳԱԼԻԵՎ  
(1920-1988 թթ.)*

ԱՅՍՕՐ ԵՐԱԶՈՒՄ...

Այսօր երագում տեսա քեզ, մայրի կ,  
Հոգիդ մարմարե շղա՞րշ,  
Թե՞ մշուշ,  
Թեքվել էիր քո որդու սնարին  
Գիշերվա մեջ ուշ...

]

Ինչպես վշտերից թեքված ուտենին,  
Դու լոում էիր  
Սևակնած ու սև,  
Նույնիսկ ամենից դժբախտ օրերին,  
Քեզ այսպես տանջված  
Ես չէի տեսել:

Եվ ես լուծեցի հանելուկ մի բարդ  
Եթե քեզ նման հրեշտակն անգամ  
Դրախտում իրեն զգում է դժբախտ  
Ուրեմն սո՛ւտ է դրախտը,  
Չկա՛ ...

Կնճիռներն էին քո դեմքն ակոսել  
Եվ հազիվ էիր դու կանգնում ոտքի,  
Իսկ երբ ողջ էիր,  
Ես չէի լսել,  
Որ դու ասեիր  
«Հոգնա՛ծ եմ, որդի՛...»

Շա՛տ զրուցեցինք մենք դեսից-դենից,  
(Թեև մահն էր իմ և քո արանքում)  
Քո հայացքը մեղմ  
Կտակում էր ինձ  
Ազնիվ ու մաքուր լինել այս կյանքում:

Ինչքա՛ն էլ մահը հուշերս խառներ,  
Ես չեմ մոռացել քո կյանքից ոչինչ,  
Մա՛յր,  
Գեթ երագում իմ ձեռքը բռնիր,  
Եվ առաջվա պես  
Ինձ «գառնո՛ւկ» կոչիր...

«Գառնո՛ւկ»...  
Ես ինչպե՛ս բառն այդ մոռանամ...  
Ուզում ես ապրիր հարյուր մեկ տարի,  
Թե կենդանի է քո մայրը քարի,  
Մե՛կ է,  
Գառնո՛ւկ ես դու նրա համար...

Նույնիսկ մա՛հը, մա՛յր,  
Մեզ չի բաժանի,  
Եվ քո հուրն է միշտ իմ սիրտը կիզում,  
Էլ ինչո՞ւ ես լուռ՝  
Նման արձանի,  
Ինձ լեզո՞ւ տվող՝  
Ինչո՞ւ չես խոսում:

Մի՛ գնա, մայրի՛կ,  
Էլ մի՛ հեռանա,  
Մոռացած և՛ փառք,  
Ե՛վ երգ, և՛ գալիք,  
Քո անօգնական գառնուկը մենակ  
Առաջվա նման քո գի՛րկն է գալիս...

...Երբ ես արթնացա  
Լույսին անընտել,  
Տեսա՝ նույն մահճում ու նույն անկողնում,  
Ես վերմակն էի, ավա՛ղ, լոկ գրկել,  
Իսկ դրսում արդեն  
Արևն էր շողում:

Թաց էր արցունքից  
Իմ բարձը ճերմակ,  
Իսկ իմ սնարին՝  
Քնքուշ ու լռին,  
Մորս փոխարեն ու նրա նման  
Մա՛յրն էր խոնարհվել իմ որդիների:

\* \* \*

Հասած նո՛ւր են քո այտերը. Լեյլա\*,  
Հյուսված հո՛ւր են քո վարսերը, Լեյլա,

Հոնքերըդ նես ու աղեղ են, Լեյլա,  
Խելքից հանո՛ւմ է ինձ գեղըդ, Լեյլա:

Գուցե երգից ես դու եկել, Լեյլա,  
Եվ Մեջնո՛ւնն է քեզ փափագել, Լեյլա,

Երանի Մեջնո՛ւն լինեի, Լեյլա,  
Որ դու միայն ինձ սիրեի՛ր, Լեյլա:

Հասած նո՛ւր են քո այտերը. Լեյլա,  
Ասս՛, պատմիր քո վշտերը, Լեյլա:

Ինձ անսեր սիրով մի՛ տանջիր, Լեյլա,  
Լսո՞ւմ ես՝ կանչի՛ր,  
Ինձ կանչի՛ր, Լեյլա:

*\* Բառախաղ է, որով նկատի ունի Լեյլիին և Մեջնումին:*

## ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Ո՞վ չգիտե,  
Թե պոետի մասին  
Ինչքա՛ն են ասեկոսեներ ցրել,  
Եվ դեռ ասում են,  
Թե սերը նրա  
Հազար կնոջ է երջանկացրել...

Ասում են, թե նա խելառ է այնքան,  
Իմաստուն է նա,-  
Ասում են-  
Հմուտ.  
Եվ պնդում են, թե  
Ինչքան գինի կա,  
Բանաստեղծներն են իբրև թե, խմում...

Դրա ո՞րն է ճիշտ,  
Ո՞րը սուտ ու սին.  
(Տեսե՛լ էս մաքուր ջրադացի քար...)  
Բայց, ինչ էլ ասեն պոետի մասին,  
Առանց երգերի,  
Մե՛կ է,  
Կյանք չկա՛ :

Վարդե՛րն են թեքվում խոսքի հմայքից  
Լուսինն է թեքվում  
Եվ արն՛ն անգամ,  
Արքանե՛րն անգամ,  
Սուր խոսքի վախից,  
Քծնում են նույնիսկ... երգչին մուրացկան...

Ո՞վ չի սարսափում մահից աշխարհում  
Եվ հմայիլի պես խոսք երազում...  
Եվ ոմանք  
Երգչին վշտերն են պատմում,  
Ոմանք՝  
Խրախճանքն ու խինդը կիսում:

Իսկ նա,  
Հպարտ իր երկնատաք բախտով,  
Ժպտում է,  
Լալիս Աստծո նման,  
Հրի պես սուրում չոր խոտի արտով  
Մերթ լո՛ւյս սփռելով,  
Մերթ՝ հրդեհ ու մահ...  
Գեղեցկություն է նա կերտում կյանքում  
Եվ բնության պես գիտի վեհանալ,  
Թեև մեծի փառք  
Չեն տալիս նրան,  
Իսկ մահից հետո՝ ճգնում մոռանալ...

Կտրվո՛ւմ է նա՛  
Որ սագը լարի՛,  
Թույն ընդունում,  
Որ արյան վիշտը զգա,  
Ճաշակում սիրո ցա՛վն անհնարին,  
Որ Լեյլային  
Ու Մեջնունին սգա.  
Ողջ գիշերը՝ մի տողի նվիրում  
Ողջ կյանքը՝ տանուկ տալիս մի կրթի  
Նա գլուխը չոր քարին է դնում,  
Որ մի անծանոթ պչրուհու գրկի:  
Կարող է բերել նա խաղաղություն,  
Կարող է սանձել կռիվ ու աղետ.  
Որտե՞ղ ես, Պո՛ւշկին,  
Ո՞ր մենամարտում,  
Ո՞րտեղ ես,  
Ղազախ Բայրոն՝ Մահամբեթ...

Հիմա մեր երկրում  
Գարո՛ւն է, արև՛,  
Եվ հարուստ ենք մենք  
Ամեն բարիքով,  
Գալիքն է միայն պոետից ջահել  
Եվ լոկ Հոդն է,  
Որ մեծ է տարիքով:

Ի՛նչ փույթ,  
Թե մեկ-մեկ բանաստեղծը մեծ  
Մանկան պես ին՛նթ է լինում

Եվ շոա՛յլ:

Երբ մեղք է գործում երեխան անմեղ,  
Հայրը քաշում է ականջը նրա.  
Բայց պոետը չի հայցում գթություն,  
Չէ՞ որ սովո՛ր է նա տաք ու պաղի...  
Ով ճաշակել է  
Եվ մե՛ղր և թո՛ւյն,  
Նա՛ է արժանի Վինին յոթնադի:  
Ողջույն, ուրեմն ձեզ՝ տենչ և ուղի,  
Տառապանք ու սեր, դժոխք ու եղեմ,  
Մահն է լոկ փակում պոետի ուղին  
Նա էլ է, սակայն, անգոր նրա դեմ...

## ՔԱՄԻՆ

Նա մեկ հուշիկ ծաղիկներին է փարվում,  
մերթ խենթուրախ պտտվում է ու պարում:  
Նրան բոլոր ճամփաներն ու  
լեռնապարերն են ծանոթ  
և իմ երկրի բոլոր խորշերն հնավանդ:

Նրան գարունն է միշտ կանչում կարոտով,  
երբ ծփում են դաշտավայրերն արոտով,  
իսկ աշնանը ոսկեդենիկ՝  
արդեն նա  
սլանում է որպես «դեղին սատանա»:

Չեն հավատում  
Նրան ծովերը աղի-  
բերում է հողմ կատաղի:  
Գուշակել են ամպերն ուզում, թե նա ի՞նչ  
խորհրդավոր կախարդանք է թաքցնում:

Պատասխանը խաղն է լինում մրրկարշավ,  
որպեսզի նա կյանքն ու մահը դարձնի  
գարմանալիք ու ապշանք:  
Նա աշխարհում արդյոք որտե՞ղ է ծնվել,  
արդյոք որտե՞ղ պետք է գտնի վերջին պահ:

Իսկ երբ քամին  
հանկարծ փակում է ճամփաս,  
ես նայում եմ ժպտերես ու երջանիկ  
և մի հատուկ ցանկությամբ  
թողնում եմ, որ շոյի, իմ կուրծքը շոյի արշալույսի  
հուզաթաթավ մանկությամբ:

Նա բուրում է որպես կանաչ թարմություն-  
ճանաչում եմ  
դիմագծերը իսկույն  
և իմ հուզված շուրթերին  
աներևույթ գեղեցկուհու շնչառությունն եմ զգում:

Տխուր եմ ես, թե ուրախ եմ՝ չգիտե՛մ-  
ում հաղորդեմ հիմա գաղտնիքը իմ մեծ,  
որ գիշերվա մութի մեջ  
և լույսի մեջ ցերեկվա  
նվիրում է ներշնչանք՝ չի նվիրում պատահմամբ:

Որ այդպես է գրկի թող  
ինձ այդ քամին քնքշասահ,  
իմ ձեռքերին ու դեմքին երջանկորեն թող փարվի-  
քամի՛ն, քամի՛ն գեղեցկուհու է նման...  
Նրա համար ո՞վ մինչև մահ չի այրվի:

Իմ հոգու մեջ  
խիզախություն կա խուժող-  
կարող եմ ես հողմավարել իմ ուժով  
և կարող եմ ներել քամուն շատ բանում,  
բայց ես ինչպե՞ս փոփոխական նրա բնույթը ներեմ:

## ԱՌԻԼԻ ԾՈՒԽԸ

Ցրտեր են չար ու ճարճատուն,  
Սառել են գետերը խորունկ,  
Գյուղերում ձյուն է, ճերմակ ձյուն,  
Որպես ծերունու թավ մորուք:  
Ծխանն է միայն սեանում-  
Աուլը ապրում է կրկին.  
Կապուտակ ծուխը թն առնում,  
Ճախրելով հասնում է երկինք:  
Սիրում եմ ճախրանքը նրա,  
Չէ՞ որ տափաստանն է ցածում,  
Թվում է՝ պահպանում է նա  
Խարույկի կյանքը մշտածուխ:



*Кайнекей  
Мармаганидзе*

*ԿԱՅՆԵԿԵՅ  
ՋԱՐՄԱԳԱՄԲԵԹՈՎ  
(1918-1974 թթ.)*

### ՋԻՂԵԲԱՅԻ ԱՌԱՎՈՏԸ

Գարնան գորգը մազլցում է լեռն ի վեր.  
Խարույկներն են ծխում ծավի չիբուխներ,  
Լուսադեմին դեռ աուլն է քնած խոր,  
Լոկ Աբայն է մենակ շրջում մտախոհ:

Չինգիսին է մերթ նա նայում անձկազին,  
Մերթ մշուշում կախված հեռու Արկարթին  
Եվ հինավուրց Կրաուլին դյուցազուն,  
Որ քարձունքից ցած գլորեց թշնամուն:

Գետը շամբին ինչ-որ բան է շշնջում,  
Իբր այն մասին, որ հեռուն է շտապում.  
Աղջրկա պես զրնգոցով զարդերի  
Դեպի Իրտիշն է վազում կողքով արտերի:

Բանաստեղծին երգը պահում է արթուն,  
Հայրենիքում իր տողերը ունեն տուն,  
Ռուս մարդուն էլ նույնպես հուզում են սրտանց,  
Ինչպես այգն է շոյում կուրծքը հոգնատանց:

Իր հույզերն է Պուշկինի հետ բաժանում,  
Հոգին բացած հետը զրույց բաց անում,  
Ղազախուհին և գեղուհին քաղաքի  
Հոգով, մտքով հարազատ են ուղղակի:

Աբայի հետ Լերմոնտովն է միշտ լինում,  
Իր եղբոր պես հասակ առած մի բնում...  
Ու լողում է երգի մակույկը նորից,  
Գարնան ջուրն է ճողփում նրանց թիերից:

Կոիլովը նրան ասել է հաճախ.  
-Ոչ մի մարդու պետք չէ բերել ախ ու վախ,  
Պետք է միայն ցույց տալ արատը նրա,  
Որ բոլորի մտքի աչքին երևա:

Թող Շչեդրինը, Գոգոլն ուժով չմարած  
Ծաղրեն միայն բուր ամբոխին հիմարաց.  
Տխմարներին և չինովնիկ կոչվածին  
Թող մտրակեն՝ ծաղրը արած սուր կացին:

Եվ Բելինսկին բոցամորուս, շողաշուրթ  
Ասաց.-Շուտով այգը կտա կայծակին,  
Ժողովուրդն է ծնվել որպես ժողովուրդ,  
Է՛յ, արթնացրու մորուքավոր դագախին:-

Տոլստոյն ու Նեկրասովը եռանդոտ  
Տափաստանի բանաստեղծին եկան մոտ,  
Առան նրան ու գնացին թևանցուկ  
Դեպի այգին ապագայի վեհաշուք:



*Կանգուկ  
Մանուկճաթ*

*ԿՈՒԱՆԴԻԿ ՇԱՆԳԻԹԲԱԵՎ  
(1925-2001 թթ.)*



Էմբան ձգտում է մայր ծովը Կասպից,  
Ջրերն են երգում ծով տափաստանում,  
Պարում են կայտառ ազատված կապից...  
Խոտը երաշտի ցավը չի տանում:

Ջահել ջրերը, խոտը թարմաբույր  
Հուզում են հոգիս այս գարնան մեջ նոր...  
Բայց առանց սիրո ի՞նչ են խոտ ու ջուր,  
Թե չի զարդարված աշխարհն իմ քեզնով:

## ԻՐԻԿՎԱ ԱՆՁՐԵՎԻՑ ՀԵՏՈ

Ամպերի միջից՝ ոսկի երիզով՝  
Արևը լույսը իր ցնցուղեց,  
Պահվեց լեռների թևերի տակ գով,  
Ապա արևմուտք քայլերն ուղղեց:

Եվ արևելքում մութը այդ պահին  
Իր վարագույրն էր դանդաղ քաշում,  
Փովեց անձրևը բիլ իրիկնային,  
Թաշկինակի պես նուրբ ու նախշուն:

Եվ անձրևային թելերը բուրբ  
Դարձան լարերը սրտիս տավղի...  
Հոգիս ցնցեցին ցուքերը բոսոր,  
Այդ պահից սիրտս է երզով հղի:



*Կաճգուկարու Ազիսով*

*ԿԱՐԴԻՔԱՐԻՍ ԻՂԵՒՍՈՎ  
(Ծնվ. 1928 թ.)*

## ՀԱՅՐԵՐ

Ես տեսնում եմ հորս ճամփին:  
Հետքե՛ր... հետքե՛ր...  
Նրանք շատ են,  
Նրանք տարբեր.  
Երբեմն ուղիղ,  
Երբեմն թեք,  
Կամ թե իզուր,  
Սակայն մինչև վերջ՝ համարձակ:  
Չի մթազնել դեռ այդ ուղին,  
Տարիներ են անցել թեև,  
Տարիների միջով դարձյալ  
Պա՛րզ է ուղին:  
Հետքերն իմ հոր  
Անցյալում չեն,  
Այլ՝ ներկայում,  
Բախտիս մեջ են նրանք այրվում,  
Այդ հետքերը՝

Ավագների վրա, սառցի,  
Գիշերի մեջ,  
Այգաբացի՝  
Հայարտ հետքերը հեռացած:  
Գնա՛ց հայրս,  
Զգործելով ոչ մի հանցանք:  
Գնաց մինչև հերոսություն:  
Եվ նրանից ետ մնացին  
Երեսպաշտներ,  
Մորթապաշտներ,  
Բաղեղի պես ոլորվելով  
Անկյուններում բարեկեցիկ:  
Եվ ես հիմա որդիական ցավ եմ զգում,  
Երբ նայում եմ այնտեղ,  
Հեռո՛ւ,  
Ուր հետքերն են իմ հոր անջինջ,  
Որ հասել են մի տեղ, կանգնել  
Եվ այնտեղից հետո... ոչինչ...  
Չկան հետքեր...  
Օ՛, ճշմարտի փշոտ ճամփա,  
Քեզ հաճախ են  
Խավարի գիրկը ուղարկել  
Եվ չեն թողել  
Որ հասնես դու

Քո լույս բախտին:  
Բայց դու միշտ կաս  
Այս լույսի հետ,  
Ու թվում է,  
Չի եղել ոչ մի փորձություն:  
Դու կաս այս բյուր հայրերի հետ,  
Որ շտապում են գործարան,  
Արտ են հնձում:  
Ջերմությունը քո ձեռքերի  
Ես զգում եմ  
Նրանց արդար ձեռքերի մեջ,  
Ես գալիս եմ քո ետևից,  
Ու մտածում՝  
Այնպե՛ս անել,  
Որ գեթ մի քիչ  
Թեթևանա այս աշխարհում իմ քայլերից՝  
Կյանքը մարդու...



*Мұзафар Алимдаев*

*ՄՈՒԶԱՖԱՐ ԱԼԻՄԲԱԵՎ  
(1923-2017 թթ.)*

## ՔԱՌՅԱԿՆԵՐ

\* \* \*

Մայրս չէր թողնում, որ գնամ քաղաք,  
Ինձ իմ ընկե՛րը պաշտպանեց մենակ,  
Ես աստղեր չէի որոնում, այլ ի՛նձ.  
Չէր հասկանում իմ մայրն այն ժամանակ:

\* \* \*

Միրելուց չեմ քո պատկերը ես հնարում,  
Եվ ահա ես նայում եմ քեզ ու զարմանում.  
Ինչո՞ւ, ինչո՞ւ հայելի չէ պատկերը քո,  
Որ տեսնեմ ինձ հիմա ես քո ներաշխարհում:

\* \* \*

Հանճարեղին շատ բան կտա օրը մի,  
Ճամփի համար քիչ են դարերն երևի:  
Մենք հաճախ ենք մեր ժամանակն սպանում,  
Կարծես առաջ ենք գնացել բյուր տարի:

\* \* \*

Երգն արևի՝ լույսն է անմար,  
Երգը Հողի՝ պտուղն արդար:  
Հերոսի երգն աշխատանքն է,  
Բայց չկա երգ ծուլի համար:

\* \* \*

Գործն այսօրվա մի՛ թող վաղվան,  
Գովելի է ամեն լավ բան:  
Թե լավ խոսքի եմ արժանի,  
Ասա օրով կենդանության:

\* \* \*

Թե ես շող եմ՝ արևից եմ,  
Թե ծաղիկ եմ՝ ես հողից եմ,  
Թե ալիք եմ՝ սրտից եմ ես,  
Թե որ լավն եմ՝ մարդկանցից եմ:

\* \* \*

Առանց արևի ծաղիկը որք է,  
Հողն առանց ծաղկի ու ծառի- որք է,  
Որք է այն լեզուն, որը երգ չունի,  
Առանց հայրենիք ջիզիթը որք է:

## ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Դու պարզ ես, ինչպես լեռնային վտակ,  
Տափաստանային գանձի նման թանկ:  
Մոր պես քնքուշ ես, որ փաղաքշաքար  
Մանկանն օրոր է ասում անդադար:

Դու նուրբ ես իբրև աննման մետաքս,  
Մեր Տատոհներեթի սյուհտն ես դու պարզ,  
Վարպետի հղկած ալմաստի կայծիկ,  
Քո գրկի մեջ են երկիր ու երկինք:

Իմ նուրբ ու հզոր մայրենի լեզու,  
Քեզնով մեր երգի աղբյուրն է հոսում,  
Մայրս գնալով, քեզ թողել է ինձ,  
Ես քեզ գալիքին կհանձնեմ անբիծ:

## ԱՄԱՆԳԵԼԴՈՒՆ\*

Ո՞վ չի երագել, արոյոք, քաջություն,  
Ո՞վ չի կամեցել հաղթել թշնամուն:

Բոլորի սրտում ապրում ես ու կա՛ս,  
Թոչում է փառքդ բարձունքներն անհաս:

Փառքը մարմար չէ և ոչ պատվանդան.  
Ինչ երագել ես, մենք արել ենք այն:

*\*Ամանգելդին 1916 թ. դազախական ապստամբության  
հերոսներից էր:*



*Մաննար Օսիբեյան*

## *ԺԱՊՊԱՆՈՒԹՅԱՆ*

*(1920-2010 թթ.)*

### ԵՐԳ

Մի լավ երգ է ինձ հմայել,  
Սրտիս մեջ է լցվում համառ,  
Այդ քո սիրտն է հրամայել  
Եվ երգում ես դու ինձ համար:  
Անրջուհի իմ լավ,  
Երգդ սիրտս գտավ,  
Դուրս չի ելնի բնավ:  
Լինեմ սարում, թե անտառում,  
Ուր էլ լինեմ, ձայնդ է գալիս,  
Մի կարոտ է սիրտս վառում  
Եվ նրա մեջ դու, ցանկալի՛ս:  
Սևաչուհի իմ լավ,  
Երգով լեցուն իմ գավ,  
Ես հալվում եմ ծարավ.  
Արշալույսին դու երազում  
Հայտնվեցիր անակնկալ,  
Առավոտվա թաց պարտեզում

Կանաչ տան մոտ սիրտս ընկար:  
Երևացիր, իմ լավ,  
Հնչեց երգդ զուլալ,  
Կուգեմ երգել ու լավ:  
Ամեն անգամ արթնանալիս  
Ականջիս մեջ ձայնդ է անուշ,  
Ձայնդ անուշ ու փաղաքուշ  
Իմ սրտի մեջ ծոր է տալիս:  
Սևաչուհի իմ լավ,  
Դու իմ հակինթ ու լավ,  
Երգիս աղբյուր զուլալ:

## ՄՈՐՍ ԿԱԹԸ

Իր մեջ ուժ կա մի անսովոր,  
Որից միտքս չունի հանգիստ.  
Տենչանքներս արևավոր  
Իմ թներն են՝ գարունն հագիս:

Վառում է լույսն իմ բիբերի  
Մի բարության կանաչ կանթեղ.  
Թե իմ սրտում չկա բարին,  
Մարդու համար աշխարհն է նեղ:

Հոգուս լույսը այս աշխարհին  
Լույս է տալիս, բերում հույսեր,  
Լույսը բարու, շանթը չարի  
Իմ սրտում է ոստայն հյուսել:

Եվ որտե՞ղ է, արդյոք ո՞րը  
Այդ ուժերի աղբյուրը հեզ,  
Սիրտս է մտել այդ բոլորը  
Մորս կաթի շիթերի հետ:

## ԿԱՅԾԱԿ, ՏԵՂԱՏԱՐԱՓ, ԳԵՂԵՑԻԿ ԵՐԳ

Ճոճանակ դարձան սոճին ու կեչին,  
Սուլոցն իր զլեց քամին ապստամբ,  
Լոեցին հավքերն ու թաքնվեցին,  
Հոնքերը կիտեց հողը սառնությամբ:

Թակեցին հողը շիթերն երկնային,  
Ծառերից վրաս սաղարթներ ընկան,  
Ասես սառույցներ զիլ շրիկացին,  
Չորս դին շառաչեց ու խուլ ծլնգաց:

Եվ չկար այնտեղ ոչինչ արտակարգ  
Մի պարմանուհի կարոտի դողով  
Երզեց պուրակում հորդ անձրևի տակ  
Լոսձ հավքերին փոխարինելով:

Զգեստը նրա՝ գույնզգույն թիթեռ,  
Ուռենու մոտ է շտապում հանգիստ,  
Աչքերն են անմար կրակի շիթեր,  
Որ լուռ վիճում են լույսի հետ հակինթ:

Թնդում է խրոխտ որոտը ահա,  
Այնտեղ կրակ կա, կարոտ մի ուրիշ...  
Հրաշալի է անձրևն ամառվա  
Եվ թարմացումը՝ շռայլության նիշ:



*Դաֆյ Կամբեկով*

*ԳԱՏՈՒ ԿԱՒՐԲԵԿՈՎ  
(1928-1994 թթ.)*

\* \* \*

Փեթակները մեղրի պահեստ,  
Մեղուններն են չորս կողմ վխտում,  
Մեզ հյուր կանչեց մի օր տաբեց  
Մեղվապահը մեր իմաստուն:

Ցանց քաշեցինք երեսներիս,  
Փաթաթվեցինք մենք շորերով,  
Եվ քայլում ենք հպարտ ու ձիգ,-  
Ասես թե հուր-կրակներով:

Բայց երբ քիչ էլ առաջացանք  
Դեպի կողմը փեթակների,  
Բոլորս իսկույն իրար անցանք  
Մեղունների սուր նետերից:

Աղմկում ենք, դես-դեն վազում,  
Ով՛ թփի տակ, ով՛ վար,  
Մեղունները մեզ չեն լսում  
Եվ հալածում են անդադար:

Որպէս վայրի, խրտնած ձիեր  
Թռչկոտում ենք, քացի տալիս,  
Իսկ մեղվապահ ծերուկը՝ թե  
«Հյուրեր, ինչո՞ւ ներս չեք գալիս»:

Ներս ենք մտնում:  
Այնտեղ որքան  
Աղջիկներ կան, մեղվապահներ,  
Եվ ձգտում են մտերմական  
Խոսքով առնել սրտերը մեր:

Այս լեռներում շատ են նրանք  
Տխրել առանց տղամարդու,  
Մեջ են առել մեզ բոլորիս,  
«Ինչո՞ւ մեղր էլ չեք ուտում»:

Հագեցել ենք, մեր այտերն են  
Վառվում մի տաք երանությամբ,  
Մեր շուրթերը, մեր ձեռքերը  
Արդեն թմրել են հոգնությամբ:

Ամենից շատ ո՞վ է կերել,  
Ում բաժինն է եղել պակաս,  
Նման հաշիվ ո՞վ է արել,  
Թե ուզում ես՝ նորից կգաս:

Փաթաթվում ենք մենք ծերունուն,  
Բաժանումի ձեռք ենք տալիս,  
Մի դույլ մեղր մեզ հետ առած  
Սարալանջից ետ ենք գալիս:

Ոչ ոք, գիտեմ չի զարմանա  
Այս ծերունուն հանդիպելիս,  
Իսկ ես երբեք չեմ մոռանա  
Մեզ, մեղրախեղդ «թշվառներիս»:



*Аманжол Шамкенов*

*ԱՄԱՆՃՈՂ ՇԱՄՔԵՆՈՎ  
(1927-2004 թթ.)*

### ԻՍ ԱՐԵՎԻԿԻՆ

Այն օրից, ինչ դու հիվանդ ես,  
Թե ինչ անենք, չգիտենք,  
Լռությունը պատել է մեզ՝  
Անհանգիստ ենք մենք արդեն:

Հուզված են իմ զավակները,  
Տազնապը չի վերանում,  
Չի անցնում, կարծես, գիշերը,  
Մեր դռնից չի հեռանում:

Մենք պահապան ենք դառնում քեզ,  
Պտտվում քո շուրջ բոլոր,  
Եվ ինքս ինձ չեմ գտնում ես  
Քեզ եմ նայում միշտ մոլոր:

Մոտոյ գալիս երեխեքով  
Ու նստում են անհանգիստ,  
Դու մի անգամ գլուխը քո  
Վե՛ր բարձրացրու, իմ անգին:

Դե՛, մի անգամ ժպտա՛ դու մեզ,  
Ուրախացի՛ր դու մի քիչ,  
Արևի պես թե մեզ նայես՝  
Կանցնի մութը մեր դռնից:

## ԱՂՋԿԱ ԳԱՂՏՆԻՔԸ

Ջահել տղա, ի՞նչ ես ուզում...  
Արդեն շատ ես ուշացել,  
Այդ խոսքերդ ինձ չեն հուզում՝  
Ուրիշից էլ եմ լսել:  
Գաղտնիք ունեմ ես իմ հոգում՝  
Պահպանում եմ սրբորեն:  
Այդ գաղտնիքը թաքուն, թաքուն,  
Ես կպահեմ շատ օրեր:  
Ասա՛, ինչո՞ւ, ինչի՞ դ է պետք  
Քեզ գաղտնիքը ուրիշի,  
Ինչքան էլ որ վշտից ամպեմ՝  
Իմ սիրտը քեզ չի հիշի:  
Ես քեզ հիմա հարգում եմ լոկ,  
Մենք ընկեր ենք, սոսկ ընկեր,  
Ես միշտ կառնեմ բարևը քո՝  
Կզրուցեմ շատ անկեղծ:  
Իմ երդումն է դարձել հավատ,  
Դարձել է սեր երջանիկ,  
Ճիշտ է, դու լավ տղա ես շատ,  
Բայց նա լավն է քեզանից:



*ԻՉՏԱՅ ՄԱՍԲԵԹՈՎ  
(1929-1974 թթ.)*

*Աշխայ՝ Մամբեթով*

### ԴՄՏԵՐՄ՝ ԳՈՒԼՇԱՏԻՆ

Իմ դատրիկս սիրուն, սիրուն,  
 Անուշիկս, սիրուն, սիրուն,  
 Բախտիս համար  
 Արեգական շողեր դարձար,  
 Սիրող սրտի դողեր դարձար:  
 Դու բարալիկ, դալարիկ ճյուղ,  
 Ծաղիկով ես կյանքս փնջում,  
 Դու ոստերի ոստը նրբին,  
 Նպատակս լույսն է ճամփիդ:  
 Գեղեցկություն հարազատ տան,  
 Իմ աչքերը արև գտան:  
 Դու այն ես, այն  
 Ինչի մասին խոսում եմ ես:  
 Դատրի կ դու իմ,  
 Խաղա խաղերդ մտերիմ:  
 Չարություն էլ կուզես՝ արա:  
 Մահճակալին քնիր՝ քաղցր,  
 Հայրիկ սաս բա՛րձր, բա՛րձր:

Ասա՝ հայրիկ, արի, արի,  
Ասա՝ հայրիկ, ինձ հետ պարի,  
Ասա՝ հայրիկ, արևն ինձ տուր,  
Թող գա իջնի ու գա մեր տուն:  
Իմ փեշին նոր խաղալիք դիր,  
Ասա՝ խնդիրս կատարիր:  
Իմ դատրիկս սիրուն, սիրուն,  
Անուշիկս սիրուն, սիրուն,  
Միրտը քո հոր՝  
Քո սիրով է լցված այսօր:

## ԱՆՁՐԵՎԻՑ ՀԵՏՈ

Ամպը խոժոռ իր հոնքերով նայում է վար-  
Տափաստանով հեղեղները անցան վարար:  
Ծիածանը իր դարպասը բացեց հեռվում-  
Յոթ գույները այնքան պայծառ են երևում:  
Ճյուղից կախվել են հուլունքներ ճերմա՛կ, ճերմա՛կ...  
Ճերմակ անձրևն է խոխոջում  
Վտա՛կ, վտա՛կ:  
Թվում է, թե գագաթները ավելի են բարձրացել վեր,  
Որ լավ տեսնեն այդ ճերմակը երկնանվեր:  
Տափաստանում ջրի հոսանքն է քչքչում...  
Ուղևորը՝ ճերմա՛կ, ճերմա՛կ ծաղիկներ է փնջում...  
Ժպտում է գոհ՝ թարմությունն է նրան պատել,  
Եվ չգիտե,  
Թե ինչքա՛ն է հարուստ արդեն:



*Պլյանձայ  
Մուրադամես*

*ԹՈՒՄԱՆԲԱՅ ՍՈՒՂԱԳԱԼԻԵՎ  
(1935-2011 թթ.)*

### ԿԱՍՈՒՐՁԸ

Գետով երկճեղքված հողը վիրավոր  
Կամուրջներով է, որ միանում է.  
Երբ անցնում ես դու նրանց վրայով՝  
Հարգանքո՞վ հիշիր նրանց անունը:

Երբ սեզ ջիգիթն է թափով սլանում,  
Թռչում, որ հասնի իր խնդությանը,  
Նրան կամուրջն է մեջքը դեմ անում,  
Զգում-մոտեցնում երազ-կայանը:

Երբ մահն է կյանքի ետևից վազում,  
Ուզում է կտրել կենաց ընթացքը,  
Կամուրջն իր գույգ բազուկը պարզում,  
Սատար է կանգնում, որ հաղթի կյանքը:

Անջատ սրտերը կապող մեկ-մեկու,  
Մոտեցնող հեռուն ու անձանոթը,-  
Բանաստե՛ղծն էլ է կամուրջ մի կանգուն,  
Ուր շունչ է առնում հոգնած անցորդը:

\* \* \*

Թամբին են քնել նախնիներն իմ գոռ,  
Լուր չեն ունեցել փետրե ներքնակից.  
Երբ միակ որդին ընկել է զարկից,  
Ցասամար են լցվել, ո՛չ թե արցունքով:

Մենք երկչոտներ չենք՝ սարսափից կքած,  
Մենք դյուցազներ ենք՝ գիտակ մեր ուժին.  
Բեռլինի վրա բացված դրոշին  
Մեր սեզ հայրերի հին արյո՛ւնն էլ կա...

## ԱՌ ՃԱՍՓՈՐԴԻ ՅՈՒՊԴ...

Թե ամպած է հոգիդ, ա՛ն ճամփորդի ցուպդ,  
Նորից սիրահարվի՛ր բնությանը,  
Կապույտ լճակների՛ն հանձնիր հոգուդ թուխպը,  
Ծաղիկների՛ն հանձնիր ու գարնանը:

Կնորոզեն հոգիդ բացվող բողբոջները,  
Կտաքացնի ցուրտդ՝ զարթնող շողը:  
Խենթ չափչփի՛ր երկրիդ անհուն ստեպները,  
Թող ամրացնի քայքքդ համատ հողը:

Ի՛նչ հրճվանք է՝ քայլել՝ դեմքիդ հաշտ անձրևը,  
Երբ առուն է ուռչում, ինչպես գետը,  
Երբ անձրևից հետո մայր արևը  
Չորացնում է թրջված քո զգեստը:

Այնժամ ժպտո՛ւմ է քեզ նորից ծնված հույսը,  
Մոռանում ես անհետ ցավն ու թույնը,  
Ասես նո՛ր ես տեսնում արեգական լույսը,  
Ասես է՛տ է դառնում մանկությունդ...

## ԲԱԶԵՆ

Անգուսպ ճախրում է բազեն եկնքում,  
Ասես իրե՛նն է արար աշխարհքը:  
Երևի ինքն էլ զգում է ներքուստ  
Ուժեղ լինելու անգույգ հրճվանքը:

Միրտը երգի պես ճխո՛ւմ է, զնգում,  
Դյուրում է նրան թռիչքի թափը.  
Մեկ՝ շանթի նման ներքև է զարկում,  
Մեկ՝ նետի նման ճեղքում է ամպը:

Մոսկ իրե՛նն է նա, իրենո՛վ է լի,  
Կա միայն ինքը, միայն իր կամքը.  
Միայն իրեն է նա հավատարիմ՝  
Ազա՛տ երկնքի ազատ զավա՛կը:

Ես էլ եմ տենչում երկինք լայնաշունչ,-  
Երգը սիրում է ոգու անհունը.  
Ինձ է՛լ, ի՛նձ էլ է հարկավոր, անշուշտ,  
Բազեին վայել ազատությո՛ւնը...



ՆՈՒԹՅՈՒԼԼԱ ՇԱՔԵՆՈՎ  
(Ծնվ. 1928 թ.)

*Հիմեֆիմա Մախենով*

## ՄԵՎԱՍՏՏՈՂՈՒ

Բիլ ալիքներն են սխրանքով չար  
Գրոհի նետվում ժայռերի տակ,  
Եռում է հողմը մոլեգնաբար,  
Ասեղնագործում ցայտքեր ճերմակ:

Լեռն ի վայր թռչող արծիվը ծեր  
Պողպատ սյուններից պոկվեց հազիվ,  
Տեսավ մի երամ գիշատիչներ  
Լողում են ծովի ջրում աղի:

Ի՛նչ լավ է դիտել լեռներն ահեղ  
Մալախով Կուրգանն ելած ահա,  
Քաղաք իմ խիզախ ու փառահեղ,  
Քեզ բնությունն է տվել վահան:

Դու ժայռաքանդակ մի դյուցազուն,  
Քո փառքը մարդիկ չեն մոռանա,  
Ոսոխի հանդեպ արթուն բազուկ,  
Մի անանց ուղի, բարձունք անառ:

Դու հաղթած երկրին պաշտպան եղիր,  
Իմ հերոս քաղաք, բերդ հայրենի...  
Սևաստոպոլյան դրոշներ բիլ  
Խարսխատեղից տեսանելի:



*Շուր Մուսիկյան*

*ՄԱԳԻ ԺԻՆԵԼԲԱԵՎ  
(1934-1994 թթ.)*

## ԲԱՐԵԿԱՄՆԵՐՍ

Խենթություն է լինել կյանքում միայնակ,  
Մենակ մարդը անբույր վարդ է երկնի տակ,  
Այնքան շատ են բարեկամներն իմ սրտի,  
Աստղե ր, անգամ երանի դուք ինձ կտաք:

Ընկերներս պարզ են, համեստ ու բարի,  
Ընկերներս անբիծ լույսն են աշխարհի,  
Նրանց սրտի մաքրությունը, ո՞նց ասեմ.  
Ձեզ օրինակ՝ ճերմակ ձյունը սեզ սարի:

Մեկը սրտիս զվարճությունն է բերում,  
Մեկը երգով իմ կարոտն է օրորում,  
Մեկն էլ եթե վատ է նայում ինձ վրա,  
Ես ոչ մեկին վատ չեմ նայում իմ օրում:

Մենք ամենքս մի աղբյուր ենք, մի վտակ,  
Բայց ընկերով անափ ծով ենք կապուտակ,  
Աղջիկներին հաճախ ծուռ եմ ես նայում,  
Բայց նայում եմ ընկերներիս միշտ շիտակ:

Կարապների երգը հաճախ ինձ հուզում,  
Ես Ալթայի բարձրությունն եմ երազում,  
Առանց ընկեր կյանքը դրախտ թե լինի,  
Չեմ ցանկանա տեսնել անգամ երազում:

Բարձրանում եմ և ընկնում եմ իմ ճամփին,  
Ընկերներով ես կանգնում եմ իմ ճամփին,  
Ես թարմության բույր եմ զգում ամենուր,  
Ընկերոջ հետ այս աշխարհի հին ճամփին:

Կանցնի մի օր մեր այս գարնան շունչը տաք,  
Կթառամեն ծաղիկները կապուտակ,  
Քանի դեռ կանք, եկեք լինենք միասին,  
Չէ՞ որ մենակ պիտի պատկենք հողի տակ:

## ՏԵՐԵՎԸ

Հրաժեշտ տալով հայրենի հողին,  
Հավքերը նորից հարավ են չվում,  
Մեկը հավաքել տերևներ դեղին՝  
Դռան մոտ այգու խարույկ է վառում:

Իրար ետևից ամպերը գալիս,  
Քրտինք են թափում դեղնամած այգուն,  
Եվ տերևները ծխալով լալիս,  
Այրվում են լռին և լռին հանգում:

Ինչ որ ժամանակ ծառի ճյուղերին  
Օրորվում էին հովի հետ կամաց,  
Եվ կանաչ-կանաչ այդ տերևներին  
Նախանձում էին ժայռերը մամռած:

Ինչ որ ժամանակ աշխարհում այս հին  
Դայլայլում էին հավքերը նախշուն,  
Եվ փաթաթվելով տիրոջ ոտքերին՝  
Լուռ գոմոում էր հովվական մի շուն:

Եվ խենթանալով արեգակն արդար,  
Լույսի փնջեր էր նետում ամենքին,  
Եվ անձրևների ցնցուղը վարար  
Սրբում էր տանում փոշին քո դեմքի:

Դու կախվում էիր լույսերի փնջից,  
Դու կրակ էիր սրտիս մեջ վառում,  
Գարնանամուտին դու աղջիկ էիր  
Սիրո պես ջահել, արյան պես եռուն:

Ցնցվում է հիմա մերկացած այգին,  
Ցանցառ ունքերը ցցելով վերև,  
Եվ քեզ տեսնելով՝ ցավում է սաստիկ  
Իմ սիրտը որպես չորացած տերև:

## ԳԴԱԿԸ

Ամալը ծածկեց կապույտ կուրծքը երկնքի,  
Մարդիկ մի պահ իրենց շունչը պահեցին,  
Ճակատ էին ճամփում ջահել ջիգիթին,  
Մարգագետնում խրիսնջում էր ճերմակ ձին:

Տասնութ տարին բոլորել էր դեռ հազիվ,  
Ու կախվել էր պատերազմի ամալը սև,  
Չուներ մեկը, որին ասեր՝ «սպասի՛ր»,  
Մեկը չկար, որ շնջար՝ «կսպասե՛մ»:

Թռավ սայլին, գնաց տղան աուլից,  
Ու ետևում մայրը մնաց միայնակ՝  
Աչքերի մեջ արցունքի ծով ու թախիծ  
Եվ շուրթերին մի դեղնավուն թաշկինակ:

Ճակատ մեկնած խեղճ պատանուց լուր չկար.  
Գուցե ընկավ հենց առաջին գնդակից,  
Հառաչում էր մայրը հիվանդ ու տկար  
Եվ արցունք էր հանում սրտի հատակից:

Հազար տեսակ մուրազ ուներ մայրը ծեր,  
Բայց բոլորից մնացել էր նա անմաս,  
Աչքերի դեմ լոկ մի հուշ էր մնացել՝  
Որդու սիրած սև գդակը փափկամազ:

Այդ գդակը մոր սրտիկն էր տաքացնում,  
Իր բալիկի հոտն էր գալիս նրանից,  
-Ե՛տ բեր, որդուս,- աղաչում էր Աստծուն,  
Եվ աղոթքը չէր պակասում բերանից:

Եվ հաճախ էլ հույս էր տալիս իր սրտին.  
Շշնջում էր. «Մի օր բալես ետ կգա»,  
Մրմնջում էր աչքը զցած պատերին.  
«Կա գդակը և ուրեմն որդիս կա»:

Ուրիշ ոչ մի մխիթարանք նա չունէր,  
Չէր հեռացնում թաց աչքերը նրանից,  
Եվ թվում էր, թե գդակը չլինէր՝  
Կբաժանվէր որդին հավետ իրենից:

Անց են կացել քսան զարուն ու ձմեռ,  
Բայց մոր սրտում հույսը երբեք չի քնի,  
Նայում պատին՝ շշնջում է մայրը դեռ.  
«Իր գդակն է, թե որ եկավ՝ կդնի»:



*Կարպետ Միրզակյան*

*ԿԱՂԻՐ ՄԻՐԶ ԱԼԻ  
(1935-2011 թթ.)*

\* \* \*

Ժամանակները բոլոր  
Սրտիս միջով են անցնում,  
Բարձրանում եմ ես հարկ, հարկ  
Շենքերի հետ օրերի,  
Հանգստանում եմ հաճախ  
Թուխ ամպերի թևերին  
Ու չորացող դաշտերին  
Վերից անձրև եմ մաղում:  
Երբ իմ ընկերը այսօր  
Երջանկություն է գրկել,  
Սրտիս միջով է հասել  
Երջանկությունը նրան,  
Երբ ազնիվ մարդն է ընկնում  
Անհավասար կովի մեջ  
Նրա ալյունը կարծես  
Իմ սրտի մեջ է կաթում:  
Յուրաքանչյուր պայթած ուումբ  
Իմ սրտի մեջ է պայթում,

Պայթեցրնում են թեն  
Ծովերի ու գետնի տակ.  
Յուրաքանչյուր ակնթարթ  
Սրտիս միջով է անցնում,  
Հողագունդ է իմ սիրտը  
Եվ անսահման հողեղեն...

\* \* \*

Կուզեի ապրել  
Լայն ստեպներում,  
Նայել կապույտին  
Ու լսել երգեր,  
Կուզեի մեռնել  
Լայն ստեպներում,  
Բայց ես ինչո՞ւ եմ  
Այս քաղաքն եկել:  
Ինչո՞ւ է միտքս  
Թռչում շարունակ  
Ծաղկած դաշտերը,  
Հովիտները լուրթ.  
Ես մի մեղու եմ,  
Քաղաքը՝ փեթակ,  
Ես հյութի համար  
Դաշտերն եմ գնում:

## ԿԱԼԱՌԻՔԵԿԻՆ

Բնությունից են ամեն ինչ առել  
Իմ նախնիները, մայր բնությունից,  
Ազատությունը՝ դաշտերից անծայր,  
Իսկ հզոր շունչը՝ թեժ խարույկներից.  
Մաքրությունն հոգու՝ ջինջ լճակներից,  
Արիությունը՝ լեռներից վսեմ,  
Իսկ ավազներից՝ սերը քոչվորի,  
Խոհեմությունը՝ գիշերներից սև:  
Ժպիտն առել է արևից հստակ,  
Նա այնպես լայն է ժպտում, անարգել,  
Ղազախի համար հյուրը շատ է թանկ,  
Կարծես թե բախտն է իր տունն ուղարկել:



*Жүмекен Нажимеденов*

*ԺՈՒՄԵԿԵՆ ՆԱԺԻՄԵԴԵՆՈՎ  
(1935-1983 թթ.)*

\* \* \*

Հեշտ է գրել երկար, երկար ոտանավոր,  
Դա գուր թափված աշխատանք է,  
Կամ էլ թե ո՞ւմ է հարկավոր...

Իսկ այն տողը  
Որ կրակով է հագեցած,  
Կյանքն իրենով է զարդարում,  
Եվ հանճարի հետ է ձուլված:

\* \* \*

Ամե՛ն, ամե՛ն ինչ  
Հնարավոր է իրարից զատել,  
Բայց բանաստեղծին վշտից իր խորունկ  
Ո՛չ, չի՛ կարելի երբեք անջատել,  
Թե որ անջատես՝  
Դա նույնն է կաթից ջուրը դուրս հանես,  
Կաթը և ջուրը  
Իրարից անջատ կարող են ապրել:  
Իսկ վիշտը առանց լավ բանաստեղծի,  
Նման է որբին փռշուտ փողոցի,  
Բանաստեղծից էլ երբ վիշտն են առնում,  
Նա մի կենդանի դիակ է դառնում:

\* \* \*

Քո հոնքերին, քո հոնքերին նայելով  
Ծիծեռնակին սիրեցի,  
Քո ծամերին, քո ծամերին նայելով  
Մութ անտառը սիրեցի:  
Քո աչքերին, քո աչքերին նայելով  
Խորությունը սիրեցի,  
Ու հավելելով քո կրակոտ խոսքերից  
Ես սառեցի,  
Որ չհավլեմ էլ նորից:

Քո հայացքին միայն գերի դառնալով  
Թաքցրեցի զգացումս սեփական,  
Ես միայն քեզ, միայն քեզ տեսնելով,  
Հարս ընտրեցի հարևանի աղջկան:

## ՀԱՅԸ

Սահնակի վրա նստոտած մարդիկ  
Իրար հրեցին ու տեղ բացեցին,  
Հայրս էլ բարձրացավ,  
Հետևից տատս վազելով եկավ,  
Մի կուժ թան բերեց, սվեց բոլորին,  
Որ չծարավեն մեծ ճանապարհին:-  
Մի սովորույթ է դա հնից եկած,  
Երբ տղամարդիկ մեկտեղ հավաքված  
Աղոթում էին և ճամփա գնում,  
Ալլահին օրհնում,  
Որ չզայրանա ու բարի աչքով  
Նայի ամենքին...

Եվ տատս ահա, բոքոնը ձեռքի  
Կտրեց ու կեսն իմ հորը սվեց,  
Իսկ մյուս կեսը իր հետ տուն բերեց,  
Կիսալուսնի պես կեսը բոքոնի  
Պահեց սնդուկում,  
Իր միակ որդու կարոտը հոգում  
Վշտի մեջ թաղվեց...  
Իսկ երբ իմ մայրը նորից արտասվեց,  
Տատս զայրացավ, ասաց երեխիդ  
Դու սեղմիր կրծքիդ,  
Խոտ բեր մեր փոքրիկ գառնուկի համար,  
Որքան էլ փչեն քամիները չար,

Կվերադառնա իմ որդին, գիտեմ,  
Մարդը իր կյանքում շատ բան է տանում,  
Ամենաձանր ցավին դիմանում,  
Միայն թե այս թանկ պատառը հացի  
Պետք է պինդ պահել,  
Իսկ հացը մարդուն դեռ երբե՛ք, երբե՛ք  
Չի դավաճանել:

Այսօր կամ վաղը, մի տարի հետո  
Կվերադառնա որդիս կարոտով,  
Կուտի այս հացը՝ մեր ձեռքով եփած,  
Չի փակվի երբեք մեր տան դուռը բաց,  
Այս հացով մարդիկ հեռու գնացել,  
Կովել են, հաղթել ու վերադարձել,  
Մահեր են եղել, տոներ ու հանդես,  
Եղել ենք նաև մենք ականատես,-  
Որ թշնամին է նահանջել նորից  
Տափաստաններից, մեր աուլներից,  
Միշտ լավ լուրի ենք հացով սպասել,  
Եվ անմահության մեր երգը ասել:

Շուտով իմ տատը այնքան ծերացավ,  
Որ նստած տեղից էլ չբարձրացավ,  
Սև ծամը վշտի ամպով պարուրվեց,  
Հացը սնդուկում չորացավ, այրվեց,  
Տատիս ուժերը իսպառ մարեցին,  
Ծերությունը և վիշտը հաղթեցին,  
Բայց սպասում էր խորին հավատով,

Զգում, որ շուտով  
Մութ հեռուներից իր որդին կգա,-  
Քանի հացը կա...

Այո՛, հույսն է միշտ մարդուն ուղեկից,  
Ես սովորել եմ իմ լավ տատիկից  
Ու սպասում եմ անմեռ հավատով  
Լավին ու բարուն՝ իմ ամբողջ սրտով:

Ճշմարտություն կա, անշուշտ, դրանում,  
Որ հացը մարդուն չի դավաճանում:

\* \* \*

Դու միամիտ էիր՝ ամպի նման ճերմակ,  
Իսկ ես՝ ժայռի նման կոպիտ իմ արարքով  
Դու քաղցր էիր ու թանկ,  
Քեզնով ես մտա կյանք:  
Ինչպես երգիս մասին ասված բարի խոսքով  
Դու անհանգիստ էիր,  
Իսկ ես՝ անլուծելի  
Հարցի նման դժվար մի անատակ որդի,  
Դու հմայիչ էիր,  
Քեզնից սկսեցի,-  
Ինչպես վերջին էջից ամենօրյա թերթի:



*Մոկա Տսախանյան*

*ՇՈՂԱ ՍՄԱԽԱՆՈՒԼԻ*

*(1924-1988 թթ.)*

### ԻՄ ԽԱՆԴՈՏ ԿԻՆԸ

Լսի՛ր ի՛նձ, ընկեր իմ,  
Երիկե,  
Ինչքան ինձ ձեռք առար՝  
Հերիք է,  
Որ քեզ մոտ գալիս եմ՝  
Քիթս կախ,  
Լալիս եմ՝ ինձանից  
Ես անկախ,  
Որ հիմա պատահած  
Ամեն կին,  
Շեյթան է կարծես թե  
Իմ աչքին,  
Չեմ նայում, թե ի՛նչ կա  
Ոտքիս տակ,  
Ես տուն եմ շտապում  
Լեղաճաք:

Ա՛խ, եթե դու պատճառն  
Իմանաս,  
Կլացես և ոչ թե՛  
Կխնդաս.  
Ո՛չ հանգիստ ունեմ ես,  
Ո՛չ էլ քուն,  
Տանջվում եմ ես ամբողջ  
Իմ կյանքում:  
Խանդում է իմ կինը.  
Այն էլ ո՛նց.  
Վառում է ինչպես թեժ  
Մի հնոց:  
Նա շանթող աչքերն է  
Ինձ ուղղում.  
-Ստո՛ւմ ես, և ո՛չ մի  
Գործուղում:  
Ես գիտեմ՝ որտե՞ղ ես  
Դու եղել,  
Ո՞ւմ քնքուշ մատներն ես  
Համբուրել,  
Ես գիտեմ՝ ինչո՞ւ ես  
Կանգնում լուռ,  
Էլ այնպես չես գրկում  
Ինձ ամուր:  
Ես գիտեմ, ես գիտեմ  
Ամեն բան...  
Դու ստո՛ր, խաբեբա՛,

Դավաճա՛ն...  
Լալիս է, գոռգոռում,  
Անիծում,  
Իմ բախտը, իմ կյանքը,  
Իր Աստծուն...  
Ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ  
Ես հիմա,  
Որ աչքիս ոչ մի կին  
Չերևա:  
Ասա՛ ինձ, Երիկե,  
Ի՞նչ անեմ,  
Թե չէ ես ինձ շուտով  
Կսպանեմ:



*Кайрат Кимов*

*ԿԱՅՐԱԹ ԶՈՒՄԱԳԱԼԻԵՎ  
(1937-2013 թթ.)*

## ԱԲԱՅԻՆ

Նա ծով վշտերով  
Անցավ կյանքի ճամփան  
Եվ գնաց աշխարհից  
Անարդար դարի հետ հաշիվը լրիվ չփակած:  
Լսում ենք այսօր ձայնը նրա,  
Որ նման էր արծվի հզոր կանչին:  
Նա անցավ դաշտով, ինչպես ազատ, բուռնթափ քամի:  
Բոլոր երգերի սկիզբն է նրան  
Իմ ժողովուրդը համարում,  
Անհամար են այսօր բարեկամները նրա,  
Անհամար են նրանք նաև գալիքում:  
Խոհի հանքաշերտից վսեմություն արարելով,  
Նա մնաց հասակակիցը հավերժության:

\* \* \*

Փոխվել է իմ դեմ տափաստանն ահա անծիր, անեզերք,  
Եվ բոլորել են նրան չորս կողմից լեռները մեր սեզ.  
Կոկչեթաուն է կանգնել մի կողմից,  
Ալթայը՝ ճերմակ շուշանացողից,  
Մի կողմից՝ չքնաղ մեր Կարաթաուն,  
Իսկ մյուս կողմից՝ ծեր Ալա-Թաուն:

Գուցե երկյուղած մեր նախորդներն են աղոթել անվերջ,  
Որ սփռոցի պես հողմը չքշի տափաստանն այս պերճ,  
Եվ հսկաներին պատվիրել են խիստ հսկել ողջ կյանքում,  
Եվ ահա նրանց հսկում են անքուն...

## ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

Ասում են սիրուց մինչև խարդավանք  
Մի քայլ է միայն և ո՛չ ավելի:

Իսկ խարդավանքից մինչև սերը թանկ՝  
Գուցե և ամբողջ կյանքդ չբավի:



*Մկհառլու Մախաբաև*

*ՄՈՒԿԱԳԱՍ ՄԱԿԱՏԱԵՎ  
(1931-1976 թթ.)*

### ՀԱՅՐԵՆԻՔ

Հայրենիք,  
Հայրենիք,  
Առանց քեզ ո՞նց էի ապրելու:  
Կլինեի հավերժ թափառական,  
Դառնաղի արցունք կթափեի,  
Չէի սիրի ինձ անգամ:

Առանց բների  
Թռչուն ու գազան չի լինում,  
Առանց հայրենիք մարդը չի գոյատևում,  
Ապրողի համար՝ տանջանք է մահացու,  
Սա հասկանալու համար  
Պետք չէ մեծ գիտություն:

Լինում է, ապրում ենք առանց հոր ու մոր  
Կարելի է ապրել առանց կնոջ ու երեխայի,  
Բայց առանց հայրենիք ապրելուց  
Ավելի անհեթեթ քան չես երևակայի:

Հասկանո՞ւմ ես դու, թե ով ես հայրենիքի համար,  
Չի լինում երկու կյանք կամ երկու մահ,  
Չի լիում հայրենիք երկու  
Եվ դու՝  
Երկուսի զավակ միաժամանակ:  
Հայրենիքը մեկն է,  
Աղբյուրներ, հարազատներ, կաթ և հաղարջ,  
Ո՞վ է լսում քո երգը:  
Հայրենիք...  
Հայրենիք նախևառաջ:

## ՆԵՏԵԼՈՎ ԹԻԿՆՈՑՆ ԻՄ ԹԱԽԾԻ

Նետելով թիկնոցն իմ թախծի,  
Իդն է ինձ ձգում սանձարձակ,  
Տանում է անապատն անծիր,  
Ինձ հետ իմ ծարավն է անհագ:  
Չե՞ս ուզում ինձ երևալ, իդձ,  
Դե ինչ, երևի պետք էլ չէ,  
Լոկ կանգնիր, նայիր բարձունքից,  
Որ քո հայացքից ջինջ, լուսե,  
Բարձրանամ ինչպես թեթև ամպ  
Կատարը ձյունաբաշ լեռան,  
Եվ հանկարծ արցունքից ծնված  
Երեք առու հոսեն դաշտն այն:  
Այդժամ ըղձանքով կոռոզվի  
Կպտղավորվի հողը մեր,  
Բայց ինձ զագաթը կձգի,  
Ոնց գոլորշի կթռչեմ վեր:  
Չեմ գտնի ես քեզ դրախտում,  
Մենք չենք հանդիպի դարեդար,  
Բայց սեր կտանեն իմ սրտում,  
Որտեղ էլ գնամ անդադար:  
Քեզ իբրև միրաժ երկնային  
Կտեսնեմ ջերմին ամռան մեջ,  
Երբ թողնեմ տունն այս երկրային  
Կմնա իմ սերը անվերջ:

## ԱՊՐԵԼՈՒ ՏԵՆՉԸ

Ապրելու տենչը խեղդում է ինձ, այրում,  
Ապրում եմ գալիքով, սպասամաբ երջանկության,  
Հույսի ներշնչմամբ, ծախսում եմ ուժ, ավյուն,  
Բայց շահ ու պերճանք համարում եմ ունայն:

Լռության մեջ դատում եմ հաճախ ինքս ինձ,  
Գործ ու օրերի արդյունքն եմ ամփոփում,  
Չեմ տրտնջում ուսերիս ծանր բեռից,  
Չի եղել նետեմ, կամքս եմ անվերջ կոփում:

Փնտրելով նոր խոսք, անձանոթ ուղիներ,  
Ես հոգնում էի բավիղներում խավար,  
Կշարունակե՞ս երգն իմ, բանաստեղծ ընկեր,  
Թե՞ կգրես նորը ապագայում պայծառ:

Կյանքի հեղեղի դեմ մի՛ պայքարիր գուր,  
Նետվիր նրա մեջ և ձուլվիր համաձայն,  
Թող որ իմ օրը ընկնում է, ոնց ասուպ,  
Վաղվա արշալույսն է գալիս համարձակ:

Իմ կարճ օրն է գնում ստվերով մութ,  
Բայց հավերժ է կյանքը ծաղկումով զարնան,  
Ե՛լ, արև վաղվա, սիռիի լույս ու գուր,  
Ժպտա ու փայլիր մանուկների նման:



*Փարիսա Օւշարցոնովա*

*ՃԱՐԻԶԱ ՈՒՆԳԱՐՄԻՆՈՎԱ  
(1938-2014 թթ.)*

## ԵՐԲ ՁԿՆՈՐՍԸ ԾՈՎ Է ՄՏՆՈՒՄ ԼՈՒՍԱԲԱՑԻՆ

Սուլում են քամու ուժգին հոսքերը,  
Ծովը վազրի պես մեջքն է ուղցնում,  
Եվ ալիքներն են  
Հանց ճերմակ պայթյուն,  
Քո վրա  
Թռչում:

Եվ այս խելահեղ  
Իրարանցման մեջ  
Մերթ կայծակ  
Եվ մերթ ճայի ճիչ:  
Կոիվը ծովի ու երկնի միջև  
Ձկնորսական ուղկանն է  
Պատռում:

Սովորական պատկեր է  
Սա միայն

Այն մարդկանց համար,  
Ուրբեր չեն կարող ապրել առանց ծով՝  
Աղջիկներն ու տղերքը համառ  
Սիրահարված իրենց  
Աշխատանքին դժար:

Եվ ահա  
Տարերքն է խաղաղվում  
Եվ հայելով հեռաստանին լազուր,  
Խորհում էս ակամա՝  
«Մա առաջին անգամն է, օ՛, ոչ,  
Որ փոխվում է եղանակն հանկարծ,  
Ինչպես տխրությունը այրի կնոջ:

Ծովը չունի չար մտադրություն,  
Կատակելն է  
Տրված ուժեղին,  
Ահա այդպես  
Սիրում է նա  
Փորձել  
Երիտասարդ ձկնորսին»:  
Եվ ինքն էլ՝ տղան,  
Երբ օրը գա,  
Կիջնի ափին, ինչպես Աստված,  
Եվ ծովը կտողա դեպի նա  
Գլխահակ,  
Խոնարհ կպառկի  
Ոտքերի տակ:

## ԴԵՊՔ ԱՎՏՈՒԲՈՒՍՈՒՄ

Ավտորու, ժամ է պիկ,  
Մինչև վերջ լիքն է, խիտ:  
Հազիվ եմ կանգնում,  
Աջ ու ձախից ցնցում:  
«Նստեք, խնդրում եմ»,  
Վեր կենալով հանկարծ  
Ինձ է դիմում կիրթ  
Մոդայիկ մի ջիգիթ:

Կատակ է, երևի,  
Կարո՞ղ է վատ է տեսնում,  
Մի՞թե ավելի պառավ եմ երևում,  
Քան կողքիս հազիվ  
Ձեռնափայտին հենվածը:  
Եվ այնպես նայեցի,  
Որ թռավ ինչպես խլշկոտած ձի:

Այո՛, դառն է մեր օրերում  
Ու, հատկապես, պիկ ժամին  
Ջահելների մեջ հանդիպել  
Պիժոնի,  
Որ իրեն կրթյալի տեղ դնելով,  
Փորձում է դուր գալ աղջկան  
Այս գավառական արտիստիկ ոճով:

## ԶԿՆՈՐՍ ԱՂԶԿԱ ԵՐԳԸ

Ծովը՝  
Ահա սկիզբն իմ կյանքի,  
Օրորել է ինձ  
Ոնց օրորոցն իմ անգին:  
Համարել եմ  
Հավատարիմ ընկերուհի  
Ալիքներին  
Դեպ ինձ վազող ամեհի:

Ծովն եմ կոչում  
Ինձ օրորոց,  
Բայց սա պարապ խոսքեր չեն  
Մի աղջկա անգործ:  
Սա թրծել են  
Փոթորիկներն աժդահա  
Ու նաև ձեռքերը ոսկե  
Ձկնորս աղջկա:  
Հանց առագաստ  
Հողմերի դեմ պայքարելով,  
Կարող եմ ինձ կոչել հաստատ  
Քո դուստրը, ծով:  
Արևայրուք է դեմքիս,  
Պարանոցիս...  
Մի՛ երկնչիր, տղա,  
Անվախ մոտեցիր:

Ով ոգով թույլ է,  
Այստեղ գործ չունի,  
Թուխ աղջկա հոգին, տեսեք,  
Ցույում է հանց օրը տունի:

Իսկ թե, ընկեր իմ,  
Սիրահար հայացքով  
Նայես ծովին,  
Եկ նստենք իրար քով:  
Եվ մի երկմտիր՝  
Ո՞վ է առավել սիրելի՝  
Ծո՞վը, թե՞ ես...  
Միննույնը չէ՞, սիրելիս:



*Олег Сүлейменов*

*ՕԼԺԱՍ ՍՈՒԼԵՅՄԵՆՈՎ  
(Ծնվ. 1936 թ.)*

\* \* \*

Միլիարդների կոկորդն  
այրված է  
ապստամբ գոյունով  
կոչով ընդվզման,  
ահեղացունց կրքով  
խեղաթյուրված հանգը  
քո շնչից վերածվում է  
գաղտնիքի:  
Կասես «ցուրտ» –  
կփչի տաքություն,  
կշշնջաս «տապ»  
և սարերից կիջնի պաղ օդը,  
անգամ սուտը քո շուրթին  
հավատ է  
և «համաձայն» է խոսքդ  
«պետք չի»:  
Լսում եմ  
և կրկին

Թույլ հնչյուններում հավկեց  
չարը,  
քո սահուն ու տաք կոկորդում  
վախերով տանջահար խոսքի  
բախտը բերել է՝  
թռավ:

1984

## ՀԱՎԱՍՏԱՐԱԿՇՌՈՒԹՅՈՒՆ

Նուրբ փաթիլն ընկավ դեմքին կանացի:  
Կտրուկ կանգնեցին են գնացքները:  
Թռիչքուղիները սաստ լռեցին,  
Հեռվում փլվեցին խոժոռ վիհերը:  
Կնոջ անուղղելի հավերժ կերպար՝  
մեկ աստղ սառած, աչք ու հոնքը՝ գոց,  
մեկ սխալական անդրդվելի քար,  
մեկ վրձնահարված և՛ կատարյալ գործ:

Ոսկե շեփորով ներշնչում է ջինջ  
հույզերի երանգ մի գեղջուկ տղա:  
միշտ ասում էի. «Երազիր անհաս,  
Երազը՝ թույլի հորինվածք ու խաղ»:  
Քո սանրով կտրիր թերթերը հազար  
ապագաների ծանր վեպերի,  
Նրանք սարսում են գիշերից մթոտ,  
նրանք չեն տանում լույսը եթերի:  
Մի վախեցիր դու էջերից այն, որ  
ճերմակ են, ինչպես դաշտերը ձմռան,  
թերթիր, կտեսնես՝ օրերից մի օր  
մենք կհանդիպենք ստեպներում լայն:

Դեռ կծեփեն լուռ ձյունեղեն կիներ  
Ամռան ամոթի դաշտում հմայուն,  
դեռ կհնչի մեղմ շրթունքներից ջեռ

ասես մերժումի պատասխան՝ «այո»:  
Մարդկանց սրտերը դեռ կջերմանան  
խոսքի ընդհատվող հոսքով բարեկամ:  
Մենք հանդիպեցինք և չկա վախճան  
հանդիպումներին մեր ոչ մշտական:  
Գարնանային ձյան փաթիլների վերջ,  
Իջնում են քնատ գյուղի ճամփեքին,  
Ոչ վերջնական, ոնց այն խոսքը զուսպ՝ «ոչ»,  
Վախլուկ, սեթևեթ համբույրի պահին:

1984

\* \* \*

Գնացքները ուշանում են,  
Ճիշտ գործում է լուսակիրը,  
Վերից աստղ ընկավ նորեն,  
Ուշանում է ինքնաթիռը:

Հոնքը կիտեց լույսն իրիկվա՝  
Խորհրդատուն մեր դարավոր,  
Ընդամենը մի քայլ, ահա,  
Ուշանում է խորհուրդդ խոր:

Ապագան է ստվերում քեզ,  
Խառնում ներկդ, դիմանկար,  
Միրելիս, դու ուշանում ես,  
Կարոտել եմ շոյանքիդ վառ:

Ստեղները ճշում, վագում,  
Լիստից արագ՝ օգնելու ինձ,  
Երեք դար է ինձ չեն հասնում  
Ջիզիթները մեր էպոսից:

Եվ ես հիմա ձգտեմ համառ,  
Հասնեմ նրանց ներշնչանքով,  
Ու զիլ ոռնամ երկնային բառ՝  
Վեհ ու մաքուր, անհաս ոգով:

1976

## ՎԱՐԱՐՈՒՄ

Ազիմուտով քոչվոր ծննդաբանության,  
կանխորոշած քարտեզով պատմության,  
մոխրագույն երակներով  
հնագույն քաղաքների,  
ես հոսում եմ  
փոթորկուն կաթիլով դոնորի:  
Այստեղ եմ ըմբռնում պարտականությունս.  
Վեր հանել տափաստանը՝  
չնվաստացնելով լեռներին,  
բռնել ափը քո և գուշակել  
քո երկար ճանապարհը, օ՛, քաղաք:  
Տոթ է:  
ուստիկան-ավազը ննջում է իր խցում,  
Ինչից անցորդները, կարծես թե, գոհ են:  
Ես անցնում եմ քաղաքով: Հանկարծ՝  
լռություն :  
Եվ ճիչ -  
Լայնատարած ժպիտն է Վոլգայի:  
Ափունքով ժպտացող հողի  
ճեմում եմ խոտի վրայով:  
Ես գիտեմ, որ երկար  
Կսիրեմ այս քաղաքը, այս Վոլգան:  
Բոլոր կանխագուշակումներն էլ - փուչ են ,  
Երբ կա վարարումը:

С орудья бросит  
каждо, словно ступил  
медленно то же в  
камень, пуценым из пуцены

всего на <sup>германцы</sup> ~~на фронте~~ крупными  
крутой плыли,

выстрел —  
и перья,

Земля подлетает к оруду,

Кони со скоростью

Смерти

идут над подножьем земли,

Вам, где угасает скорость,

звонит  
офицера последний бой

Հեռագրի հասված Օլժաս Սուլէյմենովի  
«Երկի ր, խոնարհիլի ր մարդուն» պոէմից



*Бахыňжан Канаňянов*

*ԲԱԽՏԻՃԱՆ ԿԱՆԱՊՅԱՆՈՎ*  
(Ծնվ. 1951 թ.)

### ԹՈՒԽ ԼՈՒՄՆԻ ԼԱՅՆ

Ստորերկրյա պայթյունից առաջ  
Գիշերն անամոք ցավով է լեցուն:  
Եվ թուխ լուսինն է  
Պայթյունից առաջ անվերջ հեծեծում:  
Եվ ռադիոակտիվ խրճերի ցանցում  
Արցունքը նրա ոսկի է դարձել:  
Իր իսկ ռենտգենյան արտապատկերն է  
Գետի այն ափին աուլը կարծես:  
Դեզելան լեռան թունելի միջից  
Շնչառությունն է սփռվում մահվան:  
Ճառագայթային ձյունը մոխրի պես  
Ջնջել է ամեն գոտի և սահման:  
Հողը ցնցվում է ջղակծկումի՞ց,  
Թե՞ հուսակտուր տնքոցից մարդու, –  
Սա առասպել չէ՞ և ոչ էլ էպոս,  
Պոլիգոնն է սա – մշտապես արթուն:

Իմ սրտի մեջ է Չեռնոբիլը դեռ,  
Ես այնտեղ մեռյալ տներ եմ տեսել,  
Եվ իմ բլրակից աստղերի վրա  
Ոռնա՛լ եմ ուզում չոբանի շան պես,  
Որ չխենթանամ, չգժվեմ ես էլ:

*ք. Կուրչատով, Սեմիպալատինսկի պոլիգոն*

Մի օր էլ ապրեցինք, և գիշերը պրկված ջղերիդ  
 Հանգիստ է ներշնչում:  
 Եվ աստղերն են շնչում,  
 Ինչպես միշտ, առկայծում լույսերով հեռավոր:  
 Եվ հավերժ են կանչերը նրանց  
 Դաշտերում գիշերվա:  
 Եվ լեռները, լեռները լուսնի շողերում վսեմ են,  
 Խստատեսք ու վայրի:  
 Եվ իրենց աշխարհում, խաղերը մոռացած,  
 Քնած են մանուկներն անվրդով:  
 Առավոտը նրանց ընդառաջ պիտի գա  
 Ցողով ու արևով:  
 Քնած են բոլորը, երևի:  
 Բայց ինչո՞ւ քո քունը չի տանում:  
 Եվ այդ ի՞նչ տազնապ է, հանդարտվիր:  
 Դու վաղը պետք էս դեռ:  
 Չէ՞ որ այս աշխարհում ամեն ինչ  
 Այնպես չէ տակավին:  
 Եվ մասն էս, մասնակիցն ամենի,  
 Որ պիտի կատարվի,  
 Եվ նրա, ինչ վաղուց կատարվել է արդեն...

## ՄԱՅՐԱՄՈՒՏԻՑ ՀԵՏՈ

Չգիտեմ, այդ ո՞վ է բորբոքել  
Մենավոր այն խարույկը մթնում,  
Ու նաև՝ թե արևը հոգնած  
Որտեղ է իր հանգիստը գտնում,  
Հասկանա՞մ, թե քամին հովվապետ  
Ո՞ր գետի ափին է հանդարտվում,  
Եվ իր բաց թևերը որտե՞ղ է հավաքում  
Այս թռչունն անդադրում:  
Ստվերը երկնային թևերի  
Ծածկո՞ւմ է բլուրները հեռվում,  
Հասնո՞ւմ է հոտերին ամպերի,  
Որ լողում են խաղաղ կիրճերում,  
Գիշերվա այս սյուքը՝ անսալով  
Մերկացած ծառերի լուռ կանչին,  
Ի՞նչ թաքուն խոսքեր է փսփսում  
Իմ քնած մանչուկի ականջին:

\* \* \*

Երբ մանկան պես քնած կծկվում է հոգիս  
Այս աշխարհի հանդեպ,  
Արթնանում է իմ մեջ այն մանկորեն խաղաղ  
Զգացումը վերին,  
Որ հմայում է ինձ, քնաթաթախ տանում  
Կածաններով անտես –  
Պատսպարում ինչ-որ հեռու – հեռուներում՝  
Անմիտ այս հոգսերից:  
Ո՞վ է վառել իմ մեջ, ի՞նչ զգացում է դա՝  
Ինձ պահապան դարձած.  
Միտինգներից հեռու և ցույցերից,  
Հեռու քաղաքական անցուդարձից,  
Այս օրերում պղտոր թրթռում է թեթև  
Թելի նման արծաթ,  
Եվ բաց պատուհանից տերևի պես իջնում  
Իմ տառապյալ բարձին:

Սիրելիս,  
 աշխարհը առանց քեզ պարզունա՛կ է այնքան, -  
 այս ծառը տեսնո՞ւմ ես, անանուն ծառ էր սա,  
 դու եկար,  
 փոխարկվեց ու դարձավ սպիտակ ցարասի,  
 սիրելիս,  
 լսո՞ւմ ես շշուկները նրա գմբուխտե շուրթերի,  
 իսկ ճողփյուն լսո՞ւմ ես, ականջ դիր,  
 կարծես թե գետի մեջ թիեր են իջեցնում,  
 այնպես չէ՞, լավ լսիր,  
 ծորակիդ ձայնը չէ դա բնավ,  
 որ մեկ – մեկ լսում ես գիշերվա պահերին:  
 Երբ բաց է պատուհանդ լրիվ, -  
 պերճախոս շատրվանն է այնտեղ  
 շշուկներն իր խառնում առվակի երգերին,  
 սիրելիս,  
 տեսնո՞ւմ ես լճակը,  
 տես, որքան ծաղիկ է հավաքել իր գլխին,  
 ծաղկել են մինչևիսկ քարերը, -  
 ել, գնանք – մոտենանք քարերի պարտեզին,  
 բաժանման ծանրությունն ուզում եմ  
 թոթափել ես այնտեղ,  
 ու քեզ հետ թափառել քաղաքում,  
 այս անվերջ, այս կանաչ գիշերով,  
 երբ Ալաթաուից  
 գովություն է փչում,  
 սիրելիս...

## ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՄՈՏԻՎ

Մենք մնում ենք: Մինչ ամեն ինչ  
Հեռանում է հոսանքի հետ տարիների:  
Հեռանում է անակնկալ ու աննկատ:  
Եվ խոսքերը հրաժեշտի  
Խցանվում են մեր կոկորդում,  
Համակելով անմեկնելի  
Ինչ – որ թախծով սարսափազդու:

Հետո դառնում, կյանքն ենք փաստում –  
Հանդարտաքայլ և անվրդով,  
Ինչ – որ ժեստով մի անհեթեթ:  
Չենք նկատում, թե ինչպես են հետզհետե  
Տարբալուծվում օղակները մեր հոգու մեջ,  
Եվ օրերին անդառնալի  
Մենք նայում ենք այնպես թեթև:

Մենք մնում ենք: Բայց ո՞վ ենք մենք –  
Ես՝ առանց քեզ, դու՝ առանց ինձ:  
Երկու բևեռ զուգակշիռ:  
Դրանից չե՞նք արցունքոտվում –  
Զվարճաբար ծիծաղելիս,  
Երբ նայում ենք մեր երկրային թեք առանցքին:

## ԾԻՐԱՆԻՆ ԵՎ ԲԱՐՈՒՆ

*Արևելյան առակ*  
(Փոխադրություն)

Մանրիկ պտուղներով ծիրանին  
վաղ ծաղկեց:

Եվ բրգաձև բարդին

իր հասակի վերից քմծիծաղեց.

– Ցրտահարվե՛ս պիտի և չեն տեսնի մարդիկ  
պտուղներդ քաղցր:

Լոռ՛ւմ էր ծիրանին,

ծածկված իր վարդագույն ծաղիկների քողով:

Օրեր անց զարկեցին ցրտերն անակնկալ:

Եվ ծիրանին բարդուն

մի օր առավոտյան պատասխանեց.

– Գուցեն ճիշտ ես դու,

համն իմ պտուղների չեն ճաշակի մարդիկ:

Բայց զարունը, չե՞ որ, վաղ զգացին նրանք,

քան թե գալիս է նա սովորաբար:

Ծաղիկներս կապրեն

աչքերի մեջ մարդկանց և սրտերի,

հոգնել են տմարդի


այս ցրտերից:

Այսպես խոսեց ծառը: Բայց չէր լսում բարդին:

Նա ժամանակ չունեք: Իր հասակի վերից

մազմզունկն էր նետում նա իր ճերմակ բրդի


մարդկանց աչքերի մեջ և սրտերի:



Վահան Շախնիսեանի «Նոր կյանք»



Շինգիս Կենտրոն «Տոն»



Նուրբէկ Թանսիկյան «Չմեռ»



*Ժանատայ Շարդենով «Քաղաքային բնապատկեր»*



*Կադիրժան Խայրույին «Մտորումներ մտածելակերպի մասին»*



*Yurydyk Esqaryanov*

*ՈՒՆՈՒԳԲԵՎ ԵՍԴԱՈՒԼԵՏՈՎ  
(Ծնվ. 1954 թ.)*

## ԵՍ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՄ

Հավատում եմ ես  
Կփայլես դու նորեն,  
Կփռես վրադ երկինքը ալ,  
Ինձ կբորբոքի քո սերը գորեղ,  
Ինչպես Իրտիշը,  
Որ վազում է լայնածավալ:

Հավատում եմ ես  
Ինձ կմեկնես թիակ,  
Կձգտենք սրընթաց ճակատագրին  
Եվ կնահանջի չարը սև կատակ,  
Նորից կցնձա մեր զվարթ հոգին:

Հավատում եմ ես  
Կվերածվի չարը սառույցի,  
Գոլորշու թեթև, իսկ մենք՝ ծաղկի, գարնան լույսերում  
Եվ կրկին մեր մեջ սիրտը կցնձա,  
Կմիաձուլվեն շուրթ ու շնչառություն:

Ես գիտեմ՝  
Աշխարհին է խաբուսիկ, բայցևայնպես,  
Չի կարող նա շեղել երջանկությանը,  
Խոյընթաց է կյանքը և դու կանցնես  
Գարնան ծաղկունքից մինչ ձմռան մառը:

Ես գիտեմ՝  
Մինչ մայիսը գա,  
Կարող են թվալ ճյուղերը մեռած,  
Գորշ սաղարթների ագռավներին չկամ  
Պետք չէ գարնան ծուխը հառնած:

Հավատում եմ ես՝  
Կեսգիշերային աստղաբույլերը  
Արցունքների են նման տանջալի,  
Խորն են աչքերը, լիքն են աչքերը  
Եվ թարթիչներից անձրև է աստղի:

Հավատում եմ ես՝  
Զգացմունքների հեղեղն է խաբուսիկ,  
Մինչ մեզնից շատերն են խեղդվել այնտեղ,  
Սակայն կույ տալով մի կաթիլ նույնիսկ,  
Չենք կարող կանգնել ու նահանջել:

Հավատում եմ ես՝  
Մենք չենք վհատվի,  
Թեպետ շատ են մեր կորուստներն, ավաղ,  
Ես չեմ հավատում սառը խոսքերին  
Եվ հայացքներին անտարբեր ու պաղ:

## ԿԱՐՄԻՐ ՎԵՐՁԱԼՈՒՅՍ

Կարմիր բլուր, իրիկուն ալ,  
Դենքը շոյող հրաշեկ հով,  
Կարմիր հագած աղջիկ և ամպ,  
Նայում են վառ, ջեռ հայացքով:

Իրիկուն ալ, կարմիր բլուր,  
Քամի, երկինք և շառագույն,  
Կակաչի պես թրթռուն շոր  
Եվ ծաղիկն է երկինք թռչում:

## ԱՄԱՌՆ ԱՆՑԱՎ

Ամառն անցավ ջահելության օրերի հետ,  
Ամեն ինչից խինդ պեղեցինք անչափելի,  
Կյանք նետվեցինք, ոնց կամրջից, վարում՝ խենթ գետ,  
Մեր հոգուն չէր հուզում, թե ինչ կպատահի:

Ամառն անցավ և ցավ թողեց և թողեց ահ,  
Երբեմնի հորդ կյանքը հիմա լուռ է այնպես,  
Թոչոդ տարվանն ասում ենք մենք՝ «Սպասիր, պահ»:  
Նա ասեղի անցքով սահեց, հանց թել անտես:

Ամառն անցավ, չհասցրինք ավստս ասել  
Եվ կլլեցինք հուր և սառույց, ծիծաղ ու ցավ,  
Տունը թողած՝ մենք ձգտեցինք մի այլ հասցե,  
Ու չգիտենք, թե ինչ կգա՝ խի՞նդ, փորձա՞նք, ցա՞վ:  
Ամառն անցավ...

ԱՐՁԱԿ







*Տարգիս Բեցիս*

*ՄԱՊԱՐԳԱԼԻ ԲԵԳԱԼԻՆ*

*(1895-1983 թթ.)*

## ԵՐԱՄԱԿԱՊԱՆ ԱՂՋԻԿԸ

### I

Դաժան է ձմեռը դազախական Արկա տափաստանում: Հաճախ է պատահում, որ խաղաղ, հանդարտ օրով հանկարծ փչում է սառցաշունչ քամին: Չի անցնի տասը բույե, և այն, խառնվելով ձյան հետ, արդեն կշրմվացնի դեմքիդ, կդադի մաշկդ: Ցերեկվա լույսը խամրում է ու խավարում:

Այդպիսի բուք-բորանի ժամանակ տափաստանում կորստի կմատնվի թույլ մարդը: Ուժեղ մարդու համար էլ դժվար է դիմանալը:

Կրտսեր երամակապան Երմեկը դեռևս չէր վերադարձել: Խալիմանը որոշեց գնալ և գտնել նրան: Միգուցե երամակները դուրս են եկել բաց դաշտ, և քամին քշե՞լ է նրանց,- մտածեց աղջիկը: Ո՛չ, չի ուզում հավատալ այդպիսի աղետի: Պարզապես, բուքի ժամանակ Երմեկը երևի վախենում է երամակը թողնել առանց հսկողության: Խա-

լիմանն իր թաղիքե գուլպաների՝ պայպակների վրա քաշեց երկրաճիտ կոշիկները, հագավ ոչխարենու քուրքը, աղվամազե գլխաշորը կապեց այնպես, որ աչքերի համար բաց մնաց մի նեղ ճեղք: Ծանր քայլերով նա դիմեց դեպի դուռը:

Ծեր Ղաչաղանը ժպտաց: Ամռանը նա մի կլինոնկար էր տեսել ջրասուզակների մասին: Խալիմանն այժմ շատ նման էր սկաֆանդր հագած ջրասուզակի:

Ղաչաղանը ուրախանում էր իր դատերով, թեկուզ երբեք այդ մասին չէր խոսում: Աղջիկը ծնվել էր այն տարին, երբ նա ընդունել էր «Ենբեկ» կոլտնտեսության ձիաբուծական ֆերման: Ղաչաղանն այն ժամանակ դեռ երիտասարդ էր, գեղեցիկ: Աղջիկը նրան էր քաշել: Նա էլ էր վայելչատես ու ամրակազմ: Նույն կլոր դեմքը, լայն հոնքերը և մի փոքր կոր քիթը:

Նա Ղաչաղանից էլ գեղեցիկ էր: Բայց այդ չէր կարևորը: Խալիմանը որպես երամակապան, նրանից ետ չէր մնում, իսկ չէ՞ որ իրեն լրագրերում անվանում են «Երամակապանների հայր»: Երբ իրեն ֆերմա ընդունեցին, այնտեղ կար ընդամենը զամբիկների երկու երամակ և մի քանի հովատակ, իսկ այժմ...

Ղաչաղանը դեռ աշնանը ձիերի հավաքատեղի ընտրեց Կոյան-սոկկան և Կոկշեթաու վայրերը: Այդտեղ փոխադրեցին խոտ, կարգավորեցին հովատակների խնամքը: Ձմռան սառնամանիքների ժամանակ, այդ հովատակներին նստած, պահպանում էին ձիերի երամակները:

Ղաչաղանը հառաչեց: Վաթսուն տարին քիչ քան չէ: Մեջքը կռացել է, ձեռքերի ու ոտքերի ոսկորները վատ եղանակին կոտրատվում են: Նա չի գնում այլևս գիշերային արոտի: Նրա փոխարեն գնում է Խալիմանը:

Ղաչաղանը դռան մոտ կանգնեցրեց աղջկան: Նա նայեց Խալիմանի աչքերի մեջ, որոնք փայլում էին գլխաշորի տակից, և բարձր ձայնով, համարյա թե գոռաց, կարծես իրոք, Խալիմանը սկաֆանդրի մեջ էր և չէր լսում իրեն.

-Բուքը սաստկանում է: Հարկավոր է ուժեղ ձի: Վերցրո՛ւ մուգ աշխետը:

Խալիմանը գլխով արեց և դուրս եկավ փողոց: Մենյակ ներխուժեցին քամու սուլոցը և ցուրտը...

Մուգ աշխետը տազնապալից փնչացնում էր և ականջները իլշում: Խալիմանն ուղղություն վերցրեց դեպի Տոբիլ-գի-Շուբար, քանի որ նրա ենթադրությամբ երամակը պետք է գտնվեր այնտեղ:

Ահա և ցածրիկ բլուրները: Աղջիկը շրջանցեց նրանցից մեկը: Այստեղ քամին այնքան էլ կատաղի չէր: Նա շուրջը նայեց և ձիեր տեսավ: Նրանք, մեջքները քամու կողմն արած, ամբակներով ետ էին տալիս փխրուն ձյունը և պոկոտում անցյալ տարվանից մնացած խոտը: Որոճում էին: Խալիմանը մոտեցավ նրանց: Նա ճանաչեց սպիտակ հովատակի երամակը: Հապա որտե՞ղ են մյուսները: Ուրիշ երամակներ չէին երևում: Խալիմանը թափահարեց սանձը:

Նա գնում էր դանդաղ, հաճախ կանգ էր առնում՝ արդյոք չի՞ լսում Երմեկի ձայնը: Ո՛չ, չէր լսվում: Քամին արդեն չէր

սուլում, այլ շաչում էր: Ձին և հեծվորուհին, ձյունով ծեփված, հիշեցնում էին շարժվող ձյունակույտի:

Խալիմանը փորձում էր մտածել Երմեկի մասին, իսկ հիշողության մեջ արթնանում էր Ժանուզակի արևակեզ, ցցուն այտոսկրերով դեմքը: Նա իր երամակով նույնպես այս մոտերքումն էր: Բայց Խալիմանը նրան չէր հանդիպել աշնանից ի վեր, երբ տեղի ունեցավ կոլտնտեսային սպարտակիադան: Ժանուզակն առաջին տեղը գրավեց գունդը հրելու մրցություններում, և ինքը մոտ վազեց՝ նրան շնորհավորելու: Ժանուզակի աչքերը խնդությամբ փայլեցին: Այդ բանը ինքը լավ նկատեց: Իսկ երեկոյան նրանք գնացին զբոսնելու: Նա ճանապարհին պատմեց, որ ինքը պատրաստվում է ձմռանը հոր փոխարեն դուրս գալ գիշերային արոտի:

Ժանուզակը քմծիծաղ տվեց:

-Դու չգիտես, թե ինչ բան է բուրը:

-Կարծում ես, ես չե՞մ դիմանա:

-Այո՛, չես դիմանա:

Խալիմանը շուռ եկավ, գնաց: Բայց ինչո՞ւ: Ինչու... Երմեկը սիրում է նրան: Նույնպես... Տխմար Խալիման, մի՞թե Ժանուզակն ասել է, թե սիրում է...

Խալիմանը զգաց, որ ձին տակին հանկարծ պրկվեց: Ուժեղ ձգեց սանձը: Լսվեց ծանրումեծ դոփյուն: Ձյան ցանցի միջով Խալիմանը նկատեց գորշավուն երերվող մի զանգված, որն արագ սլացավ իր մոտով:

«Երամակը փախչում է քամուց», - նրա մտքով անցավ տագնապալի միտքը:

Նա մտրակեց նժույզը՝ ուղղելով նրան՝ կտրելու երամակի ճանապարհը:

-Հե՛յ, հե՛յ,-բղավեց Խալիմանը և թափահարեց ձեռքերը: Մի ակնթարթ, և աշխետը սայթաքեց և մինչև կուրծքը թաղվեց ձյունակույտի՝ ամռանը չորացած մի գետակի մեջ: Նա քիչ մնաց թամբից ընկներ:

Հեռու-հեռվից լսվեց մի ձայն.

-...Է-ե՛յ:

«Երմեկն է», ուրախացավ Խալիմանը: Ձին դուրս բերելով ձյունակույտի միջից՝ նա ձին ուղղեց դեպի այն կողմը, որտեղից լսվեց ձայնը:

Բայց ձայնն այլևս չկրկնվեց: Ժամանակ առ ժամանակ աղջիկը կանգնեցնում էր ձիուն, և ինքն էր ձայն տալիս: Առջևում նորից լսվեց ուժեղ դոփյուն, և երերաց գորշավուն գանգվածը: Խալիմանը մտրակեց ձին:

-Հե՛յ, Երմե՛կ,- կանչեց նա: Եվ հանկարծ բոլորովին մոտիկ տեղից լսեց.

Ես այստեղ եմ, Խալիմա՛ն...

-Դու ինչպե՞ս կարողացար այս բուք-բորանին գտնել երամակը, զարմանքով ու խնդությամբ ասաց Երմեկը: Ձիերը սկսեցին քամուց փախչել: Մեծ դժվարությամբ եմ նրանց պահում: Երմեկն ամբողջությամբ ձյունաթաթախ էր. նրանից և ձիուց գոլորշի էր բարձրանում:

-Դու, երևի, լավ սատել ես,- հարցրեց աղջիկը Երմեկին: Երմեկը ձևացրեց, որպես թե չլսեց: «Կարծես ես ինքս չգիտեմ», - բարկացավ Խալիմանն իր վրա և հարցրեց. -ե-

բամակը բաժան-բաժան է եղել, թե ամբողջությամբ այստեղ է:

-Կարծես թե չի բաժանվել:

-Այդ դեպքում՝ կեցցես:

Խալիմանն սկսեց առջևի կողմից հետ մղել ձիերին: Երմեկն օգնում էր նրան:

-Ինչ գնով ուզում է լինի, պետք է երամակը քշել Կոյան-սոկկան բլուրների տակ,- ասաց Երմեկը,- այնտեղ քամին թույլ է:

-Մանավանդ որ այնտեղ մի քանի դեզ խոտ կա,- համաձայնեց Խալիմանը:

Նրանք վերջապես կարողացան երամակի ընթացքը փոխել իրենց ցանկացած ուղղությամբ:

Խալիմանը քշում էր ձիերը, իսկ գլխում անվերջ պտտվում էին հուզումնալի մտքերը: Նա տեսնում էր, որ ծանր է Երմեկի վիճակը: Երմեկը օրվա ընթացքում սառել էր ու հոգնել, հազիվ էր կարողանում վարել ուժասպառ ձիուն: Աղջկան անհանգստացնում էր նաև սպիտակ հովատակի երամակը, որը մնացել էր Տոբիլգի-Շումարում: Եթե երամակը սկսի քամուց փախչել, ապա նրան Բորելկեկի ճահճուտներում սպասում է անխուսափելի կործանում:

Երամակն իջնում էր ձորակը: Վերևում քամին շարունակում էր շաչել, պատահոտել ձյան ցանցը: Այստեղ քամուց պատսպարված էր: Ձիերը հանգստացան: Սկսեցին ձյունը ցիրուցան անել՝ խոտ որոնելու ցանկությամբ:

Խալիմանն իջավ ձիուց և օգնեց իջնելու Երմեկին:

Նրանք թափ տվին ոտքերի ձյունը:

-Վազի՛ր:

-Ի՞նչ,- զարմացավ Երմեկը:

-Վազի՛ր, իսկ ես կաշխատեմ հետևիցդ հասնել:

Երբ Երմեկը մի փոքր տաքացավ, Խալիմանը հրամայեց նրան պառկել:

- Մի փոքր հանգստացի՛ր:

Աղջիկը նրան թողեց ձնակույտի մեջ, իսկ ինքը թռավ ձիու վրա և գնաց՝ ի մի հավաքելու երամակը:

Տասնյակի չափ ձիեր արդեն կարողացել էին դուրս գալ ձորակից և գնալ մի կողմի վրա: Խալիմանը նրանց քշեց դեպի երամակը: Վերադառնալով, նա ոտքի հանեց Երմեկին:

-Մի փոքր տաքացա՛ր:

-Նույնիսկ շոգել եմ,- երջանիկ ժպտաց Երմեկը:

- Այնքան էլ շոգ չէ,- առարկեց Խալիմանը,- Այժմ հեծիր ձին և երամակը պահի իր տեղում, իսկ ես կգնամ անջատված երամակի հետևից:

Նա խոսում էր աշխուժորեն, սակայն սիրտը, տազնապով բռնված, տրոփում էր.«Ի՞նչ եմ անելու, եթե երամակն արդեն մտած լինի ճահճուտները»:

Մի քանի քայլ, և մոնչացող բուքը կլանեց և՛ ձիուն, և՛ հեծյալուհուն:

Քամու ուղղությամբ որոշելով,թե որ կողմը պետք է ձին քշել,Խալիմանը մտրակեց իր երիվարը: Արագ ընթացքից Խալիմանը տաքացել էր: Ժամանակը սահում էր: Հանկարծ անսպասելիորեն ձին կանգ առավ, իջավ ետևի ոտքերի վրա, ասես թե ուզում է «նստել»: Նժույզը լսողությունը լա-

րեց: Միշտ այդպես է լինում, երբ հեծյալը մտադրվում է ձին քշել հալածելու գայլերին: Մի ակնթարթ, և ձին թափով թռավ առաջ:

Եթե գայլեր են, նշանակում է սպիտակ հովատակի երամակը մոտակայքում է: Խալիմանը գայլ չէր տեսել, և նրանց չես էլ տեսնի այդպիսի բուք-բորանի ժամանակ: Բայց նա չէր կասկածում, որ իր նժույզը չի սխալվում: Իհարկե, գայլերը մի որևէ մոտիկ տեղում էին: Չէ՞ որ ասում են. «Երբ թշնամին դուռդ է կտրում, գայլն էլ փեշդ է բռնում»:

Խալիմանը լավ գիտեր գայլերի բնավորությունը: Նրանք չէին հարձակվում ամբողջ երամակի վրա, քանի որ վախենում էին առաջնորդ հովատակի սմբակներից: Նրանք սպասում էին, թե երբ երամակից հետ կրնկնի մի որևէ ուժասպառ եղած քուռակ, իսկ այն ժամանակ...

Աղջիկը լրջորեն անհանգստացավ: Հայրը նրան վստահեցրել էր, որ նա կարող է փոխարինել իրեն, այլապես նա չէր անցնի թռչակի: Եվ հանկարծ նա խայտառակ կանի ծերունուն: Ի՞նչ կասեն իրեն: Հենց առաջին իսկ բուք-բորանին կորցնում է ձիերը, թողնում, որ նրանց պատառոտեն գազանները:

Նժույզը նորից սրեց ականջները, խրխնջաց: Խալիմանն ուրախացավ: Նա ընդհուպ կռացավ ձիու պարանոցին և ուշադրությամբ նայեց առաջ: Նա տեսավ ձիերին: Նրանք ամբողջովին ծածկվել էին ձյունով: Ձիերը դանդաղ շարժվում էին այն կողմը, ուր փչում էր մոլեգին քամին: Նրանց

հետևից, կարծես թե դիմադրելով քամու ճնշումին, քայլում էր սպիտակ հովատակը:

«Այո՛, ինչպես երևում է թեթև բուք չէ, եթե սպիտակ հովատակի երամակը չի կարողանում դիմադրել ու գնում է քամու ուղղությամբ», - մտածեց Խալիմանը:

Նա իր նժույզն ուղղեց դեպի առջևից գնացող ձիերը: Սկսեց նրա լայն, մկանուտ կրծքով հետ մղել ձիերին՝ աշխատելով շրջել հարկավոր ուղղությամբ: Խալիմանը հմտորեն գործում էր ձեռքի ձողով: Սակայն պարզվեց, որ երամակի ուղղությունը փոխելը այնքան էլ հեշտ բան չէ: Նրա ձիերը ամրակազմ էին ու լավ սնված:

Չնայած սառնամանիքին, Խալիմանի նժույզն այնպես էր քրտնել, կարծես թե տասնյակ կիլոմետրեր էր կտրել: Նրա ռունգերից գոլորշի էր դուրս ժայթքում, որը, սառչելով մազերի վրա, սառցալուլաների էր վերածվում: Ձին երբեմն-երբեմն դունչը շուռ էր տալիս և աղջկա ծնկներին զարնելով, վայր էր թափում սառցալուլաները: Ձիու արտևանունքները և աչքերի մոտակա մազերը ծածկվել էին եղյամով:

Վերջապես երամակը շուռ եկավ հարկավոր ուղղությամբ ու սլացավ: Այժմ քամին կողքից էր փչում: Ժամանակ առ ժամանակ փչում էր այնպիսի ուժով, որ թվում էր՝ հիմա ուր-որ է աղջկան կպոկի թամբից: Բայց Խալիմանը չէր վախենում: Նա երջանիկ էր, որ երամակը փրկված է. «Ա՛յ թե հիմա ինձ տեսներ Ժանուզակը», - մտածեց նա և կարմրեց:

Աղջիկը ձիերը քշեց ձորակը, որտեղ երամակն էր գտնվում: Նա ձայն տվեց Երմեկին: Լռություն: Մեկ էլ ձայն տվեց ու գնաց շուրջանց անելու: Մի քանի ձիեր, ինչպես և առաջին անգամ, դուրս էին եկել ձորակից: Խալիմանը ձեռքի սոխի հարվածներով նրանց ետ վերադարձրեց:

-Խալիմա՛ն...-լսեց նա թփուտների հետևից Երմեկի թույլ ձայնը:

Այժմ, երբ ողջ երամակը հավաքված էր ի մի, Խալիմանի գլխավոր հոգսը Երմեկը դարձավ: Ինչ գնով ուզում է լինի անհրաժեշտ է նրան տաքացնել: Աղջիկը կրտսեր երամակապանին նորից առաջարկեց վազվզել: Նա համաձայնվեց, բայց մի քանի քայլ անելուն պես, ընկավ: Ո՛չ: Երմեկն այլևս վազել չի կարող: Նորի՞ց քաշել նրան ձյան մեջ: Այժմ չէր կարելի մտածել անգամ երամակը Կոյան- սոկկան բնասահմանը քշելու մասին, չէր կարելի Երմեկին թողնել բախտի քմահաճույքին: Ձիերին պահել ձորակում,- այսպիսին էր խնդիրը:

Խալիմանը նորից գնաց շրջանցելու երամակը: Մուգե աշխետն այժմ կորցրել էր իր նախկին կայտառությունը և ավելի հաճախ էր սայթաքում: Պետք էր փոխել ձին, բայց այդ ձին կարող էր բուք-բորանի ժամանակ ձյունաթմբերի վրայով սլանալ: «Թերևս, միայն սպիտակ հովատակը», - որոշեց աղջիկը :

Խալիմանը փնտրեց, գտավ այդ ձիուն և մի ճարպիկ շարժումով օղակը նետեց նրա պարանոցը: Հովատակը փորձեց դուրս թռչել օղակից, բայց զգալով թե ինչպես է սեղմում պրկված օղապարանը, ջղայնորեն ցնցվելով,

կանգ առավ: Խալիմանը թամբը շտապով իր ձիուց վերցրեց ու դրեց սպիտակ հովատակի վրա: Հետո նա մուգ աշխետի ռունգերից պոկեց սառցալուլաները, սրբեց մեջքի ու կողերի քրտինքը և քշեց ձիերի մեջ, որտեղ քամին թույլ էր:

Սպիտակ հովատակի մեջքին Խալիմանն իրեն զգաց ուժեղ, պատրաստ պայքարելու՝ երամակը փրկելու համար:

Դանդաղ սահում էր ժամանակը: Լուսաբացի դեռ ոչ մի նշան չկար: Խալիմանը մարմնում դող զգաց: Նախապես դա մի թույլ դող էր, բայց շատ շուտով այն վերածվեց չափազանց ուժեղ սարսուռի: Ոտների մատների մեջ կարծես տասնյակ անողոք ասեղներ ցցվեցին: Ահա թե ինչ է նշանակում չվարգել, չգործել սոյլայով: Խալիմանը նորից սկսեց հուզվել: Մի՞ թե չի կարողանալու տոկալ: Այժմ, երբ արդեն ի մի է հավաքված ողջ երամակը: Խալիմանը ցած թռավ հովատակից և սկսեց վազել: Աստիճանաբար ոտքերը տաքացան, մարմնից անհետացավ դողը: Աղջիկը նորից բարձրացավ նժույգի վրա: Մրընթաց քամին իր հետ բերեց մարդկային ինչ-որ աղաղակ: Աղջիկը սրեց լսողությունը: Մի որոշ ժամանակից հետո, աղաղակը նորից կրկնվեց: Խալիմանը նույնիսկ որոշեց, թե որ կողմից է այն գալիս՝ Կոյան-սոկկանի կողմից էր այդ: Ո՞վ կրող էր լինել: Մի՞ թե Երմեկն է: Բայց չէ՞ որ Երմեկը մնաց բոլորովին այլ կողմում: Ականջները սրեց նաև հովատակը: Աղջիկը ձին ուղղեց այն կողմը, որտեղից գալիս էր ձայնը: Հանկարծ բոլորովին մոտիկից լսեց. «Խալիմա՛ն. Խալիմա-ա՛ն»: Աղջիկը կանգնեցրեց հովատակը: Ձիերի մեջ նա նշմարեց մի հեծյալի:

-Թանկագին Խալիման, այդ դո՞ւ ես,- ճանաչեց նա հոր հուզված և բերկրալի ձայնը:

-Ես եմ,- բացականչեց Խալիմանը: Ցատկեց ձիուց և վազեց դեպի հայրը:

- Այդ ո՞նց սիրտ արեցիր այս բուք-բորանին մեկնել տափաստան,- հարցրեց հորը ուրախացած Խալիմանը:

Ծեր Ղաչաղանը ծիծաղեց:

-Մի՞թե առաջին անգամն եմ տեսնում այսպիսի բուք-բորան: Բուքն ինձ համար սովորական բան է: Դու մեկնեցիր, ես էլ սկսեցի սպասել Երմեկին: Սպասում եմ, սպասում, բայց նա չկա: Գիշեր եղավ, դարձյալ չկա: Ես անհանգստացա, մայրդ էլ իր հերթին: Նա ասում է.«Վախենում եմ, որ մենք կգրկվենք և երամակից և մեր աղջկանից»: Դե ես էլ չկարողացա համբերել: Նստեցի ձին ու եկա՝ քեզ փնտրելու: Փա՛ռք Ալլահին, գտա: Իսկ որտե՞ղ է Երմեկը,-հարցրեց Ղաչաղանը տագնապով:

-Ողջ երամակն այստեղ է: Երմեկն էլ է այստեղ.Խալիմանը պատմեց, որ կրտսեր երամակապանը հոգնեց, սառեց, և ինքը ստիպված եղավ նրան թաղել ձյունակույտի մեջ:- Բայց նա կեցցե. թույլ չէր տվել ձիերին ցաքուցրիվ լինել մինչ իմ գալը,- վերջացրեց իր պատմությունը Խալիմանը:

-Ի՞նչ ասել կուզի, ես տեսնում եմ, որ դուք երկուսդ էլ իսկական երամակապաններ եք,- գովեց նրանց Ղաչաղանը:

-Կյանքդ երկար լինի, հայրիկ, իսկ այսօր բուքը չտեսնված ուժեղ է: Բայց մենք կհաղթահարենք դժվարությունը:

Այժմ Խալիմանը շրջանցեց երամակը հոր հետ միասին: Նրա խոսքերը քաջալերեցին աղջկան: Նա նույնիսկ ամաչեց քիչ առաջ իր ունեցած անհանգստության, իր տատանումների համար:

Լուսաբացի հետ քամին զգալի թուլացավ: Խալիմանը քանդեց ձյունակույտը և արթնացրեց Երմեկին:

-Վե՛ր կաց, քնով ընկար,- ծիծաղելով գոչեց նա:

Երմեկը թռավ ոտքի և զարմացած տրորեց աչքերը:

-Ղաչաղան պաալի, իսկ դո՞ւք ինչու եք այստեղ:

Երբ բուքը բոլորովին դադարեց, նրանք երկուսով երամակը քշեցին դեպի կանգառը:

## II

Արդեն մի քանի օր էր, ինչ պարզկա եղանակ էր:

Երմեկը, որը հենց նոր վերադարձավ գիշերային արոտից, պատմեց հետևյալը.

Այսօր երամակի վրա երկու անգամ գայլ հարձակվեց: Ես նրան քշեցի Կոյան - սոկկանի կողմը: Բայց նա շատ չհեռացավ: Համառ գայլ է, անպայման կվերադառնա:

-Ես կգնամ՝ նրան որոնելու,- առաջարկեց Ղաչաղանը՝ շրթունքի տակը ծխախոտ դնելով:

-Ակե,- առաջարկեց Խալիմանը հորը:- Գայլի հետևից ես կգնամ, իսկ դուք առայժմ մնացեք երամակի մոտ:

Ղաչաղանին դուր եկավ աղջկա վճռական տոնը: Նա լուռ գնաց թամբելու ձիերը. մուգ աշխետը Խալիմանի հա-

մար, իսկ սև հովատակը՝ ճակատին սպիտակ աստղ՝ իրեն համար:

Մեկնելով Կոյան- սոկկանի կողմը՝ Խալիմանը շուտով կտրեց անցավ գայլի հետքը: Գազանին երկար փնտրելու կարիք չէր: Աղջիկը, դեռ չհասած բնասահմանը, ոչ շատ հեռվում նկատեց միայնակ մի գայլի: Նա՝ բարձրահասակ, ուժեղ, վազում էր, երկար, գորշ բուրդը անհավասար փնջերով կախված էր կողքերից:

Խալիմանն իր ձին բաց թողեց ամբողջ թափով: Գայլը, տեսնելով, որ իրեն հետապնդում են, շեշտակի փախավ մի կողմի վրա և օգտվելով վայրի անհարթություններից՝ աշխատեց անհայտանալ: Ձգելով մարմինը և կծկելով պոչը՝ նա փախչում էր հսկայական ուստյուններով: Բայց ապարդյուն: Մուգ աշխետը ոչ միայն հետ չէր ընկնում, այլև հետզհետե հասնում էր նրան: Խալիմանը տեսնում էր, թե ինչպես է գայլի կարմիր լեզվից ծորում թուփը:

Աղջիկը բաց թողեց սանձը: Երկու ձեռքով բռնեց սոխը և բարձրացրեց գլխից վեր, պատրաստվելով գազանին հասցնել այն սոսկալի հարվածը, որին մարդը ընդունակ է միայն հասցնելու ձիու ուժեղ վազքի ժամանակ:

Շենց երեկ եկած փափուկ ձյունը ցաքուցրիվ էր լինում նժույգի սմբակների տակից: Գայլը դեռ շարունակում էր փախչել, բայց նրա ցատկերը դադարեցին այնպես հսկայական լինելուց: Գազանի բուրդը խոնավացել էր, նրան կպչող ձյունը իսկույն հալչում էր: Կրծքի և փոքրի խոնավացած բուրդը ծանրացել էր և խանգարում էր, որ արագ վա-

զի: Գայլը շնչասպառ էր լինում, վազքի ժամանակ ատամներով գետնից խլում էր ձյունը:

-Չէ՛յ, զգուշացի՛ր, առջևում ճահճուտն է: Ձեռքից բաց կթողնես գազանին,- լսեց Խալիմանը: Նա ետ նայեց: Գեղեցիկ, շեկ ձիուն հեծած ինչ-որ մեկը գալիս էր նրա հետևից:

Առջևում իրոք տարածվում էր Բորոլակ ճահճուտը: Չեստայնդման տենդով բռնված՝ աղջիկը բոլորովին մոռացել էր այդ: Խալիմանը ձիուն այնպիսի ուղղություն տվեց, որ կարողանա գազանին քշել ճահճուտից աջ: Գայլը թեքվեց Կոկսենգիրա լեռնաշղթայի կողմը: Խալիմանը նկատեց մեկ ուրիշ հեծյալի, որ նստած էր սևաթույր ձիուն: Նա արշավում էր գայլի վրա՝ նրա ճանապարհը կտրելու ուղղությամբ: Խալիմանի սիրտը ճմլվեց: Այդ ձիավորը Ժենուզակն էր:

Աղջիկն աշխատեց իրեն ձեռքը հավաքել: Ժենուզա՞կն է: Է՛հ, ինչ անենք, թող Ժենուզակը լինի,,,

Գայլը երեք ձիավորների միջև մի կողմից մյուսն էր նետվում: Ոտքերն արդեն հրաժարվում էին նրան ծառայել: Նա սայթաքում էր, ցած էր ընկնում:

Խալիմանն աշխատում էր առաջինը վրա հասնել գազանին: Ահա նա արդեն բոլորովին մոտիկ է: Աղջիկը ոտներով սեղմեց իր նժույգի կողերը: Ձին մի ցատկ կատարեց: Խալիմանը թափով իջեցրեց սոխը: Այդ վայրկյանին գայլը զգալով մահացու վտանգը, փորի վրա սեղմվեց ձյանը: Սոխը շաչեց նրա գլխի վրայով, բայց չդիպավ: Մինչ Խալիմանն ուզեց շուտ տալ ձին, մոտեցավ կարմրագորշ նժույգ նստած մի հեծյալ: Այժմ Խալիմանը ճանաչեց նրան: Դա

Ժանուգակի բարեկամ Աբիկայն էր: Այժմ նրա դեմքը կարմիր էր, լարված: Հոնքերը իրար մոտեցած: Վեր բարձրացրած ձեռքերում նա բռնել էր սոփլը:

-Մի՛ խփիր, մի՛ խփիր, կենդանի բռնեք,- լավեց Ժանուգակի գոչունը:

Վեր բռնած սոփլով Աբիկայը սլացավ Խալիմանի մոտով:

Գայլը փորի վրա պառկել էր ձյան մեջ: Նա ուժասպառ եղած ո՛չ կարող էր փախչել և ո՛չ էլ հարձակվել իրեն հետապնդողների վրա: Ահաբեկված նա ոռնում էր, ժանիքները կրճտում:

Սևաթույր ձին հավասարվեց գազանին: Եվ վայրկենապես Ժանուգակը ճարպիկ շարժումով թամբից թռավ գայլի մեջքին: Նա բռնեց նրա ականջներից և իր ամբողջ մարմնով գազանին սեղմեց գետնին:

Խալիմանը հիացմունքով հետևում էր ջահել ջիզիրթին: Վիրավորա՞նքը: Այստեղ ի՞նչ դեր ունի անցած-գնացած վիրավորանքը: Ահա ինչպիսին է նա՝ Խալիմանի Ժանուգակը:

Այդ ժամանակ Աբիկայը նույնպես ձիուց ցատկեց ու նստեց գայլի վրա՝ Ժանուգակի հետևում, որպեսզի գազանին հնարավորություն չտա բարձրանալու ետևի թաթերի վրա:

-Խալիմա՛ն,- կանչեց նա,- օղա՛կ հազցրու գայլի դնչին:

Խալիմանը թռավ իր նժույզից: Նա վերցրեց սանձը և նրանից օղակ պատրաստեց: Արյունով լցված գայլը վայրագորեն նայում էր աղջկան: Գայլը փորձ արեց ցատկել: Նրան հաջողվեց բաց անել երախը և ժանիքները կրճտել:

Խալիմանը համարձակ մոտեցավ գազանին և, սպասելով հարմար պահի՝ օղակը հագցրեց նրա դնչին: Ամուր ձգելով առաջին օղակը, նա արագ արեց երկրորդ օղակը և նույնպես ձգեց:

Խալիմանը կապոտեց գայլի առաջին և ետին թաթերը: Արհիկայը և Ժանուզակը գոհ, իրենց աշխատանքից, ոտքի ելան և հանդարտ թափ տվին վրանները: Գայլը մեկնված, պառկել էր նրանց ոտքերի մոտ:

Խալիմանը որսաց մի քանի արագ հայացքներ, որ Ժանուզակը նետում էր նրա կողմը: Ինչո՞ւ, ով կարող է բացատրել, թե ինչո՞ւ: Բայց Խալիմանն այնպես ձևացրեց, որպես թե ոչինչ չի նկատում: Նրա դեմքը դարձավ սռը, նույնիսկ բարկացած:

Արհիկայը ժպտաց: Նրա գլխում ծագեց մի ուրախ միտք:

-Մենք հիմա կփորձենք երամակապան աղջկա ուժը, - ասաց նա: Արհիկայն առաջարկեց գայլի հետ «կոկպար» խաղալ հետևյալ պայմանով: Իրենց երեքից ով որ ձիու արագ վագրի պահին, ձյան վրա պառկած գազանին կխլի և դնելով թամբի առջևում ամենից շուտ կհասնի իր երամակի կանգառը, որսը նրանն է կլինի: Ճիշտ է, որ «կոկպար» խաղում են մորթված նոխագով, իսկ այստեղ կենդանի գայլ է, բայց հենց դրանով էլ խաղը ավելի հետաքրքիր կլինի, - վերջացրեց նա: - Համաձայն եք, - դիմեց Արհիկայը Ժանուզակին և Խալիմանին: Ժանուզակը ձայն չհանեց: Նա կանգնած էր խոժոռված, հոնքերը կիտած:

-Ես համաձայն եմ,- մարտահրավերի տոնով պատասխանեց Խալիմանը: Նա թռավ իր նժույզի վրա, արձակեց բամբակակար բաճկոնի կոճակները, ազատեց աջ ձեռքը:

-Միայն, ըստ սովորության, առաջինը ինձ թույլ տվեք փորձելու ուժս:

-Շա՛տ լավ, քույրի՛կ ջան,- ասաց Աբիկայը:- Մեր ազգային սովորությունը քո կողմից է: Անցե՛ք գործի:- Նա և Ժանուզակը հեծան իրենց ձիերը:

Հետ գնալով տասը մետրի չափ՝ Խալիմանը նժույզը թափով քշեց: Հենց ընթացքի ժամանակ էլ նա գայլին գետնից բարձրացրեց, զցեց թամբի առջևի մասին և ձին մտրակեց: Երիվարը սլացավ քամու պես: Ժանուզակը, որը չէր սպասում, թե Խալիմանը կկարողանա գայլին գետնից բարձրացնել, մտրակեց իր սևաթույր ձին և թռավ աղջկա ետևից: «Պետք է դաս տալ նրան, պետք է որսը խլել Խալիմանից», - այսպես էր մտածում նա՝ անդադար քշելով ձին: Տեսնելով, որ իրեն հետապնդում են, ուզում են հասնել, Խալիմանը մի անգամ ևս մտրակեց իր մուգ աշխետը: Նժույզն ուժգին ցատկեց առաջ: Աղջկա և Ժանուզակի միջև եղած տարածությունն սկսեց զգալի աճել:

Սկզբում Աբիկայը չէր ցանկանում խանգարել իր բարեկամի և Խալիմանի միջև տեղի ունեցող մենամարտը: Նա սլանում էր նրանց ետևից՝ աշխատելով միայն շատ ետ չմնալ: Բայց երբ տեսավ, որ Ժանուզակը պարտություն է կրելու, նրա մեջ խոսեց տղամարդկային հպարտությունը: Ի՛նչ, աղջիկը պետք է իրենց հաղթի, ինչպես ասում են՝ իրենց քիթը սրբի, իրե՛նց, որ կոլտնտեսության զովաբան-

ված ջիզիթներն են: Չէ՞ որ հետո փողոց էլ չես կարող նույնիսկ դուրս գալ, վրաներս կծիծաղեն:

-Իմ շեկ սատանայից չե՛ս պրծնի, Խալիմա՛ն,- գոչեց նա և մտրակեց ձիուն: Նկատելով, որ Աբիկայը մոտենում է, Խալիմանը պտրաստվեց պայքարելու գայլի համար: Ընթացքի մեջ նա գայլի ետևի թաթերը խրեց աջ ասպանդակի կաշեփոկի տակ: Գազանի դունչը և առաջին թաթերը մնացին ձախ կողմից կախված: Այսպիսով, Խալիմանը կարող էր իր մարմնով որսը պահպանել:

Նծույզները սլանում էին ամբողջ թափով: Ձիավորները կտրեցին անցան Շաուրդերյան հովիտը: Սկսվեց թեթև վերելք: Խալիմանն զգաց, որ իր ձին նվազեցնում է վազքի արագությունը:

-Մի՞ թե կհասնեն,-մտածեց նա, և վիրավորանքի արցունքներ երևացին աչքերում:- Իհարկե, նրանք երկուսով կկարողանան գայլին խլել:

-Արա՛գ, արա՛գ,- խնդրում էր աղջիկը և ձեռքի ափով սիրալիք թփթփացնում մուգ աշխետի խոնավ պարանոցը...

Ծերունի Ղաչաղանը կանգ առավ բլրակի վրա: Նա գնում էր դեպի երամակը, բայց խաղը հետաքրքրեց նրան: «Շեկ ձին կհասնի Խալիմանին» վերջապես գլխի ընկավ նա և շարժելով սանձերը՝ քշեց իր ձին՝ կտրելու սուրացող նծույզների ճանապարհը:

-Քույրիկս, իմ ձեռքից չե՛ս պրծնի,- հրճվանքով գոչեց Աբիկայը: Հիմա նրա շեկ ձին գնում էր մուգ աշխետի հետ կողք-կողքի: Հետասանդման մոլեգնությամբ բռնված, Աբիկայը չնկատեց նրա վրա սրընթաց սլացող ծերուկին:

-Խալիման, ես այստեղ եմ,- գոչեց այդ պահին Ղաչաղանը:

«Ա՛յ քեզ բան», - Աբիկայը նույնիսկ իրեն կորցրեց. «Եթե կոկպարն ընկնի Ղաչաղանի ձեռքը, ապա այն անհնար կլինի խլել փորձված ծերունու ձեռքից». այդ միտքն անցավ նաև Ժանուզակի գլխով: «Պետք է օգտագործել հարմար պահը, քանի գայլը Խալիմանի մոտ է: Խլել որսը, իսկ հետո իմ շեկ սատանայի արագավազ ոտքերը հաղթանակով կպսակեն գործը»:

-Թույլ մի՛ տուր Ղաչաղանին տիրանալ գայլին,-գոռաց նա իր բարեկամին,- խլի՛ր Խալիմանից:

Աբիկայը երկու ձեռքով բռնեց գայլի առջևի թաթերից...

-Քաշի՛ր, հանի՛ր, -հրամայեց Ժանուզակը: Երիտասարդ ձիարշավորդները համոզված էին, որ ամենագլխավորը աղջկան հասնելն է: Նրանից որսը կարող են խլել առաջին իսկ ցնցահարումից: Բայց իրագործել իրենց մտադրությունը, պարզվեց, որ այնքան էլ հեշտ չէ: Խալիմանն աջ ոտքով ամուր պահել էր գազանի ետևի թաթերը, իսկ ձեռքերով, ինչպես և Աբիկայը, պինդ բռնել էր առջևի թաթերը: Առաջին իսկ ցնցումով խլել որսը նրանց չհաջողվեց:

-Գայլը տուր ի՛նձ,- գոռաց աղջկան օգնության հասած Ղաչաղանը:

-Ո՛չ, ակե,- գլուխը թափահարեց աղջիկը: Մի ջիզիթի հետ ես ինքս էլ կարող եմ հաշիվ տեսնել:

Կատաղած Աբիկայն ինչքան ուժ ունեյր գայլին ձգեց իրեն: Գազանը վնգստաց, բայց տեղից չշարժվեց:

-Կեցցե՛ս, ակամա դուրս թռավ Ժանուզակի բերանից:

Այդ վայրկյանին նա, դեռ ինքն էլ իրեն չխոստովանելով այդ, հաղթանակ ցանկացավ ոչ թե ընկերոջը, այլ Խալիմանին:

Աբիկայը փորձված ջիզիթ էր: Նա շատ անգամներ էր մասնակցել կոկայարի: Իր ձին ընդհուպ մոտեցնելով աղջկա ձիուն՝ նա ավելի հարմարին բռնեց գայլի առջևի թաթերից, քաշեց մինչև իր ձիու վզակոթը և ձին խթանեց: Ժանուգակը մի վայրկյան շունչը պահեց: Նա հասկացավ, որ Աբիկայն այն հաշվով է գործում, որ իր նժույզի ուժով գայլը խլի հակառակորդի ձեռքից: Շեկ ձին իրոք, թափով նետվեց առաջ, բայց անսպասելիորեն սայթաքեց և ամբողջ թափով իր հեծյալի հետ փովեց գետնին, օդ բարձրացնելով ձյան գնդերի մի ամբողջ շատրվան:

Ղաչաղանն ու Ժանուգակն անմիջապես ցած թռան ձիերից և վազեցին վայր ընկածին օգնության: Բարեբախտաբար, Աբիկայը միայն ճմլվածք էր ստացել:

Երբ Ղաչաղանը և ջիզիթները հասան կանգառին, գայլն արդեն պառկած էր ձյան վրա, իսկ աղջիկը չորացնում էր իր նժույզի քրտնած կողերը: Նա դեմքը դարձրեց եկողների կողմը: Նրա կառ-կարմիր երեսն այժմ շատ գեղեցիկ էր: Մազերը դուրս էին թափվել գլխաշորի տակից: Աչքերը հանդգնորեն ժպտում էին:

-Դու հաղթեցիր,- ասաց Ժանուգակը և առաջինը մեկնեց Խալիմանին իր ձեռքը:

-Շնորհակալություն,- ասաց աղջիկը: Լավ էր, որ նրա երեսն արդեն շիկնած էր:

Ծերունի Ղաչադանը և Աբիկայը պպգած, հափշտակութեամբ զբաղվեցին գայլով: Նրանք չնկատեցին, որ Խալիմանի և Ժանուգակի աչքերը փայլում էին, իսկ իրար սեղմված ձեռքերը շուտ չբաժանվեցին: Բայց գուցե և նկատեցի՞ն:



*Տուրսիւն Արտուով «Նատյուրմորտ, մրգեր-հատապտուղներ,  
բանջարեղեն, ծաղիկներ»*



*Սախի Ռոմանով «Ժողովրդական վարպետներ»*



Ն. Մուրվե «Տասի դիմանկարը»



*Ռեզաս Կոժախմետով «Արևելյան խաղաք»*



*Ելգենի Գիւլ «Պապ և թոռ»*



*Միխայիլ Այվազով*

**ՄՈՒԽՏԱՐ ԱՌԻԵՉՈՎ**

*(1897-1961 թթ.)*

## ՏԱՏՅԱՆԱՆ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ

### ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐՈՒՄ

*(հատված «Աբայ» վեպից)*

Չմեռային մի արևոտ առավոտ Աբայը նստած էր իր մեծ սենյակում, սովորական տեղում՝ ոսկրազարդ բարձր մահճակալի մոտ՝ կողք հենած սպիտակ մեծ բարձին, որը նրա մշտական ընկերն էր: Մերթ արմունկներով կոթնելով ցածր ու կլոր սեղանին, մերթ ձեռքերը հենելով ծնկներին՝ նա նստած էր անմունչ, մտորումների մեջ խորասուզված: Նրա թուխ աչքերը, որոնց խորքում հեռավոր կայծերի պես շողում էր ճշմարիտ միտքը, սևեռված էին լուսամուտից երևացող Աքշոկիի ձյունապատ բլուրներին, որոնք պայծառորեն լուսավորված էին առավոտյան արեգակի շողերով: Չյան մեջ պարուրված այդ բլուրները լի էին մի խորախորհուրդ և անասան գործությամբ:

Աբայը հիմա մի կերպ կարողացել էր ազատվել տափաստանի դատավեճերից ու դրանց հետ կապված հաճա-

խակի ուղևորությունների, և երկար ժամանակ մնում էր իր սիրելի ձմեռանոցում: Այդ տարին էլ բանաստեղծի համար ամենաբեղմնավոր տարին եղավ: Անձնատուր լինելով իր սիրած աշխատանքին, ներքին նվիրական հուզումների ու բուռն ապրումների երջանիկ ժամեր վայելելով՝ նա հաճախ էր դիտում այդ բլուրները և մտերմացել էր դրանց հետ: Մտորումների վաղորդյան ու մթնշաղի պահերին նրա թախծալից սիրտն արձագանք էր գտնում բլուրների լռության մեջ: Այդ մշտապես խստատեսիլ, մշտապես մթագնած բլուրները կարծես հավիտենապես համակված էին մի չիրականացած բաղձանքով. մառախլապատ օրերին նրանք կարոտում էին արևին, արևոտ օրերին՝ գարնանը... Հիմա կարծես թե նրանց ալեգարդ հոնքերը բացվել էին. լանջերն ի վեր մագլցել էին անասունների խայտաբղետ ու աղմկալից հոտեր. թող գոնե հովիվների երգը լսեն այդ մենավոր ու անմունչ սարերը...

Բայնագամբեթը, վաղուց նկատած լինելով Աբայի ինքնամփոփ կերպարանքը, նստել էր մի քիչ հեռու՝ առանց լռությունը խախտելու: Որևէ բան անելու համար նա վերցրել էր Աբայի մտրակը և սկսել էր կաշուց մի նոր օղակ պատրաստել դրա համար, այդ գործով զբաղվելով ողջ եռօրյակով, սոսկ երբեմն նայելով Աբայի կողմը: Աբայը հանկարծ շարժեց ձեռքը և սկսեց համաչափորեն տարուբերել օդում, անհասկանալի խոսքեր շնջալով: Նա առաջ այդպիսի սովորություն չունեի, այդ սովորությունն սկսվել էր միայն այդ ձմեռը, և Բայնագամբեթը գիտեր, որ հիմա Աբայը թուղթ ու մատիտ կուզի: Բայց այս անգամ Աբայը, ա-

բազորեն դառնալով և մոլոր ու ցրված հայացքով նայելով Բայնագամբեթին, լռելյայն ձախ ձեռքը մեկնեց դեպի սենյակի անկյունը՝ կարծես խնդրելով որևէ բան տալ իրեն: Բայնագամբեթը հասկացավ և աշխուժությամբ վեր ցատկելով տեղից, սեղանի վրա դրեց հաստափոր ու քրքրված երկու գիրքն:

Աբայը բացեց այդ գրքերից մեկը, գտավ իրեն հարկավոր էջը, արագորեն աչքի անցկացրեց և կրկին թիկն տվեց բարձին՝ իր խոհերով կլանված:

Այդ երկու գրքերը ոչ ոքի համար հասկանալի չէին աուլում և ամբողջ շրջակայքում, այդ գրքերի լեզուն թաքցնում էր դրանց պարունակած գաղտնիքները: Միայն Աբային էին հասկանալի ու թանկագին հեռավոր աշխարհի և հեռավոր ժամանակների երկու բանաստեղծների այդ գրքերը:

Պուշկին և Լերմոնտով... Այդ երկուսն էլ իրենց կյանքի ուղին անցել էին Աբայի պապենական տափաստաններից հեռու և իրենց կյանքը վերջացրել էին անհայտ հեռատաններում, որոնք օտար և անծանոթ էին ղազախներին: Սակայն այդ ձմեռվա ընթացքում երկուսն էլ խիստ հարազատ էին դարձել Աբային... Նրանք եկել էին ուրիշ աշխարհից, խոսում էին օտար լեզվով, բայց Աբային վերաբերվում էին սիրալիրությամբ, հարազատի պես: Լինելով Աբայի նմանակները դառնության ու թախճի աշխարհում և ճանաչելով նրա հոգին, նրանք Աբային կարծես ասում էին. «Դու ևս քո խոհերով մեզ նման ես»:

Երբ Աբայը մտերմացել էր նրանց հետ, այդ պահից ի վեր ստվերի մեջ էին քաշվել Մաշ-ռաբը և սուֆի Ալլայարը, նույնիսկ Ֆիզուլին: Աստվածավախ ծերունիները կամ մուլաները, երբ գործով գալիս էին Աբայի մոտ ու տեսնում, որ նա նստած է այդ հաստափոր գրքերի առաջ, գոհունակությամբ տարուբերում էին իրենց մորուքները. «Խելքի է եկել, շարիաթ է կարդում,-ասում էին նրանք իրար և սկսում էին գուշակություններ անել,-դրանք երևի դուրանում գրված աղոթքներ են... Մոլլային չի պատվիրում կարդալ, այլ ինքն է կարդում, բարեպաշտ է դարձել...»:

Բայց երբ նրանք նկատում էին, որ գիրքը ձախ կողմի վրա է բացվում, որ գրքի էջերում նկարներ կան, և երբ լավ դիտելուց հետո արաբական ոլոր-մոլոր տառերի փոխարեն տեսնում էին ռուսերեն տողերի համաչափ ու հանգիստ ընթացքը, նրանք խրտնած ետ էին քաշվում գրքից ու իսկույն նեթ լակվում: Տոհմային պարագլուխներից ոմանք Աբայի մոտից հեռանալիս հարց էին տալիս միմյանց. «Տեսնես նա ինչո՞ւ է մեխված նստել այդ ձախիկ գրության առաջ»: Մյուսները պատասխանում էին. «Նա հպարտանում է դրանով: Մի՞ թե չես զգում, որ նա ուզում է ասել, թե տեսե՞ք, ես ձեզնից ավելի մոտիկ եմ իշխանավորներին...»:

Աբայը գիտեր, որ իր համր ու խորհրդավոր բարեկամները խռովք են պատճառում շատերին, ինչպես մի չարախորհուրդ առեղծված: Սակայն այդ հանգամանքը նրան բնավ չէր մտահոգում:

Իր այդ բարեկամները մեռած էին: Բայց մի՞ թե կարելի է մահ համարել այդպիսի մահը: Լինելով հավիտենապես

անմահ՝ նրանք աշխարհին պատգամ էին տվել հիշելու իրենց անունները: Մարդուց հետո մնում է սոսկ մի գերեզմանաթումբ, որը տարիների ընթացքում հավասարվում է հողին: Ապրողների հիշողության մեջ դրա հետ միասին խավարում է վերջին խաբուսիկ գոյության հիշատակը:

Երբ հողաթումբը ջնջվում է, ապա հավիտենականությունն ընդմիշտ կլանում է մարդուն: Իսկ այդ երկու մարդիկ երկրի վրա իրենց հիշատակը հաստատել են վիթխարի և անսասան լեռների նման:

Նրանք նման են Աքշոկիի երկու գագաթներին, որոնք վեր են խոյացել տևականորեն, առհավետ...

Աբայը հոգոց հանելով մտածում էր. «Օրհնյալ է այն ժողովուրդը, որն ունի հայրենիք և լուսավորված է գիտությամբ... Որքա՞ն լավ կլիներ, եթե մեր՝ դազախներիս նախնիները ևս մեզ համար թողած լինեին գիտության և լուսավորության ոսկե գանձ...»: Այդ երկու բանաստեղծություններն Աբայի աչքին վերին աստիճանի մերձավոր էին միմյանց, հարազատ:

«Դրանք եղբայրներ են, որոնց ամբողջ կյանքը պայծառորեն շողացող, անշեջ ջահ է հաջորդ սերունդների համար, բոլոր ժողովուրդների ու բոլոր ժամանակների մտածողների համար»:

Աբայը խորին հառաչով կրկին գլուխը խոնարհեց Տասյանայի նամակի վրա: «Որպիսի ճարտար խոսքեր: Ոչ թե խոսքեր են, այլ շնչող կյանք, սրտի թրթիռ...Քնքուշ խորություն»- մտածում էր նա հիացմունքով և հանկարծ հիշեց մի ժամանակ հորինած իր բանաստեղծությունը...

*Միրահարները բառեր չեն գտնում,  
Միրո հուր լեզուն այս է միմիայն,-  
Դողում է հոնքը, աչքն է հուրհրում՝  
Պատրաստ են արդեն հարց ու պատասխան:  
Հիշում եմ, այդպես խոսում էի ես,  
Եվ հասկանալի էր ինձ խորապես.  
Հիշողությունս դավել է սակայն,  
Հիմա այդ լեզուն մոռացել եմ ես:*

Տասյանայի հուզմունքից գերված՝ նա դարձյալ խորացավ Պուշկինի տողերի մեջ: «Այդ օրերն անցել են ինձ համար,-մտածում էր նա,-բայց թեկուզ այդ օրերին ես լսե՞լ եմ նմանօրինակ ձայն...»:

Եվ այդ պահին, իր հիշողության խավարը ճեղքելով, ինչպես ասույններն են ճեղքում մթին երկնակամարը, նրա աչքի առաջ կանգնեց երկու պայծառ կերպարանք: Մեկը՝ շողշողուն պատանեկության կերպարանքն էր՝ Թոգժանը, մյուսը՝ հոգետոչոր թախիծով առլեցուն Սալթանաթը: Դեռ երեկ, երբ ինքը թարգմանում էր Տասյանայի նամակը, հիշել էր այդ երկուսին: Նրանք երկուսն էլ, Տասյանայի նման, բանականությամբ ճնշել էին սրտի ձայնը, երկուսն էլ չէին կարողացել բարձրացնել իրենց գլուխները, որոնք կաշկանդված էին գերության սանձով: Եվ շարունակ, քանի դեռ Աբայը թարգմանում էր Տասյանայի տրտմագին գեղումները, նրա սրտում խուլ կերպով հնչում էին այդ երկուսի հրաժեշտի խոսքերը: Նրանք ինքնաբերաբար տեղ էին գտնում Աբայի հորինած տողերի մեջ:

«Նրանց զգայուն սրտերը թող թափանցեն այս երգի մեջ, նրանք կըմբռնեն այս երգն իրենց սեփականի նման»- մտածում էր նա:

Այդ պատճառով էլ Աբայը որոշել էր թարգմանել Տատյանայի նամակը: Վերջին երկու օրն Աբայը Տատյանային օգնում էր խոսելու այդ աղջկանն օտար դազախերեն լեզվով: Աբայի Տատյանան հետզհետե ավելի շատ խոսքեր էր գտնում սրտառուչ, հմայիչ ու քնքշալուր եղանակի մեջ: Իր թախիծով հետզհետե ավելի վսեմ, ավելի պերճախոս էր դառնում այդ աղջիկը, որը գերել էր Աբային: Աբայն այդ նամակը, որը նրան թելադրել էր ինքն աղջիկը, համեմատում էր ռուսերեն նամակի հետ: Երբեմն այնպես զրված չէր լինում, ինչպես Պուշկինն էր գրել. Տատյանան երբեմն խոսում էր շատ սովորական բառերով: Սակայն դա նրա ակամա տուրքն էր իր նոր ունկնդիրներին... Բայց վերջիններս գոնե այդ ձևով կհասկանա ն նրան արդյոք: Աբայը մտածում էր Կոքփայի և Մուխայի մասին. գուցե նրա նք ևս չհասկանան այդ խոսքերը:

«Եվզենի Օնեգին» գրքի էջերի մեջ դրված էր նախորդ օրն ստացված մի նամակ: Բայնագամբեթը Սեմիպալատինսկից վերադառնալիս այդ նամակը բերել էր Աբային տասնյակ գրքերի հետ միասին: «Եվզենի Օնեգինի» նկատմամբ Աբայի հայտնած հիացմունքին ի պատասխան Միխայլովը գրում էր. «Վերջին տարիներին այդ վեպը վերածված է երաժշտության: Ասում են, որ այդ երաժշտությունը վայել է Պուշկինի Տատյանային և Լենսկուն. Պետերբուրգի և Մոսկվայի հասարակությունն ապրում ու շնչում է դրա-

նով: Բայց ի՞նչ արած, որ մենք բախտ չունենք լսելու այդ երաժշտությունը»-գրում էր տարագիր գերին:

Աբայը այդ նամակը վերընթերցելիս հիշեց Կոբփային և Մուխային:

«Իսկ այդ խեղճերն իրենց գեղեցիկ եղանակներով զարդարում են անմիտ ոտանավորներ,- քմծիծաղով մտածեց նա և վերցրեց կողքին դրված դոմբրան: -Ես այդ չարչիներին կտավի փոխարեն կտամ թանկագին մետաքս»:

Եվ դարձյալ Աբայի շուրթերը շշնջում են ինչ-որ խոսքեր, իսկ նրա հեզահամբույր հայացքն ավելի հաճախակի է ուղղվում դեպի Աքշոկիի գագաթները: Բայց հիմա այդ հայացքը չի տեսնում իր շրջապատը: Դա մտքի հայացքն է: Բանաստեղծի խոռվահույզ հոգու հայացքը: Մատներն արագորեն սահում են լարերի վրա: Դեռ նախորդ գիշերը՝ անկողնում պառկելիս, նա աղոտ կերպով որսացել էր հնչող ու մարող հեռավոր հնչյուններ, իսկ հիմա այդ հնչյուններն արագորեն վերակենդանացան նրա հիշողության մեջ և դյուրությամբ սկսեցին տեղավորվել նրա դոմբրայի լարերի մեջ: Այդ պատառիկները կրկնելիս նա փորձեց մեղմորեն, բայց լսելի կերպով ձայնակցել դրանց: Տակտը նման էր պուշկինյան տակտին:

Ամուսինս ես սիրեցյալ,

Աստճո կամքով տրված:

Տատյանայի ամոթխած գաղտնիքը, դեռ վեհերոտությամբ, դեռ անվստահությամբ, սկսեց հնչել դոմբրայի եղանակի մեջ:

Մի տող ևս... մեկն էլ...

Աբայը, մերթ հենվելով բարձին, մերթ շիտակ նստելով, աճապարանքով խթանում էր դոմբրան: Ջույգ լարերը մեղմորեն գեղգեղում էին՝ երբեմն սուր հնչյունով դուրս գալով արդեն շոշափված, գտնված սահմանից: Թանկ նստեցին վերջին երկու տողերը, բայց դրանք ևս վերջիվերջո ներդաշնակվեցին լարերի եղանակի հետ:

Աբայն իր գտած եղանակով անընդհատ երգում էր Տատյանայի նամակի երեք տունը: Գոհունակությամբ ժպտալով՝ նա շրթունքներից նետեց նասիֆայը և մի պտղունց նոր ծխախոտ վերցրեց: Նա մերթ բարձրաձայն, մերթ կամացուկ կենդանացնում էր լարերին: Կարծես վերհիշել էր...

Հանկարծ նա իր ամբողջ լիքը մարմնով ընդոստ դարձավ դեպի Բայնագամբեթը: Նրա աչքերն այս անգամ շողում էին զվարթությամբ ու ոգևորությամբ, բայց խսկույն ներթ մեղմորեն մարեցին:

-Է, ի՞նչ ես այստեղ նստել: Մի բան հասկացա՞ր, թե չէ, հարցրեց Աբայը:

Ջիգիթը, Աբայի անակնկալ հարցումից շփոթված, ցույց տվեց իր ձեռքի մտրակը:

-Սա եմ սարքում, Աբայ աղա:

-Իսկ ես ի՞նչ եմ անում, գլխի չընկա՞ր:

-Կարծեմ վերհիշում եք մի ինչ-որ ոռուսական երգ...

-Այ թե ի՞նչ... Էհ, դա էլ լավ է,- ծիծաղելով ասաց Աբայը: Գնա մի Կիշկենե մոլլային կանչիր...:

Եվ իր նոր հորինած եղանակը չմոռանալու համար Աբայը դարձյալ սկսեց նվագել: Բայց հենց որ Բայնագամբե-

թը դուռը բաց արեց, Աբայը տեսավ Այգերիմին, իսկ նրա ետևից՝ եկվոր մարդկանց: Նրանց ձեռքում մտրակներ կային, երեսները ցրտից կարմրել էին: Եկվորները հագած ունեին քուրքեր, չեքմեններ, բամբակած արխալուղներ, նրանցից երկուսի գդակները վեցշերտանի էին, նեղագագաթ. դրանք Ուսակ ցեղի գլխարկներ էին: Աբայը, որ դեռ շարունակում էր լարերը կնդնդացնել, հոնքերը խոժոռեց, ասելով.

-Թո՛ւ, ինչ վատ ցուրտ փչեց...

Այգերիմը զարմացավ.

-Ի՞նչ ցուրտ, Աբա՛յ, դրսում յուղն էլ չի սառչում:

-Ինձ թվաց, թե ցուրտ եկավ, բայց պարզվում է, որ եկողները մարդիկ են,- պատասխանեց Աբայը և ողջունեց ներս մտնողներին:

Այգերիմն այդ խոսքերը համարեց Աբայի այն վարմունքներից մեկը, որոնք իրեն անհասկանալի էին վերջին ժամանակներս, և առանց պատասխան տալու անցավ մյուս սենյակը: Այդտեղից դուրս եկավ Կիշկենե մոլլան, Աբայն անմիջապես նայեց նրան:

-Մոլլա աքե, դուք արտագրեցի՞ք Տատյանայի նամակը: Նա վերջապես սիրտ արեց երգելու...:

-Լավ է արել... նամակն արտագրված է:

-Գրեցե՛ք Կոքփային և Մուխային: Ասե՛ք, որ Տատյանան ողջույն է հղում նրանց և ուզում է, որ նրանք ծանոթանան իր հետ... Մուհամեջանը քաղաք է գնում, թող նրա ողջույնը տանի նրանց...:

Եկվորները չհասկացան, թե խոսքն ինչի մասին է, բայց երևում էր, որ դա ամեննին չէր հետաքրքրում նրանց: Աբայի խոսքերը ուշադրությամբ լսում էր միայն Մուհամեջանը՝ մի ջահել, կարմրադեմ, գորշաչյա ջիզիթ, որ նստած էր Աբայի կողքին:

Մուհամեջանն իրոք քաղաք էր գնալու: Մուխայի և Կոքփայի նման նա ևս այդ շրջանի լավագույն երգիչներից մեկն էր, բացի դրանից, նա ինքն ևս երբեմն ոտանավորներ էր հորինում: Նա անհամբերությամբ հարցրեց.

-Այդ ո՞վ է սիրտ արել երգելու, Աբայ աղա:

Աբայը պատասխանի փոխարեն վերցրեց դոմբրան և սկսեց երգել «Տաստյանայի նամակի» երեք տունը, բայց նրա հետ խոսակցության չբռնվեց, մի կողմ դրեց դոմբրան և սկսեց հարցուփորձ անել եկվորներին:

Մուհամեջանը, միանգամից շքմբռնելով եղանակը, ուշադրություն դարձրեց այդ նոր երգի խոսքերին: Շրջակայքի ամբողջ երիտասարդության մեջ Մուհամեջանը այն սակավաթիվ ջիզիթներից մեկն էր, որոնք բոլորից առաջ էին իմանում և անգիր անում Աբայի նոր բանաստեղծություններն ու երգերը: Բայց այդ երգը նա դեռ չգիտեր և դեռ ոչ մի տեղ չէր լսել: Ըստ երևույթին այդ երգը չգիտեին նաև ո՛չ Կոքփայը, ո՛չ Մուխան. Մուհամեջանը գլխի ընկավ, որ Աբայը հանձնարարում է իրեն այդ նոր երգը սովորել և հասցնել նրանց:

Թեև Մուհամեջանն Աբայի մերձավոր ազգականն էր, բայց նրանից շատ ջահել լինելով՝ չհամարձակվեց խնդրել, որ Աբայը կրկին երգի այդ երգը: Բացի դրանից՝ նա լավ գի-

տեր, որ Աբայը չի սիրում, որ իր զահլան տանեն: Ուստի որոշելով մնալ Աքշոկիում ճաշելու՝ նա իսկույն գնաց Կիշկենե մոլլայի մոտ, որպեսզի նրանից արտագրի Աբայի նոր քանաստեղծությունը:

Աբայն արդեն զբաղված էր եկվորներով:

Երբ Աբայը նրանց սովորական հարցուփորձ էր անում առողջության և աուլների դրության մասին, նրան սաստիկ զարմանք պատճառեց մի հանգամանք, որ նա նոր նկատեց միայն: Նա հիշեց, որ այդ ձմռանն իրենց տանը նա տեսել է այդ երկու ուակներին և այդ նույն Կոշկեին՝ նույնպիսի հագուստներով, բառացիորեն դեմքի նույնպիսի արտահայտությամբ: Եվ Կոշկե տոհմին պատկանող այդ ձիագող Թուրսունը նստած էր նույնպիսի համեստությամբ և լուռ ու մունջ, կարծես նիրհում էր գլխահակ: Իսկ Ուակ տոհմին պատկանող այդ գանգատավոր Սարսեկեն, ցածրահասակ ու տռուզ, այդ ժամանակ ևս հեռում էր՝ նստած այսպես փոված-չոված, և հիմիկվա պես Թուրսունից պահանջում էր վերադարձնել գողացած անասունները: Բայց չէ՞ որ այն ժամանակ նա հատուցում էր ստացել իր ձիերի փոխարեն...

Այս արագահոս, այս հարափոփոխ կյանքում ինչո՞ւ տարբեր տոհմերի պատկանող այդ մարդկանց վիճակված է անփոփոխ մնալ այդպես տաղտկալիորեն ու գորշությամբ: Այդ երկու պատկերներից ո՞րն է երազը: Այն ժամանակվա՞նը, թե՞ հիմիկվանը... Այդ մարդկանց նայելիս կարելի էր կարծել, թե ժամանակը չի անցել, այլ կանգ է առել...:

Աբայի մտքերն այսպես երկատվում էին, երբ նա լսում էր Մարսեկեի խոսքերը: Վերջինիս ձայնը միապաղաղ էր, սանդ ծեծելու նման: Վերջապես Աբայը լսեց մի նոր բան.

-Ահա թե ինչ է մտածել այս գողը, Աբայ աղա. «Այն ժամանակի դու ինձ չթողեցիր մարսել քո անասունները: Բերեցիր Աբայի մոտ և ինձ ստիպեցիր կերածս ետ տալ: Հլա սպասիր, տես թե ոնց տեղը կհանեն»- ահա թե նա ինչ է մտածել: Եվ կարծել է, որ եթե ինքն ուակից էլի բան գողանա, ապա ոչինչ չի լինի, հիմա ջգրու է գողացել... Այն ժամանակ փախցրել էր երեք ձի, իսկ հիմա տարել է հինգը միանգամից...: Բա սա ոխական գողի արարք չէ՞, Աբայ աղա:

Աբայը հիմա հասկացավ այդ նոր դատավեճը: Նա ուզում էր ճշմարտությունը կռահել ձիագողի դեմքի արտահայտությունից, բայց վերջինս նստած էր գլխիկոր, երկարամազ ու շեկ գլխակի ականջակալներն ամուր կապած, որի տակից երևում էին միայն հաստ քթի ծայրը և ցանցառ ու սև մորուքի մի մասը: Աչքի տակով հետևելով Աբայի ամեն մի շարժումին, նա լուռ և անշարժ էր, քարե արձանի նման:

Թուրսունը դեռ ամենևին չէր խառնվել Մարսեկեի սկսած վեճին, ծայտուն անգամ չէր հանել, այլ սոսկ լսում էր, որպես կողմնակի խոսակցություն, իր ամբողջ կերպարանքով ցույց տալով, որ իրեն խոսել կարող է ստիպել միայն Աբայը, իսկ Մարսեկեն երբեք չի կարողանա նրան տեղից շարժել: Արդյոք նա դրանով ուզում էր հարգանքը

ցույց տալ Աբային, որպես մեծ բիյի, թե պարզապես ուզում էր անխոցելի մնալ գանգատավորի համար:

Աբայը որոշեց նայել նրա դեմքին և խստությամբ գոչեց.  
-Է, իսկ դո՞ւ ինչ կասես:

Շեկ գլխարկը դանդաղորեն դարձավ դեպի ձայնը, և կամակոր դեմքը միայն հիմա նայեց Աբային: Ամրակազմ, ամբողջովին քառակուսի Թուրսունն իր փոքր ու գորշ աչքերով մի նայվածք նետեց Աբայի վրա և կրկին գլուխը կախեց: Իր հաստ կոպերով ու կախ ընկած այտերով, իր դեմքով ու ամբողջ մարմնով նա նման էր մի իսկական ոստաշատ կոճղի: Վերջապես խախտելով լռությունը, նա օրորվեց տեղում և սկսեց խոսել.

-Աբա՛յ աղա՛, հենց այս Սարսեկեն քո հրամանով վերջերս ինձնից խլեց ամեն ինչ: Այն ժամանակ դու պատվիրեցիր հատուցում տալ, և ես կատարեցի, հնազանդվեցի: Իսկ հիմա, երբ նորից կորել են ուսկների անասունները, էլի ե՛ս,- արդար լինեմ, թե մեղավոր, պետք է հատուցում տա՞մ, ինչ է:

«Դարձյալ անվերջ հակաճառություններ,- սրտնեղությամբ սկսեց մտածել Աբայը: - Ո՞րն է ճիշտը, որը՝ սուտը: Վերջ չպիտի՞ լինի այս դատավեճերին և վիճողներին: Կրկին հնարավոր է կեղտ փորփրել: Հոգիդ դուրս է գալիս, մինչև կարողանում ես ճշմարտությունը դուրս կորզել համառ կողմերից...Դարձյալ իր ուշադրությունը շեղեցին...Ո՞ւր մնացին Պուշկինի և Տատյանայի զգացումների քնքշությունը: Ո՞ւր է Տատյանայի արդարախոհ սրտից բխող վճիտ ճշմարտությունը... Գանգատավորը վազում է

իր կորցրած անասունների ետևից: Համառ է գողը, որը խժոռում է ուրիշների վաստակը: Անհուն է խճճված կյանքի պղտորությունը... Ո՞ւր է քո ձայնը, Տատյանա...»:

Աբայը վերցրեց դոմբրան՝ փորձելով վերհիշել եղանակը:

Երկլար դոմբրան դեռ քիչ առաջ խոսուն էր և հնազանդ, իսկ հիմա նման է կաշկանդված ձիու: Հնչյունները ցաք ու ցրիվ են: Չկա նոր հորինված երգը: Մոռացված է... Սարսեկեի պատասխանը լսելիս Աբայը երկլար ժամանակ որոնում էր այդ եղանակը: Բայց կարծես եղանակն այլևս վերադարձ չուներ, խույս էր տալիս... Աբայը մի կողմ դրեց դոմբրան:

Սարսեկեն դառնությամբ ասում էր.

-Դու ես նորից գողացել իմ անասունները, Թուրսո՛ւն էլի դու ես: Գողացել ես՝ ոխից դրդված, վրեժ առնելու համար, որովհետև ես եկա իմ անասունների ետևից և գտա քեզ մոտ:

-Կույրը մի անգամ ձեռքն ընկածը այլևս բաց չի թողնի, պատասխանում էր Թուրսունը: - Ի՞նչ է, տափաստանում ինձնից բացի ուրիշ մարդիկ չկա՞ն, և քո անասուններից զատ էլ անասուններ չկա՞ն: Ոչ միայն այդ հինգշաբթի, այլ ողջ ամիսը ես սկի մի անգամ ձի նստե՞լ եմ որ...

Նրանք հիմա վիճում էին բարձր ձայնով, միմյանց արագորեն ընդմիջելով: Աբայը նրանց խոսակցությունը լսում էր լռելյայն, ցավագնորեն դեմքը խոժոռելով, ապա հոնքերը կնճռելով՝ ասաց.

-Լավ կանեիք, եթե ձեր գործի քննության համար գնա-  
լիք մի ուրիշի մոտ...Լավ կանեիք՝ խնդրեիք Աքիլբային.  
Նա ձեր հարևանն է, ավելի դյուրությամբ կհմանար ճշմար-  
տությունը...:

Բայց ոչ Թուրսունը, ոչ Սարսեկեն դրան համաձայն  
չէին:

«Հա՞ թե չէ: Մաքո՞ւր ենք, թե՞ կեղտոտ,- քո որոշումը բա-  
վական է մեզ համար»-պնդում էին նրանք:

Աբայը, այդ տեսնելով, խիստ և բարձր ձայնով դիմեց  
Թուրսունին.

-Ճիշտն ասա, մեռնես էլ՝ ասա, դու նրա անասունները  
տարե՞լ ես, թե չէ:

Աբայն իր գայրագին հայացքը սևեռեց Թուրսունի վրա:  
Բայց վերջինս չշփոթվեց և անմիջապես պատասխանեց.

- Աբայ աղա, ես երդում եմ արել, որ քո առաջ կմեռնեմ,  
միայն թե ճիշտ կխոսեմ: Շատ էլ ես գող եմ, բայց գողն էլ  
պատիվ ունի: Ահա իմ ճշմարիտ խոսքը՝ այս անգամ ես մե-  
ղավոր չեմ,- ասաց նա հատիկ-հատիկ և դրա հետ միաժա-  
մանակ կտրուկ շարժումով ետ գցեց գլխարկը, դեմքը բաց  
արեց ու շեշտակի նայեց Աբային:

Աբայը երկար ժամանակ իր հայացքը հառել էր նրա  
վրա՝ մտածելով. «Թեկուզ և գող է, բայց այս դեմքն անկեղծ  
դեմք է»: Թուրսունի համոզիչ արտահայտությունն Աբային  
տատանեց:

Աբայը որոշեց.

-Այո՛, նա ճիշտ է ասում: Քո անասունները նրա մոտ չեն,  
Սարսեկե՛: Փնտրիիր ուրիշի մոտ:

Թուրսունն իր գլխարկը շտկեց: Ոչ նա, ոչ Սարսեկեն այլևս ոչ մի խոսք չասացին: Սարսեկեն գլուխը կախեց: Աբայն ասաց երկուսին:

-Է՛հ, ձեր դատավեճը վերջացած է: Կուտեք և կիսեք հյուրերի սենյակում, ձեզ հիմա կառաջնորդեն այնտեղ...

Աբայը կրկին վերցրեց դոմբրան և խոնարհվեց Տառյանայի նամակի վրա:

Սարսեկեն և Թուրսունը միասին վեր կացան: Թուրսունը, որը ներս գալիս ճանապարհը զիջել էր Սարսեկեին՝ որպես հեռավոր տոհմի պատկանող մարդու, հիմա ևս՝ դուրս գնալիս, դռան մոտ ճանապարհը զիջեց նրան: Հյուրերի սենյակը գնալիս նրանք պետք է անցնեին մութ միջանցքով: Այդտեղով անցնելիս Թուրսունն անշուշտ ծիծաղեց: Նա կարողանում էր այդպես աննկատելի ձևով ծիծաղել: Թուրսունը շատ գոհ էր իրենից:

Հիրավի, նա կարողացել էր շատ ճարպիկ բան անել: Աշնանը, երբ նա փախցրել էր այդ ուսկների երեք ձին և, ծուլանալով հեռու տեղ քշելու, մորթել էր իրենց տանը, գանգատավորները գտել էին հետքը և նրան քարշ էին տվել Աբայի մոտ: Այդ ժամանակ՝ դեռ գործի քննության սկզբում, նա հղացել էր իր սեփական ծրագիրը, և երբ Աբայը նրան հարցրել էր՝ «Ձիերը տարե՞լ ես, թե չե, միայն ճիշտն ասա»- նա իսկույն պատասխանել էր.«Տարել եմ, վճիռդ տուր, ես մեղավոր եմ»: Աբայը դեռ երբեք չէր տեսել հանցանքն այդպես անկեղծորեն խոստովանող գող և ասել էր.

-Այնպես համարեցեք, որ նա ինձ մեծ կաշառք է տվել: Այդ կաշառքը նրա ճշմարտությունն է... Թող տարած ձիերի արժեքը վերադարձնի ուակներին, և դրանով գործը վերջացրեք...

Թուրսունն այդ բոլորը լավ ծանր ու թեթև էր արել և, երկու ամիս սպասելուց հետո, նույն Սարսեկեից փախցրել էր հինգ ձի և նույն գիշերը ճարակությանբ տակովն էր արել: Նրա ասպատակությունը ոչ ոք չէր տեսել. մութ գիշեր էր և բուք, որը և ջնջել էր բոլոր հետքերը: Սարսեկեն այս անգամ կարող էր լոկ կասկածել, բայց չուներ ասպացույցներ կամ վկաներ:

Եվ Թուրսունը: Այդ բոլորը լավ կշռադատելուց հետո, Աբայի մոտ էր եկել այն հաստատ որոշմամբ, որ այս անգամ ժխտի ամեն մեղադրանք, թեկուզ և գլուխը կորցնի:

Թուրսունի հաշիվներն արդարացան: Նա խաղը շահել էր ոչ միայն Սարսեկեից, այլև Աբայից: Եվ հիմա մութ միջանցքում նա ծիծաղում էր անշշուկ:

Աբայը մենակ մնալուց դարձյալ սկսեց որոնել Տատյանայի երգը՝ զարկելով դոբրայի լարերին, բայց եղանակը խույս էր տվել: Այդ պահին սենյակ մտան Կիշկենե մոլլան, Մուհամեջանը և, նրանց առջևից հայտնի խաղացող Կորփեբայը մի ձեռքում բռնած թոզիզ-կումալակի (Աբայի սիրած խաղի) քարերով լցված կաշետոպրակը, իսկ մյուսում՝ խաղատախտակը:

Աբայը, ձմեռվա ընթացքում երկար ժամանակ տանը նստած մնալով, իր մոտ էր հրավիրում կումալակ խաղացող այնպիսի մարդկանց, ինչպիսիք էին Իսմագուլը, Մար-

կաբայր կամ Կորփեբայր, որոնց իր մտտ հյուր էր պահում շաբաթներով: Ինքն Աբայր նույնպես լավագույն խաղացողներից մեկն էր համարվում շրջանում:

Չորս օր էր, ինչ Կորփեբայր հյուր էր այդ աուլում և ոչ մի անգամ խաղը չէր տարվել Աբային: Նրանք խաղում էին հափշտակությամբ, առավոտյան թեյից սկսած մինչև ճաշ: Նախորդ օրն Աբայն ամբողջ երեկո նստել էր կարդալու և աշխատելու. այդպիսով խաղն ընդհատվել էր:

Աբայը, տեսնելով թոզիզ- կոնսալակը ձեռքին բռնած Կորփեբային, հասկացավ, որ իրեն այլևս պարապելու հնարավորություն չեն տա, և փակեց Պուշկինի գիրքը:

-Դե, շարիր տեսնեմ քարերը, վրեժս մի առնեմ քեզ-նից...,-ասաց Աբայը:

Դեղին ոսկորից պատրաստված փայլուն գնդիկները համաչափ շխկոցով միմյանց ետևից թափվեցին խաղատախտակի փոսիկների մեջ: Կորփեբայի աջ ձեռքն սկսեց սահել տախտակի վրա. նրա մատները գործում էին զարմանալի արագությամբ: Դժվար էր ըմբռնել, թե ինչպես այդ մատները կարողանում են գնդիկների ամբողջ կույտից անսխալ կերպով բաժանել իննական գնդիկ:

Ախոյանները խաղն սկսեցին: Առաջին սովորական երեք-չորս քայլը նրանք կատարեցին արագորեն և միմյանցից տարան գնդիկների մի փոքր շեղջ: Նրանք դեռ չէին հասել իրարից թուզողուկներ<sup>33</sup> գրավելուն: Մուհամեջանը, Կիշկենե մոլլան և Բայնագամբեթը դիտում էին խաղը:

---

<sup>33</sup> Թուզողուկ-հակառակորդից գրավված փոսիկ, որի մեջ եղած բոլոր գնդիկները բաժին են ընկնում փոսիկը գրավողին:

Մուհամեջանն արդեն արտագրել էր Տատյանայի ամբողջ նամակը և ստուգել էր Կիշկենե մոլլայի հետ, որն անգիր գիտեր այդ նամակը: Մուհամեջանն Աբայի ձեռագիրը ծալել ու դրել էր գրպանը: Աբայը սովորաբար ետ չէր պահանջում իր սևագրերը, եթե դրանք արտագրված և անգիր արված էին լինում, ուստի և Կոքփայը, Մուխան, երբեմն նաև Մուհամեջանն այդ ձեռագրերը վերցնում էին իրենց:

Մուհամեջանն առիթի էր սպասում, որպեսզի կրկին լսի Տատյանայի նամակը: Բայց Աբայը, խաղով տարված լինելով, չէր էլ մտածում այդ մասին: Երգիչը, տեսնելով այդ բանը, գրպանից հանեց իր գրածը, փոեց ծունկերի վրա և սկսեց սերտել առաջին տողերը:

Տատյանայի զեղումների արտասուվոր լեզուն զարմացրեց նրան: Նա դեռ երբեք Աբայի մոտ այդպիսի բանաստեղծություն չէր տեսել: «Այ, սա նորություն է», - մտածում էր Մուհամեջանը, ձեռագրի վրա խոնարհված:

Աբայը լուր ու մունջ նստած էր, կարծես մոռացած լինելով Տատյանային, և ամբողջովին տարվել էր Կորփեբայի հետ տեղի ունեցող պայքարով: Մուհամեջանն արդեն կարողացավ անգիր անել առաջին տները: Նա վերցրեց դուրբրան և, կամացուկ կնդնդացնելով լարերը, փորձեց երգել իր համար. «Գրում եմ ձեզ, էլ ի՞նչ ասեմ»: Նա տնտղում էր իրեն ծանոթ բոլոր դազախական երգերի եղանակները, բայց այդ խոսքերին չէր հարմարվում դրանցից ոչ մեկը, ոչ նշանավոր «Աք-Կայինը», ոչ էլ «Թոփայ-կոկը»: Նամակը չէր երգվում: Նա սրտնեղությամբ նայեց Բայնազամբերին: Վերջինս գիտենալով, թե ինչ է ուզում Մուհամեջանը, որո-

շեց զգուշությամբ Աբայի ուշադրությունը հեռացնել խաղից:

-Հը՛, Թաթյանան չի՞ ուզում ծանոթ լինել «Աք-Կայինի» հետ,- հարցրեց նա ջահել երգչին:

-Ոչ միայն «Աք-Կայինի», այլև չի ուզում երգել ոչ մի ծանոթ եղանակ:

-Թերևս բայիթը կամ Ժիրը<sup>34</sup> ավելի հարմար գան՛, - ասաց Բայնագամբեթը, աչքի տակով նայելով Աբային:

Աբայը միայն հիմա ուշադրություն դարձրեց նրանց վրա.

- Այդպե՞ս եք կարծում,- ասաց նա:- Տատյանան ըստ երևույթին կմնա Տատյանա: նա Աք-Բալա<sup>35</sup> չէ: Նա երգի համար չի գնա ոչ Բաղդաստ, ոչ Կահիրե...:

Աբայն աշխուժորեն առաջ շարժվեց դեպի խաղատախտակ, սկսելով արագորեն վերադասավորել գնդիկները, և վերջին քարով հարվածեց հակառակորդի միջին փոսիկին: Նա զվարթորեն սկսեց ծիծաղել, երերվելով ամբողջ մարմնով: Հանկարծակիի եկած Կորփեբայը հոնքերը խոժոռեց: Կիշկենն մոլլան, որը հետևում էր խաղին, բացականչեց.

-Հիանալի է: Թուզդուկը շատ հաջող է,- և սկսեց ծիծաղել Աբայի հետ:

Արդարև, երկար հաշվարկումներից հետո Աբայը կարողացել էր վարպետից գրավել մի շատ զգայուն թուզդուկ, և

---

<sup>34</sup> Բայիթ-ռեչիտատիվային եղանակ ունեցող բանաստեղծություն:

Ժիր - նույնպես ռեչիտատիվային ձև ունեցող չափածո պատմվածք:

<sup>35</sup> Աք-Բալա՝ մի տաղամրցման հերոսուհի:

նրա տրամադրությունը փոխվեց: Տեսնելով, թե ջիզիթներն ինչ են ուզում իրենից, նա ասաց.

-Է, հետո՞, Մուհամեջան: Տասյանան հիմա չի՞ ուզում իր երգը երգել: Նա երևի մտածում է, թե «թող իմ փոխարեն երգի Մուհամեջանը, ես հո չե՞մ կարող բոլոր դազախների համար երգել, նրանց թիվը շատ-շատ է»:

Եվ Աբայը ձեռքը մեկնեց դոմբրային: Մուհամեջանը անհամբերությամբ համակված, հայացքը զամեց իր գրածի վրա:

Աբայն սկսեց նվագել: Առավոտվա եղանակը, որ համարյա մոռացված էր, անմիջապես սկսեց հնչել որոշակիորեն ու ճշտությամբ:

-Ո՛չ, բանից երևում է, որ Տասյանան նորից երգում է, ասաց Աբայը նվագի միջից:

-Հապա լսեցե՞ք, թե ինչ է ասում նա:

Աբայն սկսեց երգել: Մենյակի դուռը բացվեց, և ներս մտավ Այգերիմը: Նա նստեց Աբայի կողքին՝ ունկնդրելով նրա երգին: Երկրորդ տունը երգելիս Մուհամեջանն սկսեց կամացուկ ձայնակցել Աբային: Բայց այդ պահին Կորփեբայը, իր գնդիկներով շրջանցելով Աբայի փոսիկների հետին շարքերը, իր վերջին գնդիկը շրխկոցով զցեց Աբայի վերին փոսիկներից երկրորդի մեջ: Կորփեբայը գրավել էր ամենակարևոր թուզուկը՝ «գերված պարանոցի թուզուկը»:

Աբայը երգն ընդհատեց, բացականչելով.

-Վա՛յ, տեսեք, թե ինչ արեց նա...:

Աբայը դոմբրան սովեց Մուհամեջանին և գլուխը խոնարհեց կոմալակների վրա: Մուհամեջանը վրդովմունքով շշուշաց՝ երեսը դարձնելով Այգերիմի կողմը.

-Ամեն բան փչացրեց այդ քոսոտ Կորփեբայը:

-Իսկ ի՞նչ է արել նա, սիրելիս,- հարցրեց Այգերիմը և նույնպես սկսեց դիտել խաղը:

-Ես ճամփից ետ եմ ընկել, որպեսզի սովորեմ Աբայ աղայի նոր երգը: Իսկ հիմա՝ այդպիսի թուզդուկ կորցնելուց հետո, նա այլևս ուշադրություն կդարձնի՞ մեզ վրա:

Բայնագամբեթը կարեկցաբար օրորեց գլուխը: Այգերիմը դարձավ դեպի Մուհամեջանը.

-Համենայն դեպս փորձիր երգել: Քո ձայնը վաղուց չենք լսել:

Ախր ես միայն մեկ անգամ լսելով չեմ կարող հիշել եղանակը,- ասաց նա և փորձեց դոմբրայով դուրս բերել եղանակը: Աբայն իր հերթական քայլն անելուց հետո ձեռքը մեկնեց դեպի Մուհամեջանը, վերցնելով դոմբրան:

-Չէ, սխալ ես սկսում,- ասաց նա և մի քանի անգամ կրկնեց եղանակը: Եվ երբ նա դոմբրան հանձնեց Մուհամեջանին, վերջինս սկսեց արդեն վստահորեն նվագել:

-Շիբ՛, ըստ երևույթին Տատյանան ծանոթացավ Մուհամեջանի հետ,- ասաց Աբայը:- Որ այդպես է՝ շարունակիր երգել:

Մուհամեջանը, այդ խոսքերից ոգևորված, սկսեց երգել իր բարձր ու հստակ ձայնով: Աչքի ծայրով նայելով իր արտագրածին, նա հիմա սկզբից երգում էր Տատյանայի ամբողջ նամակը:

Խաղը մոռացության տրվեց:

Աբայը՝ գունատ դեմքով, արձանացել էր տեղում՝ հայացքը հառած Աքշոկիի գագաթներին: Նա հիշում էր Պուշկինին, որին քիչ առաջ համեմատել էր այդ սարերի հետ, և ունկնդրում էր մի տեսակ խոնարհված դիրքով, ցնծության սարսուտ զգալով: Իր խոսքերը և իր հորինած եղանակը հիմա, ջահել, հմուտ և գեղադեմ երգչի երգեցողությամբ, շատ խոր էին հուզում Աբային:

Տատյանայի տրտմագին խոսքերի մեջ Աբայի ականջին կրկին հնչում էր Թոգժանի և Սալթանաթի ճակատագրի թախիծը, որոնց հիշատակը չէր մոռանում Աբայը երբևիցե: Բայց հիմա նրանց ճակատագրի հետ միահյուսվում էր նաև Այգերիմի ճակատագիրը՝ իր ամենամերձավոր բարեկամի, որն այդպես երես էր դարձրել Աբայից... Թվում էր, թե վշտի ու կշտամբանքի այդ հրաշալի երգի մեջ Այգերիմը ևս գտել է իր լեզուն... Հիմա, երբ Աբայը լսում էր այդ բանաստեղծությունը, վերջինիս անհուն ճշմարտությունը բացահայտվում էր նրա առաջ իր ամբողջ ուժգնությամբ: Ռուս աղջիկ Տատյանան դազախ աղջիկների հետ միասին տոգորված էր միևնույն թախիծով: Իրենց լեզուներով, իրենց սովորույթներով, իրենց ժողովուրդների պատմությամբ միմյանցից այդքան հեռու լինելով հանդերձ՝ նրանք իրար մերձավոր էին իրենց խոհերով, իրենց ճակատագրով, իրենց բուռն զգացումներով... Դրանք միևնույն մարդկության դուստրերն են... Ահա թե երգիչն ինչպիսի ճշմարտությունների կարող է հաղորդակից դարձնել դազախ երիտասարդությանը...:

Այս միտքն Աբայի հոգին պայծառացրեց մի առանձին բերկրալից զգացումով: Շրջապատը մոռացած, միայն երգին ունկնդրելով՝ նա կլանված էր այնպիսի զգացումներով ու խոհերով, որոնք նրան շատ հեռու էին տանում: Բոլոր ներկա գտնվողները, նկատելով Աբայի հուզմունքը, իրենք ևս արձանացել էին հիացմունքի մեջ՝ այք չհետացնելով երգչից: Երգը դազախական չէր, բայց դրա թախիծը հասկանալի էր ամենքին: Այդ երգը ծփում էր մեղմ ու հանդարտ սլիքների նման:

Մուհամեջանը երկար ժամանակ երգում էր, որպեսզի հիշողության մեջ լավ պահի այդքան դժվարությամբ սովորած եղանակը: Նրան նվաճել էր այդ զգացումների գերող ու հմայիչ ուժգնությունը: Նա առաջին անգամն էր ճանաչում Տատյանային, բայց իր երգով ըմբռնել էր նրա հոգին:

Երգն ավարտելուց հետո Մուհամեջանը չդիմացավ և ասաց.

-Ի՞նչ ուժգին և հմայիչ սեր... Իսկ ո՞վ է այսպիսի խոսքեր տվել Թաթյանային:

Այդ հարցը հետաքրքրում էր նաև մյուսներին, ամենքն սպասում էին Աբայի բացատրությանը, բայց այդ պահին մեջ ընկավ գրուցասեր Կիշկենն մոլլան.

-Նրա համար այդ խոսքերը գրել է Ֆոշկինը,- ասաց նա:

Մուհամեջանը վրդովմունքով ընդմիջեց նրան:

-Մուս կացեք, մոլլա,Ֆոշկի՞ն: Անունն էլ ճիշտ չէք ասում:

-Ո՛նց թե, ես ճիշտ եմ ասում:

- Որքան գիտեմ՝ Աբայ աղան նրան անվանում էր Փռչկին... Ինչպե՞ս է նրա ճիշտ անունը, Աբայ աղա:

Աբայը նրանց պատմեց Պուշկինի կյանքն ու մահը և կրկին վերադարձավ Տատյանայի նամակին: Աչքի անցկացնելով Մուհամեջանի արտագրածը և մտախոհությամբ ուղղելով առանձին տեղեր, նա ասաց.

-Այո, նա կարողացել է լեզու տալ այդ սրտին... Ճիշտն ասած՝ դուք՝ դագախի զավակներդ, չեք տեսել այդպիսի ակին, դեռ չի տեսել նաև ամբողջ մուսուլմանական աշխարհը...

-Խե՛ղճ աղջիկ, իսկապես լավ է երգել իր դարդը,- ասաց Բայմագամբեթը:

Կորփեբայն ուզում էր դարձյալ խոնարհվել խաղատախտակի վրա, բայց Մուհամեջանը կարծես պատահաբար ծնկով մի կողմ հրեց տախտակը և դիմեց Աբային.

-Բայց մի՞ թե արդար բան է, Աբա՛յ աղա, անպատասխան թողնել Թաթյանայի այդ խոստովանությունը: Լավ չի՞ լինի, որ ջիգիթը պատասխանի նրան:

Բայմագամբեթը միացավ նրա կարծիքին, Աբայը մտախոհությամբ պատասխանեց.

-Դուք թերևս իրավացի եք,- Ըստ երևույթին պետք է ունկնդրել նաև Օնեգինին,- և մի պահ լռելուց հետո քմծիծաղով ավելացրեց.

-Բայց ինչպե՞ս վարվենք նրա հետ... Ախր նա անարժան է:, Հը՞...

Եվ նա Պուշկինի գիրքը քաշեց իր առաջ:

Աբայի մոտ ճաշելուց հետո Սուհամեջանը նուն օրը մեկնեց Սեմիպալատինսկ:

Աբայն ամբողջ երեկոն զբաղվեց Պուշկինով: Այդ օրն առաջին օրն էր, որ Աբայը հարկ եղածի պես մտերմացավ Պուշկինի հետ: Նա հիմա Պուշկինի երկերը կարդում էր ոչ թե ընթերցողի աչքով, այլ բանաստեղծի իր ողջ սրտով: Գիրքը փակելուց հետո Աբայը լսելի ձայնով ասաց.

-Դու իմ աչքերը բաց արեցիր աշխարհը տեսնելու համար, թանկագին Եվգենի Պետրովիչ... Հիմա իմ Կաաբբան տեղափոխվում է, և արևմուտքը դառնում է արևելք, իսկ արևելքն արևմուտք է դարձել ինձ համար...Եվ թող այդպես լինի:

Ընթրիքից հետո տնեցիները չցրվեցին և սովորականի պես սպասում էին Աբայի պատմություններին: Այդ ամբողջ երեկոն հարազատ ընտանիքի հետ ամենևին կապ չունեցող խոհերով անցկացնելուց հետո Աբայը, հիմա իր կողքին տեսնելով Այգերիմին ու բարեկամներին և մանավանդ սիրելի հեքիաթասաց Բայնազամբեթին, որոշեց որևէ բան պատմել նրանց համար:

Եվ մինչև ուշ գիշեր Աբայը նրանց պատմում էր «Երեք հրացանակիրներ» վեպը, որ ինքը կարդացել էր նորերս:

Սեմիպալատինսկի արևմտյան ծայրամասում՝ մանրավաճառ Թանժարիկի տանը, երեկոյան հավաքվել էր երիտասարդությունը:

Թանժարիկի տանը սենյակ էր վարձել երիտասարդ ջիգիթ Կիսաթայը, որն Աբայի ազգականներից մեկն էր: Կիսաթայը չէր մոռացել առվի սովորությունները, սիրում էր

հյուրեր ունենալ և, թեև ինքը լռակյաց ու ամաչկոտ էր, բայց միշտ իր շուրջը մարդիկ էր հավաքում:

Այդ օրը նրան հյուր էին եկել Աբայի մերձավոր ազգականներն ու աշակերտները: Կարծես հասարակության գլուխն անցած՝ պատվավոր տեղում նստած էր սապատաքիթ Կոքփայը, որը դարձել էր հայտնի ակին ու երգիչ և հոչակ էր վայելում իր գնգուն ձայնով: Որտեղ Աբայը ներկա չէր լինում, այնտեղ Կոքփայը սիրում էր շաղակրատել, գովաբանելով այն ամենը, ինչ դուր էր գալիս և անողորբաբար ծաղրելով այն ամենը ինչ իրեն դուր չէր գալիս: Նա հիանալի պատմող էր և կարողանում էր զվարճացնել հասարակությանը:

Մյուս պատվավոր հյուրը Շուբարն էր՝ Աբայի եղբորորդին: Վերջինս ընտրություններում գավառակապետի պաշտոնը կորցնելուց հետո որոշել էր անուն վաստակել որպես ակին ու երգիչ: Լինելով փառամոլ ու սնափառ՝ նա նախանձում էր բանաստեղծ Աբայի հարաճուն հոչակին ու ջահել ակիներին շրջանում իրեն այնպես էր պահում, որ կարծես նրան էր պատկանում առաջին տեղը: Նա հազնվում էր խնամքով, իրեն լավ հոգ էր տանում, նրա բաճկոնի վրա շողշողում էր նոր գնած ոսկե ժամացույցի ոսկե շղթան: Շոյելով իր խիտ և սև մորուքը՝ նա խոսում էր գուսպ և ծանրակշիռ տոնով, մանավանդ Աբայի բացակայությամբ, իրեն շատ բարձր դասելով մյուս դազախներից:

Այդտեղ ներկա էր գտնվում նաև Աբայի սիրելի որդին՝ Մադաշը, որին հիմա արդեն կոչում էին լրիվ անունով՝ Մազալյա: Նա դեռ տասնվեց տարեկան չկար, ուներ մի

քիչ գունատ ու քնքուշ դեմք, լայն ճակատ, բարակ և ուղիղ քիթ: Մյուսների մեջ նա աչքի էր ընկնում իր դուրեկան արտաքինով և կրթված մարդու վայելչությամբ: Չնայած իր ջահելության՝ նա ուներ անբռնագրոսիկ շարժուձև և խոսում էր անկաշկանդ: Նրա հետ միասին եկել էր հայտնի երգիչ Մուխան: Վերջինս բարձրահասակ էր, վայելչակազմ, ուներ գնգուն ձայն: Աբայը, գնահատելով նրա ձայնը և դուրբրա ու ջութակ նվագելու հմտությունը, երկու տարի առաջ նրան ջիզիթ էր վերցրել Մագաշի համար և դարձրել էր հանրաժանոթ երգիչ: Նրանց կողքին նստած էր Իսխակը՝ Իրսայի որդին: Սա հմուտ էր այլ բանում: Եթե Կոքփայը և Մուխան քաջ ծանոթ էին դազախական ժողովրդական զրույցներին և պատմական պոեմներին, ապա Իսխակը, մասամբ Աբայի աջակցության շնորհիվ, մասամբ ինքնուրույնաբար, ուսումնասիրել էր արաբական և պարսկական էպոսը՝ «Շամշիդ», «Բախտաժար», «Ռուսթամ», «Հազար ու մեկ գիշերներ»:

Նրանք բոլորն էլ եկել էին՝ գիշերն անցկացնելու Կիսաթայի մոտ և իրենց կառապաններին տուն էին ուղարկել: Խոսակցության եռուն պահին դուռը լայնորեն բացվեց, և մի ջիզիթի ձեռքում քլթքլթալով երևաց հաստափոր ինքնաեռը, իսկ դրա ետևից ներս մտավ Թանժարիկի գիրուկ ու վարդերես կինը՝ սփռոցը ձեռքին: Հյուրերը, որոնք հարմարավոր կերպով նստել էին ընդարձակ սենյակի հատակին փոված փափուկ քորփենների ու բարձերի վրա, ծալեցին իրենց ոտքերը՝ տեղ բաց անելով ինքնաեռի համար: Սկսվեց ցածր ու կլոր թեյասեղանի պատրաստումը: Կի-

սաթայր պահարանից հանեց կոնյակ և թրմօղի: Քաղցրավենիների հետ միասին սեղանի վրա երևացին կաղինով ու ձիու մսի համեղ պատառներով լցված պնակներ: Իսխակը զվարճացավ:

-Այ, խելոք բան ես անում: Կիսաթայ: Ի՞նչ կարիք կա սպասելու, մինչև որ այնտեղ միսը խաշեն:

Հյուրերը, սեղանի շուրջը բոլորված, շարունակում էին զվարթորեն զրուցել եղած-չեղած բաների մասին, սրախոտություններ ու հանաքներ էին անում միմյանց հասցեին: Այդ աղմկալից երեկոյթը Շուբարին հիշեցրեց, թե Աբայը որքան սիրում է երիտասարդության այսպիսի հավաքություններ:

-Ափսոս, որ Աբայը չի եկել հիմա,- ասաց նա:

Բայց Կոքփայն անմիջապես առարկեց.

-Ավելի լավ կլինի՝ տանը նստի, երևում է, որ սկսել է զբաղվել գրքերով ու ոտանավորներով:

Շուբարը հեզանքով նայեց նրան.

-Էհ, սիրելի՛ս, եթե այդ չինարն ամբողջովին փթթի, ապա վախենում եմ, որ մեր ոտանավորները բոլորովին չորանան,- ասաց նա՝ ակնարկելով այն հանգամանքը, որ շատ ջահել ակիներ սիրտ չէին անում մրցելու Աբայի հետ: Շուբարն իր հոգու խորքում պարզապես նախանձում էր Աբային:

-Որ այդպես է, ապա մենք պետք է սպասենք, մինչև որ փթթեն մեր սեփական ոտանավորները,- ասաց Մազավյան ծիծաղելով:

Շուբարը գլուխն օրորեց զվարճալի վշտահարությամբ:

-Իսկ դու ինչպե՞ս ես պատկերացնում այդ փոթումը,-  
հարցրեց Շուբարը:- Ահա ես գրել եմ մի սեզիզ - այաք<sup>36</sup>,  
որն իմ կարծիքով շատ լավն է: Դա ցույց տվեցի Աբային,  
նա նայեց և ասաց, որ սեզիզ-այաքն ամեննին այդպես չեն  
գրում...:

Կոքփայը նույնպես գանգատվեց.

-Նա ուզում էր իմ պոեմի համար ինձ տալ ձիու մասին  
գրած իր «Շոքփարդայ կեկիլի բար»<sup>37</sup> ոտանավորը՝ ասե-  
լով, թե քո Նաուրիզբայը<sup>38</sup> թող ունենա ոսկեղեն ձի... Բայց  
հետո մտածեց և չտվեց՝ կասկածելով, թե չլինի՞ ձին շատ  
չաղ լինի...:

Ընկերներն առաջին անգամն էին լսում այդ բանը: Պատ-  
մությունն ընդհանուր ծիծաղ հարուցեց: Մագավյան դար-  
ձավ դեպի Կոքփայը՝ ասելով.

-Ժամանակն է, որ դու ընտելանաս դրան, Կոկե. մի՛ մո-  
ռանա, թե ինչպես նա ետ է վերցրել իր բոլոր ոտանավոր-  
ները...:

Ակիները դարձյալ քրքջացին: Ամենքը գիտեին, որ Ա-  
բայը երկար ժամանակ ոտանավորներն ասպարեզ էր հա-  
նում Կոքփայի անունով, և միայն մեկ տարի առաջ «Տոթ ա-  
մառը» գրելուց հետո, վերջապես որոշեց դրա տակ դնել իր

---

<sup>36</sup> Սեզիզ – այաք՝ ութ տողանի բանաստեղծություն, դազախական  
տաղաչափության մեջ Աբայի մտցրած նոր ձևը:

<sup>37</sup> «Շոքփարդայ կեկիլի բար» Արագավազ նժույզի մասին Աբայի  
գրած նշանավոր բանաստեղծությունը:

<sup>38</sup> Նաուրիզբայ՝ Կոքփայի պոեմի հերոսը:

անունը: Կոքփային վարձատրելու համար Աբայը նրան ասել էր. «Քեզ վերցրու այս շեկ զամբիկը, իսկ իմ ոտանավորներն ինքս կվերցնեմ»:

-Չամբիկը ես մորթեցի հենց ձեզ համար, հիշո՞ւմ եք, երկու մատի հաստությամբ ճարպ ուներ: Այդ օրը ես ինձ ու ինձ ասացի՝ թող նա վերցնի իր ոտանավորները, դրա փոխարեն ես հո՞ մի կուշտուկուտ կերա,- ասաց Կոքփայը՝ հարուցելով ներկաների քրքիջը:

-Հետո գիտե՞ք,- շարունակեց Կոքփայը, երբ ես վերջերս Աբային պատմեցի այդ բանը, նա աչքով անելով պատասխանեց. «Երբ Տաշքենդը գրավող զեներալն իր զորքերով քաղաք էր մտնում որոտալից թմբկահարությամբ, մի հաշիշամոլ ասել է. «Թող նա Տաշքենդը վերցնի իրեն, բայց դրա փոխարեն մենք հիմա հրաշալի երաժշտություն ունենք»: Դու նման ես այդ հաշիշամոլին, Կոկե...»:

Միահամուտ քրքիջն ընդհատեց նրա խոսքը: Նույնիսկ Թանժարիկի կինը, որը մինչ այդ լուռ էր, հիմա ծիծաղից օրորվում էր: Զվարճության բուռն պահին դուռը բացվեց, և մի հյուր ևս ներս եկավ: Եկողի ձեռքում դամշի կար, նրա բեղերին եղյամ էր նստել, հագուստը սառել էր վրան: Երևում էր, որ նա ուղղակի գալիս էր ճանապարհից:

-Ասսալամու ալեյքում,- բարձրաձայն բարև տվեց նա շեմքից:

Սենյակում գտնվողները նոր հյուրին այնքան էլ սիրալիությամբ չընդունեցին և ակամա ընդհատելով իրենց ծիծաղը, սկսեցին նայել, թե ով է եկողը: Նորեկին բոլորից շուտ ճանաչեց Իսխակը:

-Այդ դո՞ւ ես, Մուհամեջան,- բացականչեց նա զվարթացած:

Ուրախացան նաև մյուսները:

Մուհամեջանն այդ տուն էր եկել ուղղակի աուլից: Հարցուփորձերին պատասխանելիս նա հանեց ձմեռային կոշիկներն ու վերնահագուստը, սրբեց բեխերի սառույցը: Ամենքն էլ սկսեցին նրան հրավիրել վերին գլուխ:

-Հա, այսօր ինձ թույլ տվեք նստելու Մուխայի և Կոքփայի միջև,- նշանակալից ու խորհրդավոր տոնով ասաց Մուհամեջանը:

Մուխան մի քիչ շարժվեց դեպի ներքև՝ տեղը զիջելով նրան: Կոքփայը ջահել երգչին դիտում էր մի տեսակ խոռվալից կասկածամտությամբ: Ոչ մի տարակույս չկար, որ Մուհամեջանը թե՛ երգելու և թե՛ ոտանավոր հորինելու մեջ իրեն ավելի բարձր էր դասում այդտեղ նստած բոլոր ակիններից: Կոքփայն ինքը երբեմն խոստովանում էր, որ եթե Մուհամեջանն այդքան աղքատ չլիներ և միաժամանակ չգոռոզանար իր իրգիզբայ ծագումով, ապա լավ դաստիարակություն ստանալու դեպքում հիանալի գործեր կտար: Բայց այդ օրը Մուհամեջանն արդեն չափազանց ինքնավստահ էր երևում: Ուստի Կոքփայը, չհամբերելով, որ նա նույնիսկ հանգիստ նստի, խայթեց նրան.

-Մենք էլ մտածեցինք, թե ով է գալիս կոշիկները ճոճոացնելով: Դու մի ասի՛ եղած-չեղածը աուլն է:

-Իսկ եթե աուլն այդքան վատ է, էլ ինչո՞ւ դու Աստծու տունը թողեցիր ու փախար-եկար աուլ,- իսկույն նեթ հակահարված տվեց Մուհամեջանը՝ ակնարկելով այն հան-

զամանքը, որ Կոքփայն ուսանում էր մեղրեսեյում, որպես-  
զի դառնա մոլլա: Ներկաներն այդ պատասխանին հավա-  
նություն տվեցին միահամուռ ծիծաղով, Մուհամեջանը  
շարունակեց.

-Դու աուլը մի անարգիր: Աուլումն էլ անգին գանձ կա...

-Ի՞նչ գանձի մասին ես խոսում,- անհանգստությամբ  
հարցրեց Կոքփայը:

-Կիմանաս...Խնդրում եմ, թող որ հանգիստ կերպով թեյ  
խմեմ... պատասխանեց Մուհամեջանը՝ վերևից նայելով  
մյուսներին, ապա լեց և սկսեց ուտել: Մյուսները, որոնք  
արդեն կշտացել էին, շարունակեցին իրենց զրույցներն ու  
հանաքները, որ ընդհատվել էին Մուհամեջանի գալով:  
Շուրֆարն առաջարկեց երգել.

-Թող նախ մեծերն սկսեն, այդ դեպքում մյուսները չեն  
քաշվի,-ասաց նա:- Դե, Կոկե, հապա հիշիր քո Նաուրիզ-  
բայի մրցումը, որ նա ունենում է Թլեուկաբաղ տոհմին  
պատկանող աղջկա հետ...:

Կոքփայն առանց շտապելու հազաց և սկսեց լիաձայն  
երգել այդ ձմռանն իր հորինած երգը: Ապա Մազալյան  
Շուրֆարին դրդեց երգելու իր սեզիզ- այաքը: Շուրֆարը  
պատշաճ չհամարեց, որ ինքը երգի. նրա փոխարեն երգեց  
մի ջիզիթ՝ քաչալ Օրումբեկը:

Մուհամեջանը, որ քաղցած ու մրսած էր, անվրդով  
խժռում էր ձիու մսից պատրաստված երշիկը և տաքանում  
էր թեյով, կարծես ամենևին չլսելով երգը: Երբ Իսխակը  
հարցրեց նրան, թե նա եղե՞լ է Աբայի աուլում, Մուհամե-  
ջանը կցկտուր պատասխանեց.

-Եղել եմ... Աքայը ողջ-առողջ է... Բարև է ուղարկել...

Կուշտ թեյ խմելուց հետո նա ետ քաշվեց սեղանին: Հիմա սենյակում հնչում էր Մուխայի զնգուն ձայնը, որը երգում էր «Թուփայ-կոկ»: Երբ Մուխան երգն ավարտեց, Մուհամեջանը, առանց հրավերի սպասելու, ինքը ձեռքը մեկնեց դոմբրային: Իր ուզածի պես դոմբրան լարելուց հետո նա հեզնանքով ասաց.

-Այսքան նշանավոր ակիներ են հավաքված այստեղ, բայց երգում են միայն՝ «Քուռակը լղար է, նժույզը չաղ է...»: Չէ՛, եթե ուզում ես երգ լսել, ապա լսիր արժանավոր երգ: Այ, խոսքերը պետք է այսպես լինեն...:

Եվ Մուհամեջանն սկսեց երգել՝ իր վրա գամելով բոլորի ուշադրությունը:

Դրանք Տասյանայի սիրագորով ու տրտմաթաթավ խոսքերն էին: Ամենքը սկսվել էին, անշարժացել և հետևում էին երգի յուրաքանչյուր բառին: Մուհամեջանը կարողանում էր հատուկ արտահայտությամբ ու պարզորոշությամբ հաղորդել իր երգածի իմաստը: Ունկնդիրներն սկզբում այնուամենայնիվ չէին կարողանում հասկանալ, թե ինչ երգ են լսում իրենք՝ դազախակա՞ն, թե՞ ռուսական: Սակայն պարզ էր, որ այդ չքնաղ ու թախծալից երգը խոսում էր նոր զգացումների մասին: Առանձնապես հմայիչ էր երգի լեզուն: Ջահել ակիները կարծես առաջին անգամ հասկացան, թե ինչպես պետք է երգել սիրո մասին: Այդպիսի սրտաբուխ թախիծ, այդպիսի քնքշություն նրանք լսում էին առաջին անգամ: Մքանչելի բանաստեղծությունը հափշտակել էր ամենքին: Ինչպիսի՛ խոովահույզ զգացում

կար դրա մեջ, ինչպիսի՛ գուսպ հպարտություն: Այդ երգով կարծես կաթոզին ու քնքուշ սիրտն էր խոսում և իր անապական խորքերից արտասուք զեղում մարդկանց առաջ...:

Իսխակը, նայելով Մուհամեջանի կարմրած դեմքին, բացականչեց՝ երգից հուզված.

-Օրհնյա՛լ լինի քո կոկորդը...

Այդ բացականչությունն ուրիշ դեպքում կարող էր ընդհանուր ծիծաղ հարուցել, բայց հիմա ոչ ոք չժպտաց նույնիսկ:

Մուհամեջանը երգեց Տաստյանայի ամբողջ նամակը, ապա խոր շունչ քաշելով, սկսեց սրբել իր ճակատի քրտինքը: Մենյակում գտնվող բոլոր մարդիկ լուռ էին:

Կոքփայն ու Շուբարը դժգունել էին և խոժոռովել: Նրանք մինչև իսկ չէին նայում Մուհամեջանին, կարծես երկյուղ կրելով նրա դեմքի վրա որևէ բան կարդալուց: Կոքփայն իզուր չէր նախազգում, որ Մուհամեջանը հիմա որևէ բանով ամենքին կապշեցնի: «Բանից պարզվում է, որ նրա հպարտությունն անտեղի չէր», - մտածում էր Կոքփայը և իր մեջ արիություն չէր գտնում հարցնելու, թե Մուհամեջանի երգածն ի՞նչ երգ էր: Նույն բանն էին զգում նաև մյուս ակիները:

Լռությունը խախտեց Մագավան: Հիացմունքով նայելով ջահել երգչին՝ նա հարցրեց.

-Դե հիմա մեզ ասա՛ որտեղից է այդ երգը:

Շուբարն ու Կոքփայը անհանգստությամբ իրենց նայվածքն ուղղեցին Մուհամեջանին: Վերջինս նրանց չստի-

պեց սպասել: Նա գրպանից հանեց Կիշկենե մոլլայի գրած նամակը և բաց արեց Աբայի ձեռագիրը:

- Այս բանաստեղծությունը գրել է ռուս մեծ ակին Փուշկինը: Սա Թաթյանայի նամակն է, որ նա գրել է այն ջիգիթին, որի վրա սիրահարված է եղել: Աբայ աղան բանաստեղծությունը հենց նոր թարգմանել է դազախերեն, և ինքն էլ եղանակ է հորինել դրա համար:

Շուբարի դեմքը պայծառացավ, և նա խոր շունչ քաշեց.

-ՕՖ...Սիրտս թեթևացավ...Ես էլ դողում էի, թե չլինի՞ հանկարծ ասի, որ ինքն է հորինել,- ասաց նա:

Թեթևացած շունչ քաշեց նաև Կոքփայը:

-Օ՛հ, շնորհակալ եմ... բա եթե ի՛նքդ գրած լինեիր այդ գեղեցիկ խոսքերը, այդ հիանալի եղանակը, էլ ես ո՞նց պիտի կարողանայի մրցել քեզ հետ... Քիչ էր մնում ինձ բախտից զրկեի...Շնորհակալ եմ քեզնից, Մուհամեջան, շատ շնորհակալ եմ,- ավելացրեց Կոքփայը:

Մյուսները լիաթոք ծիծաղեցին: Մուհամեջանը Կոքփային հանձնեց նամակն ու Աբայի ձեռագիրը և դուրս գնաց սենյակից՝ հիշելով իր աշխետ ձին:

Իր դողողացող ձին ախոռ տանելուց հետո նա վերադարձավ և ժպտալով կանգ առավ շեմքին՝ նայելով, թե ինչ է կատարվում սենյակում:

Լամպը, որ առաջ վառարանի վրա էր դրված, հիմա փոխադրված էր սեղանի վրա, և դրա շուրջը հավաքվել էին բոլոր ակիները՝ Կոքփայի և Շուբարի գլխավորությամբ,թղթով ու մատիտով զինված, սեղանի վրա խոնարհված, և արտագրում էին Աբայի բանաստեղծությունը:

Մուհամեջանը լուռ ու մունջ մի պահ կանգնեց դռան մոտ, ապա սկսեց ծիծաղել.

- Էհե՛, բոլորը գրագիր են դարձել, արտագրում են իմ հրամանը...- ասաց նա:- Էհ, Փուշկի՛ն, թող լույս իջնի քո հոգուն:

Ակիները նույնպես ծիծաղեցին, բայց սրամիտ պատասխան գտնելու համար ժամանակ չունեին: Ոտանավորն արտագրելուց հետո նրանք սկսեցին սերտել նոր երգը, ոմանք՝ դոմբրայով, ոմանք՝ ձայնակցելով: Ովքեր որ դժվարանում էին եղանակն ըմբռնել, նրանք սովորում էին Մուհամեջանից՝ նրա ետևից կրկնելով երկուսով, երեքով: Երբ կեսգիշերից շատ հետո ակիները վերջապես պատրաստվեցին քնելու, նրանք բոլորն արդեն անգիր էին արել Տատյանայի նամակը:

Մի երկու օրից հետո Ուակ ցեղը Մուխային հրավիրեց հարսանեկան երկույթի: Այդ հարսանիքում, առաջին անգամ լինելով, մեծ բազմության առաջ, փեսացուի ու ինամինների առաջ, աղջիկների, ծերունիների ու երիտասարդների առաջ, հայտնի երգչի բերանով հնչեց Տատյանայի նամակը՝ ունկնդիրներին հուզելով իր վշտալից եղանակով և սրտաբուխ զգացումով: Երբ Մուխանն ավարտեց երգը, մի ծերունի, որն անթարթ հայացքով ունկնդրել էր, երգչին ասաց.

-Շատ ապրես դու, իմ նախշո՛ւն հավք... Ողջ հոգիս էրեցիր... Հիմա ասա, թե ով է ստեղծել այդ երգը:

-Մի ժամանակ եղել է Փուշկին անունով ռուս ակին, ինձ նման: Երգի խոսքերն նրանն են: Իսկ դազախ լեզվով վերապատմել է Աբայը:

Թե՛ Կոքփայը, թե՛ Իսխակը, թե՛ Մուխամեջանը և թե մյուս վարպետները հավաքությունեում, երեկությունեում երգում էին միայն Տատյանայի նամակը:

Այդպիսով հազար ութ հարյուր ութսունյոթ թվականի ձմռանը ռուս մեծ ակին Պուշկինն առաջին անգամ ոտք դրեց դազախական լայնարձակ տափաստանները՝ ձեռքից բռնած իր հետ տանելով իր սիրելի Տատյանային:



*Сейтжан Омаров*

*ՄԵՅՏՋԱՆ ՕՄԱՐՈՎ  
(1907-1985 թթ.)*

## ԵՐԿՈՒ ՀԵՌԱԳԻՐ

### I

Պատուհանի ետևում խորունկ, փափուկ կապտամշուշը մոխրավուն էր դառնում: Մոտենում էր լուսաբացը: Մարգային հիվանդանոցի գլխավոր վիրաբույժի սենյակում անրջային լռություն էր տիրում: Այստեղ էր հասնում նախապարտեզի ծաղիկների թույլ բուրմունքը: Տաք էր: Խաղաղություն...

Եվ հանկարծ բարձրաձայն հնչեց հեռախոսի զանգը: Խոսում էին հիվանդանոցից:

-Ստացվել է հեռագիր. «Ժանա Թուրմիս» կոլտնտեսությունում ծանր հիվանդ կա: Անհրաժեշտ է կատարել անհապաղ վիրահատություն: Խնդրում եմ ուղարկել փորձված վիրաբույժ...

Իվան Պետրովիչը արագ հագնվեց:

Սալիմգերեյի դրությունը ժամ առ ժամ վատանում էր: Նրա հիվանդության տազնապալի լուրը տարածվեց գյուղով մեկ: Հարազատներն ու բարեկամները չէին քնել: Նույնիսկ մշտապես հանդարտ և ծանրաբարո Սուլեյմեն Մուրգանովը՝ կոլտնտեսության նախագահը, չէր հեռանում Սալիմգերեյի տնից:

Ծեր Կալիյան՝ հիվանդի մայրը, լալիս էր. նա չէր հավատում, թե բժիշկ կուղարկեն:

-Կուղարկե՛ն,- համառորեն պնդում էր Սուլեյմենը:

Եվ ահա սանիտարական ինքնաթիռն իջավ ավանի արտակեզ մյուս կողմում գտնվող հրապարակում:

Իվան Պետրովիչին և նրա օգնականին՝ երիտասարդ բժիշկ Երմեկ Բայսալովին, որը վերջերս էր ավարտել բժշկական ինստիտուտը, դիմավորեց ինքը՝ նախագահը:

Բժիշկներն անհապաղ ուղղվեցին դեպի Սալիմգերեյի տունը: Շտապ հագան խալաթները, լվացվեցին: Մտան հիվանդի մոտ:

Սալիմգերեյը պառկած էր մեջքի վրա: Նա տեսավ դռնից ներս մտնող սպիտակ խալաթով մարդկանց, ուզեց գլուխը բարձրացնել, որպեսզի բարևի, բայց չկարողացավ: Լուսամուտի լույսը ընկավ նրա դեղնած այտուկերեքին, սրված քթին: Խորն ընկած աչքերն ասես լցված էին պղտոր, լճացած ջրով: Հիվանդը ծանր էր շնչում:

Իվան Պետրովիչը քաջալերիչ ժպտաց և սկսեց քննել՝ ամբողջ ժամանակ կամացուկ բացատրություններ տալով

իր կողքին կանգնած Երմեկին: Երիտասարդ բժշկին հանձնարարելով ստուգել հիվանդի պուլսը, Իվան Պետրովիչը գնաց լուսամուտի մոտ և քթի տակ ասաց.

Հետաքրքիր զուգադիպություն:

Մտքի առջևով լողաց իր որդու դեմքը հենց այդպիսի, ասես ջրով լցված աչքերով, սրված այտուկներով: Նույն գանգատը ստամոքսի սուր ցավից: Դա տեղի էր ունեցել նախքան նրա ինստիտուտ ընդունվելը: Տղային տեղավորեցին այն կլինիկայում, ուր աշխատում էր Իվան Պետրովիչը: Ստիպված էր տղային վիրահատության ենթարկել ինքը: Հիշեց իր աննկարագրելի հուզմունքը, որից վախենում էր, թե կուշաթափվի: Այդ ո՞ւր էր անհետացել պրոֆեսիոնալ ինքնատիրապետումը:

-Տարօրինակ է,-նորից հագիվ լսելի քրթմնջաց վիրաբույժը: Նույն պատկերն է: Դա իհարկե, աղիքի պատռվածք է: Հարկավոր է անհապաղ գործել:

-Ապա ասացեք, դուք ինչ եք գտնում,- դիմեց Իվան Պետրովիչը իր օգնականին:

-Ըստ իս՝ դա ստամոքսի պատի պերֆորացիա է, պատռվածք: Հարկավոր է անհապաղ տանել կլինիկա:

-Միանգամայն ճիշտ է,- համաձայնեց Իվան Պետրովիչը: Այդ ժամանակ նա տեսավ հիվանդի մոր լայն չոված, ասես հարվածի սպասող աչքերը: - Մի՛ անհանգստացեք,- ասաց Իվան Պետրովիչը նրան,- Ձեր տղան կառողջանա: Ես ինքս կբերեմ նրան ձեզ մոտ, միասին պիտի ուրախանանք:

Բժշկի հուսադրող,վստահ տոնը Կալիային մի փոքր հանգստացրեց:

-Թող կատարվի ձեր կամքը: Եթե բուժեցիք իմ միակ որդուն, հավիտյանս-հավիտենից չեմ մոռանա,- արցունքների միջից ասաց Կալիան:

Սալիմգերեյին դրեցին պատգարակի վրա և դուրս բերին տնից:

Արեգակն արդեն բարձրացել էր տափաստանի վրա: Խոտերի մեջ ճոռում էին ճպուռները: Ինչ-որ տեղում բարձր կվկվում էր լորը: Իվան Պետրովիչին թվաց, որ փոքրիկ լորը սուզվեց անձայրածիր և տաք կապույտի մեջ և մնաց միայն նրա բյուրեղային ձայնը:

Ինքնաթիռը, ընդունելով հիվանդին, օդ բարձրացավ: Կոլտնտեսականները դեռ երկար կանգնեցին ցածում, ինքնաթիռի մոտ՝ հետևելով ինքնաթիռին, մինչև որ անհետացավ:

\* \* \*

Ճանապարհը վատացրեց հիվանդի վիճակը: Չարկերակը հազիվ էր շոշափվում:

Վիրահատության սեղանը արդեն նախապատրաստված էր: Վիրահատության գործիքները՝ եռացված:

Երեկ Իվան Պետրովիչը իր նոր օգնականին խոստացել էր մոտակա վիրահատություններից մեկը թույլ տալ կատարել ինքնուրույն: Բայց այս դեպքը նրա համար չափից ավելի լուրջ էր:

Երբ նրանք երկուսով ձեռքները լվացին նախասենյակում, Երմեկը հարցրեց, թե Իվան Պետրովիչը իրեն վստահո՞ւմ է:

-Շատ ծանր է առաջին անգամը կատարել դժվարին վիրահատություն՝ ձեռքերն առանց դողալու,- խուսափողաբար պատասխանեց ծեր բժիշկը:- Ձեր մատները պետք է ունենան պողպատի կարծրություն և ռետինի ճկունություն...

Վիրաբույժները մտան վիրահատության սենյակը:

Բուժքույրերին հրամայելով հիվանդին բերել՝ Իվան Պետրովիչը հագավ նոր, ստերիլ խալաթը: Խալաթը փոխեց նաև Երմեկը: Մուգ, թեթևակի գունատված նրա դեմքին տազնապ կար:

-Դուք, թվում է, հուզվում եք, Երմե՛կ,- հանդարտ նկատեց Իվան Պետրովիչը:

-Ինչ խոսք, Իվան Պետրովիչ, ես հասկանում եմ... Բայց Դուք հիմա ինձ կվստահե՞ք:

-Դեռ սպասենք:

Սելիմգերեյին արդեն բերեցին վիրահատության սենյակը, բայց հենց այդ բոպեին վիրաբույժին մոտեցավ կլինիկայի մուտքի մոտ հերթապահող բուժքույրը և հավասար ծավված մի թուղթ մեկնեց.

-Իվան Պետրովիչ, սա ձերն է:

-Այդ թուղթը կարող է և սպասել,- պարսավանքով ասաց վիրաբույժը:- Ինչպե՞ս կարելի է գրություն հանձնել այն ժամանակ, երբ մարդու կյանքը մազից է կախված:

Բուժքույրը մի ոտքից մյուսը տեղափոխվելով, սկսեց արդարանալ.

-Սա հեռագիր է, Իվան Պետրովիչ, շտապ: Միգուցե ձեր տղայից է: Դուք այս հեռագրի համար ամեն օր հարցնում էիք... Ես ցանկացա ձեզ ուրախացնել:

Միայն այժմ Իվան Պետրովիչը նայեց թղթին: Այո, որդուց էր: Սիրտը ուրախ խայտաց:

Բայց ձեռքերն արդեն ախտահանված էին, հեռագրին ձեռք տալ չէր կարելի:

-Կարդացեք խնդրեմ, Թամարա,- խնդրեց վիրաբույժը:

Բուժքույրը պոկեց սոսինձը, տեքստը արագ կարդաց և հանկարծ տեղում քարացավ՝ աչքերը կլորացնելով և վախեցած բացելով բերանը:

-Կարդացե՛ք,- գունատվելով, խուլ ձայնով հրամայեց վիրաբույժը:

-Ոչ... հետո...- քրթմնջաց աղջիկը:

-Կարդացե՛ք:

Եվ աղջիկը կապ ընկնելով՝ կարդաց:

«Փորձի արդյունքը եղավ ծանր թունավորում: Վիճակը ծանր է: Անհապաղ եկեք...»:

Իվան Պետրովիչը տեղում երերաց: Երմեկը հասավ օգնության:

Մի րոպե բոլորը լռեցին: Հետո Իվան Պետրովիչը նայեց հիվանդին և Երմեկին վճռաբար ձեռքով ետ մղելով, ասաց.

-Դե, ինչպես, պատրա՞ստ եք: Սկսո՞ւմ ենք,- ասաց նա համառությամբ:

Երմեկն ու բուժքույրը տագնապով նայեցին նրան, Իվան Պետրովիչը մոտեցավ վիրահատության սեղանին:

Նրա երկար մատները վերցրին վիրահատական դանակը և իսկույն էլ բաց թողեցին: Սկալպերը զնգաց՝ դիպչելով հատակին: Բուժքույրը ուրիշը տվեց: Վիրաբույժի մատները թեթևակի դողում էին:

-Իվան Պետրովիչ,- բարձրաձայն շնչաց Երմեկը,- գուցե ինձ կթույլատրեք:

Վիրաբույժը ուղղվեց.

-Ոչ,-չոր պատասխանեց նա:

Երմեկը և երկու բուժքույրերը վիրահատության սեղանի մոտ գրավեցին իրենց տեղերը: Նրանցից յուրաքանչյուրն արագ ու անշշուկ կատարում էր իր պարտականությունը:- Մեկը բռնել էր ասեղը՝ մետաքսե թելով, մյուսը տալիս էր վիրահատության գործիքները: Այժմ Երմեկը չէր ճանաչում Իվան Պետրովիչին: Վիրաբույժը գործում էր արագ և վճռական: Ասես թե դեմ առ դեմ պայքարում էր մահվան դեմ: Աչքերը տենդագին փայլում էին, ճակատի վրա քրտինք կար: Բայց Երմեկը տեսնում էր նրա շարժումների ճշգրիտ հաշվարկը և ճկուն ու կառչուն մատների ուժը:

Վերջացնելով վիրահատությունը՝ Իվան Պետրովիչը խորը շունչ քաշեց և բարձրացրեց գլուխը:

Նա կապրի՛:

Երմեկը և բուժքույրերը Սելիմգերեյին տարան հիվանդասենյակը:

Երբ Երմեկը մտավ գլխավոր վիրաբույժի առանձնասենյակը, Իվան Պետրովիչը անշարժ նստած էր դիվանին:

-Իվան Պետրովի՛չ,- կամացուկ ասաց Երմեկը:

-Խնդրում եմ, պատվիրեցեք ինքնաթիռի տոմս,- պատասխանեց Իվան Պետրովիչը և ձեռքերով ծածկեց դեմքը:

Երմեկը չէր շարժվում: Նորից տիրեց լռություն:

-Հիմա՛,- ասաց վերջապես Երմեկը՝ սթափվելով:

-Բայց և այնպես ես չեմ կարողանում ուշքի գալ, դուք ինչպե՞ս կարողացաք...

Իվան Պետրովիչը դանդաղ ցած թողեց ձեռքերը և դժվարությամբ, բայց անջատ-անջատ արտասանելով՝ ասաց.

«Վատ վիրաբույժը նա չէ, ով վախենում է ուրիշի ցավից,այլ նա, ով վախենում է սեփական ցավից»:



*Կալաշյան Իսաճաճ*

*ԿԱԼՍՈՒԽԱՆ ԻՍԱԲԱԵՎ  
(1925-2015 թթ.)*

## ՄԻ ԲՈՒՌ ԱԼՅՈՒՐ (Ինքնագրային պատմվածք)

Արթնացա, աչքերս բացեցի, թե չէ իսկույն նայեցի հաստափոր ինքնատեղին: Այն դարձյալ առաջվա պես կտաքանա, ու ես էլ կջերմանամ: Սակայն ինքնատեղ կանգնած է շենքի մի անկյունում սառը, ինչպես անպետք արձան: Երրորդ օրն է անշարժ է: Եվ դեռ ինչքան այդպես կկանգնի՝ չգիտեմ: Գուցե այդպես էլ անկյունում կանգնած մնա ու մեր դիակնե՞րը պահպանի: Ով գիտի...

Մենյակում վեց հոգի ենք:

Հայրս պատկած է իմ դիմացի պատի տակ, հիվանդ, ոտքերն ուռած, մայրս՝ նրա կողքին: Մորս մոտ է քույրս՝ Սաուկենը՝ մի տարեկան երեխա: Իմ ու նրա միջև մի չորս տարեկան երեխա էլ կա՝ կրտսեր եղբայրս Բարկենը: Իմ վեց տարին էլ դեռ չի լրացել, իսկ աջ կողքիս պատկած է ավագ եղբայրս՝ Ջարկենը, որն ինձնից երեք տարի առաջ է ծնվել:

Հիշում եմ, ուրեմն, երեք օր առաջ մայրս ամեն մեկիս համար մի փոքրիկ փիալա սուպ լցրեց, թեփից եփած սուպ: Մեզ կերակրեց, պատկեցրեց և խստորեն պատվիրեց.

-Պատկեցեք: Մինչև վաղը չհամարձակվեք գլուխներդ բարձրացնել...

Մենք էլ մինչև հիմա պատկած ենք առանց գլուխներս բարձրացնելու... Ճիշտ է, երեկ սկսեցինք անհանգիստ թնգթնգալ: Մայրս վեր կացավ, դուրս եկավ փողոց և լուսամուտի փեղկերը փակեց: Հետո ներս մտավ, ամեն մեկիս հերթով գրկեց և լաց լինելով ասաց.

-Բալիկներս, փեղկերը փակեցի, որպեսզի օտար մարդիկ մեր մահը չտեսնեն...

Հիմա մեր սենյակում ցերեկն էլ մութ է: Մութ և դատարկ, դատարկ և անհուսալի, ինչպես ամեն մեկիս հոգում: Երկար նայում էի մթությանը, որ տեղ-տեղ կտրտվում էր արևի շողերի բարալիկ ասեղիկներով և հանկարծ կրծքիս մեջ մի բան պոկ եկավ: Սպիտակ ինքնատեն ու նրա կողքի սև դուռն սկսեցին պտտվել... Գիտակցությունս կորցրի:

Երբ ուշքի եկա, ամբողջ մարմնիս մեջ մի տեսակ երանություն զգացի: Բանից պարզվում է մորս գրկում էի ու նրա կուրծքն էի ծծում: Ու թեև կրծքից ոչինչ չէր գալիս, սակայն կուշտ էի հենց միայն մորս հավելուց: Հետո մայրս ինձ տեղս դրեց և անմիջապես քնեցի: Արթնացա նրա ձայնից ու տեսա, որ Սաուկենն է նրա ձեռքին:

-Կյանքս ու արևս, Սաուկեն,- ասում էր մայրս:- Տե՛ր Աստված: Ախր ի՞նչ անեմ: Անիծյալ Տաուկեն մեզ ոչնչացրեց,- Դժոխքի դուռը գնա դա: Անիծվի դրա ամբողջ ցեղը: Բոլորին սովից կոտորեց...

Տեղից բարձրացավ և հայրս, հառաչելով ձայն տվեց մորս.

-Մախթում, դրան ինչ ես բացատրում: Սաուկենը, երևում է, մահամերձ է: Ավելի լավ է կուրծք տայիր նրան...

-Ա՛ն բալի՛կս, աղջիկս, ա՛ն...- շշնջում էր մայրս՝ Սաուկենին գրկելով: Իսկ ինքը անկողնին նստած շարունակ օրորվում էր, աչքերն էլ արտասուքով լիքն էին:

-Է՛-Է՛, ինչ ասեմ: Կրծքումդ էլ բան չի մնացել,- տխրագին ասաց հայրս ու փլվեց անկողնու վրա:

Սենյակում լռություն տիրեց, միայն մորս խոսքերն էին հառաչանքի նման հասնում ինձ:

-Օ՛հ- օ՛հ: Փա՛ռք Ալլահին, կարծես թե մի քիչ կա... Ծծի՛ր, աղունի՛կս:

Այդ ժամանակ ձախ կողքիցս վեր կացավ Բաբկենը, կամացուկ կանչեց.

-Մա՛-ա՛ - մա:

Նա նստել էր անկողնում, ապա օրորվեց, ինչպես ծղոտիկը քամուց և ընկավ երեսնիվեր, ասես մեկը հանկարծ բոթեց նրա կրծքին: Մայրս Սաուկենին դրեց և վազեց Բաբկենի մոտ: Գիրկն առավ նրա նիհար, փոքրիկ մարմինը, փաղաքշեց, համբուրեց, շտապեց բերանը դնել իր չոր պտուկը, շարունակ ասելով. «Արև՛ս, անո՛ւշս, սի՛րտս...»- կարծես էլ ուրիշ խոսք չգիտեր:

Հետո մայրս Բաբկենին պառկեցրեց տեղում, սակայն չէր համարձակվում նրանից հեռանալ, մի տեսակ սարսափով նայում էր փոքրիկի երեսին, իսկ նրա արտասուքով լի մեծ, երկնագույնին տվող աչքերը նմանվում էին աշնանա-

յին ջրափոսիկի: Լսում էի նրա հազիվ հասկանալի շշուկ-  
ջը:

-Չազունկնե՛րս: Կյանքում չեմ հիշում, թե այլահից այս-  
քան դժբախտություններ խնդրեի ձեզ համար... Բայց ի՛նչ  
անեմ: Պետք է համբերել, միայն համբերել: Չե՞ որ ուրիշ  
ճար չկա...

Կողքից նայեցի Բաբկենին ու հիշեցի, թե ինչպես վեր-  
ջերս ես ու Պետկա Մարտինովը ջրափոսից հանեցինք  
թռչունի ձագին: Փետուրներն ու աղվամազը կպել էին նի-  
հարիկ, փխրուն մարմնին: Վզիկը բոլորովին երկարել ու  
բարակել էր, իսկ գլուխը ինչպես թելից կախված գնդիկ լի-  
ներ: Հիմա այդպիսի տեսք ուներ նաև Բաբկենը:

Մտորումներս ընդհատվեցին աջ կողքիցս լսվող Չար-  
կենի ձայնով.

-Մա - մա...- հազիվ լսելի կանչեց նա:

-Որդիս, լսում եմ: Գալիս է մայրիկը, գալիս է...

Մայրս վեր կացավ և մոտեցավ Չարկենին: Սակայն ե-  
րեք քայլ էր չէր արել, որ թափով երեսնիվայր ընկավ մեր  
նոտքերի մոտ ու մնաց անշարժ:

-Մայրի կ,- վախեցած բղավեց Չարկենը:

-Մա -ա... աղիողորմ կանչեց Բաբկենը:

Ես էլ հեծկլտալով կրկնում էի այդ ամենագոր խոսքը  
«մայրի կ»: Այն, թվում էր, նույնիսկ մեռածին կարող էր ոտ-  
քի կանգնեցնել: Կամացուկ ծվծվում էր Մաուկենը: Դա-  
տարկ ստամոքսը նրա ձայնը բոլորովին կտրել էր: Պա-  
տասխան չլսելով՝ մենք ամենքս մի ձայնով սկսեցինք լալ  
ու գոռալ: Հայրս սողալով մոտեցավ մորս, նրա գլուխը  
բարձրացրեց և ինչքան ուժ ուներ բղավեց.

-Մախթո՛ւմ...

Պատասխան չկար:

-Մախթո՛ւմ, քեզ ի՞նչ պատահեց: Կյանքի՛ս ընկեր, ինչպե՞ս ես ինձ մենակ թողնում: Ես ի՞նչ պիտի անեմ երեխաներին,- ասում էր հայրս մորս գրկելով ու շարունակ կանչում:

-Արթնացի՛ր, Մախթո՛ւմ: Արթնացի՛ր:

Այդ պահին մեր սենյակը հանկարծ ողողվեց պայծառ լույսով, մեկը դրսից բացեց լուսամուտափեղկերը: Մենք մի տեսակ վերակենդանացանք, կարծես նույնիսկ ուրախացանք: Միայն հայրս խոնարհվել էր մորս վրա, և թվում էր՝ ուշադրություն չի դարձնում լույսին:

Իսկ արդեն դուռն էին բախում: Չարկենը վեր կացավ: Երերալով հասավ դռանը: Բացեց: Նախասենյակ ներխուժեց թնդաձայն Իվան Սեմյոնովիչ Մարտինովը:

-Բոլորդ էլ տա՞նն եք: Բարև ձեզ: Հը՞, կենդանի՞ եք, բարեկամնե՛րս:

Շենքից ներս գալով նա նայեց շուրջը և հավանաբար չկարողացավ բոլորիս տեսնել:

-Ա՛յ քեզ բան,: Ո՞վ կա այստեղ: Վերցրե՛ք այս այլուրն ու երեխեքի համար մի բան թխեցեք...

Իվան Սեմյոնովիչի վերջին բառերն ուղղակի կախարդական էին: Մայրս սթափվեց, ձեռքերը շարժեց ու հազիվ լսելի ասաց.

-Տվե՛ք երեխեքին: Երեխեքին տվեք...

Մարտինովը այլուրի տոպրակը մեկնեց մորս.

-Մախթո՛ւմ, դու վերցրո՛ւ և երեխեքի համար բլիթներ թխի՛ր...

Մայրս, կարծեմ դեռ աչքերն էլ չէր կարողացել բանալ, բայց երկու ձեռքը մեկնեց տոպրակին և ազահուությամբ հափշտակեց...

Այո՛, երևում է այս այլուրի տոպրակը մորս կյանք և ուժ տվեց:

Հաջորդ պահին նա արդեն վառարանի մոտ էր, շտապով մեջը տաշեղ էր լցնում, լուցկին էր չրթացնում... Բոցից լուսավորված մորս այտերը վարդագունել էին և ժպիտը դեմքից չէր հեռանում, երբ շնորհակալությամբ նայում էր Իվան Սեմյոնովիչին, հույսով՝ նայում մեզ...

Տաք վռիկը կերանք ազահուությամբ, այրվելով, վախենալով, թե հանկարծ կարող է անհետանալ: Ամեն մեկս նայում էր մյուսի ամանի մեջ՝ մտածելով, թե նրան ավելի է լցված...

Իվան Սեմյոնովիչն այդ ամբողջ ժամանակ լուռ նստել էր կողքի շրջած աթոռակին, և երևում է, սպասում էր, որ հայրս ուսի վերջացնի: Հետո խոսեց.

-Էհ, ձեր բանը բուրդ է: Նայում եմ ձեզ, դազախ եղբայրներ, և տեսնում եմ, որ դուք շատ դյուրահավատ եք: Ես ձեզ չէի՞ ասում, որ Կուլբերգու ՀՀՍՀ<sup>39</sup>-ն մի՛ ընդունեք: Դա հո մարդ չէ՛, իսկական օձ է: Բայց ինձ լսեցի՞ք:

-Ախր նա հասարակ ժողովրդին ավելի մոտ է, քան Տաուկեբայը,- թույլ առարկեց հայրս:

-Այդ երբվանի՞ց: Հապա մի հիշիր, Ալի Իսաբանիչ:

---

<sup>39</sup> ՀՀՍՀ- կրճատ նշանակում է՝ Հողի համատեղ մշակման ընկերություն, որը 30-ական թվականներին Ղազախստանի տափաստանում արտելային տնտեսության նախնական ձևն էր:

-Թեկուզ հենց այն ժամանակից, ինչ ընկերության մեջ է մտել: Չէ՞ որ նա սկսեց հասկանալ չքավորների վիճակը...

-Ի՞նչ հասկանալ: Ինչպես թալանի՞ չքավորներին: Բայց չէ՞ որ Կուլբերդին հենց Տաուկեբայի դրածոն է,- զայրացած ձեռքով օդն էր կտրում Իվան Սեմյոնովիչը:- Նրան Տաուկեբայն է մեր ընկերության մեջ մտցրել, իր հաշիվներով: Հասկացա՞ր: Ուրիշ բան է դեհկան<sup>40</sup> Օմարը: Նա ինքն իր ջրադացը տվեց ընկերությանը և աշխատում է ինչպես բուլորը: Իսկ Տաուկեբայն ի՞նչ արեց: Տեսավ, որ ընկերության դեմ ինքը մենակ թույլ կլինի, սկսեց ներսից քայքայել: Կուլբերդուն ուղարկեց: Իսկ սա հո Տաուկեբայի անասունը չկոտորեց, այլ հանրայինը: Ահա թե ինչ: Իսկ բայի անասունն ո՞ւր է: Տաուկեբայը քշել-տարել է, ու ինքն էլ՝ անհայտացել: Ասում են՝ սահմանն է անցել: Հո այդպես է, չէ՞: Անհետացել է...

-Այո, այո, հենց այդպես է,- տխուր խոստովանեց հայրս:- Տեսնո՞ւմ ես՝ ինչ չարագործ դուրս եկավ այդ Կուլբերդին...

-Ա՛յ, ես էլ ասում եմ՝ դուք՝ չքավորներդ, չափազանց դյուրահավատ ժողովուրդ եք: Տաուկեբային բռնելու ո՞ւմ ուղարկեցին: Հենց նույն Կուլբերդուն: Ինչպիսի՛ խայտառակություն,- իր և մյուսների դեմ վրդովված գլուխն է շարժում Իվան Սեմյոնովիչը:

-Իսկ դրան՝ բայի պոչին էլ հենց այդ էր պետք. պտույտ եկավ մի բլուրի շուրջ, հանրային ձիերը կոտորեց, լեշերը փռեց տափաստանում...

---

<sup>40</sup> Գյուղացի՝ Միջին Ասիայում:

-Դա ճիշտ է,-համաձայնեց հայրս:- Այդպիսի կեղտոտություն արդեն մենք նրանից չէինք սպասում...

-Չէիք սպասում, դրա համար էլ այդպես դաս ստացաք: Ուրիշներին այնպես եք հավատում, ինչպես մեզ. մեզ համար բոլորը բարեկամ են: Իսկ դրանք ահա թե ինչ տեսակ բարեկամներ են,- սրտնեղում է Մարտինովը:

-Այդ մեկն էլ ես ճիշտ ասում,- նորից հաստատեց հայրս:- Ուրեմն Կուլբերդու փախուստը մեզ համար ավելի կործանարար եղավ, քան Տաուկերայի արտասահման քոչե՞լը...

-Փախուստն ի՛նչ,- անորոշ առարկեց Իվան Սեմյոնովիչը: -Այի, իսկ գիտե՞ս ով է թալանել մթերքի քարավանը, ո՞րը շրջանից մեր աուլն էր գալիս...

Հայրս զարմացած նայում է Մարտինովին, և աչքերի մեջ համր հարցն է սառել՝ «ո՞վ»:

-Այդ նույն Կուլբերդին:

-Կա՛յ բանդիտ: Ավագա՛կ, շա՛ն որդի,- վրդովվում է հայրս, անհանգստանում,- նրան պետք է բռնել: Պետք է բռնել և օրենքի ամենայն խստությամբ դատել...

Նրանք բաժանվեցին ուշ գիշերին, երբ մենք՝ երեխեքս, կշտանալով, խոր քնած էինք:

Չգիտեի, թե որտեղից և երբ են եկել ու մեր աուլում ապրում Մարտինովները, սակայն հիշում էի մեծերի խոսակցությունները, որոնցից գիտեի, որ Իվան Սեմյոնովիչը մեր ընտանիքի առաջին հյուրն է եղել դեռևս իմ ծնված օրը...

Կյանքը մտավ մեր տունը: Կյանքը մտավ ի դեմս այլորի փոքրիկ տոպրակի, որն իր ձեռքով մեր տուն հասցրեց Իվան Սեմյոնովիչը: Հետագայում էլ, հենց որ լսում եմ

«կյանք» խոսքը, իսկույն աչքիս առաջ հառնում է այդ այլուրի տոպրակը: Երկար ժամանակ հենց այդպես էլ կարծում էի, որ կյանքն ամփոփված է սպիտակ տոպրակի մեջ կամ որ տոպրակն ինքը հենց կյանքն է...

Մարտինովի՝ մեզ հարություն տալուց հետո անցավ մի տասը օր, և մեր փոքրիկ քույրիկը՝ Սաուկենը, իր տակաշորերի մեջ նստած, շարունակ ավելի ու ավելի հաճախ էր մեզ վրա բղավում իր բարավիկ ձայնով, և նրա ծիծաղը ես ընկալում եմ որպես կյանքի հաղթանակը մահվան հանդեպ...

Շուտով հայրս առողջացավ, գնաց աշխատելու:

Երեկոները Իվան Սեմյոնովիչը հաճախ գալիս էր մեզ մոտ: Հորս հետ նրանք նստում էին մինչև կեսգիշեր՝ քննարկելով աուլի կյանքի հետ կապված հարցերը: Նրանց խոսակցությունների ժամանակ մենք լսում էինք նոր խոսքեր՝ «կոռպերատիվ», «տրակտոր», «բայական ունեցվածքի բռնագրավում»... Եվ այդ խոսքերը թափանցում էին մեր խաղերի մեջ. «Մա քո գութանը չէ», - սկսում էր ոռնալ Բաբկենը ձեռքիս տեսնելով որևէ աղբակույտից գտնված երկաթե անվիկը: «Բռնագրավման» անվան տակ մենք հաճախ իրարից խլում էինք բոլոր համեղ, ուտելի բաները...

Վրա հասավ աշունը: Ես ու Բաբկենը անձրևային քամոտ եղանակը չէինք սիրում: Այդպիսի ժամանակ ստիպված էինք նստել տանը՝ հաստ, ուղտի բրդից սարքված մուշտակի տակ, և մեզ ու մեզ հայիոյել աշնանն ու ցրտերին: Մի անգամ մայրս սենյակ մտավ արտասովակալած աչքերով: Մորս ետևից ներս եկավ հայրս, սկսեց նրան հանգստացնել.

-Դե վե՛րջ տուր, բավական է,- ասում էր նա,- ու ինքն էլ մոայլվում:

-Ո՞նց թե վերջ տամ,- վրդովվում էր մայրս:- Չե՞ որ եթե Մարտինովը չլիներ, մեր ամբողջ աուլը կոչնչանար: Մեզ խղճալով՝ նա պետական այլուրը տներն էր տանում... Հիմա բանից դուրս է գալիս միայն նա՞՝ է մեղավոր: Նա ինքը հրեն հինգն ունի, բայց ուրիշների մասին էր մտածում, սովից փրկում... Մարֆայի հետ խոսեցի, խեղճը խոսել չի կարողանում. տասը տարով դատապարտեցին մարդուն: Ինչի՞ համար: Ղազախներին օգնելու համար... Իսկ դուք՝ սղամարդիկդ, պաշտպանել չեք կարողանում, լեզուներդ չորացել է...

-Սատանան գիտի, թե ինչ է կատարվում,- տրտնջում էր հայրս:

-Ուր էլ որոշես գնալ, երեք-չորս օր ճամփա պիտի գնաս... Ջհաննամի տակն ենք ապրում...

Մի անգամ՝ առավոտյան, պատուհանից տեսանք՝ երկինքն ու երկիրը ճեփճեփմալ էին: Ծածկելով դիմացի մոտակա խրճիթները՝ մեծ փաթիլներով գալիս էր առաջին մաքուր ձյունը: Հիմա փողոցում խաղալու մասին մտածել էլ չէր կարելի: Ես էլ, Բաբկենն էլ ո՛չ գլխարկ ունեինք, ո՛չ կոշիկ: Ջարկենի գործն ավելի լավ էր: Նա իբր արդեն մեծ էր ու մայրիկին օգնելով տնտեսության գործերում՝ շարունակ բախում էր լինում, իսկ ես ու Բաբիկը անվերջ տխրում էինք՝ պատուհանի մոտ նստած...

Մի անգամ այդպես պատուհանից դուրս էինք նայում, մեկ էլ լսեցինք, որ մեր ետևում դուռը բացվեց, ու երկար ժամանակ չի փակվում: Շրջվեցինք, տեսնենք շեմքից

ձնագնդիների նման մեկը մյուսի ետևից ներս են ընկնում Մարտինովների երեխեքը՝ քրքրված վերարկուներով, որ վրանները կապկպել էին պարանի կտորտանքով...

Ես ու Բաբկենը ա՛յ թե ուրախացանք. հիմա արդեն տանն էլ խաղալու ընկեր ունեինք: Մարտինովները հինգ երեխա ունեին: Ամենամեծը՝ Պետկան, յոթ տարեկան էր: Վանկան՝ վեց: Լենան և Շուրկան երկվորյակներ էին: Նրանք հինգ տարեկան էին: Իսկ հինգերորդը բոլորովին փոքրիկ էր, դեռ ծծկեր:

Մարտինովի երեխեքը շարվել էին իրար կողքի, երկչուս իրար էին նայում: Մենք անմիջապես նրանց մոտեցանք: Մարֆան հրաժեշտ տալով գրկում էր ամեն մեկին, համբուրում: Շտապով, գլուխը կորցրած ինձ ու Բաբկենին էլ համբուրեց, իսկ հետո, առանց ետ նայելու, տնից դուրս եկավ...

Երեկոյան բոլորս միասին պառկեցինք լայն անկողնուն. Չարկենը, Պետկան, ես, Վանկան, Բաբկենը, Լենկան ու Շուրկան: Սառկենին ու Մարտինովների փոքրիկ աղջկան մայրս իր կողքին պառկեցրեց և երեկոյան նրանցից ամեն մեկն աշխատում էր մյուսին բոթել-հեռացնել մայրիկի կրծքի մոտից: Ու միաժամանակ երկուսն էլ լալիս էին: Երբ բոլորը քնեցին, ես, գերապատվությունը տալով Մարտինովի երեխաներից ավագին, մորս հարցրի.

-Իսկ Պետկայի մայրիկն ո՞ւր գնաց:

-Քաղաք: Իր հոր մոտ: Հաց կբերի: Քնի՛ր,- խիստ ասաց նա, որպեսզի այլևս հարցերով չձանձրացնեմ:

Ցերեկը, երբ մեծերը տանը չէին, խաղում էինք:

Տղաները հավաքվում էին մի անկյունում, աղջիկները՝ մյուս: Մեր տանը շատ ուրախ էր: Ճիշտ է, գնալիս մայրս Ջարկենին պատվիրում էր հետևել ինձ ու Բաբկենին, որպեսզի աղջիկներին չնեղացնենք: Իսկ մեր Ջարկենը շատ դաժան է. ավելի շուտ վզակոթիդ կհասցնի, քան մի խոսք կասի: Եվ մենք վախենում էինք մեր ավագ եղբորից: Մակայն, այդուհանդերձ, Բաբկենին հաջողվում էր գաղտագողի մոտենալ Շուրային և ծամից քաշել: Հենց որ Շուրան բղավում էր, նույն ակնթարթին լսվում էր մի չմփոց. Բաբկենը Ջարկենից հերթական ապտակն էր ստանում...

Աղջիկներից ամենամարդամոտը, քնքուշն ու աշխատասերը Լենան էր: Նա ամփոռջ օրը տան գործ էր անում, և մեր սենյակը միշտ շատ մաքուր էր: Նա մյուսներից հաճախ էր քնացնում իր կրտսեր քույրիկին և մեր Սաուկենին, երբ նրանք ուզում էին քնել ու կամակորություն էին անում...

Այդպես համերաշխ ապրում էր մեր մեծ ընտանիքը:

Այսպես ամբողջ օրը խաղալով աննկատելի անցան օրեր և նույնիսկ ամիսներ: Մի անգամ պատուհանից դուրս տեսանք առաջին սառցալուլաները: Ցերեկը նրանցից հնչեղ կաթիլներ էին կաթկթում: Հետո սառույցները բոլորովին հալվեցին, իսկ դաշտում կանաչեց խոտը: Կարծեմ արդեն գարուն էր, և կարող էինք ամբողջ օրը բակում խաղալ...

Այդպես մի օր խաղում էի մեր շենքի մոտ, երբ հանկարծ հայտնվեցի մեկի գրկում: Կինը ինձ ավելի ու ավելի էր սեղմում կրծքին, համբուրում՝ ասելով.

-Վերջապես, ձեզ տեսա, ճուտիկնե՛րս, բալիկնե՛րս...

Հենց որ այդ կնոջ գրկից պոկվեցի, ճանաչեցի նրան: Դա Մարֆա Մարտինովան էր: Թվում էր երկար անջատման ընթացքում կուտակված մայրական ողջ զգացմունքները նա ինձ վրա թափեց և արդեն պակաս կրքոտությամբ էր գրկում ու համբուրում իր երեխաներին: Իսկ դարպասի ետևում տեսա մի սայլ: Բանից պարզվում է, Մարֆայի հետ մեզ մոտ էր եկել և նրա հայրը, այսինքն՝ Մարտինովի երեխաների պապը, շատ ամրակազմ մի ծերուկ, լայնաթիկունք, մեծ շիկահեր մորուքով:

Ես միշտ հետաքրքրասեր էի մեծերի խոսակցությունների նկատմամբ և գլխի ընկա, որ երեկոյան ականջ դնելու բան կլինի: Ավելորդ հետաքրքրասիրության համար մայրս հաճախ էր ինձ հասցնում: Սակայն մարդու բնավորությունը չի փոխվում. այն իրենն անում է: Երեկոյան թեյի ժամանակ շիկահեր մորուքով ծերուկն ասում էր հայրիկիս.

-Տեսա՞ ք այս տարի ինչ ցուրտ ձմեռ էր: Ինչ ուզում էք ասեք, սա երաշտի նշան է: Սակայն կոլտնտեսության համար սարսափելի չէ. մենք արտելով ցորենը շուտ ենք ցանել, գարնանային խոնավության հաշվին կդիմանա... Ա՛յ ձմեռը իմ ու աղջկաս ուրք ու ձեռքը կապեց: Ամեն օր պատրաստվում էինք ճամփա ընկնել, բայց միայն գարնանը հաջողվեց դուրս գալ...

Շիկահեր մորուքովը դազախերեն նույնքան մաքուր էր խոսում, ինչպես իր փեսա Իվանը:

Երեք օրից Մարֆան սկսեց երեխեքին ճամփի պատրաստել: Նույն վերարկուները հագցրեց, պարանի կտորտանքով կապկպեց, և նրանք հերթով, համերաշխ իրար

ետևից դուրս եկան շեմքից ճիշտ այնպես, ինչպես ձմռանը ներս էին մտել:

Դարպասի ետևում պապը նրանց սայլակ նստեցրեց: Իսկ մայրս Մարտինովի երեխաներին հրաժեշտ տալիս գրկում ու համբուրում էր ամեն մեկին: Վերջում մայրս ու Մարֆան էլ գրկախառնվեցին, լաց եղան: Այդ իրարանցման ժամանակ հանկարծ լսվեց Շուրայի ականջ ծակող ճիչը: Բանից պարզվում է մեր չարաճճի Բաբկենն արդեն հասցրել էր բարձրանալ սայլակի անվի վրա ու ձեռքը գցել Շուրայի գայթակղիչ ծամերին...

Ես և Բաբկենը դարձյալ մենակ մնացինք: Ժամանակն առաջ էր շարժվում: Կյանքը փոխվում էր ամբողջ երկրում, փոխվում էին և մեր մանկական խաղերը՝ կրկնելով տեսածը և լսածը...

«Կոլտնտեսություն» խաղերը փոխվում էին «լրտեսներ» խաղի կամ էլ մինչև գոտկատեղը ջրի մեջ մտած լճակի ծակծկող եղեգների միջից անցնում էինք, որպեսզի հետևենք «դիվերսանտներին»: Հետո, երբ շրջիկ կինոն մեր աուլում ցույց տվեց Վ. Ի. Չապանի մասին կինոֆիլմը, մենք արդեն «Չապանից» լավ խաղ չգիտեինք:

Ուսներիս էինք գցում բրդյա չեկմենը<sup>41</sup> կզակի տակ մի կոճակը կոճկում և որևէ կայտառ հորթուկի հեծած՝ հետապնդում էինք «սպիտակ բանդիտներին» ...

Իսկ ինչքան հետաքրքիր է հեռվից նայել, թե այդ «հեծյալի» ետևում ինչպես են ծածանվում չեկմենի փեշերը:

---

<sup>41</sup> Աշնան-գարնանային ազգային հագուստ:

Մակայն մանկության և պատանեկության խաղերը որքան էլ հետաքրքիր լինեն, մի օր վերջ են ունենում: Ինքներս էլ չնկատեցինք, թե ինչպես մեծացանք: Իսկ ինձ այդ բանը հիշեցրեց հայրենիքիս հանդեպ ունեցած պարտավորությունս:

1943 թվականին ինձ գորակոչեցին սովետական բանակի շարքերը, և այդ օրից ինձ մեծացած զգացի: Հպարտություն, հպարտություն, մեկ անգամ ևս հպարտություն: Այն սիրտս էր հորդում անհուն խայտանքով, ստիպում ինձ մտածել. «Ահա թե դու ով ես: Քո երկիրը քեզ համարում է իր որդին, որը, զենքը ձեռքին, պատրաստ է նրան պաշտպանել թշնամիներից»: Եվ որքան ցավալի էր, որ գորակոչման կայանից մի քանի ժամով տուն վերադառնալով՝ տեսա ինչպես հիմար Բաբկենը բակի մեջտեղում ինքնատեղիս հեծած գնացք-գնացք է խաղում...

-Բաբկե՛ն, երեխայությանդ վե՛րջ տուր, արդեն մեծ մարդ ես,- զայրացած ձայն տվի նրան:- Հիմա տանը միակ տղամարդը դու ես մնում...

Մինչ այդ հայրս և Զարկենն արդեն գործող բանակում էին, և Բաբկենը, զարմացած, ոչ այնքան ասածներս էր լսում, որքան ինձ էր նայում, նախանձից վառվում էր, որ ինքն ինձնից մեծ չէ, և որ հիմա ինքը չէ բանակ գնում...

...Երբ մեր երկիրը հաղթանակեց Հայրենական մեծ պատերազմում, ես արդեն կրտսեր լեյտենանտի կոչում ունեի և երկար ժամանակ մնացել էի՝ ծառայելու բանակում: Ամեն տարի արձակուրդին անպայման տուն էի վերադառնում: Այդ արձակուրդներից մեկը 1951 թվականին էր: Այդ ժամանակ մեր ընտանիքն ապրում էր Պավլոդարի մարզի

Բայան-Աուլ շրջանի Լենինի անվան կոլտնտեսությունում... Ավագ եղբայրս՝ Ջարկենը, այնտեղի գյուղատվեստի քարտուղարն էր: Ճիշտն ասած, ձանձրանում էի և մի անգամ ձիս հեծա, վերցրի երկփողանի հրացանն ու հենց այնպես տափաստան գնացի:

Գնում եմ տափաստանով, բլուրներն ինձ ասես քաշում, շարունակ առաջ են տանում: Այդպես բավական հեռացել էի տնից, երբ հանկարծ հեռվից մի մեծ լիճ տեսա, որ կարծես վիթխարի հայելի լիներ: Լճի հակառակ ափին քուլա-քուլա մի թեթև ծուխ էր բարձրանում: Ձիս խթանեցի և սլացա դեպի ծուխը:

...Ափի մոտ տեսա մի անշարժ նավակ, իսկ մեջը՝ ճերմակ մորուքով ռուս ծերունու: Նա նստել էր կորացած և կարթ էր ջուրը զցում: Ինձ նայեց ճերմակած հոնքերի տակից, սրահայացք, թափանցող, երկնագույն աչքերը թեթևակի կկոցած: Սիրալիր ողջունեցի նրան ռուսերեն: Նա նույնպես սիրալիր պատասխանեց: Հետո հարցրի.

-Այս լիճն ինչպե՞ս է կոչվում:

Ծերունին կիսով շրջվեց դեպի ինձ և առանց պատասխանելու հարցրեց.

-Իսկ դու որտեղացի՞ ես:

-Բայան-Աուլցի...

-Ասում ես Բայան-Աուլցի՞,- մտածկոտ ասաց ծերունկն ու երկար ժամանակ նստել էր լուռ, սև ծխամորճի ծուխը ներծծելով:- Հը՛մ... Գուցե դու իրոք չգիտես այս լիճը: Մա Շիբինդոյն է: Այստեղ ձուկ կա, ուրիշ ոչ մի հետաքրքիր բան: Բայան- Աուլցիներից իսկի մարդու ճանաչո՞ւմ ես:

-Օրինակ ո՞ւմ,- հետաքրքրվեցի ես:

-Ասենք թեկուզ Ալի Իսաբաևին:

Հարցն այնքան անսպասելի էր, որ ակամա քմծիծաղ տվի, իսկ ծերուկը երևի վիրավորվեց:

-Ինչ է, ճիշտ չհարցրի՞: Գուցե հակառակն է՝ Ալին Իսաբային: Ո՛չ, ո՛չ, չի կարող պատահել...

-Դուք ճիշտ հարցրիք,- ասացի որքան կարելի է սիրավիր:- Բանն այն է, որ ես Ալիի որդին եմ...

Ծերուկն ընդոստ ինձ դարձավ, նույնիսկ կարթը ձեռքից քաց թողեց: Նայում էր ինձ զարմանքով: Հետո նավակից դուրս թռավ և ձեռքերն առաջ մեկնած դեպի ինձ նետվեց:

-Ահա թե ինչպիսին ես: Ուրեմն դու Ջարկե՞նն ես:

-Ո՛չ,- ես նրանից փոքրն եմ՝ Կալկենը:

-Վա՛յ, վա՛յ,- սրտանց ծիծաղեց ծերուկը:- Եթե դու այդպիսին ես, ուրեմն Ջարկենն իսկական հսկա կլինի, չէ՞:

Ծերուկն ինձ գրկեց, ձիուց ցած քաշեց և գոհունակությամբ թփթփացնում էր մեջքիս:

-Իսկ ես Ձեզ չեմ ճանաչում,- խոստովանեցի ես:

-Դու ինձ որտե՞ղից ճանաչես, ինձ նման ծերուկին: Գուցե երբևէ լսե՞լ ես Իվան Սեմյոնովիչ Մարտինովի մասին: Հը՞:

-Ինչպես թե, իհարկե: Հայրս ու մայրս շատ են պատմել Ձեր մասին... հուզմունքից սկսեցի խեղդվել,- շտապով օդ կուլ տալով՝ հարցրեցի.- Իսկ Պետկան, Պետյան ինչպե՞ս է:

Ծերուկի ձանը հանկարծ դողաց:

-Պետյան ինչ: Պետյան ռազմաճակատից չվերադարձավ, գոհվեց... Բանտն ու որդուս մահն էլ ինձ ծերացրին...

Իվան Սեմյոնովիչն սկսեց շտապով կարթերը հավաքել: Զանգքեց ափին վառված կրակը: Մի վտիտ ձի լծեց իր թեթև սայլակին և հրամայեց ինձ հետևել իրեն:

-Մենք այստեղից մոտ ենք սպրում. ահա այն բլրակի ետևում,- ցույց տվեց նա լճի հյուսիսային ափը:-Գնա՛նք, գնա՛նք, որդի՛ս, գնանք ուրախացրո՛ւ Մարֆա մայրիկին:

Ճանապարհին Իվան Սեմյոնովիչի ժլատ պատմածից իմացա, որ նա լրիվ ամբողջ ժամկետը նստել է բանտում և տուն է վերադարձել պատերազմից անմիջապես առաջ:

Հիմա Մարտինովներն ապրում էին Կարազանդայի մարզի Օսոկարովսկի շրջանի «Կարմիր հողագործ» կոլտնտեսության անասնապահական ֆերմայում: Հենց որ շրջվեցինք լճի հյուսիսային ափին ընկած բլրի ետևը, անմիջապես հայտնվեցինք ֆերմայում. տափաստանում կար մեն-մենակ մի տնակ և անասունների փարախը:

Տնակից դուրս եկավ կորամեջք մի պառավ: Իվան Սեմյոնովիչը ձայն տվեց նրան.

-Մարֆա՛, հապա մի տես ի՛նչ հյուր եմ բերել...

Մարֆան, ձեռքն աչքերի վրա պահած, երկար նայում էր ինձ, հետո հանկարծ ձեռքերն իրար զարկեց.

-Չի կարող պատահել: Տե՛ր Աստված: Ինձ թվում է՝ նա Բայան-Աուլից է... Այո՛, այո՛: Նա իսկ և իսկ Մախթումի նման է...

Նա մոտեցավ ինձ, ճակատս համբուրեց: Այդ ժամանակ բալկ դուրս եկավ մի մարմնեղ տղա, ներկայացավ.

-Իվան Իվանովիչ Մարտինով:

-Վանկա, մեր Վանյուշա՞ն էս,- բղավեցի ես և մենք գրկախառնվեցինք, հերթով իրար վեր էինք նետում, իրար մեջքի խփում:

Մարֆան մեզ ներս կանչեց, արագ սեղան բացեց:

Ափսոս որ Լենան և Շուրան մեզ հետ չէին: Նրանք վաղուց ամուսնացել էին: Մեկն ապրում էր Կարազանդայում, մյուսը՝ Բալխաշում: Իսկ Մարտինովների կրտսեր աղջիկը, որ մորս կաթը ծծելու համար կոճում էր մեր Սաուկենի հետ, այստեղ էր, մեզ մոտ: Նա էլ իրար էր անցել սեղան սարքելու. տապակած, եփած խորտիկներ է մեզ հրամցնում: Հիացմունքով նրան էի նայում: Ամուսինն աշխատում էր ֆերմայում որպես նախրապան և հիմա անասունների հետ տափաստանում էր...

Երբ առաջին գավաթները բարձրացրինք, բոլորս լուռ խմեցինք: Եվ Վանյուշան, սիրելի Վանյուշան, որ հիմա սպա է Հեռավոր Արևելքում և ինձ նման տուն էր եկել արձակուրդին, հորն ասաց.

-Հայրիկ, ես ու Կալկենը վաղուց իրար չենք տեսել: Ինչքա՛ն իրադարձություններ են եղել մեր բաժանվելուց հետո: Մի՞ թե մենք խոսելու բան չունենք:

-Երևի այդպես է լինում, որդի՛ս,- մտախոհ, կամացուկ ասաց Իվան Սեմյոնովիչը:- Ի՞նչը կարելի է համեմատել կյանքի հետ: Դուք տեսել եք կյանքը, մեծ, իսկական կյանքը: Իսկ իրական կյանքը չի սիրում երկարաբանել, հիմա նրա մասին սիրտն է խոսում... Ահա՛ թե որն է գլխավորը, որդի՛ս...

ԳՐԱԿԱՆ  
ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ







*Чокан Валиханов*

**ՉՈԿԱՆ ՎԱԼԻԽԱՆՈՎ**  
(1835-1865 թթ.)

## ՆԱՄԱԿՆԵՐ Ֆ. ԴՈՍՏՈՆԵՎՍԿՈՒՆ

*Ֆ. Մ. Դոստոնսկուն*  
*5 դեկտեմբերի, 1865թ., Օմսկ*

Հարգարժան Ֆեոդոր Միխայլովիչ,

Շտապում եմ օգտվել ընձեռնված հնարավորությունից, որպեսզի Ձեզ գրեմ այս նամակը: Ձեր մեկնելուց հետո միայն ես գիշերեցի Ձեր իջևանած քաղաքում և հաջորդ օրը ճանապարհ ընկա: Այդ երեկոն ինձ համար սարսափելիորեն ձանձրալի էր: Բաժանվել այն մարդկանցից, որոնց ես այնպես սիրեցի, և որոնք նույնպես բարյացակամ էին իմ հանդեպ, շատ և շատ ծանր էր:

Ինձ այնպես հարազատ էին այդ սակավաթիվ օրերը, որոնք անցկացրի Ձեզ հետ Սեմիպալատինսկում, որ այժմ միայն այդ օրերի մասին եմ մտածում, ինչպես նորից լինեմ Ձեզ մոտ: Ես զգացումներս և բարի կամեցողությունս արտահայտելու վարպետ չեմ, բայց մտածում եմ, որ այդ չէ

էականը: Դուք, իհարկե, գիտեք՝ ինչպէս եմ ես Ձեզ նվիր-  
ված և ինչպէս եմ Ձեզ սիրում:

Այստեղ Օմսկ գալով ինձ անախորժություն եր սպա-  
սում՝ բաժանվել իմ լավագոյն ընկեր Ալեքսանդր Նիկոլա-  
նիչ Տուրիկովից, ով այժմ գալիս է Ձեզ մոտ Մեմֆայալա-  
տինսկ:

Երաշխավորում եմ Ձեզ, բարյացակամ Ֆեոդոր Միխայլո-  
վիչ, այդ բարի մարդու համար: Դուք նրան պետք է սիրեք և  
որքան շփվեք նրա հետ, ավելի շատ կսիրեք: Օմսկը այն-  
քան վանող է իր ասեկոսներով և շարունակական խար-  
դավանքներով, որ ես առանց կատակի մտածում եմ այն  
թողնելու մասին: Ինչպէս եք Դուք մտածում այդ մասին:

Խորհուրդ տվեք, Ալեքսանդր Միխայլովիչ, ինչպէս  
կյանքը կազմակերպել դեպի ավելի լավը: Դուրովը ինչ որ  
այնքան էլ լավ չէ: Այստեղ թվում է, որ նա այնքան էլ լավ չի  
զգում իրեն պաշտոնյայի ճարմանդով, այս ամենը՝ իմի-  
ջիայլոց: Ձեզ այս ամենի մասին կարող է ավելի մանրա-  
մասն զեկուցել Տուրիկովը:

Ինչպէս անցկացրիք ժամանակը Բառնաուլում խորա-  
թափանց դատողություններում... միստիֆիկացված <sup>42</sup>  
անձնավորության հետ: Իմ կողմից խոնարհաբար ողջու-  
նեք ինձ համար շատ սիրելի, գաղտնի խորհրդական Վա-  
սիլի Պետրովիչին: Կովրիգինը նրանից սրտնեղած է, որ ո-  
չինչ չի գրում: Իմիջիայլոց, արդյոք երկար պե՞տք է վիրա-  
վորել որբին: Ի դեպ, որբերի մասին: Վերջին երեկոյին ես

---

<sup>42</sup> Բնագրում այսպէս է:

Ձեր խորհրդով սիրով էին զբաղված Ս-ի հետ: Հարցրեք նրան, կարծում եմ մենք երեկոն հաճելի անցկացրինք:

Այժմ մնաս բարով Ֆեոդր Միխայլովիչ: Շուտով ես կգրեմ ավելի մանրամասն և երկարաբան: Սպասում եմ Ձեր պատասխանին: Աննա Անդրեևնային ես տվեցի Ձեր նամակը: Նա, թվում է, շատ գոհ է:

*Ձեր նվիրված ծառա Չոկան Վալիխանով*

*Ֆ. Մ. Դոստոևսկուն*

*18 հունիսի 1859թ.*

Թանկագին ընկեր Ֆեոդոր Միխայլովիչ, ես խոստացա քեզ գրել Կազանից, սակայն, տարբեր պատճառների հետևանքով գրում եմ Սիբիրից՝ Պետրոպավլովսկից, ուր եկել եմ երեկ երեկոյան և որտեղ և սպասում եմ գեներալ-գուբերնատորին: Հետո մտածում եմ գնալ ուղիղ իմ մոտ՝ Հորդա: Իմ առողջությունը ոչ լավ է, ոչ վատ, որովհետև հագում եմ, ինչպես առաջ, թեև կումիս եմ խմում, ընդ որում, տեսնենք՝ ինչ ազդեցություն կթողնի տափաստանային օդը, սայլակառքը: Այժմ ես քայքայված եմ թե՛ բարոյապես և թե՛ մարմնապես և շատ գրել չեմ կարող, և քայքայվել եմ նրանից, որ Կազանում ինձ ուղեկցորդ վերցրի և այդ պարունը մահու չափ ձանձրացրեց ինձ, իսկ նրանից ազատվել ոչ մի ձևով չեմ կարող: Նրա միայն ներկայությունը ծվատում է հոգիս և կատաղություն պատճառում:

Ահա, սիրելի՛ ընկեր, ինքս ինձ տանջանք ստեղծեցի, և տեղին է ասելը, որ մի՛ վերցրու այսուհետև ուղեկիցներ քեզ հետ: Գրել այլևս չեմ ցանկանում, կներես, սիրելի՛ս, ողջունի՛ր իմ կողմից Մարինա Դմիտրենային, Միխայիլ Միխայլովիչին և նրա տնեցիներին, Մայկովին, Պոլունսկուն և մեր բոլոր ծանոթներին: Ների՛ր, կարճ գրելու համար: Մյուս անգամ կաշխատեմ ավելի ընդարձակ գրել:

*Վայլիխանով:*

*Գրիր խնդրեմ՝ հասցեագրելով Կոկչետավ, Պետրոպոլի-  
լովսկի միջոցով Տոբոլյան նահանգ:*

*Ֆ. Մ. Դոստոևսկուն*

*Հունվարի 14, 1862թ., Կիրգիզյան տափաստան*

Թանկագին ընկեր, Ֆեոդոր Միխայլովիչ,

Դու հավանաբար ենթադրում ես, որ ես վաղուց մեռել եմ, իսկ ես չնայած դրան, ողջ եմ, որպես որի ապացույց կարող է ծառայել այս նամակը: Մինչև այժմ չեմ գրել Քեզ տարբեր հարգելի պատճառներով, որոնք այժմ կշարադրեմ: Նախ և առաջ՝ ես ինքս մտածեցի հոկտեմբերին լինել Պետերբուրգում, ապա հիվանդացա և թողեցի այդ մտադրությունը մինչև դեկտեմբեր: Այն պատճառով, որ դեկտեմբերին իմ առողջությունը շատ թույլ էր, ուստի ես հակվեցի սիբիրյան բժիշկների խորհրդին՝ ձմեռը անցկացնելու տափաստանում, իսկ այժմ ինքս եկա այն եզրակացությանը, որ իմ առողջությամբ Պետերբուրգում մշտապես ապրել չի կարելի:

Այս պատճառով ես ցանկանում եմ հյուպատոսի սեղ ստանալ Կաշգարում, կամ հակառակ դեպքում պաշտոնաթող լինել և ծառայել ինձ մոտ՝ Օրդայում, եթե ընտրվեմ: Կաշգարում ես կստանամ ապրուստի լավ միջոց, եղանակը լավ է, կարող է պատահել, որ առողջությունս վերականգնվի: Եթե դա չհաջողվի, տափաստանում ես վատ չի լինի: Տնտեսությամբ կզբաղվեմ, առևտրով, ժողովրդի ընտրելու դեպքում կլինեմ ազնիվ պաշտոնյա և հավանաբար իմ հայրենակիցներին ավելի օգուտ կբերեմ, քան նրանց անգրագետ և վայրի սուլթանները:

Մեկ կամ երկու տարուց մենք կգնանք Պետերբուրգ, մեր սիրելի ընկերների հետ կանցկացնենք մի քանի հաճելի ամիսներ, կպաշարենք նոր գրքեր և նոր գաղափարներ և դարձյալ կվերադառնանք Հորդա՝ կիրգիզների մոտ: Կարծում եմ՝ դա այնքան էլ վատ չի լինի, սիրելիս՝ Ֆեդյա: Այս ամենը շատ լավ է և միանգամայն հնարավոր, եթե իմ առողջությունը որոշ չափով ուղղվի: Ճիշտ է, այժմ ես ինձ զգում եմ համեմատաբար լավ, բայց ոչ այնպես, ինչպես որ պետք է:

Այսպիսով, Ես ձմեռը կմնամ Հորդայում, ամառը նույնպես կանցկացնեմ Հորդայում, որպեսզի անցնեմ կումիսով բուժման ամբողջական կուրս, և աշնանը, եթե ողջ մնամ, կհայտնվեմ Պետերբուրգում և Քեզ հետ կգրկախառնվեմ այնպես ուժեղ, որ հավանաբար կճչաս:

Տափաստանում, եղբայր, միայն ձանձրալի է, փոխարենը ծուլանում եմ, ինչպես ցանկանում եմ, և ոչ ոք չի խանգարում: Հետևելով սիբիրյան իմ բժշկի խորհրդին, ով հար-

գանքի արժանի անձնավորություն է (դու նրան չգիտես), ես որոշել եմ ոչինչ չանել:

Ոչինչ չեմ գրում, ոչինչ չեմ կարդում, մի խոսքով չեմ հյուծում մտավոր կարողություններս. սրանում է կայանում իմ բուժումը, և դրանից է առաջ գալիս իմ ձանձրույթը: Այստեղ կարելի է գտնել ուրիշ տեսակի զբաղմունքներ՝ որս արծվի և շան հետ, հրացանով և այլն, սակայն իմ անիծյալ առողջությունը ոչ մի կերպ թույլ չի տալիս: Միայն թե պառկիր: Ինչ է անում Միխայլո Միխայլովիչը, ինչպես է քայլում նրա փոքրիկ երեխան և մեր բարի ազգական «Վրեմյան»: Ես թերթեր չեմ ստանում և այդ պատճառով ոչինչ չգիտեմ: Ողջույններս փոխանցիր Միխայլո Միխայլովիչին, Նիկոլային և Ձեր բոլոր բարեկամներին: Մայկովին և նրա կնոջը փոխանցիր իմ սրտանց ողջույնները, Պոլոնսկուն, Ստրախովին նույնպես: Եթե տեսնես Նիկոլայ Կուրոչկինին, ասա նրան, որ պատրաստվում եմ նրան գրել:

Այժմ իմ խնդրանքը Քեզ: Կարդալու ոչինչ չկա, ինչպես Քեզ ասացի: Այս պատճառով ուղարկեք «Վրեմյա», հետո կհաշվենք: Քո միջոցները եթե թույլ են տալիս, գրվիր ինձ համար «Սովրեմեննիկը»: Իմ հասցեն. Կոկչետովյան կայարան, դեպի Պետրոպավլովսկ, Արևմտյան Սիբիր:

Զմոռանաս. Ուղարկիր Քո լուսանկարչական քարտը և նույնը հավաքիր բոլոր իմ լավ ծանոթներից, ովքեր ինձ խոստացել են՝ Մայկովը, Պոլոնսկին, Կրետովսկին:

Մարիա Դիմիտրենային հայտնում եմ իմ խորին հարգանքը, հուսով եմ, որ առողջ եք, չմոռանաք մեզ՝ մեղավորներիս:

*Վալիխանով:*

Սիրելի բարեկամ Ֆեոդոր Միխայլովիչ,

Քո նամակը այն ծանուցմամբ, որ շուտով գնալու ես արտասահման, ես վաղուց եմ ստացել և այդ ժամանակից շարունակ պատրաստվում եմ գրել և, ինչպես տեսնում ես, այնուամենայնիվ վերջապես գրում եմ: Հավանաբար դու մտածում ես, թե Աստված գիտի ինչ է պատահել ինձ: Արդյոք չե՞մ մահացել, արդյոք հիվանդ չե՞մ:

Ես, իմիջիպալոց, ողջ եմ, թեև ինձ զգում եմ շատ վատ, ինչպես ֆիզիկապես, այնպես և բարոյապես: Առաջին հերթին՝ ձանձրույթը, երկրորդ՝ անսահման ջղայնությունը կիրգիզական անհետությունից, որն ստիպված տանում եմ ամեն ժամ և ամեն րոպե: Այդ ամենից ստացած տպավորությունը դառնում է ավելի անտանելի, երբ չես տեսնում հույսը ինչ-որ ժամանակ ազատվել շրջապատող դատարկության ճնշումից:

Ես մտածում էի ինչ-որ ձևով սուլթան դառնալ, որպեսզի ինձ նվիրելի հայրենակիցներիս օգտավետ լինելու գործին, պաշտպանել նրանց պաշտոնյաներից և հարուստ կիրգիզների բնությունից:

Բոլորից շատ ես մտածում էի այն մասին, որ իմ օրինակով հայրենակիցներիս ցույց տամ, թե նրանց համար որքան օգտակար կարող է լինել կրթված սուլթան-կառավարողը: Նրանք կտեսնեին, որ իսկապես կրթված անձնավորությունը նույնը չէ, ինչ որ ռուս պաշտոնյան, որի գործո-

դություններով նրանք իրենց կարծիքն էին կազմում ռուսական դաստիարակության մասին: Այս նպատակով և համաձայնեցի Ատրասարյան նահանգի ավագների ընտրված սուլթան լինել, սակայն ընտրությունը չանցավ առանց տարբեր չինովնիկական խաբեությունների: Այդ պարոնները, ինչպես նահանգային, այնպես և գերատեսչական, բոլորով ընդվզեցին դրա դեմ: Դու հասկանում ես ինչու:

Նահանգայինները կգրկվեին մի քանի հազարից, որոնք նրանք պոկում էին ավագ սուլթանից, իսկ գերատեսչականները, ինչպես եթե ես դառնայի սուլթանը, պետք է հաշտության գային: Տեսնում ես, պաշտոնյաների համար այս հարցը վերածվել էր լինել-չլինելու հարցի: Ընդ որում, պետք է նշել, որ իմ կողմում ռուսական իշխանություններից միայն պրն. Գուտկովսկին էր, ով այդ ժամանակ նահանգապետի պաշտոնն էր վարում և կազմակերպել էր ընտրությունները: Պաշտոնյաները, սակայն, սկսել էին հրահրել հարուստ հորդանների փառասիրությունը և վախեցնել նրանց, որ եթե Վելիխանովը լինի սուլթան, ապա բոլորի համար վատ կլինի: Նա, որպես թե հավասարության ըմբռնումն ունի և ըստ հարստության ու ծագման ձեզ չի տարբերակի սովորական կիրգիզից:

Շրջանառության մեջ դրվեց այն միտքը, որ ես չեմ հավատում Աստծուն և որ Մոլիամեդի հետ գտնվում եմ անձնական թշնամության մեջ: Հասկանալի է, որ նման բաները կիսավայրենի և իր սովորույթներին նվիրված ժողովրդի վրա չէին կարող իրենց ազդեցությունը չթողնել: Հատկապես, երբ տարածվում էին ռուս մայրների (այսպես էին

կիրգիզները անվանում բոլոր ռուս պաշտոնյաներին) կողմից: Իմ հայրենակիցները, ինչպես դու ինքդ գիտես, միշտ կատարում են ռուսների հրահանգները, կարող է պատահել, ելնելով արևելյան քաղաքավարությունից:

Հակառակ կուսակցությունը, որը նվիրված է ինձ, կազմված է երեք հնահայատակ շրջաններից և այդ օկրուգի բոլոր սուլթաններից: Սկսվում են ընտրությունները: Դրանից առաջ զիջերը հակառակորդ կուսակցությունը այցելում է նահանգապետի քարտուղարին՝ բավարական գերմանացու, ով քրոջ հետ թողել էր հարազատ Մյունխենը, որպեսզի թալանի կիրգիզներին անկախ Թաթարիայում և նրանց փողերով կնոջը կարի «փայլփլուն զգեստ ցիտրոնային ժապավեններով»: Ընտրություններում ես հաղթում եմ: Ինձ ընտրում են ձայների մեծամասնությամբ: Ես՝ 25, իսկ հակառակորդս 14 ձայն է ստանում: Ըստ օրենքի՝ ավագ սուլթանին ընտրում են առաջին սուլթանները և կիրգիզները, ովքեր ունեն աստիճան կամ ինը տարի ծառայում են օկրուգում: Երկրորդ՝ սուլթանը հաստատվում է ձայների մեծամասնությամբ: Երրորդ՝ ավագ սուլթանը ընտրվում է գերազանցապես սուլթաններից: Իմ հակառակորդը հասարակ կիրգիզ էր: Դա սկզբունքորեն էական չէ, բայց նա անգրագետ էր և նախկինում մի քանի անգամ դատված:

Գործն, իհարկե, վճռված էր: Ես ունեմ օրինական բոլոր հիմքերը, այդ թվում որպես կրթություն ունեցող անձնավորություն, պետք է նախընտրելի լինեի վայրի հորդայականից, եթե անգամ ընտրվեի ձայների քիչ թվով: Նահանգապետն ասում է, որ «Հուսացեք, պարոն Վելիխանով», ես

մտածում եմ, մի թե դեռ չհուսամ, եթե օրենքն իմ կողմն է: Սակայն, հակառակորդս չի հանգստանում: Նա փորձով գիտի, որ փողով կարելի է ամեն ինչ անել: Անցնող ճմռանը նա Օմսկ է տանում երեք հազար ռուբլի և ազատում է երկու ձերբակալվածների: Այդ գործում նրան օգնեց նահանգապետի քարտուղարը, ով այժմ ասում է նրան. «Հավաքի՛ր փողերը և ուղարկի՛ր Օմսկում գտնվողներին, կդառնաս խան»: Փողերը գնում են Օմսկ: Ես, թեև, շատ եմ կարդացել մերկացնող հոդվածներ, բայց այս անգամ մտածեցի, որ կամաչեն տականքները, որ ես անհայտ մեկը չեմ: Վստահությունը ինձ համակեց: Հանկարծ լուր եմ ստանում, որ նրանց գնալը առանց հաջողության չի անցել և որ զեներալ-նահանգապետը չի ցանկանում ինձ որևէ կերպ հաստատել:

Նաև ճիշտ է, որ օրենքները մեզ մոտ Ռուսիայում առայժմ դեռ գրվում եմ ոչ զեներալների համար: Ինձ նաև հայտնի է, որ զեներալները ավելի շատ սիրում են բնիկ կիրգիզներին, որովհետև նրանցում, զիտեք, ավելի շատ է այդ արևելյան շողոքորթությունը. «Գիրեյը նստեց, հայացքը խոնարհեց, նրա շրթունքներին ...» և այլն:

Սակայն այդ ամենով հանդերձ, պետք է խոստովանել, ես այդպիսի անակնկալ չեի սպասում: Ումի՞ց՝ իմ ընկերոջից: Դու պատկերացրու մեր դրությունը (ես ասում եմ այն կիրգիզների մասին, ովքեր կրթություն են ստացել Ռուսիայում): Մեր հայրենակիցները մեզ համարում են ուրացողներ և անհավատներ, որովհետև, համաձայնիք ինքդ, դժվար է առանց համոզումների, միայն ընդունված կարգի

համար, օրը հինգ անգամ փառաբանել Աստծուն: Իսկ գեներալները մեզ չեն սիրում, որովհետև (իմ մոտ) քիչ է այդ արևելյան շողոքորթությունը: Սատանանա գիտե, թե ինչ է դա, թեկուզ և անապատ հեռանա:

Խնդրում եմ խորհուրդ տուր ինչ անեմ: Վիրավորանքի փոխահաստուցում պահանջեմ, ըստ ինձ նույնն է, ինչ որ ներել սահմանադրությանը, կնաստեցնեն, հետո Մակարի մոտ՝ արոտավայր կուղարկեն: Ես արդեն գրել եմ իշխանության որոշ ներկայացուցիչներին Պետերբուրգ, իսկ Դուդրան հաղորդիր ավելի հրապարակայնություն, պատմի՛ր մեր բոլոր ընկերներին, թող տարածվի քաղաքում:

Միխայիլ Միխայլովիչին և նրա ողջ ընտանիքին փոխանցիր իմ անկեղծ խոնարհումը, հավաստիք իմ հարգանքը Մարիա Դմիտրևնային, Նիկոլային ողջույններս: Իմ ողջույնները բոլոր նրանց, ովքեր կհարցնեն իմ մասին:

**Վալիխանով:**

*Իմ հասցեն, հավանաբար, Դու հիշում ես, սիրիդյան անվանումները Քեզ համար այնպես անորսալի չեն, ինչպես հոգնած պետերբուրգցու համար: Համենայն դեպս. Կոչետովյան կայարան, Պետրոպավլովսկ քաղաքի մոտ, Արևմտյան Սիբիր:*

«ՀԵՂԻՆԱԿԻՑ»<sup>43</sup>

Սկսեցի պատմվածքներով: Ուսանողական տարիներին տպագրվում էի մանկական և երիտասարդական թերթերում: Աշխարհագրականը ավարտելուց հետո ընդունվեցի Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի դազախերենից ռուսերեն թարգմանություններ կատարող թարգմանիչների խումբը: Թարգմանում էի արձակ և չափածո:

Պրոֆեսիոնալ գրական աշխատողը պետք է տիրապետի բոլոր ժանրերին: Դասընթացները չեմ հիշում: Հիշողությանս մեջ մնացել են առանձին դրվագներ: Պրոֆեսոր Պուխովը ոչ բարձրահասակ, ազնվական մտավորական ծերունի՝ սիրահարված Պուշկինին: Առաջին իսկ աշնանը մեզ համար կազմակերպեց ավտոբուսով ուղևորություն Բոլդինո: Հոկտեմբերյան կապարյա անձրև: Անանցանելի ճանապարհներ: Մինչև հասնելը, մի կիլոմետր առաջ մեքենան խրվեց ճանապարհին, մնաց: Գյուղի կողմից ճամփեզրով տղամարդիկ էին գալիս: Ուսանողները շրջապատեցին՝ կենդանի բոլդինյան է. «Պապի, արդյոք Պուշկինին տեսել ես: Նա ձեզ մոտ Բոլդինոյում է ապրել»: Գյուղացին հայացքը դարձրեց անտառում երևացող գյուղին և հանգամանորեն քացատրեց. «Ես ամառը Կրայուխայում

---

<sup>43</sup> Ներածություն «Փոխաբերությամբ վերափոխելով աշխարհը» գրքի, հոբեյանական հրատարակություն, Ալմա Աթա, 1996:

եմ անցկացրել, աղջկաս եմ օգնել: Պատավա, ով նրան գիտի, հնարավոր է՝ օթևան է տվել: Այստեղ տարբեր մարդիկ են լինում: Իսկ ինչպիսին է նա»:

Այս հանդիպումը ավելացրեց մեր եռանդը, և մենք միանգամից դուրս հանեցինք խրված ավտոբուսը:

Պրոֆեսոր Վոդոլագինը (մենք մեր մեջ, չգիտես ինչու, նրան ասում էինք բարոն Վոդո-Վլագեն) սովորեցնում էր ՍՍՀՄ պատմություն: Նա Ստալինգրադի մարզկոմի նախկին քարտուղարն էր գաղափարախոսության գծով: Հին հակումներից թվում է, թե մնացել էին միայն ստալինյան բեղերը: Նորն էր պաշտպանում, գլուխը սավիրել էր Խրուշչովի նման: Եվ այժմ, հետադարձ հայացք նետելով, ես մտածում եմ, որ նա հեռավոր ապագան էր կանխատեսել՝ հոնքերով իսկը Բրեժնևն էր: Ճանաչողական դասախոսություններում, ստուգելով նոր հավաքված խմբի գիտելիքները իր առարկայից, անհատական մոտեցում էր ցուցաբերում: Վրացուն հարցնում էր Գեորգիյան պայմանագրի մասին, որով Վրաստանը մտավ Ռուսաստանի հովանավորության ներքո: Ուկրաինացուն տանջում էր Պերեյասլավյան Ռադայի փաստաթղթերով: Ինձ նա հետևյալ հարցը տվեց՝ աչքով անելով լսարանին. «Հապա պատմիր, երբ առաջին անգամ Դուք մտաք Ռուսիայի կազմի մեջ»: Ես խնդրեցի ճշտել. «Դուք ասելով նկատի ունեք Ղազախական ՍՍՀ»-ն:

Հին ռուսական գրականությունը դասավանդում էր պրոֆեսոր Սիդելնիկովը: Աուեզովի հետ Մոսկվայում հրատարակել էր դազախական հեքիաթները, որի համար

երկուսին էլ մեղադրել էին բուրժուական նացիոնալիզմի մեջ, որովհետև ժողովածուի մեջ տեղ էին գտել հեքիաթներ, որոնց գործող անձինք էին իմաստուն խաները և հարուստները:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՅԱՆՔՆ Է

Հենց Սիդելնիկովը ինձ կուրսային աշխատանքի թեմա առաջարկեց «Ասք Իգորի գնդի մասին»: Պրոֆեսորի հանդեպ հարգանքից ելնելով՝ ես շատ լուրջ վերաբերվեցի աշխատանքին, ոչ թե մի քանի էջ արտագրեցի դասագրքից, ինչպես որ պետք էր անել, այլ գնացի Լենինյան գրադարան, սուզվեցի քարտարանները և կուրսայինը ավարտեցի տասնհինգ տարի անց «Ազիյա»<sup>44</sup> գրքով:

...Երեքշաբթի օրերն անցկացվում էին ստեղծագործական սեմինարներ: Մեր խմբին ղեկավարում էր բանաստեղծ Լև Օզերովը՝ փորձառու թարգմանիչ: Սեմինարին տղաներ և աղջիկներ կային Մոսկվայից, Լիտվայից, Ադրբեջանից, Վրաստանից, Հայաստանից, Չեչնո-Ինգուշեթիայից: Շատերն արդեն այլ ԲՈՒՀ-երի դիպլոմներ ունեին: Մտածող, գիտեցող, ազատ իրենց մտածումներում և ամեն ինչի հանդեպ գնահատականներում: Մենք աշակերտներ և ուսուցիչներ էինք մեկս մյուսի հանդեպ: Այստեղ ձևավորվում էր

---

<sup>44</sup> «Аз и Я»՝ բառախաղ է, որ նշանակում է Ազ –ը սլավոներենի առաջին տառը և Յ՝ ես, որով գրքի իմաստը դառնում է սլավոնականը և ես՝ Ասիան:

աշխարհայացքը, խմբագրվում էր բնավորությունը: Թիմուր Ջիլֆուղարովը, Սուլամիդա Ֆրագբուրգը, Սաշա Էբանոիձեն...

## II

Բանաստեղծությունների թարգմանությունները չէր ստացվում, շատ էր ինքնահնարվածը, տարբեր էր տաղաչափությունը: Սահուն տասնմեկվանկյա «Բարմակ»-ը, որի վրա գլխովին աշխատել էին իմ բոլոր հեղինակները, չէր հնչում ոռուերեն: Այն համապատասխանում էր. «Է՜յ, կամարինյան, կամարինյան»-ի չափին, և ես ինչպես և փորձում էի իմ կողմից ներկայացնել, բանաստեղծություններում լսվում էր այդ պարեղանակային մոտիվը, որը չէր ցանկանում միակցվել ոչ կատակային բովանդակությամբ ստեղծագործություններին, որոնք վերաբերում էին հեղափոխությանը և հեղինակների՝ կուսակցության հանդեպ անպատասխան սիրուն:

Ես համոզվեցի, արձակը կարելի է վերապատմել գրեթե հարյուր տոկոսով, բանաստեղծությունները թարգմանության ժամանակ հաճախ կորցնում են ամենակարևորը, թարգմանվող բանաստեղծությունը շրջված գորգ է, նախշերը տեսնվում են, բայց ոչ՝ բանաստեղծության կախարդական խավը: Բհարկե, հաճախ էին հանդիպում «գորգեր» առանց այդ շռայլության, փալասի նման, բայց ինձ մոտ դրանք չէին ստացվում թարգմանել: Բարդություններ էին ստեղծում լեզվական անվանումները, օրինակ, այնպիսին, ինչպիսին ավանդական հարցումն էր մերձավորին, ամենահարազատ մարդուն. «Օ՜, բաուրիմ»՝ բառացի՝ «Օ՜, իմ

յարդ»: Հին Հռոմում և Բաբելոնում այս արտահայտությունը հասկանում էին, որովհետև նրանց մոտ յարդը համարվում էր գլխավոր օրգանը, կյանքի կենտրոնակետը: Եվրոպական մյուս ժողովուրդների մշակույթում այն վերապահվում էր սրտին: Եվ ես թարգմանեցի, թվում էր, թե համարժեք. «Ո՛վ, իմ սիրտ»: Հեղինակին, սակայն, դուր չեկավ, նա պահանջեց բառացին: Ես համոզված էի, որ ռուս ընթերցողի համար նման դիմումը ավելի շատ խոսում է ոչ թե լիրիկական հերոսի զգացումների մասին, այլ արտահայտում է գանգատ՝ յարդի ցիրոզից:

Բանաստեղծության հեղինակը պնդեց և ես վերջիվերջո հասկացա պատճառը. դազախի լսողության համար «Օ, իմ սիրտ»-ը հավասարազոր էր կրծքահեղձուկին (стенокардия).

Նման անհամապատասխանությունները մեր մշակույթներում այնքան շատ էին, որ սկսնակ թարգմանչին հիասթափության կարող էին հասցնել: Ես հանձնվեցի և տեղի տվեցի, իմ կարծիքով, շարքային մի հեղինակի հետ հանդիպումից հետո: Նա գործերով եկել էր Մոսկվա և տեղավորվել նույնանման հյուրանոցի լյուքսում: Ես բերեցի նրա պոեմի թարգմանությունը՝ աղքատների բայերի հանդեպ վերջնական հաղթանակի մասին: Բանաստեղծը վերկացավ ճաշասեղանի մոտից, թերթեց ձեռագիրը: Սեղանը նրա հետ կիսում էր նրա մոսկովյան հաստիքային թարգմանիչը: Նա նույնպես կարդաց, ու նա ևս հավանություն չտվեց: Հեղինակը մեկ անգամ ևս խմեց և չափը կորցրեց.

-Իմը չէ, իմ մոտ կրակ և բոց է: Ես չափածո երգում եմ, իսկ քո մոտ գոմոռոց է:

Ինձ համար այդ պահին գլխավորը տեղ հասնելն էր, և ես գնացի. «Ցանկանում ես երգել, երգի՛ր»:

Ավարտեցի թարգմանական գործունեությունը: Սկսեցի ռիթմավորել իմը:

### III

Ամեն օր տրոլեյբուսով գնում էի Բուսիրյան խուտորից (հանրակացարանից) մինչև Տվերյան բուլվարը (ինստիտուտ) և հակառակը: Գնալու ճանապարհին Պրավդայի փողոցում գտնվում էր «Օգոնյոկի» խմբագրությունը: Մյուս ամսագրերը հեռու էին տրոլեյբուսի երթուղուց: Սրանով էր պայմանավորված խմբագրության ընտրությունը, որը երջանիկ դարձավ: Առաջին իսկ բանաստեղծությունս՝ «Արգամակ»<sup>45</sup> բերեցի «Օգոնյոկ»: Չափածոյի բաժինը վարում էր տարեց, ֆլեգմատիկ բանաստեղծ Կուդրեյկոն: Նրա գրքերը չէի կարդացել, բայց ծանոթ էի քրեստոմատիայից, շնորհիվ Մայակովսկու, ով ժամանակին տանջվել էր իր բնորոշած մոսկովյան գրական միջավայրում.

*Գանգրավուն իմաստակներ*

*Իմաստակային գանգրավունություններ*<sup>46</sup>:

*Ով Ձեզ*

---

<sup>45</sup> Ձիու տեսակ, ցեղ:

<sup>46</sup> Բառախաղ է կապված անվան հետ:

Кудрятые мудрайки

Мудрятые кудрайки

*Մատանան տանի,*

*Ով Ձեզ հաշվի կառնի:*

Կուղբեյկոն թվում էր ընդմիջո ընկճված այդ գնահատականով: Խոսակցության ժամանակ նայում էր ոչ թե աչքերին, այլ իր կարմիր մատիտի ծայրին, որով նոր էր հերկել իմ ստեղծագործության էջը:

Ես վերադարձրի բանաստեղծությունը և եկա մեկ շաբաթ անց: Նա դարձյալ խնամքով խազմզեց և հանդարտ, կամաց ձայնով բացատրեց իր պատժիչ գործողությունները: Ես ուժեղացրի բանաստեղծությունը, և նորից ինձ նետեցին ելակետային դիրքերը: Կուղբեյկոյի ամբողջ չէր հանձնվում, սակայն և իմ մեջ էլ ավելացել էր դիմադրությունը:

Վերադառնալով հանրակացարան՝ մինչև լույսը բացվելը տանջեցի թուղթը: Թվում էր՝ հասա կատարելության, ռիթմը, նմանաձայնությունը, պատկերները՝ բոլորը տեղում են: Ամեն հնչյունը, ինչպես սմբակի բախյունը: Նրանք իրենց ճահճային ամսագրում այդպիսի տափաստանային բանաստեղծություն հազիվ թե տեսել էին:

Ինստիտուտի գրասենյակի մեքենագրուհին, շունչ քաշելով, մեքենագրում էր քսաներորդ, երեսուներորդ տարբերակը, զգուշավոր բարությանը ասելով. «Նկատելիորեն լավ է»: Ես թռա «Օգոնյոկ»: Այնուհետև կիսամթնած Մոսկվայում գնացի հանրակացարան՝ ճմռված, արյունաշաղախ էջը վերարկուիս գրպանում: Ի՞նչ անել: Երկրաբանությունը թողեցիր, թարգմանությունները չստացվեցին: Վերադառնալ Ալմա-Աթա և ցմահ՝ «Տրամվայ Տրեստ»:

Մայրս մանկության ժամանակ միշտ վախեցնում էր այս խորհրդավոր խոսքերով. «Եթե վատ սովորես, Տրամվայ Տրեստ կգնաս»: Վերջ, հերիք է: Բավական են ինձ իմաստակ չեչոտները: Դեպի տրամվայ տրեստ: Եվ հաջորդ օրը կինչի քեզ հեռախոսափողը՝ «բավական է», և դու դարձյալ անցնում ես «փրփրակալած Արգամակին»:

(Կա արդյոք ինչ որ հնարամիտ կապ ձիու իմաստ ունեցող իտալական «basta»-ի և դազախական «Բաստա»-ի միջև, որն ուղղակիորեն հակադրված է «սկսիր»-ին: Բայց մեկը մյուսի հետ հատվող այդ երկու հրամանների միջև մեր ողջ կյանքն է):

...Այն ժամանակվա «Օգոնյոկը», ինչպես ես իմացա, սևհարյուրակային համբավ ուներ: Տպագրում էր միայն յուրայիններին: Ավելի ուշ վերլուծելով, ես հասկացա, որ Կուդրեյկոյին տանջում էին կասկածները: Այն, թե ինչու ես ընտրել եմ հատկապես այդ ամսագիրը, իբրև թե ինչ որ բան վկայում է: Սակայն «Արգամակով» չէր կարելի դատել իմ «հակասիոնիստական» հայացքների մասին: Իսկ այլ գործեր ես նրան ցույց չեմ տվել: Այդպիսիք ինձ մոտ պարզապես չկային: Արգելել ինձ այցելել նրան չէր կարող: Երիտասարդների հետ աշխատանքը մտնում էր նրա պարտականությունների շրջանակի մեջ: Մնացել էր մեկ ճանապարհ՝ վնասել որսը: Սակայն այդ դեպքում ևս ամեն ինչ չէ, որ հարթ կլիներ: Գնալով ավելի ու ավելի դժվար էր դառնում «կարմիր մահակը» [մատիտը] գործի դնել: Մենք երկուսս էլ զգում էինք, որ բանաստեղծությունը ավելի էր ուժեղացել: Այն իմ համար դարձել էր ուսումնական փոր-

ձադաշտ, բանաստեղծության գրության դպրոց: «Ի՞նչ է ճարտարապետությունը: Այն ապարի կտոր է, որից հանված է ողջ ավելորդը»:

Կուդրեյկոն ինքն էլ այդ այնքան չցանկանալով, ինձ տալիս էր ավելորդը ջնջելու դասեր, փորձելով ինձ կտրել ամսագրից: Ես արագացված ընթացքով անցա երկու գրական ինստիտուտները, մեկը՝ Տվերյան բուլվարում, երկրորդը՝ Պրավդայի փողոցում (ոչ, կար և երրորդը՝ Բուտիրյան խուտորում՝ հանրակացարանում): «Նրանք սերը մեզ ոչ սիրով են սովորեցնում»՝ Ռիմմա Կազակովայի այս խոսքերը ստիպում են ինձ երախտագիտությամբ հիշել իմ կյանքում ինձ հանդիպած այդպիսի մանկավարժներին, թեև, բնականաբար, ոչ այնքան ջերմ, որքան նրանց, ովքեր սովորեցրին սիրով:

#### IV

Իմ թոշակը խմբովին ուտվում էր ամսվա առաջին օրերին: Հետո ոչ մեծ (հնարավորության դեպքում) փոխանցումներ տնից, Սարվատա մորաքրոջից, քեռի Ֆազիլից, Արթեկից... Այդ ամենը ծախսվում էր «ղազախական հյուրընկալության» վրա:

Սարսափելի ժամանակահատվածում ինձ կերակրում էր հանրակացարանի չորրորդ, կանացի հարկը: Աղջիկները ավելի խնայողաբար էին օգտագործում իրենց ուսանողական միջոցները: Սուլամիթան բերեց հաստ տեսրը. «Ամեն ընթրիքի համար այստեղ կգրես նոր բանաստեղծությո-

յուն»։ Կուղրեյկոյի «տաժանակրոթյունից» հետո այդտեղ մի քանի տող գրելը աշխատանք չէր։

Իմ մեջ ձգվեց զսպանակը՝ հանպատրաստից ստեղծագործող գեները Փեշե Մուսայի՝ հայրական կողմից պապիս։ Մինչև Սուլամիթան խոհանոցում կոտլետներ էր տապակում, ես հասցնում էի լրացնել երկու էջ, երբեմն հանպատրաստից, սակայն հաճախ դրանք տնային պատրաստություններ էին։ Նա գալիս էր անուշաբույր թավայով և չէր թույլատրում ասիսեներին մոտենալ, մինչև չարտասանեի գրվածը։

Մի անգամ Սուլամիթան ասաց, որ ընթրիքը տեղի կունենա այլ վայրում։ Այսպես ես առաջին անգամ հանդիպեցի Բորիս Սլուցկուն։

Ալեհեր, պինդ մարմնով և գրական անունով անձնավորություն։ Հետստայինյան շրջանում բանաստեղծական ավիքի հարուցողներից մեկը։

Մտանք աշխատասենյակը։ Մեծ սենյակ էր, գրքերի դարակներ և արձաններ։ Դատարկ գրասեղանին տեսա իմ «կոտլետային» տետրը. «Ես լսեցի, որ Դուք ընթրիքի համար վճարում եք բանաստեղծություններով։ Առողջ ավանդույթները չենք խախտի։ Նվիրեք ինձ դրանցից մեկը։ Ես արդեն ընտրեցի (Նա բացեց տետրը, կարդաց)՝ «Տղաներ, իմ միջոցով դատեցեք դազախների մասին»։

Արդյոք խղճալի չէ այս տողը։ Այժմ ես գրում եմ Նազիմ Հիքմետի մասին։ Ոչ մի կերպ չեմ կարողանում գտնել նրա կերպարի բանալին։ Չափից ավելի մոտ եմ նրան ճանաչում։ Եվ ահա բանալին՝ պոետով դատեցեք ժողովրդի մա-

սին: Ինձ այդպիսի տող չէր հայտնվել. «Տղաներ, իմ միջոցով դատեցեք հրեաների մասին»: Նույնիսկ Կարլ Մարքսը կամ Էյնշտեյնը իրավունք չեն ունեցել այդպիսի հայտարարություն կատարել: Հրեաները չափից ավելի բազմաձև են աշխարհին հայտնի: Եվ մի անհատը, նույնիսկ ամենանշանավորը, չի կարող իրենով ներկայացնել ողջ ռասայի խճանկարը: Իսկ թուրքերը այժմյան աշխարհում այնքան էլ փառաբանված չեն: Ղազախները առավել ևս: Միգուցե և դա լավ է: Գիտակցումը, որ դու ոչ թե ինքդ քեզնով, այլ ուրիշները քո միջոցով պետք է պատկերացում կազմեն ողջ ժողովրդի մասին, պետք է դաստիարակի մարդու անհատականությունը: Ես ղազախներին պատերազմի ժամանակ եմ հանդիպել: Լավ գինվորներ էին, կատարողներ էին, ոչ պահանջող: Բանաստեղծը, սակայն, ավելի հավաքական կերպար է: Նրանում ցեղի բոլոր որակներն են՝ և՛ վատ և՛ լավ: Շատերը, ում հետ դուք մի կարճ ժամանակով հանդիպել եք կամ հանդիպում եք, երբեք չեն շփվել ղազախների հետ: Նրանք Ձեր ժողովրդի մասին իմանալու են միայն այն, ինչ որ կտեսնեն Ձեզնում: Ձեր պահվածքի յուրաքանչյուր, նույնիսկ պատահական գիծ հիպերբոլացվելու է ղազախի հավաքական պատկերում: Կլամեք պատահաբար՝ ղազախները հարբեցող են: Կզիջեք ծեծկրտուքում՝ ղազախները վախկոտ են: Կհնարեք հեծանիվ՝ ղազախները հանճար են: Ոչ մի կիսատոն, նման մտածողությունը բնորոշ է զանգվածային հոգեբանությանը:

Գրական միջավայրը ևս ենթարկվում է այս հոգեբանությանը: Ղազախական բանաստեղծության իմացություն-

նը Միությունում մոտ է գրոյի: Աշխարհում՝ էլ ավելի քիչ: Կարող է պատահել բնագրով հանճարեղ է, բայց թարգմանությունները դեռ որևէ մեկին չեն գրավել:

Դուք պատրաստվում եք այն ներկայացնել ինքներդ, առանց թարգմանչի: Նշանակում է վերցնում եք Ձեր վրա պարտականություն Ձեր անձնական օրինակով ռուս ընթերցողին ներկայացնել դազախական բանաստեղծության ողջ յուրահատկությունը: Այո-այո, դազախական ողջ բանաստեղծության մասին պետք է դատեն Ձեր արածով:

Այնժամ անհաջողությունը թարգմանիչների վրա չես բարդի: Ձեր ռուս հասակակիցների վիճակն ավելի լավ է: Նրանք հսկայական պատմություն ունեն, նախնիների փառքը, ահռելի մշակութային ժառանգություն: Ռուս բանաստեղծը հնարավորություն ունի լինել միջակություն, Դուք՝ ոչ:

## VIII

Երկու տասնամյակ՝ 1960-1980-ական թվականների սկիզբը, մեր պատմության մեջ կմտնի որպես բազմազգ խորհրդային մշակույթի վերածնության շրջան: Այդ ժամանակաշրջանը մի կողմից նրա շարունակական ծաղկման շրջանն էր, բայց և տարեցտարի միապաղաղ էին դառնում զեկուցումները, սակայն նաև բուռն «պտղաբեր» ժամանակ էր: Այնպիսի տաղանդներ ի հայտ եկան մշակույթի և գիտության անխտիր բոլոր բնագավառներում: Իմ սերնդի բանաստեղծներին տրված էր երջանկությունը զգալու սեփական անձի կարևորությունը:

Բանաստեղծների հետ հանդիպմանը ժողովուրդն այնպես էր գալիս, ինչպես, ասես ֆուտբոլ գնար: Այդպես, այլևս, ըստ երևույթին, երբեք չի լինի: Բազմահազար տեղանոց դահլիճներում, արտադրամասերում և դաշտային կայաններում բանաստեղծությունները պատասխանում էին այն հարցերին, որոնք հասարակության մեջ կուտակվել էին ավելի շատ, քան բացականչական նշաններ կային պաշտոնական քարոզչությունում:

Մեր արգամակները թոչում էին ողջ մոլորակով: Մենք սովորեցնում էինք մեր գրչեղբայրներին նվաճել լսարանները: Երկրի «բանաստեղծական հավաքականի կազմում» ելույթներ ունեցա Եվրասիայում, Ամերիկայում և Աֆրիկայում: Բանաստեղծների ստեղծագործությունները նկատելիորեն ազդեցին [ՍՍՀՄ] գիտակցության վրա և նախապետրաստեցին կատարվելիք փոփոխությունները:

*Ապրիլ 1996թ.*



*Րուզան Կարան*

*ՌԻՄԳԱԼԻ ՆՈՒՐԳԱԼԻ  
(1940-2010 թթ.)*

## **ՂԱԶԱԽԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐ ԵՎ ԺԱՆՐԵՐ\***

**Գլուխ 1. Ողբերգություն: Ողբերգական կոնֆլիկտ և ողբերգական կերպար**

Ղազախական դրամատուրգիայի ճակատագիրը դասավորվեց այնպես, որ առաջին դրամատուրգիական ստեղծագործությունը՝ «Ենլիկ-Կեբեկը», գրվեց 1917թ. և բեմադրվեց հանպատրաստից կառուցված բեմին: «Ենլիկ-Կեբեկ»-ը պատկանում է այն ժամանակ դեռ երիտասարդ, իսկ հետագայում համաշխարհային փառքի արժանացած գրող Մուխթար Աուեզովի գրչին: Այդ տարիներին ծնվեցին նաև Ժ. Շանինի «Արքալըք բատիր», Ս. Սեյֆուլլինի «Երջանկության ճանապարհին», Ք. Քեմենգերովի «Ոսկե մատանի», Ժ. Այսաուիթովի «Շերնիյազ» և Մ. Դուլաթովի «Բալքիյա» պիեսները:

Սակայն Մ. Աուեզովի «Ենլիկ-Կեբեկ» ողբերգությունն իր գաղափարական-գեղագիտական խորության, հուզական

*\* Foliant հրատարակություն, Աստանա - 2010*

ազդեցության ուժի և գեղարվեստական արժեքի շնորհիվ իրավամբ համարվում է դազախական դրամատիկական ժանրի սկիզբը:

Սակայն բանասիրական գիտության, ինչպես նաև արվեստագիտության ոլորտում հանրապետությունում սակավաթիվ են աշխատանքները, որոնցում համակարգային ուսումնասիրված է ողբերգության ժանրը: Ա. Թաժիրանի, Ն. Գաբրուլլինի, Մ. Դուսեյնովի, Հ. Ադիբանի, Ս. Օրդալիևի և Ռ. Նուրգալիևի աշխատանքներում դրամատուրգների առանձին ողբերգական ստեղծագործություններ են վերլուծության ենթարկվել իրենց գաղափարական-թեմատիկ բովանդակության, գեղարվեստական կերպարի ստեղծման առանձնահատկությունների, ոճի և սյուժետային աղբյուրների տեսանկյունից: Ինչ վերաբերում է ողբերգության ժանրը ձևավորող հիմնական հատկանիշներին, առանձնահատուկ գծերին և մյուս ժանրերի շրջանում նրա գործելուն, ապա դրանք մենագրական հետազոտության առայժմ չեն ենթարկվել:

Դրամատուրգիայի բոլոր ժանրերից կյանքին ամենամոտը ողբերգությունն է, նրանում են մասնագետները տեսնում աշխարհի փոքր մոդելը, որի ներսում կյանքն ամբողջացնում է հակադրությունների անվերջանալի պայքարը: Այն ողբերգության մեջ արտացոլվում է որպես ուժեղ անհատականությունների պայքար իրենց նմանների հետ: Այդ իսկ պատճառով պատահական չէ, որ ըստ գրականության մեջ ամրապնդված կարծիքի՝ անցյալի դասական ողբերգություններում հստակ հանդես է գալիս մարդու ողբերգական հակադրությունը սոցիալական անարդար կարգերին և հասարակության հետ անհատի անհամաձայնությունը:



*Արայի և Պուշկինի հուշարձանը, ք. Պետրոպոլիսյան  
Քանդակաքորձ 'Կազբեկ Սատիրադին*



*Բանաստեղծ և հերոս Մահամբեթ Ուտեմիստլի դամբարանը*

## ԷՊԻԿԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱ

«Պատմական հին լեզենդների վրա հիմնված դրամաների և ողբերգությունների ծագումը, ինչպիսին են «Ենլիկ-Կեբեկը», «Արքալըք-բատիրը», բխում էր ժողովրդի հոգևոր կարիքներից: Այսպիսի ստեղծագործությունները համահունչ էին ստրկական հոգևոր ավանդույթների կապանքերը թոթափելու, մարդկային անձի հատուկ արժևորման, ազատ և ինքնուրույն դառնալու դարաշրջանին»<sup>47</sup>:

Ժողովրդի բանաստեղծական բանավոր արվեստի իրողությունները և սյուժեները օգտագործեց նաև մեկ այլ ակնառու գրող՝ Գ. Մուսրեպովը՝ իր «Կըզ ժիբեկ», «Քոզի Քորփեշ և Բայան Սուլու» պիեսներում: Ի սկզբանե «Կըզ ժիբեկը» գրված էր որպես երաժշտական պիես, հետո վերածվել էր նույնանուն օպերայի լիբրետտոյի: Մեզ համար այժմ կարևոր է ոչ թե լիբրետտոն ինքնին, այլ թե գրողն իր դրամայում ինչ է օգտագործել բանահյուսական սյուժեից և ինչ է ավելացրել:

Գ. Մուսրեպովի ստեղծագործ մոտեցումը բանահյուսությանը դրսևորվում է նախ և առաջ նրանով, որ բարեհաջող ավարտով սիրային հին էպոսը վերածել է ողբերգության: Դրամատուրգը լիբրետտոյի հիմքում դրել է «Կըզ ժիբեկ» էպոսի սյուժեի առաջին մասը: Ինչպես հայտնի է՝ Կըզ ժիբեկի մասին սիրային ասքը բաղկացած է երկու մասից, որոնք բաղարկված են որպես ամբողջականացված սյուժեներ: Առաջին մասը պատմում է ապագա հերոս Տոլեգենի ծննդյան մասին և թե ինչպես էր վերջինս իր համար կին որոնում (հին հերոսական խնամախոսության տրանս-

<sup>47</sup> История казахской литературы. В 3-х тт. - Алма-Ата, 1970. - Т.3. - С.58.

ֆորմացված ձևը): Երկրորդ մասում պատմվում է, որ Տոլեգենի մահից հետո տոհմական հասարակությունում սահմանված կարգով նրա գործը շարունակում է Սանսրգբայը: Վերջինս ամուսնանում է Ժիբեկի հետ՝ կալմիկական գործի հետ ճակատամարտում ցուցադրելով ուժ և խիզախություն:

Գ. Մուսրեպովը պիեսի համար ընտրել էր էպոսի միայն այն մասը, որտեղ գովաբանվում է մաքուր սերը և հերոսների մղումը դեպի ազատ զգացմունքները: Ընդ որում՝ դրամատուրգը փոփոխում է դեպքերի ընթացքը, արարքների հիմնավորումները, կերպարների բնավորությունները և հոգեբանությունը: Առաջին հերթին հարկ է խոսել գործող անձանց մասին: Ի տարբերություն բանահյուսական հիմքի՝ պիեսում, որպես ակտիվ գործող դեմք, ներառված է Ժիբեկի ընկերուհի Դուրիան, առասպելական Սանսրգբայը փոխարինվել է քրոջով՝ Քարլըզաշով, լիբրետոյում ակտիվ գործունեությամբ է օժտվել Ժիբեկի ժենգե Բատսային՝ նրա ավագ եղբոր կիներ: Դրամայում լրացուցիչ ներառված է նաև ջիզիթի կերպարը՝ Բեքեժանի ուղեկիցը, որին հեղինակը պատկերում է ոչ թե որպես Բեքեժանի կույր կամակատար, այլ իր ուղեկցի արարքների նկատմամբ քննադատական վերաբերմունքով օժտված մարդ: Նա հավանություն չի տալիս Բեքեժանի ստորությանը և պնդում, որ վերջինս Տոլեգենի հետ պայքարը մղի բացեիբաց, իսկ պիեսի վերջում հանդես է գալիս որպես Բեքեժանին պատժողներից մեկը:

...Հանրահայտ է, որ Ռուսաստանի դրամատուրգիայի ողբերգության ժանրում նախահեղափոխական թատրոնում գերիշխում էր պատմական ողբերգությունը:

Պատմական առաջնահերթությունից բացի ի՞նչ հատկանիշներով է առանձնանում պատմական ողբերգությունը: Կարելի է նշել մի քանի գիծ, որոնք, մեր կարծիքով առավել կարևոր են: Նախ և առաջ դրանք իրական պատմական փաստեր են, և նյութի պատմականությունը խստորեն պահպանված է գեղարվեստական խոսքի մեջ: Երկրորդ՝ ողբերգության հերոսն իրոք մեծ անհատականություն է՝ ժողովրդի պատմության մեջ որոշակի կարևոր դերակատարումով, իսկ իրադարձությունները, որոնց մասնակցում է նա, համազգային նշանակության են: Երրորդ՝ հերոսը մարտնչում է ոչ թե անձնական երջանկության, այլ ժողովրդի իդեալների և երջանկության համար: Այդ իսկ պատճառով նա բոլորից առավել է զգում հասարակական հակասությունները և բաց պայքարով հակադրվում դրանց: Այս բոլոր հատկությունները բնորոշ են դազախական պատմական ողբերգությանը: Ճիշտ է՝ այս բնույթի առաջին ստեղծագործությունները կրում էին առասպելական ողբերգության ազդեցությունը, ինչը բացատրվում է այդ ժամանակ պատմական ողբերգության ստեղծման փորձի բացակայությամբ, այդուհանդերձ՝ նրանցում համեմատաբար հստակ հանդես էին գալիս պատմական ողբերգության գլխավոր հատկանիշները:

Ղազախական դրամատուրգիայում, ըստ ժամանակագրության, առաջին պատմական ողբերգությունը Ի. Ժանսուզուրովի «Իսաթայ Մահամբեթ» պիեսն է:

Վերջինս ղազախական բանասիրության մեջ դիտարկվել է և՛ որպես դրամա, և՛ որպես օպերայի լիբրետո<sup>48</sup>, սա-

---

<sup>48</sup> Куандыков К. Мысли, рожденные в театре (на каз. яз.). - Алма-Ата: Жасушы, 1972.- С.51-56.

կայն ոչ որպես պատմական ողբերգություն: Պիեսը նվիրված է 1836-1838թթ. ժողովրդական ապստամբությանը, ողեկավարում էին Իսաթայ Թայմանովը և Մահամբեթ Ուտեմիսովը: Ապստամբության և նրա ղեկավարների կյանմասին տարբեր երգեր և առասպելական ասքեր էին հյուսվում<sup>49</sup>: Այս ամենը բանահյուսական բնույթ էր հաղորդում ապստամբությանը և ապստամբներին:

Բնականաբար, Ի. Ժանսուգուրովը ողբերգության ստեղծման ժամանակ նախ և առաջ օգտվել է պատմական աղբյուրներից և հենց Մահամբեթի ստեղծագործություններից: Այնուհանդերձ, նա որոշակի չափով օգտվել է նաև բանահյուսական նյութերից:

Իր լավագույն ողբերգություններում մտքի և գեղարվեստական վարպետության բարձրագույն սինթեզի հասավ Մ. Աուեզովը: Գլխավոր հերոսների կերպարները և նրանց հոգեկան աշխարհը բացահայտում են կյանքի զանազան հակասությունները: Աուեզովյան ողբերգության արմատները հասարակական զարգացման հակասություններն են, և նրա ողբերգականությունը խոր սոցիալական բնույթ է կրում: Ֆիզիկական տառապանքների հետ այն որևէ կապ չունի: Աուեզովի ստեղծագործություններում ֆիզիկական թերությունները և հիվանդությունները երբեք ողբերգության պատճառ չեն դառնում: Նրա հերոսները օժտված են իրենց մարդկային արժանապատվության խորին գիտակցումով:

Պատմական ողբերգության ժանրի զարգացման փուլային ստեղծագործություն է Սաբիթ Սուկանովի «Չոկան

---

<sup>49</sup> Махамбет. Стихи (на каз. яз.). - Алма-Ата: Жасушы, 1974; Шорекоев Г. Исатай-Махамбет (на каз. яз.).- Алма-Ата: Жасушы, 1976.

Վալիխանովը»: Առաջին հայացքից այն պատմականսագրական բնույթ է կրում, սակայն հասարակական խնդիրների ընդգրկումով, կյանքի երևույթների նեկայացման խորությամբ և վերջապես իր բնույթով ու ոգով «Չոկան Վալիխանով» ողբերգությունը զգալիորեն դուրս է գալիս պատմականսագրական տեսակից: Այն իսկական պատմական (կարելի է ասել՝ պատմասոցիալական) ողբերգություն է: Ողբերգություն պետք է համարել ոչ թե այն պատճառով, գլխավոր հերոսը մահանում է, այլ որ նա ողբերգական դիմակայության մեջ է մտնում առկա հասարակական կարգի հետ, ողբերգական սխալ է գործում՝ օբյեկտիվ ողբերգամոլորության պատճառով: Այդ իսկ պատճառով գլխավոր հերոսի հիվանդությունը և դրան հաջորդած մահը հարկ է հասկանալ նաև այլ առումով, որ փշրվեցին հերոսի՝ ժողովրդի ծանր բաժինը թեթևացնելու հույսերը: Դառնալով տեղական պաշտոնյա՝ նա անհաշտ հակամարտության մեջ մտավ իրական կյանքի օրենքների հետ: Ահա այս է ողբերգությունը, որ վերաբերում է նաև հերոսին, նրա ողբերգական սխալներին և մոլորություններին:

Ակնհայտ է, որ հեղինակը այդպես էլ հասկացել էր իր ստեղծագործությունը՝ անվանելով այն «պատմական ողբերգություն»:

Ողջ ասվածը հիմք է ծառայում, որ «Չոկան Վալիխանովը» համարվի պատմական ողբերգություն և վերլուծվի որպես այդպիսին:

Ի տարբերություն նախորդող և հաջորդող ողբերգական ստեղծագործությունների «Չոկան Վալիխանով» պիեսը բարդ է նյութի առումով: Հեղինակին հարկավոր էր ոչ միայն այցելել հերոսի գտնված վայրերը, աչքի անցկացնել

արխիվային նյութերը, այլև ուսումնասիրել Չոկանի ողջ գիտական ժառանգությունը, որոշակիացնել սոցիալ-պատմական այն խնդիրների շրջանակը, որոնք արժարժված էին Վալիխանովի գիտական և գործնական գրվածքներում և վերջինիս շատ էին հուզում: Հարկավոր նաև ծանոթանալ այն մարդկանց գործունեությանը, ում հետ շփվել էր Չոկանը: Եվ վերջապես՝ զգալ քաղաքային, տափաստանային և աուլային միաջավայրերը, որոնցում պտտվում էր գլխավոր հերոսը:

Հեղինակը Չոկան Վալիխանովի կյանքի և գործունեության մասին նյութերի հավաքագրումն սկսել էր դեռ նախապատերազմյան տարիներին<sup>50</sup>: Դրամատուրգի արխիվում պահպանվել է 1953թ. հոկտեմբերի 28-ին Մոսկվայում կայացած իր «Չոկան Վալիխանով» պիեսի քննարկման սղագրությունը: Մուկանովն ասում է, որ ինքն աշխատել է Լենինգրադի և Մոսկվայի արխիվներում<sup>51</sup>:

---

<sup>50</sup> Архив мемориального дома-музея С. Муканова. Дневник. 1939.

<sup>51</sup> Архив мемориального дома-музея С. Муканова. - Т.30. - С.197-218.



*Կիրաւաի Գրազաեւա*

## ԿՈՒՐԱԼԱՅ ՈՒՐԱԶԱԵՎԱ

(Ծնվ. 1961 թ.)

Լ. Ն. Գումիլյովի անվան Եվրասիական ազգային համալսարանի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր

## ԺԻՐԱՌԻՆՆԵՐԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

Ղազախ ժողովրդի մշակույթում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում ժիրաունների բանաստեղծությունը: Վերջինիս XV-XVIII դարերի պատմությունը համընկնում է անկախության համար ղազախ ժողովրդի պայքարի պատմության հետ:

Ժիրաունները խաների խորհրդատուներ էին: Նրանց կանխատեսության շնորհ էին վերագրում: Ժիրաունները ռազմիկներ էին և ազգային ժողովրդական գաղափարախոսության արտահայտողներ: Գիտնական, գինվորական, Աբլայ խանի հետնորդ և Ֆ. Դոստոևսկու ընկեր Չոկան Վալիխանովը նրանց անվանում է «տափաստանային գուսաններ»:

Խորհրդային ժամանակաշրջանում ժիրաուներին համարել են խաների տեղապահներ, քանի որ հասարակության մեջ նրանք սոցիալական բարձր դիրք ու կարգավիճակ ունեին և պաշտպանում էին ֆեոդալ իշխանավորների շահերը: Սակայն ժիրաուների համարձակությունը և ազգի առջև իրենց պարտքի բարձր գիտակցումը ժողովրդի հիշողության մեջ թողել են նաև նրանց զայրալից մերկացումները խաների կամայականությունների մասին, երբ վերջիններս ժողովրդի ճակատագիրը տնօրինում էին հոգուտ սեփական շահի: Երբեմն խանի և ժիրաուի հայացքների միջև հակասությունը հանգեցրել է նրանց միջև հարաբերությունների լիակատար խզման, և ժիրաուն հրաժարվել է ծառայել տափաստանային ավատատիրոջը: Այդպիսիք են ժիրաու Ասան Կայզրի և խան Ջանիբեկի, Շալկիիզ ժիրաուի և խան Թեմիրի պատմությունները: Ժիրաուների ազդեցության մասին է վկայում այն հավատալիքը, ըստ որի Սիպիրա ժիրաուն իր երգերով «ուղղել է» ինը խանի:

Սեփական որոշման հետևաքները չգիտակցող Ջանիբեկ խանին արվող զգուշացումն Ասանի մոտ աշխարհի վերջի վախճանաբանական (ապոկալիպտիկ) բանաձևի բնույթ է ստանում.

*Դատաստանի օրն է, տե՛ս, գալու,  
Սպիտակ գայլաձուկը հեշտությամբ  
Մոճու կատարին է հասնելու:*

Ժիրաուների բանաստեղծությանն առաջինն ուշադրություն է դարձրել դազախական գրականության դասական, գիտնական, հասարակական գործիչ Մուխթար Աուեգովը: Նա քոչվորական մշակույթի պոեզիան գնահատեց որպես բանավոր գրականություն: Խորհրդային ժամանակաշրջանում «Ղազախական բանահյուսության կրողների խմբերի ծագումը» առաջին գիտական հետազոտությունը բաքսիների, ժիրաուների, սալահների, ակինների և սերենների մասին գրել է Եդիգե Տուրսունովը: Ժիրաուների բանաստեղծությունը, որը պահպանվել է ցարական Ռուսաստանի արխիվների 11 աղբյուրներում, ուսումնասիրության հիմք է դառնում դազախ գրող և հետազոտող Մուխթար Մագաուլինի համար, և նա հաջորդաբար հրատարակում է իր աշխատությունները ժիրաունների մասին, հրապարակում միջնադարյան բանաստեղծների չափածո ստեղծագործությունները և դրանց ոուսերեն թարգմանությունները:

Ժիրաուների պոեզիան հրատարակվել է Բախիտժան Կանապյանովի, Բախիտ Կաիրբեկովի, Աուեգիան Կոդարի, Օրընբայ Ժանայդարովի, Կայրատ Ժանաբանի թարգմանություններով:

Ղազախ ժողովրդի փիլիսոփայությունը սկզբնապես մարմնավորվել է Ժիրաուների պոեզիայում: Հայրենիքը, պատիվը, սերն ու ընկերությունը խորհրդանշում են մարդկային կյանքի բարձր արժեքների մասին պատկերացումները:

Ժիրաունների բանաստեղծությունը բազմաթիվ վառ անուններ է տվել, որոնք դազախ ժողովրդի համար մարմնավորում են պատմական և մշակութային հիշողությունը՝ Ասան Կայգի, Կազտուղան, Դոսպամբետ, Շակլիիզ, Ժիեմբետ, Մարգասկա, Ակտամբերդի, Բուխար:

Ժիրաունների առաջին և վառ ներկայացուցիչներից է XV դարի պոետ Ասան Կայգին (Ասան Տխուր, Ասան Վշտալի): Նրա ստեղծագործությունների հավաքմամբ զբաղվել են գիտնական-արևելագետներ Զ.Զ. Վալիխանովը, Գ.Ն.Պոտանինը, պոետ Մաշխուր Ժուսուպ Կոպեևը և ուրիշներ: Ասան Կայգիի բանաստեղծական ժառանգության հրատարակումն սկսվել է XIX դարում: Նրա գործերի ուսումնասիրության մեջ մեծ ներդրում ունեն խորհրդային գրողներ Ս.Սեյֆուլլինը, Մ.Օ.Աուեզովը և այլոք:

Ղազախների մոտ Ասանի անունը միահյուսվում է լեզենդի հետ: Դա մի մարդու կերպար է, ով իր կախարդական Ժել Մայա ուղտին նստած՝ Ժեր Ույըկ կոչվող ժողովրդի համար որոնում է Ավետյաց երկիրը: Այս լեզենդը պատմական արմատներ ունի. Ոսկե Հորդայի և Մպիտակ Հորդայի մասնատումից հետո երկպառակությունները հանգեցրին դազախական տոհմերի և ցեղերի զանգվածային արտագաղթի Դեշտ-ի-Քըփչակից դեպի Արևմտյան Սեմիրեչիե (բառացի՝ Յոթնագետ):

Առաջին դազախ ռոմանտիկի պոեզիան ծնվել է պառակտումների, խռովությունների, դավաճանության և պատերազմների շրջանում: Այդ ամենի հետ մեկտեղ դա ա-

ռասպելաբանական նախաստեղծ աշխարհն է, որտեղ մարդն ու բնությունը հավասարագոր են:

Ասանն առաջինը ժիրաունների բանաստեղծություն բերեց փիլիսոփայական- դիդակտիկ ժանրերը՝ տոլգաու, տերմե, խրատներ և աֆորիզմներ:

Ժիրաունների քնարերգության մեջ ամենտարածված ժանրը տոլգաուն է՝ փիլիսոփայական մտորումները, թե ինչի՞ մասին է մտածում և երագում ժիրաուն, ի՞նչն է գովաբանում:

Երբ Չանիբեկը ժողովրդին Ակտյուբայի առատ արոտավայրերից տարավ դեպի Էթիլ (Վոլգա), դա օտարություն էր Ասանի համար. «Եվ անձուկ է օտարությունը // Դեզերումների է այժմ մատնել քո ժողովրդին»:

Իսկ ժամանակակից Աստրախանի տարածքում ծնված Կազտուղան Սույունիշուլ անունով մեկ այլ ժիրաուի համար (XV դարի 30-ական թթ.), որը զինվորական արիստոկրատիայից էր և ղեկավարում էր Եդիլի (Վոլգա) երկարությամբ քոչող ակտուբա, բոզան և այլ թյուրքական ցեղերին, ինչպես յուրաքանչյուր քոչվոր, ինքը ևս առատությունը համարում էր ժողովրդի գոյատևման պայման. «Էթիլ և Ժաիկի քոչատեղերը են հարստություն // Ամառ ու ձմեռ մահտարածամից փրկություն»: Նրա կոչը՝ «Եդիցի Եդիլ և եդիցի Ժաիկ» իր իսկ շուրթերից հնչում է որպես ժողովրդին լսելու, հանդուրժող լինելու կոչ:

Սակայն երբ ժողովուրդը թողում է Վոլգայի ափերը, Կազտուղանն իր մեջ ճակատագիրն ընդունելու իմաստություն է գտնում.

*Ի՛մ Եղիլ, որքան էլ դառն է վիշտը իմ,  
Ես քեզ չեմ ընտրել, բայց դու ես ճակատագիրն իմ,  
Հրաժեշտ եմ տալիս լալով, այն իմը չէ,  
Ինձնից ձեզ բաժին հասավ երկիրը իմ:*

Անցյալը Դոսպամբետի համար նույնպես Եթիլն (Վոլգան) էր: Առատությամբ փառաբանվող այս հողում նա բնակություն էր հաստատել դեռ երիտասարդ տարիքում: «Ամեն ինչ երեկ էր ասես»: Հուշ դարձավ նաև հարազատ Ակ Ժաիկը (Ուրալ գետը):

XVIII դարի բանաստեղծ Շալկիիզի համար Եղիլն «ահ-ռելի» է Շալկիիզից, և դա «Բարձրյալի բարի կամքն է»: Եվ նույն կերպ ընդարձակ է իր հարազատ Արկան (Կենտրոնական Ղազախստան):

Եղիլը, Ժաիկը և Արկան ոչ միայն Հայրենիքի աշխարհագրական կոորդինատներ են, այլև ղազախական պետականության հասկացություններ և ժողովրդի պատմական ճակատագրի կապվող նշանները:

Ղազախական ազգության ձևավորման դարաշրջանում է ապրել պոետ Դոսպամբետ Ժիրաուն: Նա մասնակցել է այդ ժամանակներում Ղրիմի, Նոգայսկի և Կազանի խանությունների միջև տեղի ունեցող արշավանքներին ու բախումներին: Դոսպամբետի բանաստեղծական ժառանգությունը հետնորդներին ամբողջությամբ չի հասել: Առանձին ձեռագրերում պահպանված նրա ստեղծագործությունները մտել են XIX դարի սկզբի տարբեր գրական

ժողովածուների մեջ: Դոսպամբետ ժիրաուի՝ խորհրդային շրջանում հայտնաբերված բանաստեղծական ասքերը հրապարակել է Մ. Մագաուինը: Վերջինս դրանք հավաքել է և ներառել «Ալդասպան» ժողովածուի մեջ (1971թ.):

Ժիրաուի բանաստեղծությունը ոչ միայն գորականի և հայրենիքի պաշտպանի, այլև սիրո, գեղեցկության և դավաճանության մասին է: Բատիրության գեղագիտությունն ստեղծեց դազախ կնոջ կերպարը:

Կնոջ գեղեցկությամբ հիանալու համար Դոսպամբետը գտնում է քոչվորի մտածելակերպին բնորոշ համեմատություններ.

*Գեղեցկուհի էր իսկական,  
Ճակատն արևի շող չէր տեսել,  
Քամին հյուսերը նրա չէր հյուսել:*

Կինը ռազմիկի ուղեկից է, մայր է և սիրեցյալ.

*Սպիտակ շիմիլդիկի ետևում գեղեցկուհիներին էի  
համբուրում  
Կրքի մեջ՝ օրհորդների հյուսերն էի ես արձակում:*

Կինը ռազմիկի և ժողովրդի հետ կիսում էր ընդհանուր ճակատագիրը հաղթանակներ ու պարտություններ, գրկանքներ ու դրամա.

*Մառչում էին օրիորդները, գանձը մեր փառավոր,  
Միննույն է՝ ընտրած ճանապարհից  
Վիճակված չէ շեղվել:*

Հանուն հայրենիքի արվող արշավանքների զինը, որ երիտասարդ ռազմիկներն էին վճարում նրա ամբողջականության համար կատարվող արշավանքներում, նրանց նուրբ զգացմունքների աշխարհն այսպես է ներկայացնում բանաստեղծը.

*Մի թեթև դիպար և սպիտակ փոշու քուլաներում,  
Քանդվեց վրանը՝ հանգստություն խոստացող,  
Որքան հաճախ էինք լինում արշավանքներում՝  
Արգամակների բարեկազմ պարանոցները սեղմելով  
Եվ գեղեցկուհիներին թախիծի մեջ թողնելով:*

Ընկերությունն արժեքավոր կատեգորիա է, որն ավելի կարևորություն է ստանում երկպառակությունների և բաժանման շրջանում: Շալկիիզի չափածոյում ընկերության և դավաճանության թեման պատված է դառն տեսողականությամբ.

*Թշնամուց հարյուրապատիկ զգուշացիր,  
Ամբոխի բովում ձեռք բերված ընկերներից  
Սակայն զգուշացիր հազարապատիկ:*

Տոլգաունների հիմնական թեմաներից են բարեկամությունը և բարեկամական կապերը: Դոսպամբետի արնաքամվող զինվորի տառապանքի պատճառը ոչ այնքան վերքերն են, որքան միայնությունը.

*Մակայն այսպիսի վերքի տառապանքից էլ վատ  
Այն է, որ կողքիս չկա արյամբ հոգի ինձ հարազատ:*

Ժիրաունների պոեզիայում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում խանին ծառայելու թեման: Հանուն ազգային միասնության խանի հետ և՛ կյանքը, և՛ մահը կիսելու պատրաստակամության խոստովանությունն ու կոչերը հենց դրանով են բացատրվում: Մակայն այդ նվիրվածությունը, ընկալվելով որպես ժողովրդի զավակի և գորականի պարտք, խանին սխալներից ետ պահելու կոչով ու զգուշացումներով է ուղեկցվում:

Եվ այստեղ լուծում է ստանում հավատքի, իսլամի խնդիրը, որն ազատորեն դազախական տափաստան էր թափանցել VIII դարից:

Քոչվոր ժողովրդի կյանք մտան Մեքքան, Քաաբան և հաջր: Վերջիններս սկսեցին ոչ միայն ձևավորել բարոյականության մասին պատկերացումները, այլև օգտագործվում էին հարմարվողականության նպատակներով:

Հավատքի վերաբերյալ հարցերն առաջին անգամ իմաստավորող Շալկիիզի փիլիսոփայության էությունը մարդու, նրա ճակատագրի և Բարձրյալի միջև կապն է: Խան Թեմիրին դիմելով՝ նա պարզաբանում է.

*Դու նախնյաց արժանի հետնորդն ես եղել,  
Փառք ու պատվով ես սքանչացել,  
Մակայն այդ ամենը, որ ունեցել ես,  
Բարձրյալից տրված ճակատագիր է եղել:*

Հաջ կատարել պատրաստվող Թեմիրին Շակիիզը մուսուլմանական սրբավայրերի լեզվով է բացատրում ժողովրդի առջև խանի պարտքը.

*Հարցնում եմ ես, իսա՛ն իմ, տիրակալ  
Քաաբան, թե Բարձրյալի տունն է,  
Իբրահիմ Խալիլ Ալլահն է ստեղծել,  
Իսկ հանգուցյալների հոգին Ազրաիլն է տանում:  
Մակայն թե բարձրացնես ընկածին,  
Թե սփռվես վշտի մեջ եղածին,  
Կուզիկին ուղղես, քո Քաաբան՝  
Բարձրյալի տունը բացահայտի՛ր քեզ համար.  
Ի՛մ տիրակալ, ի՛մ սուլթան,  
Քո դիմաց է այն:*

Դրա հետ մեկտեղ Շակիիզի քարոզած նվիրվածության հիմքում ազգային միասնության գաղափարախոսությունն է՝ որպես ուժեղ պետականության հիմք: Այստեղից է բխում նրա կերպարների փոխանվանությունը:

*1. Համաչափ դուփոդ, հպարտ քայլոդ  
Արաբական նժույզս դու ես,  
Ոսկե կոթով և ձեռքը*

Դեն կտրող նետող  
Իմ թուրը դու ես:  
Իմ սուլթան-տիրակալ,  
Յույց տուր ինձ այն կացարանը,  
Ուր խոնարհենք ճակատները մեր աղոթելիս,  
Չէ՞ որ իմ Քաարան դու ես:

2. Դու ոսկի ես, իսկ ես՝ փող,  
Դու մետաքս ես, իսկ ես՝ բուրդ,  
Դու սուլթան ես, իսկ ես՝ ծառա,  
Դու բազե ես, իսկ ես՝ կարապ:  
Թե խաչիպ ունես, ի՛մ սուլթան,  
Ես սիրտն իմ քեզ կտամ,  
Թշնամի է քեզ՝ նաև ինձ է թշնամի,  
Եվ կարող է պատահել այնպես՝  
Քեզ համար կյանքս շխնայեմ ես:

3. Իրարից անջատ երբեք չենք եղել,  
Նրա աչքի վերևի ունքն եմ ես եղել:

Շակիիզն առաջին պոետն էր, ով սուֆիզմի մուտքը դա-  
գախական գրականություն կանխագուշակեց դեռ մինչև  
XIX դարի պոետ Շաքարիմ Կուդայբերդիներ: Աբստրակտ  
կատեգորիաներով մտածելակերպը հանգեցրեց գոյություն  
ունեցող ամեն ինչի պատճառահետևանքային կապը հաս-  
կանալուն.

1. Քամի, քմահաճ քամի, ազատ քամի,  
Իսկ քամու ետև ըն կյանքն է աշխարհում:
  
2. Անձրևոտ օրը շատ մի՛ քայլիր դու,  
Անդունդի եզրն է լինում սայթաքուն,  
Գաղտնիքներդ մի՛ բացիր  
Սրիկային մտերիմ համարելով,  
Թե չէ պատիժդ կդառնա մի օր:
  
3. Աշխարհում ամեն ինչ իր պատճառն ունի,  
Աշխարհում ամեն ինչ մեկնություն ունի,  
Թե տերնն է խաղաղությամբ քնած ծառին  
Ուրեմն չի ծածանում նրան քամին:  
Թե խոտը բարձրացել, գոտկիդ է հասել,  
Արոտավայրը պատրաստվի՛ր հնձել:
  
4. Ամպերը կարող են կայծակ որոտալ,  
Ճամփա է ընկնում ոչխարը հնազանդ,  
Քամին բացում է ստազաստն սպիտակ,  
Աշխարհում բացատրություն ունի ամեն բան:

Աբստրակտ կատեգորիաների են ձգտում նաև Շալկիիզի զուգահեռականությունները.

1. Երկինքը պատեցին ամպերը,  
Երևի թե անձրև գա,  
Լճում աղմկում են կարապները

*Երևի վախեցած շանթից:  
Ամբոխի մեջ մեկը միայն շատերից,  
Թունդ թախծելով արցունք է թափում,  
Սրիկաների ամբոխն իրար է անցել,  
Երևի խոսքով ցավ է պատճառել:*

Գիտակցելով միայնությունը «նեղ և սայթաքուն աշխարհում»՝ պոետը հավատում է իր պաշտպանվածությանը. նա գանգատվում է Բարձրյալին, սակայն ոչ թե իսլամին, այլ պանթեիզմին բնորոշ ձևով:

*Այս նեղ ու սայթաքուն աշխարհում,  
Ուր մտքերն են մեր համընկնում,  
Ընկերոջ համար անասուն չեմ ւափսոսա:  
Ընկերներով հարուստ եմ ես. ամենուր են նրանք,  
Սակայն երբ պետք են ինձ,  
Աշխարհում նեղ և սայթաքուն չկան նրանք:  
Ինչ անեմ, թե չգտնեմ:  
Ճակատագիրս Բարձրյալին եմ վստահել:*

Տարերային մատերիալիզմը Շալկիիզին հուշում է լավատեսության բանաձևը. խոստովանել հավերժության օրենքները, ապրել նրանցով խաղաղ և ուրախությամբ.

*Եկենք կյանքը վայելենք՝  
Խնդանք, պճնվենք ու սրտանց խմենք,  
Ումի՛ց հետո ասես, որ չի մնացել  
Աշխարհն այս խաբուսիկ:*

Շակիիզը հետաքրքիր է դատում նաև մահվան մասին՝  
օգտագործելով նեղ և սայթաքուն աշխարհի փոխաբերու-  
թյունը.

*Օրը ցերեկով հապշտապ գնում են տափաստան,  
Նրանք, ում համար աշխարհն այս անձուկ է դարձել:*

Առանձին հիշատակության է արժանի Կալկամանուլի  
Բուխար ժիրաուն (1693-1787): Նա խանի խորհրդականն  
էր և ամենահեղինակավոր բայերից մեկը, ով մեծ դեր է  
խաղացել դազախ ժողովրդի կյանքի կարևոր խնդիրների  
լուծման հարցում:

Բուխար ժիրաուն իր ժամանակի համար ուսյալ մարդ  
էր և գրում էր արաբերենով: Նրա բանաստեղծական ժա-  
ռանգությունից պահպանվել է մոտ 1200 տող, որոնք գրառ-  
վել են XIX-XX դարերում բանավոր ավանդություններից:

Բուխար ժիրաուի պոեզիայում մարմնավորվել է դա-  
զախ ժողովրդի երազանքը՝ երեք ժուգերի (երկրամասեր)  
միավորումը: Հզոր պետության այս իդեալը նա կապում էր  
Աբիլայ խանի հետ, որի հետ նա անձնուրաց պայքար էր  
մղում խանական իշխանության ամրապնդման և զարգաց-  
ման համար:

Բուխար ժիրաուի քաղաքական իմաստությունը ուս  
ժողովրդի հետ բարեկամական հարաբերությունների  
անհրաժեշտության գիտակցումն էր: Միաժամանակ Բու-  
խար ժիրաուն պատրանքներ չուներ՝ հաշվի առնելով ու-

սական ցարիզմի գաղութատիրական քաղաքականությունը:

Կոչելով ժողովրդին միասնության, բարեկամության և հերոսության՝ Բուխար ժիրաուն նաև կոչտ քննադատության էր ենթարկում Աբիլայ խանին՝ դատապարտելով նրա դաժանությունը:

ՎԵՐՋԱԲԱՆ ԵՎ  
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ





## ՎԵՐՉԱԲԱՆ

Այն ըմբռնումը, որ բանահյուսությունը գրականության մայրն է և ակունքը, լավագույնս արտահայտվել է դազախական գրականության մեջ:

Բանահյուսությունն ունի իր գեղարվեստական համակարգը: Այն ժողովուրդների կյանքում արտահայտվում է որպես հին հավատալիքներով պայմանավորված աշխարհայացք, որպես ժողովրդի կենցաղի և ավանդական կացութաձևի դրսևորում և վերջապես, որպես խոսքի հյուսման արվեստ, ինչպես որ բանահյուսությունն է կազմված «բան»՝ խոսք և «հյուսել» բառերից:

Ընդհանուր բանահյուսության և ժողովրդական աշխարհայեցողության շրջանակում դազախական բանահյուսությունը հիմնված է անասնապահական մշակույթի և քոչվորական կացութաձևի վրա:

Ղազախական բանահյուսությունը և պատկերային մտածողությունը հիմնված են տափաստանի և վերջինիս հետ կապված գետերի, լճերի ու լեռնաշղթաների վրա, որոնք որպես տիեզերքի մանրակերտ են ներկայանում դազախական ժողովրդական մտածողության մեջ:

Միջազգային թափառական սյուժեները և հին հավատալիքային ընդհանուր բանահյուսական թեմաները տափաստանային տեղայնացմամբ են ներկայանում դազախական բանահյուսության մեջ: Այսպես, Արևի և Լուսնի՝ որպես քրոջ ու եղբոր, կամ երկու քույրերի պատմությունը, ուր Լուսին գեղեցկուհու դեմքը նախանձից վնասում է Ար-

ևը, որի համար Լուսնի մակերևույթին երևում են մնացած սպիները, իբրև տափաստանային պատմություն է ներկայացված դազախական քանահյուսության մեջ:

Անծայրածիր բնության հետ կապված ժողովուրդների գրականություններին, այդ թվում և դազախական գրականությանը բնորոշ է հետևյալ յուրահատկությունը: Գրականությունը քանահյուսությունից վերցնում է ո՛չ միայն ավանդական կերպարները և դրանց կերտման գեղարվեստական համակարգը և խոսքի հյուսման արտահայտչամիջոցները, այլև 19-րդ դարի առաջին տասնամյակներից դազախական գրականությունն ինքն է ազդում քանահյուսության վրա, գրական ստեղծագործություններին բնորոշ հատկանիշներ հաղորդելով նրան: Ի դեպ, նույն օրինաչափությունը գտնում ենք նաև ռուս և հայ գրականությունների դեպքում: Ժուկովսկու և Պուշկինի մշակած հեքիաթները այնուհետև իրենց ազդեցությունը թողեցին այդ հեքիաթների ժողովրդական պատումների վրա, ինչպես տեղի ունեցավ Աղայանի և Թումանյանի հեքիաթների, Թումանյանի «Սասունցի Դավթի» և Իսահակյանի մի շարք քնարական ստեղծագործությունների դեպքում:

Ղազախական գրականության մեջ այն լավագույնս արտահայտվեց Աբայ Կունանբանի, Սաբիթ Մուքանովի, Մուլթան Մահմուդ Թորայգիրովի ստեղծագործություններում:

19-րդ դարում ձևավորված դազախական դասական գրականությունից սկսած համապատասխան գրական վերափոխումներով և իմաստավորմամբ ներկայացվում են

ղազախական հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունները և տեղաշարժերը:

Բանահյուսական ժանրերի կենսունակության մասին է վկայում և այն հանգամանքը, որ ինչպես ղազախական, այնպես և կիրգիզական գրականության մեջ այսօրվա համամարդկային հիմնախնդիրները ներկայացվում են նաև հին առասպելաբանական հավատալիքների միջոցով: Կիրգիզ նշանավոր գրող Չինգիզ Այթմատովը «Եվ դարից երկար ձգվում է օրը» վեպում այժմյան տեխնոկրատ մտածողության մեջ անցյալի պատմական հիշողության կորուստը որպես սոցիալ-հասարակական չարիք և մարդկության կործանման աղետի ճանապարհ ներկայացնելու համար ընտրեց հին առասպելաբանությունից եկող մանկուրտի բանահյուսական կերպարը:

Ղազախական գրական մշակույթում բանահյուսական ձևերի կենսունակությունն է վկայում և այն հանգամանքը, որ ժողովրդական ստեղծագործությունները կյանքի այսօրվա կենսապայմանների հետ կապված նորացված ձևով մարդկանց ուղեկցում են օրորոցային երգերից մինչև հարսանեկան գովքերը և թաղման սգերգերը:

Դարերի ընթացքում Ղազախստանում ձևավորվել է հեծյալ-քոչվորային քաղաքակրթություն, որը լիակատար ներդաշնակության մեջ է բնության հետ, գեղարվեստորեն արտահայտելով տափաստանային տարածությունների հեռապատկերային զգացությունը: Տափաստանը ազատության զգացողությունն է պարզևում և ղազախական ժո-

դովրդական ստեղծագործություններում ազատ մարդը երգում է ազատության մասին:

Անգամ այժմյան քաղաքային ուրբանիզացված միջավայրում նկատելի է բնությունից եկող կենսական ակունքը: Այս իրողությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դազախական միջավայրում ընտանեկան կյանքում վերարտադրվում են տափաստանային մշակույթը և բարոյականությունը:

Բանահյուսության կողքին դազախական գրականությունը զարգացել է բանավոր հեղինակային բանաստեղծությամբ, որի ներկայացուցիչներն են եղել Ժիրաուները և ակինները, ովքեր համարժեք են միջնադարից եկող մեր գուսաններին, աշուղներին և հանպատրաստից երգեր հորինող ժողովրդական կատարողներին: Նրանց ստեղծագործությունները մեծ դեր են խաղացել դազախական ազգային ինքնագիտակցության ձևավորման գործում:

Ժիրաուները սերտորեն կապված էին խանական համակարգի հետ և՛ որպես երգիչ-ռազմիկներ և՛ խաների խորհրդականներ, պետականության այդ ժամանակի ըմբռնումների արտահայտնիչներին էին:

Ռուսական տիրապետության հաստատմամբ սահմանափակվեց և ապա վերացվեց խանական իշխանությունը, որով հետևաբար նաև խանական երգիչները դադարեցին մասնակցություն ունենալ պետական կառավարման համակարգին և ավարտվեց ժիրաուների դարաշրջանը:

Ռուսական կայսրության իշխանության ներքո անցած մյուս երկրների նման Ղազախստանում ևս սկսվում է ու-

սական մշակույթի միջոցով տարածվող լուսավորակա-  
նության շրջանը, որի բնորոշ ներկայացուցիչն է դառնում  
Աբայ Կունանբակը: Նախորդ շրջանի գրականությունն իր  
ներքողական կամ քնարական բնույթով եթե ուղղված էր  
խաներին՝ որպես ժողովրդի կառավարիչների և բախտի  
տնօրինողների, սպա Աբայով գրականությունը շրջվեց  
դեպի ժողովուրդը և մարդը: Վերածնության գաղափարնե-  
րին համահունչ ձևով Աբայը մարդուն վեր է դասում ամեն  
ինչից: Մարդը դառնում է բարձրագույն արժեք: Աբայը և  
մյուս գրողները ռուսերենի միջոցով հաղորդակից են լի-  
նում նաև համաշխարհային մշակույթին:

Ղազախական գրականության երկրորդ բարենորոգող  
Մուխտար Աուեզովի «Աբայի ճանապարհը» վեպ-էպո-  
պեան նույն ձևով դարձավ գեղարվեստական հրաժեշտը  
քոչվորական կյանքին: Այն հրաժեշտի էլեգիան էր ժողովր-  
դի նախորդ շրջանի կացութաձևին:

Ղազախական հասարակությանը միջնադարից սկսած  
բնորոշ է հանդուրժողականությունը: Իսլամի հետ խաղաղ  
գոյակցում են քրիստոնեությունը, բուդդայականությունը և  
հուդայականությունը:

Ժողովրդական ավանդույթը թե ինչպիսի հսկայական  
ազդեցություն է ունեցել գրականության վրա հատկապես  
19-րդ դարում, երևում է Պուշկինի «Եվգենի Օնեգինի» դա-  
զախերեն թարգմանությունից: Աբայն այն վերածել է էպիս-  
տոյսար (նամակագրական) ստեղծագործության՝ գրված  
Տատյանայի նամակներով: Որպես Պուշկինի գրածի դա-  
զախական տարբերակ կատարվել է դոմբրայի նվագակ-

ցությամբ: «Եվգենի Օնեգինի» Աբայի մշակման գրական փոխակերպման երկրորդ աստիճանն է Աուեգովի «Աբայի ճանապարհ»-ի մեջ ուրույն ստեղծագործություն եղող «Տասյանան դազախական տափաստանում» հատվածը, ուր գեղարվեստորեն ներկայացվում և մեկնաբանվում է, թե Աբայն ինչպես է Պուշկինի հերոսուհու հույզերը ներկայացրել դազախ ժողովրդին ընկալելի և հարազատ գրական արահայտչամիջոցներով:

19-րդ դարի դազախական դասական գրականությունը եթե շարունակեց ժիրաունների ավանդները, ապա 20-րդ դարի գրականությունը վերցրեց ակիներին՝ ժողովրդական հանպատրաստից ստեղծագործողների, գրական փորձը, որի լավագույն արտահայտությունը դարձան Ջամբուլ Ջաբանի ստեղծագործությունները:

20-րդ դարի դազախական գրականությանը բնորոշ է նաև ազգային ինքնագիտակցության նոր վերելքը: Պատահական չէ, որ տարբեր հեղինակների մի շարք ստեղծագործություններ կրում են «Ղազախ» վերնագիրը, կամ ուղղված են դազախ ժողովրդին:

Ժողովրդական հերոսի հավաքական գրական կերպար է դառնում Ամանգելդին՝ դազախական տափաստանային 1916թ. ապստամբության առաջնորդը:

Ղազախական գրականության՝ ժողովրդական կյանքի հետ առավել մեծ կապակցվածությամբ է բացատրվում այն հանգամանքը, որ ռուս գրողներից ամենից սիրված և մեծ տարածում ունեցողներն են Պուշկինն ու Լերմոնտովը, որոնք ո՛չ միայն ժողովրդական բանահյուսության թեմա-

ներն են մշակել, այլն պատկերել են ժողովրդական կյանքի տարբեր սովորույթները:

19-րդ դարավերջից գրականությունը գնալով ավելի մեծ դեր է սկսում խաղալ դազախական հասարակության կյանքում: Առաջինը Աբայն էր, ով կարևորեց բանաստեղծության դերը հասարակական կյանքի վերափոխման գործում:

Աբայից սկսած աստիճանաբար փոխվեց նաև ժողովրդական բանաստեղծության կանոնացված ձևերով գրելու ավանդույթը և առաջնային համարվեց ժողովրդական ոգուն և արտահայտչամիջոցներին և ոչ թե ժանրային ձևերին և դրանց տաղաչափական համակարգին հետևելը:

Գեղարվեստական նոր ձևերի որոնման արատահայտություննից էր 20-րդ դարասկզբից գեղարվեստական արձակի ավելի մեծ տեսակարար կշիռ գրավելը: Չափածոյի նման այն ևս արժարժում էր ժողովրդական կյանքի հիմնախնդիրները: Պատահական չէ, որ դազախերեն առաջին վեպը՝ Ս. Կուբենի «Ղալխմը», նվիրված էր այնպիսի կարևոր հարցի, ինչպիսին էր կանանց օժիտի կամ գլխագնի հարցը, որը սոցիալական չարիքի էր վերածվել արևելյան տարբեր ժողովուրդների համար: Վեպում ցայտուն ձևով արտահայտվել է նաև համաշխարհային գրականությունից եկող «հայրեր և որդիներ» վեճը:

Խորհրդային իշխանության հաստատմանը հաջորդող առաջին տասնամյակներին գրականության ամենատարածված տեսակը շարունակում է մնալ ժողովրդական բա-

նահյուսության հետ սերտորեն կապված և ժողովրդական տարերքը կրող բանաստեղծությունը:

Բանաստեղծությունը՝ որպես կատարվող իրադարձությունների հիշողություն, այնքան սերտորեն էր կապված կյանքի հետ, որ այդ ստեղծագործություններով կարելի է կազմել Ղազախստանի 1920-30-ական թվականների տարեգրությունը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին դազախական բանաստեղծությունն սկսեց հնչել էպոսի հերոսականությամբ և էպիկական շնչով:

Շետպատերազմյան շրջանում, երբ ետևում էին մնացել դասակարգային պայքարի, հնի և նորի հակադրության, ապա և պատերազմական տարիները, դազախական գրականության մեջ գնալով ավելի մեծ տեղ են գրավում քնարական մոտիվները և բանաստեղծի ապրումները ներկայացնող ստեղծագործությունները: Նկատելիորեն ավելանում են քաղաքային միջավայրին վերաբերող գործերը:

Ինչպես նախկին ԽՍՀՄ մյուս հանրապետությունների, այնպես և դազախ ժողովրդի պատմության և գրականության նորագույն շրջանն սկսվեց անկախության հռչակմամբ: Անկախությունը նորովի էր իմաստավորելու նաև դազախ ժողովրդի անցած ճանապարհը, ստեղծված հոգևոր-մշակութային ժառանգությունը: Այն մի կողմից կապվելու էր անցյալի ավանդներին և մյուս կողմից ներառվելու այսօրվա գրական ընդհանուր շարժման մեջ:

Այս հանգամանքը հիմք է տալիս հուսալու, որ դազախական գրական հոգեկերտվածքին բնորոշ ժողովրդային

հանպատրաստից ստեղծագործելու ունակությունը միահյուսվելով այսօրվա գրականության գեղարվեստական ձևերի ու արտահայտչամիջոցների ընդհանուր համակարգի հետ, կստեղծի յուրահատուկ այն որակը, որը ո՛չ միայն եվրասիական, այլև համաշխարհային գրականության մեջ կգրավի իրեն վերապահված ուրույն տեղը:

*ՎԱՐՄԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ*

*Բանասիրական գիտությունների դոկտոր*

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՀԱՍԱՆ ԿԱՅԳԻ (14-15-րդ դդ.)

Հայտնի է նաև Հասան Վշտալի անվամբ: Իսկական անունն է Հասան Սաբիտուլի: Նշանավոր ժիրաու, պետական գործիչ, բանաստեղծ, փիլիսոփա:

Ծնվել է Պովոլժիեյում, ենթադրաբար 14-րդ դարի երկրորդ կեսին: Վախճանվել է 15-րդ դարի 60-ական թվականներին: Եղել է Ոսկե Հորդայի, ապա և Կազանի խանի մերձավոր գործակիցներից: Ղազախական բոլոր ցեղերին մի պետության մեջ միավորելու գաղափարախոսներից էր:

Եղել է հանպատրաստից ստեղծագործող երգիչ, ում ստեղծագործությունների հիմքում ընկած էին ղազախ ժողովրդին հուզող հարցերը: Այս պատճառով նրա ստեղծագործությունների մեջ մեծ տեղ են գրավում փիլիսոփայա-դիդակտիկ ժանրով գրված բանաստեղծությունները, թևավոր խոսքերը, խրատները և աֆորիզմները: Նա մարդկանց հիշողության մեջ մնացել է որպես ժողովրդի իղձերի արտահայտիչ:

Հասան Կայգիի ստեղծագործություններում մեծ տեղ են գրավում խանի հանդեպ անհամաձայնությունը և բացահայտ քննադատությունը, որն այնուհետև դարձավ հաջորդող դարերի ժիրաուների պոեզիայի գլխավոր գծերից մեկը:

## ԿԱՉՏՈՒԳԱՆ ԺԻՐԱՈՒ ՍՈՒՅՈՒՆԻՇՈՒԼԻ (15-ԲԴ ԴԱՐ)

Բանաստեղծ, ասացող, ով ընդհանուր հեղինակ է համարվում բաշկիրների, նողայների, ղազախների և կարակալպակների համար:

Հասան Կայգիի հետ Կազտուզանը համարվում է դազախական գրականության առաջին ներկայացուցիչներից:

Նրա ստեղծագործություններում արտացոլվել է դազախների կենցաղը և կյանքը ռազմերթերի ժամանակ:

Համաձայն ավանդության մի խնջույքի ժամանակ ժիրաուները երգի մրցույթ են կազմակերպում, և Հասան Կայգին դիմելով նրան ասում, է, թե քո հերթն է, ո՛վ ժիրաու: Կազտուզանը երգում է անցած հերոսական ժամանակների մասին՝ դար առ դար ներկայացնելով տեղի ունեցած իրադարձությունները, աստիճանաբար ավելի ու ավելի մեծ արագություն հաղորդելով խոսքի ընթացքին: Ունկնդիրները հիացած ասում են, թե թող հազար տարի ապրի մեր սիրելի գուսանը (ժիրաուն):

Հասան Կայգին ևս հիացած ասում է, որ ինքը հավատացած է, թե Կազտուզանը ցույց է տվել իր տաղանդի միայն փոքր մասը:

Հաջորդող շրջանի ժիրաուները իրենց համար պատիվ են համարել նրա ստեղծագործությունները կատարելը, իսկ բանաստեղծի շատ տողեր դարձել են թևավոր խոսքեր և ասացվածքներ:

Կազտուզանը առանձնակի պաշտամունք է ունեցել բնության և տափաստանի հանդեպ: Իր գործերից մեկում ասում է. «Տափաստանային աշխարհը անվերջ է ինչպես ժամանակը»:

## ԺԻՐԱՈՒՆԵՐԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

«Ժիրաու» բառը դազախերենում նշանակում է երգ, բանաստեղծություն: Ղազախական գրականության մեջ բանաստեղծին տրված առավել հին անվանումն է, որը գրական

սկզբնաղբյուրներում հիշվում է 15-րդ դարից: Ժիրաուները երգերի և բանաստեղծությունների թե՛ կատարողներն էին և թե՛ հեղինակները:

15-18-րդ դարերի շատ ժիրաուներ ոչ միայն բանաստեղծներ էին, այլև ցեղերի առաջնորդներ և զորահրամանատարներ: Նրանցից ոմանք եղել են նաև գուշակներ՝ երազներ, տարբեր նշաններ ու բնության երևույթներ մեկնաբանողներ:

Ժիրաուների սիրած բանաստեղծական ժանրը տոլգաուն էր, որը դազախերեն բառացի նշանակում է մտածում: Տոլգաուները խոհա-փիլիսոփայական բանաստեղծություններ էին, որոնք այնքան բնորոշ էին նաև հայ աշուղական գրականությանը:

Քնարական տոլգաուները զգացմունքային ստեղծագործություններ են: Նրանցում բանաստեղծը բաց և անկեղծ սրտով դիմում է ունկնդիրներին՝ տալով իմաստուն խորհուրդներ՝ քարոզելով ճշմարտությունը, բարին և արդարությունը, փառաբանելով ազգային միաբանությունը, արտահայտելով հասարակ ժողովրդի շահերը և երգելով բնության գեղեցկությունն ու տարերթի ուժը:

Ոսկե Հորդայից Ղազախական խանությանն անցումից հետո ժիրաուները կարևոր տեղ են գրավում խաների շքախմբում: Նրանք այն քչերից էին, ովքեր կարող էին իրենց անհամաձայնությունը հայտնել խանին:

Ռուսական տիրապետության հաստատումից հետո խանական իշխանության վերացմամբ իրենց հասարակական դիրքը կորցնում են նաև ժիրաուները:

Հանպատրաստից երգեր հորինող ժողովրդական ստեղծագործողների հետ միասին ժիրաուների նման անհատ կա-

տարողները ևս սկսում են անվանվել ակիններ, ուլքեր հանդես են գալիս երգախառն բանաստեղծությունների մրցույթներում:

### ՇԱԼԿԻՆՁ ՏԼԵՆՇԻՈՒԼԻ (1456-1560թթ.)

Ապրել է երկար, բուռն, բայց դրամատիկ բարդ կյանքով, որի մեծ մասն անց է կացրել Նոդայ Հորդայի Թեմուր խանի պալատում:

Շալկինզից մեզ են հասել մոտ 30 ստեղծագործություններ: Դրանցում մեծ տեղ են գրավում Թեմուր խանին ուղղված բանաստեղծությունները, որոնցում քննադատվում է խանի ներքին քաղաքականության ոչ ժողովրդային բնույթը: Միաժամանակ գրել է խանին ուղղված ներբողներ, փիլիսոփայական խոհեր ժողովրդի կենցաղի և հոգսերի, իշխող խանի և իր հարաբերությունների, դիդակտիկ գործեր բարու և չարի, լավի և վատի, բարեկամության և թշնամանքի մասին, որոնք արատահայտել է գեղարվեստական բարձր լեզվով:

### ԲՈՒԽԱՐ ԺԻՐԱՌԻ ԿԱԼԿԱՄԱՆՈՒԼԻ (1668-1781թթ.)

Բանաստեղծ, պետական գործիչ: Իր երկար կյանքի ընթացքում ականատեսն է եղել պատմական մի շարք նշանավոր իրադարձությունների:

Նրա ստեղծագործություններն իրենցում ընդգրկում են և ընդհանրացնում նախորդող շրջանի բանաստեղծական ավանդույթը և հսկայական դեր են խաղացել իր ժամանակի հոգևոր կյանքում՝ ունենալով ուղենշային նշանակություն

հաջորդող շրջանի դազախական գրականության զարգացման համար:

Նա դասական ժիրաունների բանաստեղծության վերջին վառ անհատականությունն էր, ով հանդես եկավ միաժամանակ թե՛ որպես հանպատրաստից ստեղծագործող բանաստեղծ և թե՛ պետականության գաղափարախոս, խանի խորհրդատու:

Արծարծելով իր ժամանակի հրատապ հարցերը՝ մարդկանց կոչել է միասնության, բարեկամության և հերոսականության:

#### ՄԱՀԱՄԲԵԹ ՈՒՏԵՄԻՍՈՎ (1803-1846 թթ.)

Բանաստեղծ-նազմիկ, քնարերգու, փիլիսոփա: Ցարիզմի և խանական կրկնակի իշխանության դեմ 1830-1845թթ. դազախ ժողովրդի ապստամբության ղեկավարներից և գաղափարախոսներից մեկը:

Լինելով ժողովրդական տրամադրությունների արտահայտիչը՝ գծովում է խանի հետ և դառնում զինակիցը Իսաթայ Թայմանովի, ով գլխավորում էր ժողովրդական ապստամբությունը:

Ցարական ուժերը 1829թ. նրան ձերբակալում են և բանտնետում, որտեղից փախչում է և շարունակում պայքարը՝ ժողովրդին ոգեշնչելով իր երգերով: Երբ զոհվում է Իսաթայը, նա գլխավորում է ժողովրդական ապստամբությունը: Ցարական ուժերին երկրորդ անգամ է հաջողվում բռնել նրան: Ուտեմիսովը, սակայն, կարողանում է վերստին փախչել բանտից: Նրան բռնելու համար մեծ զլխագին են սահմանում, բայց ժողովուրդը չի մատնում իր սիրելի հերոսին: Բանաստեղծ-նազ-

միկը չորս տարի շարունակում է գլխավորել ապստամբությունը մինչև 1846թ. դավաճանաբար սպանվում է ժանգիրի խանի գործակալ Իսայի կողմից:

Ուտեմիսովը թողել է շուրջ քառասուն երգեր և պոեմներ, որոնք մեծ ազդեցություն են գործել դազախական գրականության զարգացման հետագա ընթացքի և հատկապես ակինների՝ հանպատրաստից ժողովրդական ասացող երգիչ-խմայրովիզատորների վրա:

### ԻԲԲԱՅ ԱԼՏԻՆՍԱՐԻՆ (1841-1889 թթ.)

